

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԶՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Գիտաժողովի նյութեր**

**Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակին**

**1943-2018**

**ԵՐԵՎԱՆ**

**ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
Ս 784

Երաշխավորված է հրատարակության  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

***Խմբագրական խորհուրդ՝***

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
տնտեսագիտության թեկնածու

**Յուրի Միքայելի Սուվարյան  
Ռոբերտ Ներսեսի Մարինյան  
Քրիստինե Յուրիի Բաղդասարյան  
Հայկ Աշոտի Մարկոսյան**

**Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝**

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Ս 784 Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները  
Հայաստանի Հանրապետությունում (գիտաժողովի նյութեր) / ՀՀ ԳԱԱ  
Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբա-  
գիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018 – 280 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-5-8080-1363-6

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2018

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**

0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15

Հեռ. (+374 10) 58-19-71

E-mail: [info@economics.sci.am](mailto:info@economics.sci.am)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ЭКОНОМИКИ ИМЕНИ М. КОТАНЯНА

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ  
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ  
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**Материалы научной конференции**

**Книга посвящается 75-летию основания НАН РА**

**1943-2018**

**Ереван**

*Издательство “ Гитутюн ” НАН РА*

**2018**

Рекомендовано к изданию решением  
ученого совета Института экономики  
НАН РА им. М. Котаняна

***Редакционный совет:***

академик НАН РА

доктор экономических наук, профессор  
доктор экономических наук, профессор  
кандидат экономических наук  
кандидат экономических наук

**Суварян Юрий Михайлович**  
**Саринян Роберт Нерсесович**  
**Багдасарян Кристина Юрьевна**  
**Маркосян Айк Ашотович**

Ответственный редактор сборника

член-корреспондент НАН РА,

доктор экономических наук, профессор **ВЛАДИМИР АРУТЮНЯН**

Современные проблемы социально-экономического развития в Республике Армения.

Материалы научной конференции /институт экономики НАН РА им.М.Котаняна.

Отв.редактор В. Л. Арутюнян. Ер., изд-во «Гитутюн» НАН РА, 2018, 280 с.

ISBN 978-5-8080-1363-6

© Издательство “Гитутюн” НАН РА

© Институт экономики имени М. Котаняна НАН РА, 2018

***Национальная академия наук Республики Армения Институт экономики имени  
М. Котаняна***

Республика Армения

0015, Ереван, ул. Григора Лусаворича 15

Тел. (+3741) 58-19-71,

E-mail: [info@economics.sci.am](mailto:info@economics.sci.am)

M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA

**THE CONTEMPORARY ISSUES OF  
SOCIOECONOMIC DEVELOPMENT IN THE  
REPUBLIC OF ARMENIA**

**Conference Proceedings**

**The Collection of Articles is dedicated to the 75th Anniversary of  
the National Academy of Sciences of the Republic of Armenia**

**1943-2018**

**Yerevan**

*“Gitutyun” Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia*

**2018**

Approved for publishing by the decree of the  
Scientific Council of M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences of the Republic of Armenia

**Editorial Board:**

**Yuri Mikael Suvaryan**

*Academician of the National Academy of Sciences  
of the Republic of Armenia,*

*Doctor of Sciences (Economics), Professor*

*Doctor of Sciences (Economics), Professor*

*Doctor of Economics*

*Doctor of Economics*

**Robert Nerses Sarinyan**

**Kristina Yuri Baghdasayan**

**Hayk Ashot Markosyan**

Responsible Editor

**VLADIMIR HARUTYUNYAN**, Doctor of Sciences (Economics), Professor

Correspondent Member of the National Academy of Sciences

Republic of Armenia

The Contemporary Issues of Socioeconomic Development in the Republic of Armenia,  
Conference Proceedings / M. Kotanyan Institute of Economics of the National Academy of  
Sciences of the Republic of Armenia; Responsible Editor: Vladimir L. Harutyunyan,  
Yerevan, “Gitutyun” Publishing House of the National Academy of Sciences of the  
Republic of Armenia, 2018, 280 p.

ISBN 978-5-8080-1363-6

© “Gitutyun” Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 2018

© M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 2018

***M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia***

15 Grigor Lusavorich Street

Yerevan 0015, Republic of Armenia

Tel. (+374 10) 58-19-71

E-mail: [info@economics.sci.am](mailto:info@economics.sci.am)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Նախաբանի փոխարեն.....	13
ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հիմնադրումը և զարգացման ընթացքը .....	15
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Զ. Յ.      Տրանսֆերային գնագոյացման մեխանիզմները օֆշորային գոտիներում վերահսկվող գործարքների վերլուծության համատեքստում.....	29
ԽԱԶԱՏՈՒԲՅԱՆ Ա. Վ.      Նոր տնտեսական քաղաքականության անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում .....	44
ԿՅՈՒՐԵՂՅԱՆ Ա. Մ.      ՀՀ տնտեսության զարգացման գերակայությունները գործարար միջավայրի բարելավման համատեքստում.....	54
ՄԱԿԱՐՅԱՆ Ա. Ռ.      Արտահանման խթանման նպատակով համապատասխան ոլորտների ընտրությունը և զբաղվածության քաղաքականության առաջնայնությունները ՀՀ-ում.....	66
ՄԽԻԹԱՐՅԱՆ Հ. Ս.      Բիզնեսի գործընթացային կառավարման հիմնախնդիրները և ներդրումը Հայաստանի Հանրապետությունում .....	80
ՄԿՐՏՉՅԱՆ Ն. Ս.      ՀՀ ընթացիկ հաշիվը, դինամիկան և մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը դրա վրա.....	91
ՇԱՀԻՆՅԱՆ Տ. Վ.      ՀՀ բանկերի կողմից մատուցվող ծառայությունների գնահատումը ծախս-արդյունք մեթոդի կիրառմամբ .....	102
ՄԱՐԳՍՅԱՆ Լ. Ն.      ԵՏՄ անդամակցությամբ պայմանավորված ՀՀ արտահանման ընդլայնման հնարավորությունների և դրանց փաստացի արձանագրած միտումների համեմատական վերլուծություն.....	110
ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ Տ. Ս.      Ոչ ռեզիդենտների հարկման մեխանիզմները ՀՀ-ում (շահութահարկ, ԱԱՀ) .....	124
 <b>ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ</b>	
ԴԱԼԼԱՔՅԱՆ Ս. Ա.      Նորամուծական տնտեսության զարգացումը կլաստերացման համատեքստում.....	136

ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ Մ. Գ.	Վարկավորման նշանակությունը ՀՀ ագրարային ոլորտի զարգացման գործում և դրա բարելավման ուղիները.....	148
ՈՍԿԱՆՅԱՆ Գ. Վ.	Գյուղատնտեսական վարկերի գծով վարկային ռիսկի կառավարումն ապահովագրության միջոցով.....	160
ՊՈՂՈՍՅԱՆ Շ. Պ.	Բարձր տեխնոլոգիաները ՀՀ ինովացիոն տնտեսության համակարգում .....	169

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Բ. Վ.	Կազմակերպության անձնակազմի շահադրդման համակարգի ձևավորման հիմնահարցերի շուրջ .....	181
ԳԱԼՍՏՅԱՆ Ա. Մ.	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում իրականացվող բարեփոխումները.....	192
ԻՄԱՀԱԿՅԱՆ Ռ. Կ.	Զրուսաշրջության էվոլյուցիոն դրսևորումները և զարգացման նորարարական հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում.....	203
ՄԱՐԳԱՐՅԱՆ Հ. Ս.	ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման շարժընթացի վերլուծությունը.....	215
ՄԱՐԿՈՍՅԱՆ Հ. Ա.	Միջուկային էներգետիկայի ապագան ժամանակակից տեխնոլոգիական զարգացումների համատեքստում.....	224
ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ. Մ.	Բնակչության կենսամակարդակի բարելավման ուղիները սովերային տնտեսության նվազեցման համատեքստում.....	239
ՄԱՐԳՍՅԱՆ Ա. Տ.	ՀՀ առևտրային բանկերի վարկային ակտիվների դինամիկան ու ազդեցությունը տնտեսական աճի վրա.....	249

**ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

ՄԱՐԻՆՅԱՆ Ռ. Ն.	«Ինչու որոշ երկրներ հարուստ են, իսկ մյուսները՝ աղքատ».....	259
ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ	.....	273



# СОДЕРЖАНИЕ

## МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ И ФИНАНСЫ

Предисловие.....	13
Основание и процесс развития института экономики НАН РА.....	15
БАГДАСАРЯН К. Ю.      Механизмы трансферного ценообразования в контексте анализа контролируемых операций оффшорных зон.....	29
ХАЧАТУРЯН А. В.      О необходимости новой экономической политики в РА.....	44
КЮРЕГЯН А. М.      Приоритеты экономического развития Армении в контексте улучшения бизнес-среды.....	54
МАКАРЯН А. Р.      Выбор отраслей для продвижения экспорта и приоритеты политики занятости в республике Армения.....	66
МХИТАРЯН Г. С.      Основные задачи управления бизнес-процессами и его внедрение в Республике Армения.....	80
МКРТЧЯН Н. С.      Текущий счет РА, его динамика и воздействие макроэкономических показателей на него.....	91
ШАГИНЯН Т. В.      Оценка услуг, оказываемых банками Армении с использованием метода “затрата-выгода”.....	102
САРГСЯН Л. Н.      Сравнительный анализ фактических тенденций и возможностей роста экспорта РА в рамках ЕАЭС.....	110
ПАРСАДАНЯН Т. С.      Налоговые механизмы для нерезидентов в Армении (налог на прибыль, НДС).....	124

## ПРОБЛЕМЫ РЕАЛЬНОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ

ДАЛЛАКЯН С. А.      Иновационное развитие экономики в контексте кластеров.....	136
МАНУЧА М. Г.      Роль кредитования в развитии аграрного сектора Республики Армения и пути ее улучшения.....	148
ВОСКАНЯН Г. В.      Управление кредитными рисками через страхование в сфере сельскохозяйственных кредитов.....	160
ПОГОСЯН Ш. П.      Высокие технологии в инновационной экономической системе Армении.....	169

## **РАЗВИТИЕ СФЕРЫ УСЛУГ И СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ**

ГАБРИЕЛЯН Б. В.	О проблемах формирования мотивационной системы персонала организации .....	181
ГАЛСТЯН А. М.	Реформы, осуществляемые в области бухгалтерского учета общественного сектора.....	192
ИСААКЯН Р. К.	Эволюция туризма и возможности инновационного развития в Республике Армения .....	203
МАРГАРЯН Г. С.	Анализ производства и потребления электроэнергии в Армении.....	215
МАРКОСЯН А. А.	Будущее ядерной энергетики в контексте современных технологических разработок.....	224
ПЕТРОСЯН Л. М.	Способы улучшения условий жизни в контексте снижения теневой экономики .....	239
САРГСЯН А. Т.	Динамика кредитных активов коммерческих банков РА и их влияние на экономический рост страны.....	249

## **ИСТОРИЯ ТЕОРЕТИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ И ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ**

САРИНЯН Р. Н.	«Почему одни страны богатые, а другие бедные» .....	259
НАШИ АВТОРЫ	.....	273

# CONTENTS

## MACROECONOMIC ISSUES AND FINANCES

Instead of Foreword .....	13
The establishment and growth path of the Institute of Economics of the National Academy of the Republic of Armenia.....	15
BAGHDASARYAN K. Y. The Mechanisms of Transfer Pricing in the Context of Analysis of Transactions Controlled from Offshore Zones.....	29
KHACHATURYAN A. V. The Need for New Economic Policy the Need for New Economic Policy in the Republic of Armenia.....	44
KYUREGHYAN A M. The Priorities of Economic Development in the Republic of Armenia in the Context of Improving the Business Environment.....	54
MAKARYAN A. R. The Choice of Industries for Export Promotion and Priorities of the Labor Policy in the Republic of Armenia .....	66
MKHITARYAN H. S. The Issues of Business Process Management and the Introduction of Thereof in the Republic of Armenia.....	80
MKRTCHYAN N. S. Current Account of the Republic of Armenia, Dynamics of Thereof and the Impact of Macroeconomic Variables on It.....	91
SHAHINYAN T. V. The Evaluation of Services Provided by Armenian Banks Using the “Cost-Outcome” Method.....	102
SARGSYAN L. N. Comparative Analysis of Armenia’s Export Growth Opportunities and Actual Trends, Conditioned by the Country’s Accession to the EAEU.....	110
PARSADANYAN T. S. Taxation Mechanisms for Non-Residents in Armenia (Profit Tax, Vat) .....	124

## ISSUES ON THE REAL SECTOR OF THE ECONOMY

DALLAQYAN S. A. The Development of Innovations-Driven Economy in the Context of Clusterization.....	136
MANUCHARYAN M. G. The Importance of Lending in Ensuring the Growth of Agriculture and Approaches to Improving the Access to Loans.....	148

VOSKANYAN G. V.	Loan Risk Management for Lending to Agriculture Through Insurance.....	160
POGHOSYAN SH. P.	High Technologies in the Innovation Driven Economic System of the Republic of Armenia .....	169

**ISSUES ON DEVELOPING SERVICES SECTOR  
AND SOCIO-DEMOGRAPHIC STANCE**

GABRIELYAN B. V.	On the Issues of Designing the Personnel Motivation System in an Organization.....	181
GALSTYAN A. M.	Reforms Being Implemented in the Public Sector Accounting.....	192
ISAHAKYAN R. K.	The Evolution of Tourism and Innovative Development Opportunities in the Republic of Armenia .....	203
MARGARYAN H. S.	Analysis of the Growth Pattern of Electricity Generation and Consumption in the Republic of Armenia .....	215
MARKOSYAN H. A.	The Future of Nuclear Energy in the Context of Modern Technological Developments and Advancements.....	224
PETROSYAN L. M.	Approaches to Improving the Living Standards in the Context of Reducing the Size of the Shadow Economy ..	239
SARGSYAN A. T.	Dynamics of Loan Assets of Armenian Commercial Banks and Their Impact on the Economic Growth.....	249

**ECONOMIC RESEARCH  
AND THE HISTORY OF THE ECONOMIC THOUGHT**

SARINYAN R. N.	“Why Are Some Countries Rich and Others Poor?” .....	259
OUR AUTHORS	.....	273

*«Չկա մի ցավ արևի տակ...»*

*Որ չունենա գիտությունը նրան մի դեղ կամ դարման  
Գիտությունը լույս է, արքա, աշխարհ իջած երկնքից,  
Ճարեր ունի քաղած-քամած ամեն հանքից ու տունկից,  
Ետ է բերում նա մեռելին հոգեվարքից իր վերջին»:*

**Հովհաննես Թումանյան**

## **ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ**

Ընթացիկ տարին բացառիկ է՝ լրացավ ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակը: Տարելից, որը մեծ հանդիսությամբ նշվեց Ալ.Մպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային-ակադեմիական թատրոնի դահլիճում: Հանդիսավոր նիստին մասնակցում էին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, շատ երկրների ակադեմիաների նախագահներ (ՌԴ, Բելառուս, Ուկրաինա, Անգլիա, Սլովակիա, Մոլդովա, Վրաստան, Ղրղըզստան, Չինաստան, Ղազախստան, Տաջիկստան և այլն), ովքեր բարձր գնահատեցին ՀՀ ԳԱԱ ավանդը համաշխարհային գիտության զարգացման գործում:

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի 20-րդ հանրապետական գիտաժողովը նվիրված է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակին:

Նկատենք, որ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը հանրապետությունում դարձել է միակ գիտական օջախը, երբ 2007թ. ՀՀ կառավարության որոշմամբ ճյուղային ու տարբեր նախարարությունների ենթակայության տակ գտնվող երեք գիտահետազոտական կազմակերպությունները՝ տնտեսագիտական հետազոտությունների, Կառավարման և տնտեսական բարեփոխումների, գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտները, վերակազմակերպվեցին ու միացվեցին ավելի քան կեսդարյա գիտական կենսագրություն ունեցող ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտին:

Անցած ժամանակաշրջանում ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական գործունեության արդյունքները նշանավորվել են բազմաթիվ մենագրություններով, գիտական հոդվածների ժողովածուներով, իրենց առանցքում ունենալով հանրապետության տնտեսության և հայագիտության հարցերը: Միայն վերջին 10

տարում հրատարակվել են 100-ից ավելի գրքեր, 19 ժողովածուներ, բազմաթիվ հոդվածներ: Իսկ «Ազգային տնտեսություն. ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական հետազոտությունները (2007-2017թթ.)», «2017թ. գիտահետազոտական աշխատանքների կիրառական արդյունքները» (2017) աշխատությունները խտացնում են ինստիտուտի անցած ուղին եզրակացությունների և կիրառական առաջարկությունների մեջ: Սույն ժողովածուում նույն թեմատիկ ընդգրկումներն են, ներառելով՝ մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատվածի, ծառայությունների ոլորտի զարգացման և սոցիալ-ժողովրդագրական, տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության հարցերի ուղղությունները:

ՀՀ կառավարության գործունեության ծրագրի գերակա առանձին ուղղություններ ինստիտուտում դարձել են հետազոտության օբյեկտ, որոնց արդյունքները եզրակացությունների ու առաջարկությունների ձևով ներկայացվել են ՀՀ կառավարություն՝ հայեցակարգային ու ռազմավարական փաստաթղթերում դրանք հաշվառելու և ներառելու ակնկալությամբ:

Քվանտային ֆիզիկայի հիմնադիր Մաքս Պլանկը մի առիթով նկատել է, որ ինքը սկզբում ընտրել է տնտեսագետի մասնագիտությունը, սակայն հետագայում թողել է քանի որ իր իսկ խոսքերով «այն շատ բարդ էր»<sup>1</sup>:

Հանրապետությունում լուծվում են սոցիալ-տնտեսական բարդ խնդիրներ:

Հանրապետության տնտեսության և տնտեսագիտության մեջ առկա խնդիրները ավելի շատ են, քան դրանց լուծումները: Շարունակվելու է ծանր մնալ հետազոտող տնտեսագետների պատասխանատվության բեռը: ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը շատ անելիքներ ունի:

*ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր*

**ՎԼԱԴԻՄԻՐ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

<sup>1</sup> St' u, П. Самуэльсон, Экономика, М., 1964, стр. 27.

## **ՀՀ ԳԱԱ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ**

1940 թվականին ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի երկրաբանական ինստիտուտի կազմում ձևավորվում է մի խումբ, որը կոչված էր մշակելու հանրապետության ջրային ռեսուրսների օգտագործման գլխավոր պլանի տնտեսագիտական մասը: Այդ հիմքի վրա 1941 թվականին ստեղծվում է տնտեսագիտության սեկտոր (ղեկ. Ս.Խրիմյան), որը միավորում էր արդյունաբերության էկոնոմիկան, գյուղատնտեսության էկոնոմիկայի և քարտեզագրական լաբորատորիայով աշխարհագրության խմբերը: Դա հանրապետությունում տնտեսագիտական բնույթի հետազոտություններ իրականացնող առաջին կառույցն էր, որը 1943թ. ընդգրկվեց Հայկական ՍՍՀ նորաստեղծ գիտությունների ակադեմիայի կազմում: Սեկտորի հետագա տասնամյակի հետազոտական գործունեությունը վերաբերում էր Հայաստանի տնտեսական պատմության, արդյունաբերության էկոնոմիկայի, երկաթուղային տրանսպորտի հարցերին: Այդ տարիներին մշակվել են հանձնարարականներ տարածքային կտրվածքով մեքենաշինական ձեռնարկությունների մասնագիտացման ու կոռպորացման վերաբերյալ, տրվել հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների տերիտորիալ տեղաբաշխման նկարագրությունը, ստեղծվել է տնտեսական քարտեզ, որն արտադրողական ուժերի տարածքային տեղաբաշխման առաջին փորձն էր, ուրվագծվել է հանրապետության երկաթուղային տրանսպորտի զարգացման հիմնական ուղիները:

Այնուամենայնիվ, հանրապետության, առանց այն էլ, սակավ տնտեսագետ մասնագետները գործում էին անջատ-անջատ՝ տարբեր գերատեսչական կազմակերպություններում, բարձրագույն ուսումնական հաստատությունների ամբիոններում: Հետազոտական աշխատանքները նեղ էին իրենց ընդգրկումներում, ցրված, իսկ հրատարակվող աշխատանքները խիստ սակավ:

1955-ին տնտեսագիտության սեկտորը վերակազմավորվում է

տնտեսագիտության ինստիտուտի (տնօրեն՝ Ա.Մարուխյան)՝ սկզբնավորելով վերջինիս տարեգրությունը, իսկ 1999թ. անվանակոչվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ.Քոթանյանի անվամբ: Ինստիտուտն ունեթերեք բաժիններ՝ քաղաքատնտեսության և ժողովրդական տնտեսության պատմության, արդյունաբերության էկոնոմիկայի և գյուղատնտեսության էկոնոմիկայի: Ինստիտուտում կատարվող աշխատանքները հիմնականում վերաբերում էին ճյուղային տնտեսագիտության հարցերին:

1960 թվականին ինստիտուտի տնօրեն է նշանակվում Ա.Առաքելյանը: Ինստիտուտի համար սկսվում է նոր շրջան՝ հետազոտական գործունեության, նոր մշակումների և գիտական կադրերի պատրաստման առումներով: Կազմակերպվում են տնտեսական կապերի համալիր պրոբլեմների և կապիտալ ներդրումների արդյունավետության ու արդյունաբերության տեղաբաշխման բաժինները, տնտեսավիճակագրական լաբորատորիան: 1964-65թթ. ստեղծվում են տնտեսաշվարկի և նյութական շահագրգռվածության, իսկ այնուհետև տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառման բաժինները: Վերափոխվեց բաժինների թեմատիկան: Ինստիտուտի գործունեությունը ստացավ ծրագրային ուղղվածություն՝ երկարատև ժամանակի կտրվածքով: Տնտեսագիտական հետազոտությունների որոնումների առանցքը դարձան հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրները, լույս տեսան բազմաթիվ աշխատություններ՝ առաջադրությի տեսության ու կիրառական բազմաթիվ կողմերի արծարծումներով, հիմնական ֆոնդերի վերարտադրություն և արդյունավետություն, գիտատեխնիկական առաջընթաց՝ կառավարում և իթանում, տնտեսական հաշվարկ (Ա.Առաքելյան, Մ.Քոթանյան, Ռ.Միրզոյան, Լ. Անանյան), կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատում (Բ.Շիլագարյան), տրանսպորտի զարգացման հիմնախնդիրներ (Կ.Խուրշուդյան), արտադրության տեխնիկական զարգացման կառավարում վերջնական արդյունքներով, երկրորդային ռեսուրսների օգտագործում (Ա.Մխիթարյան), շահեր և նյութական շահագրգռվածություն (Մ.Քոթանյան), ընդերքի երկրաբանական տնտեսական գնահատում, նյութական ռեսուրսների օգտագործման կառավարում (Բ.Սելվինազյան), գիտություն-արտադ-



րություն կապի փոխազդեցություն (Գ.Խանիկյան) և այլն:

Տնտեսության կառուցվածքային կատարելագործումը միջճյուղային հաշվեկշռի հարցը զուտ տեսությունից դարձրել էր օրակարգային անհրաժեշտություն: ՀՄՄՀ ԿԿՎ և ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի համատեղ աշխատանքով (գիտ. դեկ. Շ.Մարգարյան) կազմվել են հանրապետության առաջին միջճյուղային հաշվեկշռները, դրանց գիտական ու գործնական արդյունքները՝ ամփոփելով նրա «Հայկական ՄՄՀ ժողովրդական տնտեսության միջճյուղային կապերը» (1970) մենագրության մեջ: Արգասաբեր էր ագրարային ոլորտի հետ կապված ինստիտուտում կատարվող ուսումնասիրությունները: Առաջին անգամ իրականացվում է հանրապետության հողային ֆոնդի տնտեսական գնահատում (Ն.Մանասերյան, Կ.Պոստշնիկովա, Լ.Ադամյան): Վերանայվում են մի շարք դրույթներ, որոնք չէին արտահայտում տնտեսության իրական վիճակը և առաջարկում նոր լուծումներ՝ կապված կոլտնտեսություններում դիֆերենցիալ ռենտայի ձևավորման և իրացման պայմանների հետ:

Ինստիտուտի հետազոտական մյուս ոլորտներից են ժողովրդագրության և զբաղվածության քաղաքականության մշակման, բնակչության և աշխատանքային ռեսուրսների կառավարման փոփոխությունների և կանխատեսման հարցերը: 1968-ին Մոսկվայում հրատարակվում է «Բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966-1985թթ. Հայկական ՄՄՀ-ում» կոլեկտիվ եռահատոր աշխատությունը (Վ.Խոջաբեկյանի ղեկավարությամբ): Տվյալ հիմնահարցի վերաբերյալ Հայաստանի և ԳԴՀ գիտությունների ակադեմիաների միջև կնքված երկկողմ համաձայնագրով 1976-80թթ. ծավալվեց բեղմնավոր գիտահետազոտական աշխատանք, որի արդյունքներն արժանացան երկու ակադեմիաների բարձր գնահատականին և հրատարակվեցին գերմաներեն ու ռուսերեն: Ժողովրդագրության ինդիքները շարունակվել են նաև նորագույն ժամանակներում՝ ինստիտուտի թեմատիկայում դառնալով քաղաքակենտրոնացման, էթնոժողովրդագրության, բնակչության շարժի, աշխատանքի շուկայի և զբաղվածության պետական կարգավորման վերաբերյալ նոր մշակումների համար:

Մոցիալ-ժողովրդագրական և պատմական զարգացման առանձ-

նահատկությունների բացահայտման ու գնահատման հիման վրա կանխատեսվել է Հայաստանի բնակչության ժողովրդագրական պատկերը երկարատև հեռանկարի տարբեր փուլերի համար: Դրանք, մասնավորապես ընդգրկում են 1966-1985թթ., 1971-2000թթ. և 1979-2015թթ. ժամանակահատվածները:

Ինստիտուտի թեմատիկան համահունչ էր միության առաջատար կենտրոնների հետազոտական նոր ուղղություններին: 1960-ականներին մաթեմատիկական մեթոդների կիրառմամբ մշակվում են ՀՍՍՀ տնտեսության ամփոփ ցուցանիշների հեռանկարային տարբերակներ, ինչպես նաև հիմնական ֆոնդերի և արտադրական կարողությունների օպտիմալ օգտագործման տնտեսագիտական մաթեմատիկական մոդել (Վ.Դադայան, Ա.Հարությունյան, Ս.Սուքիասյան), իսկ 70-ական թվականներից գիտության էկոնոմիկայի, գիտության կառավարման, գիտահետազոտական կազմակերպությունների գործունեության գնահատման, վարձատրության հարցերը (Մ.Քոթանյան, Յու.Մաթևոսով, Ա.Մխիթարյան):

Հատկապես, սկսած 1950-ական թվականների վերջերից ինստիտուտը նշանակալից արդյունքների հասավ Հայաստանի տնտեսական պատմության և հայ տնտեսագիտական մտքի պատմության հետազոտության բնագավառում: Պարբերացվել է XIX-XX դարերի Հայաստանի տնտեսական պատմությունը, տրվել հողային հարաբերությունների և տնտեսության մյուս ճյուղերի, ֆինանսների, բնակչության և նրա սոցիալական կազմի վերլուծությունը (Մ.Ադոնց, Հ.Թումանյան, Մ.Եգանյան, Լ.Անանյան): Գրվել են մի շարք մենագրություններ հայ նշանավոր մտածողների սոցիալ-տնտեսական հայացքների վերաբերյալ վաղ միջնադար – ուշ միջնադար հետազոտվել (Ն.Թովմասյան): Հրատարակվել են հայ տնտեսագիտական մտքի պատմության առանձին շրջաններն ընդգրկող աշխատություններ, ուրվագծվել տնտեսագիտական մտքի հիմնական ուղղությունները (Ս.Զուրաբյան, Ն.Թովմասյան, Մ.Գրիգորյան): Սակայն, հարկ է նկատել, որ դրանցում, ինչպես նաև սոցիալիզմի տնտեսական կատեգորիաների ու օրենքների քննությունն ակնկալող ուսումնասիրություններում, տեսական միտքը ճանաչողական իմաստով ենթակա էր մարքսիստական հայեցողության նստվածքներին, ինչը սահմանափակում էր հետազոտական նոր որոնում-

ները, երևույթները ենթարկելով միակողմանի մեկնությունների:

1980-ական թվականների վերջերին խորհրդային տնտեսագիտական մտքի մթնոլորտում նկատելի էր մի աննախադեպ աշխուժություն: Տնտեսական երևույթներն ու կատեգորիաները սկսեցին ստանալ նոր մեկնություններ: Այս իմաստով հիշարժան է Մ.Քոթանյանի, որը տնտեսագիտության ինստիտուտի տնօրենն էր 1987-ից, «Գիտատեխնիկական հեղափոխությունը և տնտեսագիտության տեսությունը» (ռուս., 1988) մենագրությունը: Նրանում պահանջ է առաջարկվում ստեղծելու միասնական քաղաքատնտեսություն՝ վերացնելով քաղաքատնտեսության արհեստական բաժանումը կապիտալիզմի և սոցիալիզմի, իսկ արտադրության, բաշխման, փոխանակության կամ սպառման հարաբերությունների քննության ժամանակ արտադրությունը ելակետային համարելու դրույթը, հասարակական, կոլեկտիվ և անձնական շահերի դասակարգման մեջ անձնական շահին վերջին ֆունկցիա հատկացնելու մտայնությունը, սոցիալիզմի ժամանակ արտադրության միջոցների հանրայնացման արդյունքում տնտեսական ու սոցիալական հակասության հիմքերը վերանալու մասին վարկածը, հասարակության մտավոր ոլորտի դերի, արժեքի ստեղծման ժամանակ արտադրողական և ոչ արտադրողական աշխատանքը սահմանազատող հայացքը և այլ հարցեր ստացել են այլ մեկնաբանություններ:

1990-ական թվականներին Հայաստանը դիմորոշվեց դեպի շուկայական տնտեսաձևը: Հետազոտություններ են կատարվել շրջանների տնտեսական ինքնուրույնության կառավարման, կանխատեսվել են տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները՝ դրանք դիտելով որպես երկրի տնտեսական անվտանգության կարևոր ռազմավարություն: Առաջարկվել են Սևանա լճի ավազանի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների, էկոլոգատնտեսական հիմնահարցերի մշակման, էներգախնայող միջոցառումներ, նշվել են էներգիայի այլընտրանքային արդյունքների արդյունավետ օգտագործումը բարձրացնելու ուղիները: Մշակվել են տուրիզմի ինդուստրիայի ստեղծման հանձնարարականներ (Ռ.Իսախանով): Վերլուծվել են բարեփոխումների ռազմավարության և տակտիկայի հարցերը, հիմնա-

վորվել են հանրապետության ազգային էկոնոմիկայի ստեղծման, անկախության և ազգապահպանության ռազմավարական ուղղությունները, շուկայական էկոնոմիկայի պետական վերահսկման և կարգավորիչ դերի, քաղաքակիրթ շուկա ձևավորելու անհրաժեշտությունը (Մ.Քոթանյան, Վ.Խոջաբեկյան):

Քննական վերլուծության են ենթարկվել ագրարային արմատական վերակառուցումների նախնական արդյունքները, մշակվել են նաև Հայաստանի ագրոարդյունաբերական համալիրի հակաճգնաժամային միջոցառումների և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրույթները: Ուսումնասիրվել են հանրապետության գիտատեխնիկական ներուժի զարգացման և օգտագործման, ինովացիոն գործունեության, արտաքին տնտեսական կապերի զարգացման և կատարելագործման հիմնահարցերը (Գ.Խանիկյան, Թ.Թորոսյան, Հ.Ֆահրադյան): Ինստիտուտի հետազոտական գործունեության համար բնորոշ դարձան ամբողջատիրական էկոնոմիկայից շուկայականին անցման գործընթացները: Մ.Քոթանյանի «Շուկայական էկոնոմիկա» (1998) մենագրության մեջ քննության են առնվում բարեփոխումների ռազմավարության և տակտիկայի, այդ բնագավառում տեղ գտած բացթողումների և սխալների հարցերը, հիմնավորվում են հանրապետության տնտեսական զարգացման հեռանկարային ծրագրերի մշակման, ազգային տնտեսական մոդելի ստեղծման, անկախության ու ազգապահպանության ռազմավարական ուղղությունները:

Հետազոտվել են Հայաստանի հանքային հումքի և հանքարդյունաբերության էկոնոմիկայի առանձին ոլորտներ, մշակվել են առավելապես դեպի տեղական հանքահումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը վերակողմնորոշելու հնարավոր ուղղությունները, հիմնախնդիրների հետազոտության շրջանակներում տրվել են ՀՀ ոչ մետաղական օգտակար հանածոներից մի քանիսի օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությունները (Հ.Ավագյան): Հայաստանի էներգետիկայի զարգացման տնտեսագիտական հիմնահարցերի ուսումնասիրությամբ տրվել է ՀՀ վառելիքաէներգետիկ համալիրի և նրա բաղկացուցիչ մասը կազմող էլեկտրաէներգետիկ, ջերմամատակարարման և վառելիքամատակարարման համակարգերի զարգացման հիմնա-

կան մեթոդները, ճյուղի կառավարման համակարգի կատարելագործման ուղիները (Դ.Արշակյան): Ուսումնասիրվել են հարկաբյուջետային քաղաքականության սկզբունքները և դրանց կիրառումը ՀՀ-ում, ինվեստիցիոն շուկայի ձևավորման և բազմաթիվ այլ հիմնախնդիրներ (Ս.Պողոսյան, Ի.Հակոբյան):

2000թթ. ինստիտուտի գործունեությունը նշանավորվեց տնտեսագիտական հիմնախնդիրների հետազոտվող և նոր ուղղություններով: Հայաստանի բնակչության աճի և տեղաշարժերի օրինաչափություններին է նվիրված Վ.Ե.Խոջաբեկյանի «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը. XIX -XX դարերում XXI դարի շեմին» մենագրությունը (2002թ.):

2007-ից ինստիտուտի տարեգրության մեջ սկսվում է մի նոր շրջափուլ, երբ ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց տնտեսագիտական ուղղվածություն ունեցող ճյուղային տարբեր ենթակայության (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի ու գյուղատնտեսության նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն) երեք գիտահետազոտական ինստիտուտները՝ տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ, կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպել և միացնել «ՀՀ ԳԱԱ Ս.Քոթանյանի անվ. Տնտեսագիտության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը: Ինստիտուտի տնօրինությունը ստանձնեց Վ.Հարությունյանը: Սկսվեց բարդ ու դժվարին գործընթաց՝ կապված միացյալ ինստիտուտի նոր կոլեկտիվի, նորացված գիտական խորհրդի, գիտական նոր ուղղությունների, ինչպես նաև ինստիտուտի գիտակազմակերպչական նոր կառուցվածքի ձևավորման հետ: Անցած տարիների ինստիտուտի գործունեությունը բնորոշվեց որոշակի առանձնահատկություններով. ա) հետազոտվող գիտական թեմաներին տրվեց առավել շատ գործնական ուղղվածություն, թեմային վերաբերող եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացնելով ՀՀ կառավարությանը՝ վերջինիս կողմից մշակվող հայեցակարգային ու ռազմավարական փաստաթղթերում դրանք հաշվառելու ու ներառելու համար, բ) հանրա-

պետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին նվիրված հանրապետական ամենամյա գիտաժողովի անցկացումը և գիտական հոդվածների ժողովածուների հրատարակումը, գ) ինստիտուտի գիտական կոլեկտիվի երիտասարդացումը, դ) հրապարակվող գրքերի տարեցտարի ավելացումն ու որակի բարելավումը:

Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ, ծառայության ոլորտի զարգացման և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ, տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության գիտական ուղղություններն իրենց թեմատիկ մտադրություններում համապատասխանում են արդի պահանջներին:

Ինստիտուտում համակարգված ուսումնասիրությունների առարկա է դարձել հարկային համակարգը՝ հետազոտական տարբեր խմբերի կողմից ուշադրության առնելով նրա տարբեր շերտերը (դեկ. Վ.Հարությունյան): Ուշագրավ է «Հարկեր և հարկագանձում» աշխատությունը (հեղ. Վ.Հարությունյան, Դ.Հարությունյան, Տ.Հարությունյան): Նրանում ՀՀ հարկային օրենսդրության պատմությունը բաժանվում է երկու փուլերի՝ 1992-1997թթ.՝ որպես առաջին կամ ձևավորման փուլ և 1997-ից հետո՝ որպես երկրորդ կամ բարեփոխումների փուլ: Ինչպես ամբողջ տնտեսական համակարգի, այնպես էլ նրա մի մասը կազմող հարկային համակարգի համար դա բեկման ժամանակաշրջան էր, երբ նորմատիվ օրենքներով կարգավորվածությունը, գործողության մեջ դրված հարկատեսակներն ու տուրքերը հաճախ իրական հատվածում ունենում էին այլ հետևանքներ, ազգային տնտեսության աճի լծակներից վերածվելով «պատժամիջոցների»: Նշված հարցերը ստացել են համապատասխան մեկնաբանություններ և ժամանակի հոսքի մեջ վերհանվել հարկատեսակների և տուրքերի գործողության սահմաններն իրենց հակասական և կատարելագործում ակնկալող պարագծերում: Այդ հիմնախնդիրների լուծման համատեքստում առաջարկվում են հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական ու մեթոդաբանական մոտեցումներ: Ըստ էության կատարվում են ՀՀ հարկային օրենսդրության ընթերցումներ՝ կոնկրետացված ազգային տնտեսության տեսադաշտի վրա իրականության հետ համադրման, պար-

զաբանումների և միջազգային փորձի հաշվառման առումներով:

Ֆինանսական հիմնախնդիրներն իրենց վերլուծական խորագումներն են ստացել համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման, ֆինանսական համահարթեցման, հարկման արտերկրյա մոտեցումների և Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառման հնարավորությունների մասին հրատարակված աշխատություններում: Շեշտելով տեղական ինքնակառավարման հաստատության ձևավորման ու տեղական բյուջեների ֆինանսական ապահովվածության հիմնախնդրի կարևորությունը, առաջադրվում է համայնքային բյուջեների ֆինանսական ինքնուրույնության ապահովման ծրագրային մոտեցումներ՝ կապված հանրապետական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների հստակ սահմանազատման, համայնքների խոշորացման և բյուջեների ծավալների օպտիմալացման, համայնքային բյուջեների եկամտային աղբյուրների անվանացանկի ընդլայնման, հարկերի հաշվառման ու դրանց նկատմամբ վերահսկողությունը հարկային մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցելու հետ և այլն: Հիմնավորվում է, որ նշված բարեփոխումների արդյունքում կընդլայնվեն տնտեսության պետական կարգավորման հնարավորությունները՝ տնտեսական ու սոցիալական հարցերի լուծումներին տալով դինամիկ բնույթ:

Ինստիտուտի ուսումնասիրությունների մի բաժինն էլ վերաբերում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի խնդիրներին: Հրատարակված աշխատություններում փորձեր են արվել ճգնաժամի դրսևորումներն ու հետևանքներն առնչել հանրապետության տարբեր ոլորտների խնդիրներին: Այս ուղղությամբ Վ.Հարությունյանի «Համաշխարհային ֆինանսական ճգնաժամ» (2009), Վ.Հարությունյանի և Վ.Խաչատրյանի «Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում» (2009) առաջին մենագրություններն են, որոնցում ուսումնասիրելով ՀՀ տնտեսության մեջ մակրոտնտեսական քաղաքականության առանձին մեխանիզմների և գործիքների կիրարկման առանձնահատկությունները և տնտեսական հիմնահարցերի առկա վիճակն ու գնահատելով դրանց հետագա զարգացման միջոցառումներն ու հետանկարները, ծավալուն վիճակագրական տվյալների համակարգ-

ման արդյունքում առաջարկվում են միջոցառումներ՝ տնտեսության ապագա կայունության կողմնորոշումների տեսանկյունից:

Տնտեսության իրական հատվածի ուսումնասիրություններն ընդգրկում են ՀՀ գյուղատնտեսական արտադրության (ղեկ. Է.Ղազարյան), լեռնահանքային արդյունաբերության (ղեկ. Հ.Ավագյան), արտաքին տնտեսական կապերի (ղեկ. Թ.Թորոսյան) ոլորտները, որոնց վերաբերյալ հրատարակվել են մենագրական աշխատանքներ և բազմաթիվ հոդվածներ: Տնտեսության իրական հատվածի ուսումնասիրությունների վերաբերյալ լուրջ ներդրում է Հ.Ավագյանի «Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» աշխատանքը (2011թ.): Դրանցում.

- գյուղատնտեսության զարգացման համար կարևորվում է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը: Հիմնավորելով վերանայել և հստակեցնել Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների սուբյեկտների դասակարգման գործող չափանիշները՝ ոլորտի համար կատարվում են առաջարկություններ (կոռպերացիայի տարբեր ձևերի կիրառում, արտադրության գոտիական մասնագիտացում, ինստիտուցիոնալ կառուցվածքների ստեղծում, տեղերում ագրովերամշակման ուղղվածության ձեռնարկատիրության խթանում, ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանությանն ուղղված մաքսատուրքերի դրույքաչափերի վերանայում և այլն), որոնք իրենց հետևանքների մեջ բարերար ազդեցություն կունենան հանրապետության տնտեսական աճի վրա,
- լեռնահանքային արդյունաբերության ոլորտի թեմատիկ ընդգրկումներն ուղղված էին ՀՀ մետաղական օգտակար հանածոների գնահատմանն ըստ մարզերի, իսկ Մոսքի և Մեդրաձորի հանքերի գծով, համապատասխան հաշվարկներով, տրվել են նաև ազնիվ մետաղների կորզման և դրանց հետևանքով միջավայր թափված ծանր մետաղների և թունահարույց տարրերի քանակները և դրանց վտանգավոր էկոլոգիական հետևանքների գնահատականները,
- վեր են լուծվել Հայաստան-Եվրամիություն, Հայաստան-Թուրքիա առևտրատնտեսական կապերը, որոնք որոշակի պայման-



ներում օգտակար են դիտվում հանրապետության համար Եվրամիության և տարածաշրջանային ինտեգրմանը:

Վ.Հարությունյան, Ա.Թամազյան, Ն.Հայրապետյան հետազոտական խումբը արտահանման աճը քննության է ենթարկում տնտեսության մասնագիտացման հետ ունեցած կապերի մեջ: Անդրադառնալով խնդրի տեսական ու մեթոդական հիմքերին, դիտարկվում են ներդրումային ու արժույթային փոխանակության, ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հարցերը, որոշակի հայացքով ուրվագծում Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործունեության քանակական ու որակական բնութագրիչներն ու միտումները:

Հետազոտություններ են կատարվել մարդկային կապիտալի, ապագա մարդկային հասարակության էության բնութագրման ու ձևավորման, գիտության դերի վերաբերյալ (Բ.Եղիազարյան): Անդրադառնալով մարդկային կապիտալի հասկացության էությանը, որն առնչվում է երևույթների տարբեր տեսանկյունների հետ, ինչը կարող է հնարավորություն տալ հասկանալու արդի տնտեսական փոխակերպությունները, սահմանազատվում են մարդկային ռեսուրս, կադրային ռեսուրս, կադրային կապիտալ, մարդկային ներուժ, մարդկային զարգացում հասկացությունները: Մարդկային հասարակության, այսպես կոչված, անշեղ զարգացման տնտեսագիտական օրենքի գործողությունը, մարդկության սոցիալական ու բարոյական կատարելագործման իրական միջոցները կապվում են գիտության հետ: Իսկ վերջինս պայմանավորված է գործող կրթական համակարգով: Եվ որպես զարգացման և տնտեսական աճի վերաբերյալ նոր համակարգի մշակման անդրադարձ պիտի դիտել «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» հեղինակական կոլեկտիվի (Յու.Մուվարյան, Վ.Հարությունյան, Վ.Մարգարյան, Վ.Խաչատրյան) հետազոտությունը (2011): Դրանում գիտակրթական համակարգ-տնտեսական զարգացում կապը քննության է ենթարկվում հանրակրթություն-ասպիրանտական կրթություն հիերարխիայով, յուրաքանչյուրի հիմնախնդիրների և լուծման ուղիների վերաբերյալ առաջարկություններով՝ կապված կրթություն-գիտություն-արտադրություն կապի ուժեղացման, կրթության տարբեր աստիճանների միջև օպտիմալ հարաբերության

հասնելու, հիմնարար, կիրառական և բուհական գիտությունների միջև տարանջատվածության կրճատման, գիտության պետական ֆինանսավորման կատարելագործման և այլ խնդիրների հետ:

Ինստիտուտում ուշագրավ ձեռնարկումներից են տնտեսագիտական մտքի ընդհանուր պատմությանը և հայ տնտեսագիտական մտքի պատմությանը վերաբերող ուսումնասիրությունները (Վ.Հարությունյան, Ռ.Սարիսյան, Մ.Աղայան): Ծրագրային այդ իրացումներից է «Նշանավոր տնտեսագետների տողանը. գիտակենսագրական ուրվագծեր» երկհատորյակը (2009): Աշխատության գիտակենսագրական ուրվագծերը, ըստ էության, էքսկուրս է՝ սկսած մերկանտիլիստներից մինչև մինչքեյնսյան շրջան և հետքեյնսյան շրջանի տնտեսագիտական մտքի ուղեգծերով, որն արտահայտում է համաշխարհային տնտեսագիտական մտքի հետագիծը նշաձողերի և դպրոցների հաջորդափոխության մեջ: Ուրվագծերի համար ընտրվել է համառոտ հանրագիտարանական բառարանի սկզբունքը, որտեղ նրանում ընդգրկված տնտեսագետներից յուրաքանչյուրի վերաբերյալ ներկայացվում են կյանքի և գործունեության փուլերը՝ հիմնական ուշադրությունը դարձնելով գիտական գործունեության ու առաջադրած դրույթների՝ տնտեսագիտության համար ունեցած նշանակության և տնտեսական կյանքի վերաբերյալ գործնական լուծումների առումներով: Նմանատիպ մի փորձ է նաև «Հայ տնտեսագետներ» (2010) աշխատությունը: Այն, ըստ էության, հայ տնտեսագիտական մտքի պատմության ուղեցույց է անձնականացված նրանում ընդգրկված անունների գիտակենսագրական ուրվագծերի ձևով. XIX դարի կեսերից մինչև այժմ: Այդ ընթացքում հայ տնտեսագիտական միտքն անցել է փոխակերպությունների տարբեր հատվածներ՝ տնտեսական երևույթների ճանաչողական տարամոտեցումներով ու չափումներով, տնտեսական հարցերի բարդ ու հակասական լուծումներով, վերելքներով և վայրէջքներով: Աշխատությունն իր նպատակի մեջ հեռու է ճշտի և սխալի սահմաններ որոշելու հավակնությունից, այն արտահայտում է հայ տնտեսագիտական մտքի շարժման ընթացքն ինչպես որ կա:

Համաշխարհային ու հայ տնտեսագիտական միտքը գիտակենսագրական ուրվագծերի ձևով ընդհանրացնելու փորձը հա-

յերեն լեզվով առաջինն է:

Հրատարակվել է «Էջեր հայ տնտեսագիտական մտքի պատմություննից» աշխատությունը, որտեղ լուսաբանվում են XX դարի հայ հասարակական և տնտեսագիտական մի շարք ներկայացուցիչների հայացքները, իսկ Ռ.Սարինյանի «Արդի հայ տնտեսագիտական տեսություն» գրքերը (2007, 2011) վերաբերում են նորագույն շրջանի հայ տնտեսագիտական մտքի անհետագոտ ոլորտին և նպատակ ունեն որոշ պատկերացում տալ նրա արդի դիտակետերի, որոնումների և ազգային տեսության հետազոյի առումով:

Ինստիտուտի գիտական թեմաների կիրառական մշակումների արդյունքները եզրակացությունների և առաջարկությունների ձևով պարբերաբար ներկայացվել է:

ՀՀ կառավարությունը, քանի որ համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (ընդունված 11.04.2011 թվականին) 4-րդ հոդվածի, ակադեմիան գիտական գործունեության գծով ՀՀ կառավարության պաշտոնական խորհրդատուն է, որի առաջարկները քննարկում են կառավարությունը և պետական կառավարման համապատասխան մարմինները, որին էլ նպատակաուղղված է եղել ինստիտուտի 10-ամյա գործունեությունը, որի ընթացքում արված գիտական եզրակացություններն ու կիրառական առաջարկությունները իրենց արտացոլումն են ստացել «Ազգային տնտեսության: ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական հետազոյիծը (2007-2017թթ.): Եզրակացություններ, կիրառական առաջարկություններ» (Եր., ՀՀ ԳԱԱ գիտություն հրատ, 2017, 504 էջ) ժողովածուում, ինչպես նաև 2017թ. գիտահետազոտական աշխատանքների կիրառական արդյունքները, Երևան, 2018թ., 104 էջ:

Վերոնշյալ գրքում կիրառական առաջարկություններին մանրամասնորեն կարելի է ծանոթանալ հիշատակված հրապարակումներում, որոնք տեղադրված են ինստիտուտի էլեկտրոնային կայքում ([www.economics.am](http://www.economics.am)):

Հավելենք նաև, որ կայքում մատչելիությամբ տեղադրված են վերջին տարիներին ինստիտուտի հրատարակած շուրջ 500 հոդվածների և ավելի քան 40 գրքերի էլեկտրոնային տարբերակները: Մեկ տարուց էլ պակաս ժամանակահատվածում նորացված

կայքից հոդվածների և գրքերի ընդհանուր ներբեռնումների թիվը մոտենում է 1000-ի. սա վկայում է կայքի նկատմամբ մասնագիտական հանրության աճող ուշադրությունը և հետաքրքրությունը: Կայքը շարունակաբար զարգացնելու վերջնական նպատակն այն հաստատագիտական հանրության համար տեղեկատվություն ստանալու և մտքեր փոխանակելու միասնական հարթակի վերածելն է:

Վերջին 10-ամյակում նախապատրաստվել և հրատարակվել է «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտական հոդվածների թվով 20 ժողովածուներ՝ բաղկացած 4 գիտական ուղղություններից (մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսական իրական հատվածի հիմնախնդիրների ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ):

Փաստենք նաև, որ ինստիտուտի հետազոտական աշխատանքների կիրառական արդյունքների և առաջարկությունների նպատակայնությունն ու գործնականությունն ավելացնելու նպատակով փոխվել է բազային թեմաներ ընտրելու մոտեցումը, և վերջին տարիներին դրանք բոլորը բխեցվում են ՀՀ կառավարության ծրագրի ելակետային դրույթներից: Այս մոտեցումը կշարունակվի նաև առաջիկայում:

*ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր*

**ՎԼԱԴԻՄԻՐ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

**ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ,*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

## **ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՕՖՇՈՐԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՅՍԿՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Տրանսֆերային գնագոյացումը փոխկապակցված անձանց միջև ապրանքների և ծառայությունների իրացումն է՝ շուկայականից տարբերվող գներով, ինչը հնարավորություն է տալիս եկամուտները վերաբաշխել հոգուտ այն ընկերությունների, որոնք գործունեություն են ծավալում առավել թեթև հարկային դաշտում: Մա վճարվող հարկերը նվազագույնի հասցնելու առավել պարզ ու տարածված մեխանիզմ է:

Տրանսֆերային գնագոյացման հետ կապված հարաբերությունները նպատակաուղղված են զսպելու փոխկապակցված անձանց միջև կնքվող գործարքների առարկայի գնագոյացման հարցում փոխկապակցվածության գործոնի ազդեցությունը՝ կանխելով հարկվող եկամուտների արհեստական ուղղորդումը հարկման ավելի բարենպաստ դաշտ՝ պայմանավորված հարկային օրենսդրությամբ (տեղական կամ օտարերկրյա) նախատեսված առավելությունների կամ գործարքի կողմերից որևէ մեկի նկատմամբ կիրառելի արտոնությունների առկայությամբ:

Տրանսֆերային գնագոյացումը փոխկապակցված հարկ վճարողների կողմից կնքվող, պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանող և ֆինանսական ցուցանիշների ընթացակարգի կիրառմամբ վերահսկվող գործարքների գների գոյացումն է (գծապատկեր 1):


Օրինակ, զարգացած երկրներում, որտեղ գործում են նմանատիպ օրենքներ, հարկային վարչարարություն իրականացնող մարմիններին իրավունք է վերապահված ճշգրտել տնտեսապես չհիմնավորված ցուցանիշների ու գործոնների հաշվառմամբ, այսինքն՝ պարզած ձեռքի հեռավորության սկզբունքի չպահպանմամբ կնքված գործարքների արդյունքում հարկվող եկամտի գումարը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ նշված սկզբունքին համապատասխանությունը բացահայտվում է ուսումնասիրության առարկա հան-

դիսացող վերահսկվող գործարքի և դրա հետ համադրելի չվերահսկվող գործարքների պայմանների՝ գնագոյացման որոշ մեթոդների կիրառմամբ համեմատության արդյունքում:

Հարկ է նշել, որ գոյություն ունեն երկու տիպի գործարքներ՝

1. վերահսկվող գործարքներ, որոնք կատարվում են փոխկապակցված անձանց միջև,
2. չվերահսկվող գործարքներ, որոնք իրականացվել են փոխկապակցված չհամարվող անձանց միջև<sup>1</sup>:



**Գծապատկեր 1. Տրանսֆերային գնագոյացման մեխանիզմների գործընթացը<sup>2</sup>**

Վերահսկվող գործարքների դեպքում հարկային մարմիններն իրավունք ունեն ստուգելու կիրառված վերահսկվող գործարքներում շուկայական գների համապատասխանությունը, և եթե կողմերը չեն սահմանել շուկայական գներ, ապա ավելացնում են հարկերը: Տեսնենք, թե ինչպես կարող է հարկատուն, օգտագործելով օրենքով նախատեսված հնարավորությունները, նվազեցնել ռիսկերը տրանսֆերային գնագոյացման կա-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը տրանսֆերային գնագոյացման մասին. Հոդված 4. Վերահսկվող գործարքները:

<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5940&Reading=0>

<sup>2</sup> Գծապատկեր 1–ը կազմվել է հեղինակի կողմից:

նոնների կիրառման հետ կապված: Հարկատուների համար նախատեսված տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման բաժինը լի է մի շարք բարդություններով: Ի վերջո, փոխկապակցված անձանց միջև գործարքներ կատարող ընկերությունները պետք է ներկայացնեն վերահսկվող գործարքների ծանուցում, ինչպես նաև պատրաստեն փաստաթղթեր հարկային վերահսկողության նպատակով: Որն էլ զգալի աշխատանք և ֆինանսական ռեսուրսներ է պահանջում այդ ընկերություններից: Չարմանալի չէ այն, որ այդ պարագայում նրանցից ունանք փորձում են խուսափել վերահսկվող գործարքների կիրառումից, օրինակ՝ հրաժարվում են փոխկապակցված անձ լինելուց: Ուստի ընկերությունների մի խումբ փաստացի փոխկապակցված հարկատուներ լինելով հանդերձ ստեղծում են փոխկապակցվածության բացակայության տեսք: Օրինակ՝ բիզնեսի սեփականատերերը և ղեկավարները խուսափում են մասնակցել այլ ընկերությունների խմբերի կառավարմանը և տիրապետմանը: Նրանք փորձում են ձևականորեն խուսափել փոխկախվածությունից և, համապատասխանաբար, վերահսկվող գործարքների կանոնների կիրառությունից: Սակայն նման գործողությունները զգալի ռիսկեր են կրում:

Հարկ է նշել, որ վերահսկվող գործարքները կարող են լինել նաև ավելի քիչ ռիսկային: Եթե կան վերահսկվող գործարքներ, ապա կարելի է ընտրել գործնականում տրանսֆերային գնագոյացման այն մեթոդը, որը հնարավորություն է տալիս նվազեցնել ռիսկերը կապված գների հարկային վերահսկողության հետ, մասնավորապես՝<sup>3</sup>

1. Վերահսկվող գործարքները շուկայական պայմաններում: Հենց դա էլ պահանջում է Հարկային օրենսգիրքը: Որպես կանոն, շուկայական գինը դա գների միջակայքն է: Եթե այս միջակայքում սահմանվի գինը, ապա հարկային լրացուցիչ հետևանքներ չեն լինի: Շուկայական գների միջակայքի սահմաններում հարկատուն իրավունք ունի ընտրել այն գինը, որն իրեն ավելի շահավետ է: Այսպիսով, եթե շահույթ չհետապնդող (անարդյունավետ) ընկերությունը ապրանքը վաճառում է շահութաբեր ընկերությանը, ապա ամենաբարձր գինը կարող է ավելի շահավետ լինել, որպեսզի ծախսերը (կորուստները) տեղափոխի մեկ այլ խմբի ընկերության: Հետևաբար, այս պարագայում նպատակահարմար է սահմանել գինը այնպես, որ այն մոտ լինի միջակայքի վերին սահմանին: Սակայն, եթե ընկերությունը հակառակ իրավիճակում է, ապա ավելի շահեկան է, որ գինը ավելի մոտ լինի միջակայքի ստորին սահմանին: Շուկայական գների միջակայքում ընտրելով գինը, պետք է հիշել, որ հարկային մար-


<sup>3</sup> Электронный ресурс: Контролируемые сделки: выбор метода трансфертного ценообразования. <http://www.garant.ru/article/805167/>

մինը իրավունք ունի ստուգելու և չհամաձայնելու ընկերության կողմից որոշված գնի հետ:

2. Ներքին համադրելի գործարքները: Օրենսգրքի դրույթներին համապատասխան, առաջնային մեթոդը համադրելի շուկայական գների մեթոդն է: Հատկապես պետք է առանձնացնել, այսպես կոչված, ներքին համադրելի գործարքները, այսինքն, այն գործարքները, որոնք համադրվում են վերահսկվող գործարքների հետ, բայց կատարվել են ընկերության անկախ կողմի հետ կապված առևտրային և ֆինանսական համադրելի պայմաններում: Եթե հարկատուն գործարքներ ունի այն անձանց հետ, որոնք փոխկապակցված անձինք չեն համարվում, ապա այդպիսի գործարքների գները հանդիսանում են որպես առաջնահերթություն հարկման նպատակների համար: Հետևաբար, կարելի է կառավարել «ոչ փոխկապակցված» հարկատուների հետ իրականացված նման համեմատելի գործարքները, որպեսզի տեղեկատվական այլ աղբյուրների կիրառմամբ նվազեն հարկային մարմնի կողմից գների վերանայման ռիսկերը: Ներքին համադրելի գների օգտագործումը շահավետ է այնքանով, որ տեղեկատվության այս աղբյուրը տվյալների բազաների ձեռքբերման համար ծախսեր չի պահանջում:

3. Շուկայական գների որոշման մեթոդի ընտրությունը:

Հարկային օրենսգիրքը նախատեսում է շուկայական գների որոշման հինգ եղանակ (գծապատկեր 2):



*Գծապատկեր 2. Շուկայական գների որոշման մեթոդները<sup>4</sup>*

<sup>4</sup> Գծապատկեր 2–ը կազմվել է հեղինակի կողմից:



Թույլատրվում է օգտագործել այս մեթոդների երկու կամ ավելի համադրություն:

4. Անկախ գնահատական: Շուկայական գների արդարացման այս մեթոդը թույլատրելի է հազվադեպ դեպքերում: Նման դեպքերում գնահատողը ներգրավվում է մեկանգամյա գործարքի մեջ: Այս դեպքում մեկանգամյա գործարքը ընկալվում է որպես գործարք, որի տնտեսական էությունը տարբերվում է կազմակերպության հիմնական գործունեությունից և իրականացվում է հատուկ հիմունքներով: Հետևաբար, մեկանգամյա գործարքի համար գինը կարող է որոշվել անկախ գնահատողի գեկույցի (հաշվետվության) հիման վրա:

5. Օրենքով սահմանված պարտքային պարտավորությունների վերաբերյալ սահմանափակումների կիրառումը: Վերահսկվող պարտքային պարտավորությունների վերաբերյալ տոկոսների մեծության ճանաչման համար հատուկ կանոններ են սահմանվում: Օրենսգիրքը սահմանում է բոլոր տեսակի արժույթների տոկոսադրույքների միջակայքը, իսկ եթե որոշակի վարկի տոկոսադրույքը գտնվում է այդ միջակայքում, ապա վարկատուի եկամուտներն ու փոխառուի ծախսերը ճանաչվում են որպես շուկայական: Այդ դեպքում վերանում է շուկայական տոկոսադրույքի հաշվարկման անհրաժեշտությունը և հարկային վերահսկողության նպատակով փաստաթղթերի պատրաստումը: Միևնույն ժամանակ արգելվում է սահմանել փաստացի տոկոսադրույքի առավելագույն (նվազագույն) արժեք, այն կարող է լինել սահմանային արժեքների միջակայքում: Բայց այդ դեպքում կկիրառվեն բաժնի ընդհանուր կանոնները: Դա նշանակում է, որ հարկային մարմինը իրավունք ունի վիճարկել գործարքների գները հարկման նպատակներով:

6. Շրջանառության մեջ գտնվող արժեթղթերի գների որոշման մեթոդի ընտրություն: Ընդ որում, որոշ դեպքերում, թույլատրվում է կիրառել վերոնշյալ գների որոշման այն մեթոդները, որոնք նախատեսվում են: Այսպիսով, շրջանառության մեջ գտնվող արժեթղթերով գործարքների ֆինանսական արդյունքի ստեղծմամբ, հարկատուն իրավունք ունի ընդունել գործարքի հաշվարկման գինը հարկային նպատակներով, որոշված մեթոդների կիրառմամբ, օրենքով սահմանված կարգով<sup>5</sup>:


Չվերահսկվող գործարքները համադրելի են վերահսկվող գործարքների հետ այն դեպքում, եթե չկան այնպիսի էական տարբերություններ, որոնք կարող են էապես ազդել տրանսֆերային գնագոյացման համապատասխան մեթոդով քննության ենթակա ֆինանսական ցուցանիշների

<sup>5</sup> Электронный ресурс: Контролируемые сделки: выбор метода трансфертного ценообразования. <http://www.garant.ru/article/805167/>

վրա, կամ եթե առկա են նման տարբերություններ, ապա չվերահսկվող գործարքի համապատասխան ֆինանսական ցուցանիշը ենթարկվել է ճշգրտման<sup>6</sup>: Երկու կամ ավելի գործարքների համադրելիությունը պարզելու համար պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները

- գործարքի առարկայի բնույթը,
- գործարքի կողմերի իրականացրած գործառույթները,
- գործարքների պայմանագրային պայմանները,
- տնտեսական հանգամանքները, որոնց պայմաններում գործարքներն իրականացվել են,
- գործարքների մասով փոխկապակցված անձանց կողմերից որդեգրած գործարար ռազմավարությունները:

Չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվություն կարող են ներառել ներքին չվերահսկվող գործարքները և արտաքին չվերահսկվող գործարքները (գծապատկեր 3):



*Գծապատկեր 3. Չվերահսկվող գործարքների տեսակները<sup>7</sup>*

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը տրանսֆերային գնագոյացման մասին. Հոդված 7. Չվերահսկվող գործարքների մասին տեղեկատվության աղբյուրները: <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5940&Reading=0>

<sup>7</sup> Գծապատկեր 3-ը կազմվել է հեղինակի կողմից:

Հարկ է նշել, որ հարկային մարմինը չի կարող հիմնվել արտաքին չվերահսկվող գործարքի վրա ճշգրտումներ կատարելու նպատակով, եթե իրականացվող համադրելիության գնահատման մանրամասները պարունակում են հարկային գաղտնիք:

Ներքին և արտաքին գործարքների միջև առկա են որոշակի տարբերություններ՝ պայմանավորված տնտեսապես փոխկապակցված երկրների միջև ազգային ինքնիշխանությամբ և պետական սահմաններով: Այդ տարբերություններն են<sup>8</sup>

1. Միջազգային գործարքները պահանջում են արտարժույթով հաշվարկներ, որոնք փոխարկվում են ազգային արժույթով: Փոխանակման հարաբերակցությունը ենթարկվում է տարբեր տատանումների, հետևաբար փոխանակման գործընթացը ինքնին կապված է ռիսկերի և բարդությունների հետ, որոնք բնորոշ չեն ներքին գործարքներին:

2. Ազգային կառավարությունները կարող են կիրառել ցանկացած սահմանափակումներ միջազգային գործարքների վրա, որոնք, սակայն, չեն կիրառվում ներքին գործարքներում: Նման սահմանափակումների թվին կարելի է դասել սակագները, ներմուծման տարբեր քվոտաներ, այսպես կոչված, արտահանման արտոնյալ սահմանները, սուբսիդիաների միջոցով արտահանման խթանումը, ազգային արժույթի փոխարկելիության սահմանափակումները: Այս բոլոր միջոցները խորը ազդեցություն ունեն տնտեսության վրա, բայց հիմնականում վերաբերում են ոչ թե ներքին այլ միջազգային, տնտեսական գործընթացներին:

3. Յուրաքանչյուր երկիր վարում է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություն, որն ազդում է գնաճի, տնտեսական աճի, զբաղվածության մակարդակի վրա: Որպես կանոն, նման քաղաքականությունը երկրի ներսում ընդհանուր է բոլոր տարածաշրջանների համար, սակայն զգալիորեն տարբերվում է մի երկիրը մյուսից: Եթե, օրինակ, Ֆրանսիայում գնաճի մակարդակը մոտավորապես նույնն է իր բոլոր շրջանների համար, ապա Ֆրանսիայի և Գերմանիայի միջև այս ցուցանիշի տարբերությունները կարող են բավականին զգալի լինել, որն էլ ազդում է ինչպես տվյալ երկրների շուկաներում, այնպես էլ՝ երրորդ երկրների շուկաներում ապրանքների և ծառայությունների մրցունակության վրա: Այսպիսով, միջազգային առևտրի և ֆինանսական գործարքների բազմաթիվ փոփոխություններ առաջանում են այս կամ այն երկրի կողմից իրականացվող ներքին տնտեսական քաղաքականության արդյունքում:

<sup>8</sup> Электронный ресурс: Эволюция и развитие мировой экономики: Внешние и внутренние сделки. <http://mirovaja-ekonomika.ru/vneshnie-i-vnutrennie-sdelki/>

4. Սովորաբար յուրաքանչյուր երկիր տեղեկացված է արտաքին առևտրի կառուցվածքի, ծավալների և ուղղությունների մասին ավելի շատ, քան ներքին գործարքների նույն ցուցանիշների մասին: Միացյալ Նահանգներում, օրինակ, ոչ ոք չգիտի, թե ինչ ապրանքներ են վաճառվում և ինչ քանակությամբ Կալիֆորնիայի նահանգի և Նյու Յորքի քաղաքների միջև: Վարչական սահմաններում պետությունների միջև ոչ ոք չի արձանագրում այդ տեղեկությունները: Մեկ այլ բան է արտաքին առևտուրը: Երբ առևտրային նավը դուրս է գալիս կամ մտնում է օտարերկրյա նավահանգիստ, վաճառողները կամ գնորդները պետք է լրացնեն արտահանման կամ ներմուծման հոչակագիր՝ տեղեկացնելով բեռի բնույթի, քաշի, արժեքի, դրա ստացողի և ուղարկողի, ինչպես նաև այլ տեղեկությունների մասին: Հենց սա այն առևտրային հայտարարագրերից է, որոնք պարտադիր են բոլոր երկրներում, որոնք կարող են ձեռք բերել ավելի քիչ կամ ոչ այնքան ճշգրիտ վիճակագրական տեղեկատվություն միջազգային առևտրի և այլ համաշխարհային տնտեսական գործարքների վերաբերյալ, ինչը հաճախ բավարար չէ ներքին առևտրի և այլ գործարքների վերլուծության համար:

5. Արտադրության գործոնները շատ ավելի շարժունակ են երկրի ներսում, քան երկրների միջև: Շատ քիչ բան կարող է խանգարել ԱՄՆ-ի կամ Անգլիայի շրջանների միջև աշխատանքի տեղաշարժին: Այնուամենայնիվ, ներգաղթի բոլոր սահմանափակումները, լեզուն և այլ սոցիալ-մշակութային տարբերությունները երբեմն լուրջ խոչընդոտներ են հանդիսանում երկրների միջև մարդկանց տեղաշարժի համար: Իհարկե, աշխատուժի համեմատ, կապիտալը շատ ավելի հեշտ է տեղաշարժվում, սակայն այդ դեպքում ևս ավելի ցայտուն է երկրի ներսում, քան տարբեր պետությունների միջև:

6. Եվ վերջապես, արտաքին շուկաներ ներթափանցելու համար արտահանողները պետք է իրենց արտադրանքը հարմարեցնեն արտասահմանյան սպառողների ստանդարտների ու ճաշակի հետ:

Ներքին և արտաքին տնտեսական կապերի միջև ամկա բոլոր տարբերությունները ավելի շուտ վերաբերում են դրանց իրականացման ձևերին, քան բուն գործընթացների էությանը: Մինչդեռ այս տարբերությունները այնքան կարևոր և եզակի են, որ համաշխարհային տնտեսության աճի հետ մեկտեղ հանգեցրել են տնտեսական գիտելիքների կոնկրետ ոլորտի՝ համաշխարհային տնտեսության ձևավորմանը: Համաշխարհային տնտեսությունը որպես գիտություն շուկայական տնտեսության մի մասն է, որը ուսումնասիրում է տարբեր երկրների միջև տնտեսական փոխգործակցության ձևերի օրինականությունը, ապրանքների և ծառայությունների

միջազգային փոխանակման բնագավառում<sup>9</sup>: Կարևոր խնդիրներից մեկը ՀՀ Հարկային նոր օրենսգրքում տրանսֆերային գնագոյացման կանոններին, հարևան երկրներում դրանց կիրառման գործնական օրինակներին, հարկատուների հետ այդ նոր կանոններին համապատասխանելու համար անհրաժեշտ նախապատրաստական քայլերն են, որոնք բավականին անհանգստացնում են ՀՀ հարկատուներին:

Այսպես, հարկային նոր օրենսգրքի համաձայն՝ փոխկապակցված անձանց միջև գործարքները պետք է իրականացվեն շուկայական սկզբունքներով, այսինքն՝ գները չպետք է տարբերվեն շուկայականից: Հարկային մարմինն տրվում է լիազորություն՝ վերահսկելու այս գործարքները, իսկ հարկատուները պարտավորվելու են ներկայացնել նման գործարքներում գների ձևավորման հիմնավորումը: ՀՀ-ում, ինչպես և տարածաշրջանային երկրներում, տրանսֆերային գնագոյացման կանոնների ներդրման այս փուլում ընկերություններին անհանգստացնող առաջնային խնդիրը տեղեկատվության պակասն է: Հարկատուների մոտ բացակայում է գների հիմնավորման հմտություններն ու փորձը, որը բնական է և պետք է ձևավորվի ժամանակի ընթացքում: Այս հարցում շատ կարևոր է, որպեսզի հարկային մարմինն ընդառաջ գնա և բաց երկխոսություն վարի հարկատուների հետ: Կարծում եմ, որ ՀՀ կառավարությունն իսկապես մտահոգված է և աշխատում է այս ուղղությամբ. առաջիկայում այն նախատեսում է տրանսֆերային գնագոյացման որոշ տեխնիկական մանրամասների վերաբերյալ պարզաբանում հրապարակել, որը թույլ կտա հստակեցնել թեման և նվազագույնի հասցնել կողմերի միջև հնարավոր վեճերը:

Հարկատուների մյուս անհանգստությունը կապված է հարկային գաղտնիք համարվող տեղեկատվության օգտագործման հետ: Չնայած օրենքն արգելում է նման տեղեկատվության օգտագործումը հարկային ստուգումների ժամանակ, այդուհանդերձ, ընկերությունները շարունակում են մտահոգված լինել, որ հարկային մարմինը կարող է օգտագործել այս տեղեկատվությունը, որը հասանելի չէ անձամբ հարկատուին:

Հետևաբար՝ շատ ավելի կարևոր է, թե ինչպես են կանոնները կիրառվելու կոնկրետ իրավիճակներում: Ցավոք սրտի, մյուս երկրներում երբեմն հանդիպում ենք նման տեղեկատվության ոչ նպատակային օգտագործման դեպքերի: Ամեն դեպքում, հայաստանյան հարկատուները կառավարությունից արդարացի մոտեցում են ակնկալում:

---

<sup>9</sup> Электронный ресурс: Эволюция и развитие мировой экономики: Внешние и внутренние сделки. <http://mirovaja-ekonomika.ru/vneshnie-i-vnutrennie-sdelki/>

Տրանսֆերային գնագոյացման սկզբունքների ներդրումը անհրաժեշտ է դիտարկել գործարար միջավայրի և ներդրումային գրավչության տեսանկյուններից: Չնայած այն բանին, որ այս հարկատուների համար լրացուցիչ պարտավորություններ է նախատեսում, սովորաբար նման կանոնների ներդրումն օտարերկրյա ներդրողների կողմից դրականորեն է ընկալվում: Արտասահմանցի գործարարները ցանկանում են վստահ լինել, որ գործարքի երկու կողմերում էլ հարկային մարմինների կողմից գործում են միատեսակ մոտեցումներ, իսկ գործարքում կիրառվող գները շուկայական են և արդարացի: Եվ եթե երկիրը ներդնում է միջազգային սկզբունքներին համապատասխանող կանոններ, ապա դա, միանշանակ, պետք է ողջունվի գործարար հանրության կողմից:

ԱՊՀ երկրներում տրանսֆերային գնագոյացման մեխանիզմները բավականին նման են միմյանց, ինչը նշանակում է, որ տրանսֆերային գնագոյացման սկզբունքները միասնական են և դրանց գնահատման վերաբերյալ կիրառվում են միանման չափորոշիչներ: Օրինակ, ՀՀ-ում տրանսֆերային գնագոյացման մեխանիզմների գործընթացը սերտորեն կապված է Ռուսաստանի, Ղազախստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի և նույնիսկ Ադրբեջանի համանման գործընթացի հետ: Բոլոր այս երկրներում օրենսդրությունները բավական նման են: Բնական է, որ կան որոշակի տարբերություններ՝ կապված տվյալ երկրի առանձնահատկությունների հետ, և հիմնականում վերաբերում են նրան, թե երկիրը կոնկրետ որ գործարքների վրա է կենտրոնանում առաջին հերթին: Այսինքն՝ տրանսֆերային գնագոյացման մեխանիզմների առանձին բաղադրիչներում գոյություն ունեն տարբերություններ, սակայն, ընդհանուր առմամբ, մոտեցումները շատ թե քիչ միատեսակ են:

Հետևաբար, հանգամանորեն մշակված օրենսդրության ընդունումը, անշուշտ, կարևոր է, սակայն առավել հրատապ է դրա պատշաճ կիրառությունը: Հենց այս հարցերում էլ առաջանում են տարբերություններ այդ երկրների միջև:

Այս համատեքստում վերլուծվել է տրանսֆերային գնագոյացման մեխանիզմները և դրանում իրականացվող գործընթացները ԱՊՀ երկրներում:

Այս խնդիրների համատեքստում վերլուծվել են տնտեսական, ֆինանսական, սոցիալական, իրավական հարաբերությունները, որոնք ազդեցություն են ունեցել տրանսֆերային գնագոյացման վրա:

«Օֆշոր» տնտեսագիտական եզրույթն առաջին անգամ կիրառվել է 20-րդ դարի 1950-ական թվականների վերջում ԱՄՆ-ի արևելյան ափի թերթերից մեկում: Խոսքը իր գրանցման վայրը փոխելու միջոցով կառա-

վարության վերահսկողությունից խուսափած մի ֆինանսական կազմակերպության մասին էր<sup>10</sup>:

Օֆշորային մեխանիզմները դեռևս կիրառվել են հին Աթենքում, երբ մտցվեց երկտոկոսանոց ներմուծման և արտահանման հարկ, հույն և փյունիկեացի վաճառականները սկսեցին քսան մղոնով շրջանցել Աթենքը, իսկ հետո, որպես հարկային ապաստան սկսեցին օգտագործել մոտակա կղզյակները, ուր ապրանքները բերում էին մաքսանենգ ճանապարհով առանց հարկեր և տուրքեր մուծելու<sup>11</sup>:

Շվեյցարիան դարձավ ժամանակակից օֆշորային գոտիների նախատիպը: Խնդիր ունենալով իր տնտեսության մեջ ֆինանսական բիզնեսի ներգրավումը, Շվեյցարիայում ստեղծվեցին դրամի փոխանակման կենտրոններ, ներդրվեցին ֆինանսական գաղտնիության ինստիտուտներ, ինչն էլ օտարերկրյա կապիտալի համար հարմար ապաստարան ստեղծեց<sup>12</sup>: Ընդունվեց օրենք, որը պարտադրում էր դրամատներին վարել հաճախորդների հաշիվները, բայց արգելում էր տրամադրել այդ տվյալները որևէ մեկին:

Հետագայում այլ երկրներ ևս սկսեցին գործել շվեյցարականի նման: Աշխարհի օֆշորային գոտիները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի.

1. Կղզի օֆշորներ՝ Խաղաղ և Հնդկական օվկիանոսների, Կարիբյան ծովի ոչ մեծ կղզիներ և կղզիների խմբեր: Դրանց հիմնական առանձնահատկություններն են հարկերի իսպառ բացակայությունը, չափավոր և հաստատագրված վճարումների համակարգի կիրառումը, հաշվապահական հաշվառում չպարտադրելը, սեփականատերերի և գործարքների վերաբերյալ գաղտնիության բարձր աստիճանը: Այս գոտիներում գրանցված ընկերությունները, սակայն, հաճախ ունենում են կասկածելի վարկ ու ցածր համարում:

2. Եվրոպական օֆշորային գոտիներն ունեն անհամեմատ բարձր կարգավիճակ և օֆշորային ընկերության տարեկան սպասարկումը կարող է արժենալ տասնյակ հազար դոլարներ: Այս երկրներն ունեն հարկային արտոնություններ գործունեության որոշակի տեսակների համար: Այս գոտիները չի կարելի է համարել լիարժեք օֆշորներ, քանզի կան հարկեր, պարտադիր է հաշվապահական հաշվառումը, անցկացվում է աուդիտ, իսկ սեփականատերերի մասին տեղեկությունները տրամադրվում են ընդհանուր կարգով:

<sup>10</sup> «Бизнес под „удобным“ флагом», «Русский Investor», 2002, № 11, с. 34.

<sup>11</sup> <http://www.mynalog.com.ua/planirovanie/46-nalogovoe-planirovanie/70-criminal.html>

<sup>12</sup> <http://www.taxman.ru/3.html>

3. Որոշ վարչատարածքային գոյացություններ, որտեղ հարկային հատուկ ռեժիմ է գործում: Օրինակ, ԱՄՆ-ի որոշ նահանգներում, Մալագիայում և այլն:

Օֆշորային գոտիների համապարփակ ցուցակ գոյություն չունի: Օֆշորային գոտիների վերահսկողությամբ զբաղվում են ինչպես Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ), այնպես էլ տարբեր երկրների կենտրոնական բանկերը:

**Օֆշորային ընկերություններ:** Օֆշորային ընկերությունը երկրի օֆշորային կենտրոնում գրանցված օտարերկրյա ընկերություն է, որը օգտվում է իրեն տրամադրված հատուկ հարկային և այլ արտոնություններից: Այդ ընկերությունները իրավունք ունեն գործունեություն ծավալել միայն օֆշորային գոտուց դուրս: Օֆշորային ընկերության ստեղծման հիմնական նպատակը հարկային օպտիմալացումն է: Ճիշտ կազմակերպված օֆշորային բիզնեսի շնորհիվ կարելի է նաև ստանալ հետևյալ առավելություններ՝ սեփականության պաշտպանվածությունը, անանուն և գաղտնի գործելու հնարավորությունը, ծախսերի կրճատումը, հաշվապահական հաշվառումից, հաշվետվություններից ու այլ թղթաբանությունից ազատումը:

Սկսած 2013 թվականից տեղի են ունեցել օֆշորի դեմ պայքարին ուղղված բազմաթիվ միջոցառումներ, ինչը նախադրյալներ ստեղծեց G5 անվամբ երկրների մի նոր խմբի առաջացմանը, որի կազմում ներառվում են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Իսպանիան, Իտալիան, Ֆրանսիան: Այդ երկրները պարտավորվում են մասնակցել հարկային տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգին՝ ամերիկյան ֆորմատին FATCA համապատասխան: Հետագայում այդ համակարգին միացան Բերմուդները, Բրիտանական Վիրջինյան կղզիները, Մոնտսերատը, Թյորքս և Կայկոս կղզիները, ինչպես նաև Մեն, Գերնսի, Ջերսի և Ջիբրալթար կղզիները:

Պետք է նշել, որ օֆշորներն ու տրանսֆերային գնագոյացումը կապված են միմյանց հետ, քանի որ տրանսֆերային գնագոյացումը զգալի փոփոխությունների է ենթարկում հարկային օրենսդրությունը աշխարհի գրեթե բոլոր երկրներում, մասնավորապես այն երկրներում, որոնք ունեն օֆշորային հարաբերությունը կարգավորող օրենքներ:

Ինչ վերաբերում է ՀՀ-ը, տրանսֆերային գնագոյացումը որևէ կերպ օրենքով կարգավորված չի: Սակայն, արդեն իսկ սահմանվել են նոր հարկային օրենսգրքի կազմում տեղ գտած տրանսֆերային գնագոյացման կանոններ, որոնք ուժի մեջ են մտել 2018թ. հունվարի 1-ից:

Հարկ է նշել, որ Հայաստանը Տնտեսական Համագործակցության և Ջարգացման Կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ է: Հետևաբար Հայաստանը



տանյան տրանսֆերային գնագոյացման կանոնները հիմնված են ՏՀԶԿ տրանսֆերային գնագոյացման սկզբունքների վրա:

Օֆշորային գոտիներում վերահսկվող գործարքների տեսանկյուններից տրանսֆերային գնագոյացման չարաշահումները, միջազգային առևտրի ու օտարերկրյա ուղղակի ներդրումների մակարդակի կտրուկ աճի պայմաններում, ռիսկի են ենթարկում հարկման բազաները (եկամտահարկի, շահութահարկի, մետաղական օգտակար հանածոների շոյալթիների մասով):

Հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությունը հանրապետությունում սահմանվել է հետևյալ օֆշորային գոտիներ<sup>13</sup>:

Վերջին տարիներին կտրուկ ընդլայնվել է օֆշորային և ազատ տնտեսական գոտիներում առևտրի ծավալը, ինչը նույնպես ռիսկեր է ստեղծում եկամուտների վերաբաշխման համար: Հետևաբար, անհրաժեշտ է վերլուծել այն գործարքները, որոնց ժամանակ օգտագործված գները կարող են ազդեցության ենթարկվել կողմերի կախվածության պատճառով, ինչը, իր հերթին, կարող է ազդել հավաքագրված հարկային եկամուտների վրա, ինչպիսիք են փոխկապակցված անձանց միջև տեղի ունեցող միջազգային գործարքները, օֆշորային գոտիներում գրանցված անձանց հետ իրականացված գործարքները, ինչպես նաև ներքին գործարքները, երբ կողմերից մեկը մետաղական օգտակար հանածոների շոյալթի վճարող է կամ օգտվում է հարկային արտոնություններից, կամ էլ գրանցված է ազատ տնտեսական գոտում: Պետք է փաստել, որ ՀՀ ԱԺ մերժել է «Օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների գործունեությունը Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտում կարգավորելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչը հիմնավորվել է նրանով, որ այդ խնդիրները հնարավոր է լուծել «Տրանսֆերային գնագոյացման մասին» ՀՀ օրենքով:

Այսպիսով՝ տրանսֆերային գնագոյացման տեսանկյունից վերահսկվող են համարվելու այն գործարքները, որոնք կարող են իրականացվել ՀՀ հարկ վճարող և օֆշորային գոտիներում գրանցված անձանց միջև՝ անկախ փոխկապակցվածության հանգամանքից, ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ փոխկապակցված անձանց միջև, ՀՀ ռեզիդենտ փոխկապակցված անձանց միջև գործարքները, երբ գործարքի կողմերից առնվազն մեկը հանդիսանում է շոյալթի վճարող կամ օգտվում է հարկային արտոնություններից կամ տնտեսական գործունեություն է իրականացնում ազատ տնտեսական գոտում:

---

<sup>13</sup> «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: N 915-Ն: ՀՀՊՏ 2012.08.08/38(912)

# ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՕՃՇՈՐԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԵՐԱՅՍԿՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՉԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ,*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**Համառոտագիր:** Տրանսֆերային գնագոյացման տեսանկյունից վերահսկվող են համարվելու այն գործարքները, որոնք կիրականացվեն ՀՀ հարկ վճարող և օֆշորային գոտիներում գրանցված անձանց միջև՝ անկախ փոխկապակցվածության հանգամանքից, ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ փոխկապակցված անձանց միջև, ՀՀ ռեզիդենտ փոխկապակցված անձանց միջև գործարքները, երբ գործարքի կողմերից առնվազն մեկը հանդիսանում է ոռյալթի վճարող կամ օգտվում է հարկային արտոնություններից կամ տնտեսական գործունեություն է իրականացնում ազատ տնտեսական գոտում:

**Բանալի բառեր.** *տրանսֆերային գնագոյացում, օֆշորային գոտի, մարսային արժեք, օտարերկրյա ներդրումներ, հարկային մարմիններ, միջազգային առևտուր:*

## МЕХАНИЗМЫ ТРАНСФЕРНОГО ЦЕНООБРАЗОВАНИЯ В КОНТЕКСТЕ АНАЛИЗА КОНТРОЛИРУЕМЫХ ОПЕРАЦИЙ ОФФШОРНЫХ ЗОН

**КРИСТИНЕ ЮРЬЕВНА БАГДАСАРЯН**, *к.э.н., доцент,*  
*старший научный сотрудник*  
*Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** С точки зрения трансферного ценообразования сделки, которые будут проводиться между налогоплательщиками и зарегистрированными в офшорных зонах, независимо от взаимосвязи между резидентами РА и нерезидентами, между аффилированными лицами-резидентами РА по крайней мере, одна из сторон сделки является плательщиком роялти или пользуется налоговыми льготами, или экономической деятельностью в свободной экономической зоне.

**Ключевые слова:** *трансферное ценообразование, морской пояс, таможенная стоимость, иностранные инвестиции, налоговые органы, международная торговля.*

# THE MECHANISMS OF TRANSFER PRICING IN THE CONTEXT OF ANALYSIS OF TRANSACTIONS CONTROLLED FROM OFFSHORE ZONES

**KRISTINE YURI BAGHDASARYAN**, *Ph.D.in Economics, Associate Professor*  
*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** From the point of view of transfer pricing, the transactions that will be carried out among the taxpayers, the residents of the Republic of Armenia, and their counterparts registered in the offshore zones, regardless the interconnection among thereof: interconnection between non-resident and Armenian resident entities, between Armenian resident entities, will be considered as controlled transactions, when at least one of the parties engaged in a transaction is a royalty payer, benefits from tax exemptions and/or incentives, or conducts economic activity in the territory of a free economic zone.

**Keywords:** *Transfer pricing, offshore zone, customs value, foreign investment, tax authorities, international trade.*

## **ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մոտ երկու ամիս առաջ Համաշխարհային բանկը ներկայացրեց մի գեղեկոյց՝ «Մարդկային կապիտալի նախագիծ» վերնագրով<sup>1</sup>, որտեղ, ըստ ներկայացվող նոր մեթոդաբանության, առաջին անգամ հաշվարկվել է 157 երկրների համար մարդկային կապիտալի համաթիվը՝ ՄԿՀ: Առաջին տասնյակում ներառվել են Սինգապուրը, Հարավային Կորեան, Ճապոնիան, Հոնկոնգը, Ֆիլիպինները, Իռլանդիան, Շվեդիան, Նիդեռլանդները և Կանադան: Այս երկրներում մարդկային կապիտալի արժեքը տատանվում է 0.8-ից մինչև 0.88 միավոր և կախված է կրթության և առողջապահության մակարդակից: Տեսականորեն, երկրի տնտեսությունը, որի մեջ այսօր նորածինն ապահովված է դրանցով ամբողջությամբ, ստանում է 1 միավոր:

Համաթիվը բաղկացած է հինգ ցուցանիշից՝ մինչև հինգ տարեկան ապրելու հավանականությունը, երեխայի ուսման սպասվող տարիները, հարմոնիզացված թեստերի միավորները՝ որպես ուսումնառության որակի չափանիշ, չափահասների ապրելիության ցուցանիշը (15 տարեկանների այն մասը, որը կապրի մինչև 60 տարեկան) և երեխաների այն մասը, որը թերաճ չէ:

Աշխարհի մասշտաբով՝ այսօր ծնված բոլոր երեխաների 56 տոկոսը մեծանալով, լավագույն դեպքում, իր կարողության կեսի չափով արտադրողական կլինի. 92 տոկոսը մեծանալով, լավագույն դեպքում, իր կարողության 75 տոկոսի չափով արտադրողական կլինի:

Համաշխարհային բանկը նշում է, որ մարդկային կապիտալում ներդրումներ կատարելը առողջության պահպանման, որակյալ կրթություն, աշխատատեղերի ստեղծման և մասնագիտական որակների բարձրացման եղանակով օգնում են զարգացնել մարդկային կապիտալը, որը շատ կարևոր է աղքատության վերացման և ավելի սոցիալական համերաշխ հասարակություն ձևավորելու համար:

Ինչու ենք առանձնահատուկ ուշադրություն դարձրել այս համաթվին: Ճիշտ է՝ շատ մասնագետներ ոչ միանշանակ են վերաբերվում գեղեկոյցին և դրա մեթոդաբանությանը, սակայն ամեն դեպքում՝ այն թույլ է

<sup>1</sup> The Human Capital Project, WB 2018

տալիս գոնե համեմատական պատկերացում կազմել իրական պատկերի մասին: Պատճառն այն է, որ թե՛ նախկինում, թե՛ այժմ գրեթե բոլորը, խոսելով Հայաստանի տնտեսական զարգացման ներուժի մասին, նշում են, որ մեր ամենակարևոր, գլխավոր և ամենաթանկ ռեսուրսը մարդկային կապիտալն է՝ ՀՀ քաղաքացին՝ հարուստ փորձով, գիտելիքներով և ունակություններով:

Ընդհանրապես, երկարաժամկետ տնտեսական աճի տարբեր մոդելներում մշտապես կարևորվում է մարդկային կապիտալի դերը: Ու հատկապես Հայաստանի համար, որն էներգակիրներով աղքատ ու աշխարհագրական անբարենպաստ դիրք ունեցող երկիր է, մարդկային կապիտալը դառնում է, ըստ էության, միակ արժեքավոր ռեսուրսը:


Այս առումով, մենք հաճախ գերազնահատում ենք ինքներս մեզ, մեր մտավոր ներուժը: Սակայն ճիշտ քաղաքականություն մշակելու համար անհրաժեշտ է ոչ միայն չգերազնահատել սեփական մարդկային կապիտալը, այլև չթերազնահատել այլ երկրներին:

Հայաստանի համար ՄՀԿ-ն 57 է: Դա նշանակում է, որ Հայաստանում այսօր ծնված երեխան, երբ մեծանա, 57 տոկոսով այնչափ արտադրողական կլինի, որչափ կարող էր լինել ամբողջական կրթություն ստանալու և լիարժեք առողջ լինելու դեպքում: Այսինքն, մեր մարդկային կապիտալը 43 տոկոսով ոչ արտադրողական է: Որպեսզի հասկանանք՝ 57%-ը բարձր է, թե՛ ցածր, պետք է համեմատել այլ, ու առաջին հերթին՝ մեզ համար հետաքրքրություն ներկայացնող երկրների հետ:

Որպես այդպիսի ընտրել ենք նախկին ԽՍՀՄ երկրները և կազմել ենք մարդկային կապիտալի զարգացման համաթվերի համեմատականը՝ նախկին ԽՍՀՄ երկրների կտրվածքով: Զեկույցում բացակայում են միայն Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Բելառուսի տվյալները:

Մարդկային կապիտալի առումով Հայաստանին զիջում է միայն Տաջիկստանը: Մյուս բոլոր երկրներն անհամեմատ ավելի լավ ցուցանիշներ ունեն: Իսկ ԵՍՏՄ անդամ Ղազախստանն ու Ռուսաստանը մարդկային կապիտալի համաթվով գերազանցում են անգամ Մերձբալթյան երկրներից երկուսին և մոտ են եվրոպական միջինին (գծապատկեր 1):

Ընդհանուր առմամբ, աշխարհի մասշտաբով մարդկային կապիտալի համաթիվը 0.57 է՝ այնքան, որքան Հայաստանում: Այսինքն, մենք միջին մարդկային կապիտալ ունեցող երկիր ենք, ընդ որում՝ այդ աշխարհի միջինը ստացվել է հիմնականում աֆրիկյան երկրների ցածր ցուցանիշների արդյունքում: Սա նշանակում է, որ Աֆրիկյան չդիտարկելու դեպքում Հայաստանի համաթիվը ցածր է մնացած աշխարհի միջինից:



Գծապատկեր 1. Մարդկային կապիտալի համաթիվ 2017թ<sup>2</sup>

Տարիներ շարունակ, երբ խոսք է գնացել Հայաստանի տնտեսության առանձնահատկությունների և հատկապես առավելությունների մասին դա համարվել է մարդկային կապիտալը: ՀՖ-ի վերը նշված զեկույցը փաստում է, որ արդեն այդ առավելությունը տարիների ընթացքում ինչ-ինչ պատճառներով մենք կորցրել ենք և այսօր, հատկապես մարդկության զարգացման այս ժամանակաշրջանում, երբ զարգացման, տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը մարդկային կապիտալն է, Հայաստանն առավել քան պետք է ամեն ինչ անի վերագտնելու իր կորցրածը, երկրի զարգացման համար որպես հիմնական ներուժ դիտարկելով իր երկրի քաղաքացուն՝ մարդուն:

Մեր երկրի ոչ հեռավոր անցյալի դառը փորձը մեզ թույլ է տալիս արձանագրել, որ 28 տարվա անկախության տարիներին Հայաստանի Հանրապետությունը այդպես էլ չկարողացավ լուծել ամենակարևոր խնդիրը – չգտավ զարգացման իր ուրույն ճանապարհը: Տարիների ընթացքում հանրությանը ներկայացված ոչ մի ծրագիր՝ լինելով, այսպես կոչված, ռազմավարական, իրականություն չդարձան: Այդ բոլոր ծրագրերը միայն մի նպատակ էին հետապնդում՝ ապահովել կայունություն և ոչ թե զարգացում: Այս երկրնորանքը մինչ այսօր չի լուծվել, գործող կառավարությունները, ազգային ժողովներն ընդամենն ապահովել են կայունության հարցը: Սա եղել է նաև տարբեր միջազգային կազմակերպությունների գործելաձևը: Բիհարկե եղել են տարիներ, երբ ապահովվել է տնտեսական

<sup>2</sup> Կազմվել է ըստ “The Human Capital Project”, WB 2018, տվյալների:

աճ, սակայն այն ուղղված չի եղել երկարաժամկետ, զարգացում ապահովող ծրագրերի, խնդիրների իրականացմանը:

Աշխարհում օրինակներ շատ կան՝ ՉԺՀ, Հարավային Կորեա, Մինգապուր<sup>3</sup>, Ճապոնիա, որոնք ապացուցում են, որ տնտեսական աճ-զարգացում հայեցակարգը միշտ կենսունակ է երկիրը հաջողության հասցնելու համար:

Վերջին հարցադրումը պահանջում է կոնկրետ քայլեր և դրանց իրականացման հաջողականություն՝ այսինքն քաղաքականություն: Այսօր շատ են խոսում նոր տնտեսական քաղաքականության անհրաժեշտության մասին: Այդ քաղաքականությունը կամ դրա առանձին մասերը ներկայացնելիս հատկապես ընդգծված տեսակետ կա ճյուղային առաջնահերթությունների սահմանման վերաբերյալ:<sup>4</sup>

Նախ և առաջ պետք է հասկանանք, որ ժամանակակից աշխարհում, ժամանակակից տեխնոլոգիաների պայմաններում, ճյուղային առաջնահերթություններ կամ գերակայություններ չեն կարող լինել: Հաճախ են կառավարությանը ասում՝ «թվարկեք ճյուղային գերակայությունները»: Կառավարություններն էլ շատ հաճախ, առանց հաշվի առնելու ժամանակակից պայմանների առանձնահատկությունները, հատկապես պայմանավորված չորրորդ արդյունաբերական հեղափոխությամբ, փորձում են գտնել այդ «առաջնահերթությունները»:

Ըստ մեզ՝ կառավարության համար պետք է լինի միայն մեկ առաջնահերթություն՝ մարդկային կապիտալը - ներդրումներ կրթության, առողջապահության և կենսաթոշակային համակարգերում: Ըյուղային (արդյունաբերական) առաջնահերթությունների հետ կապված ցանկացած փորձ վտանգավոր է: Վտանգավոր է երկու պատճառով:

Առաջին հերթին, ի տարբերություն XIX դարի և XX դարի առաջին կեսի, ճյուղային առաջնահերթությունները, ճյուղերը փոխվում են շատ արագ: Օրինակ, եթե որևէ մեկը նախատեսում է այսօր արտադրել համակարգիչներ կամ ֆոտոնկարահանող ապարատներ, ապա գերակա դիրք շուկայում հնարավոր չի լինի զբաղեցնել, քանի որ, երբ այդ նպատակն իրականացվի, կպարզվի, որ այդ համակարգիչները կամ ֆոտոապարատները այլևս ոչ մեկին պետք չեն՝ հիշենք հանրահայտ «Կոդակի» ֆոտոապարատների, «Նոկիա» բջջային հեռախոսների հետ կապված անհաջո-

<sup>3</sup> Руслан Алиханов, “Реформы по-азиатски. Три рецепта ускорения экономики”, <https://republic.ru/posts/76245>:

<sup>4</sup> «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր», ՀՀ կառավարության որոշում, 1 հունիսի, 2018 թ., N 581-Ս:

ղությունների պատմությունները: Ինչ-որ առումով սա վերադարձ է XVIII դարի տնտեսություն:

XVIII դարում Ճյուղային առաջնահերթություններ չկային: Այսօր նման իրավիճակ է համաշխարհային տնտեսությունում: Ժամանակակից աշխարհում գոյություն ունեն առաջադեմ և հետամնաց տեխնոլոգիաներ. գյուղատնտեսությունը կարող է զարգանալ հիմնված կենսատեխնոլոգիայի վրա և կարող է հետ մնալ, նույնը հանքարդյունաբերությունը կարող է առաջադեմ լինել և հետ մնալ՝ կապված ինչ տեխնոլոգիաներ է կիրառում, և այլն:

Այս տեսանկյունից մրցակցություն կարող է լինել ոչ թե ճյուղերի միջև, այլ ձեռնարկությունների կամ տնտեսական միավորների միջև: Չկա Ճյուղային առաջնահերթություն: Կարելի է լինել արդյունաբերական երկիր հետամնաց տեխնոլոգիաներով, և կարելի է լինել ագրարային երկիր առաջադեմ տեխնոլոգիաներով: Սա շատ կարևոր երևույթ է, որը պահանջում է սկզբունքային այլ տնտեսական քաղաքականություն:

Հաջորդը, պետք է լինի այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը կտարբերվի XIX դարի և XX դարի առաջին կեսի, այսպես կոչված, «հետևից հասնելու» մոդելը, որի դեպքում պետությունը և բյուջեն զգալիորեն ավելի քիչ դեր են խաղալու:

«Հետևից հասնելու» մոդելի համար՝ լինել այն Գերմանիան, Ճապոնիան կամ ԽՍՀՄ-ը, բյուջեի բեռը ՀՆԱ-ի վրա շատ մեծ էր: Այս մոդելի իմաստը նրանում էր, որ բյուջետային ռեսուրսները կենտրոնացվում էին, դրանք ուղղում էին դեպի առաջատար ոլորտներ, և դրանից հետո սկսում էին փակել տնտեսությունում առաջացած բացերը: Արդյոք սա պետության պարտականություն է, և արդյոք պետությունը պետք է որոշի որոնք են առաջատար տեխնոլոգիաները և դրանք ֆինանսավորի: Պետությունը չի կարող որոշել, թե որն է ավելի կարևոր: Պետությունը պետք է զբաղվի կրթությամբ, առողջապահությամբ, իսկ մնացածը պետք է թողնի բիզնեսին:

Մեկ այլ երևույթի մասին, որը կապված է մարդկային կապիտալի հետ և բնորոշ այսօրվա մեր հայաստանյան իրականությանը: Մեզ համար լրջագույն մարտահրավեր է մարդկային կապիտալի կորուստը: Շատերը գնում, հեռանում են երկրից ապրելու, աշխատելու, սովորելու, բուժվելու լավագույն պայմաններ գտնելու ակնկալիքով: Սա էլ մեր ժամանակների երևույթ է: Հիսուն տարի առաջ, որպեսզի ապրելիք զարգացած երկրում, երկիրդ էիր զարգացնում: Հիմա ամեն ինչ ավելի հեշտ է, կարելի է գումար հայթայթել կամ աշխատանք գտնել այլ երկրում և մեկնել: Ընդ որում սովորել մեկ երկրում, բուժվել մյուսում, գործարարությամբ զբաղվել երրորդում, բոլոր դեպքերում դա երկրից հեռանալ է նշանակում:



Վերը թվարկածն իր ամբողջությամբ նշանակում է նոր տնտեսական քաղաքականության փիլիսոփայություն, որի կարիքն այսօր Հայաստանի Հանրապետությունը առավել քան երբևէ ունի: Այն բոլոր մարտահրավերները, որոնց առջև կանգնած է պետությունը, պահանջում են այլ մոտեցումներ, այլ գաղափարախոսություն, քան եղել են մինչ այսօր: Մարդկանց հետաքրքրում են ոչ թե թվերը, որոնք խոսում են տվյալ երկրի տնտեսական աճի կամ ՀՆԱ-ի մեծության մասին (աղյուսակ 1), այլ իրենց կյանքի որակը, բարեկեցությունը<sup>5</sup>, դրանց հետ կապված պետության կամ բիզնեսի կողմից մատուցվող ծառայությունների և ապրանքների հասանելիությունը (աղյուսակ 2, գծապատկեր 2, գծապատկեր 3):

*Աղյուսակ 1*

**ՀՀ համախառն ներքին արդյունքը և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, 2007–2017թթ.<sup>6</sup>**


Տարիներ	ՀՆԱ		ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով		Տեղեկատու	
	մլն ՀՀ դրամ	մլն ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար միջին տարեկան փոխարժեքը	մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակը, հազ. մարդ
<b>2007</b>	3,149,283	9,206	976,068	2,853	342.08	3,226.5
<b>2008</b>	3,568,228	11,662	1,103,348	3,606	305.97	3,234.0
<b>2009</b>	3,141,651	8,648	968,539	2,666	363.28	3,243.7
<b>2010</b>	3,460,203	9,260	1,062,683	2,844	373.66	3,256.1
<b>2011</b>	3,777,94.6	10,142.1	1,247,711	3,350	372.50	3,027.9
<b>2012</b>	4,266,460.5	10,619.4	1,410,820	3,512	401.76	3,024.1
<b>2013</b>	4,555,638.2	11,121.3	1,507,491	3,680	409.63	3,022.0
<b>2014</b>	4,828,626.3	11,609.5	1,602,172	3,852	415.92	3,013.8
<b>2015</b>	5,043,633.2	10,553.3	1,678,637	3,512	477.92	3,004.6
<b>2016</b>	5,067,293.5	10,546.1	1,693,444	3,524	480.49	2,992.3
<b>2017</b>	5,568,901.5	11,536.5	1,869,072	3,872	482.72	2,979.5

<sup>5</sup> Владимир Май: «Людым нужен не рост ВВП, а рост благосостояния», [www.bfm.ru/news/356210](http://www.bfm.ru/news/356210).

<sup>6</sup> Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվներ, 2014, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014թ., էջ 27: Հայաստանի ազգային հաշիվներ, 2017, Եր., ՀՀ ԱՎԾ, 2017թ., էջ 35: ՀՀ ԱՎԾ, Վիճակագրական տվյալների բազաներ, ազգային հաշիվներ:


**Հայաստանի Հանրապետության բնակչության եկամուտների բաշխումն ըստ դեցիլային խմբերի<sup>7</sup>, %**

Դեցիլներ		Մեկ շնչի հաշվով դրամական եկամուտները									
		2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ամենա-աղքատ	I.	1.9	1.9	1.9	2.1	1.9	1.9	2.0	1.9	2.0	1.7
	II.	3.7	3.7	3.5	3.5	3.6	3.5	3.6	3.4	3.6	3.3
	III.	4.9	5.0	4.8	4.9	4.9	4.7	5.0	4.8	4.9	4.5
	IV.	6.3	6.2	6.3	6.3	6.1	6.0	6.0	5.9	6.0	5.8
	V.	7.2	7.5	7.7	7.7	7.6	7.2	7.3	7.0	7.3	7.1
	VI.	8.7	8.9	8.9	8.9	8.3	8.6	8.7	8.3	8.2	8.3
	VII.	10.3	10.4	10.7	10.7	10.2	10.1	9.8	9.7	9.6	10.0
	VIII.	12.4	12.3	13.1	13.1	12.3	12.2	12.0	11.9	11.7	13.0
	IX.	15.7	16.7	16.0	16.0	15.8	15.8	15.6	15.5	14.7	17.5
Ամենա-հարուստ	X.	28.9	27.4	27.1	27.1	29.1	30.0	30.1	31.6	32.2	28.8



**Գծապատկեր 2. Տնտեսական աճը և աղքատությունը Հայաստանում, 2001-2016թթ.<sup>8</sup>**

<sup>7</sup> Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2007, էջ 92, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2010, էջ 109, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 105, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ԱՎԾ, 2017, էջ 105:



**Գծապատկեր 3. Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքը 2016 թվականին (տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)<sup>9</sup>**

Մեզ մոտ տնտեսական աճը հասանելի չի եղել ազգաբնակչության մի զգալի մասին: Այդ առնչությամբ հայտնի սոցիոլոգ Զիգմունդ Բաումանը քննադատել է տնտեսական աճը նրա համար, որ այն ծառայում է «ի օգուտ» բացառապես հարուստների – նա այսպես է ներկայացնում ավտորիտար-օլիգարխիկ ռեժիմներին բնորոշ աճի իրական պատկերը. «...Հարուստների կուտակած հարստությունները չեն «հասնում» նույնիսկ նրանց, ովքեր գտնվում են հարստության և եկամտի հիերարխիայում նրանց շատ մոտ, էլ չենք խոսում նրանց մասին, ովքեր կանգնած են աստիճանների ավելի ցածր մակարդակի վրա:...«Տնտեսական աճը» ազդանշան է ոչ մեծաքանակ ընտրյալների հարստության աճի մասին, որն ուղեկցվում է անհամար թվով մարդկանց սոցիալական վիճակի կտրուկ վատթարացմամբ և նրանց ինքնազնահատման նվազմամբ»<sup>10</sup>:

Արդյոք այսպիսին չի եղել տնտեսական աճը Հայաստանում վերջին քսան տարիների ընթացքում: Իհարկե եղել են և կան առանձին բացառություններ, սակայն դրանք ընդամենը բացառություններ են: ՀՀ քաղաքացիները հիմնականում զրկված են եղել ոչ միայն տնտեսական աճից

<sup>8</sup> Աղբյուրը՝ Armenia Gap Analysis. Strategic Planning and Analysis Division Program Office E&E Bureau USAID, March 20, 2018.

<sup>9</sup> Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., ՀՀ ՍՎՄ, 2017, էջ 113:

<sup>10</sup> Бауман Зигмунт: Идет ли богатство немногих на пользу всем прочим? Институт экономической политики имени Е.Т. Гайдара, М 2015, стр. 162.

օգտվելու հնարավորությունից, այլ նաև զրկված են եղել երկրում նոր արդյունքի ստեղծմանը մասնակցելու հավասար հնարավորություններից՝ հովանավորչությունը, իրավունքի հավասար կիրառելու և մրցակցության բացակայությունը, կոռուպցիան շատերին զրկել էին երկրում ապրելու, արարելու, հանրօգուտ աշխատանքով ապրելու որևէ շարժառիթից, և նրանցից շատերին ստիպել երկրից հեռանալ:

Իրավիճակը փոխելու համար նոր տնտեսական քաղաքականության իմաստը, նպատակը պետք է լինի տնտեսական աճից օգտվողների թիվը ավելացնելը, դրանով հասարակության տարբեր խմբերի միջև անհավասարության աճը հաղթահարելը, անորոշության ավելացմանը դիմակայելու հարցում աշխատողներին օգնելը, այն պետք է օրգանապես կապված լինի հայաստանցիների քաղաքական և տնտեսական նախապատվությունների զարգացման ընթացքի հետ և պետք է դրսևորվի ոչ թե որպես արդեն իսկ ստեղծված տնտեսական արդյունքի վերաբաշխման գործիք, այլ տնտեսական հնարավորությունների ստեղծման և տնտեսական արդյունքի մեծացման միջոց:

## **ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԱՐԱՄ ՎԱՀԱԳՆԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ**, *տ.գ.թ.*,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հոդվածում ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում նոր տնտեսական քաղաքականության անհրաժեշտության հիմնավորումներ, որոնք կապված են ինչպես վերջին քաղաքական իրադարձությունների հետ, այնպես էլ անկախ դրանցից, խիստ անհրաժեշտ են երկրին տնտեսական առաջընթաց ապահովելու համար: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել մարդկային կապիտալին, ժամանակակից տնտեսության զարգացման գործում նրա դերին, տնտեսության զարգացման առաջնահերթություններին: Քննարկման առարկա են դարձել նաև ՀՀ-ում ներառական զարգացման հիմնախնդիրները:

**Բանալի բառեր.** *մարդկային կապիտալ, ներառական զարգացում, տնտեսական աճ, ճյուղային առաջնահերթություններ, կյանքի որակ, բարեկեցություն:*

## О НЕОБХОДИМОСТИ НОВОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ В РА

**АРАМ ВААГНОВИЧ ХАЧАТУРЯН**, *к.э.н.*,

*научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** В статье излагается необходимость новой экономической политики в Республике Армения, которая связана как с недавними политическими событиями, так и независимо от этого, является очень важным инструментом для экономического прогресса страны. Особое внимание уделено человеческому капиталу, его роли в развитии современной экономики, приоритетам экономического развития. В статье обсуждаются также вопросы инклюзивного развития Армении.

**Ключевые слова:** *человеческий капитал, инклюзивное развитие, экономический рост, отраслевые приоритеты, качество жизни, благосостояние.*

## THE NEED FOR NEW ECONOMIC POLICY THE NEED FOR NEW ECONOMIC POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA

**ARAM VAHAGN KHACHATURYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article justifies the need for elaborating a new economic policy in the Republic of Armenia, conditioned by both the recent political events and facts that are not associated with thereof, required to ensure the economic growth in the country. A special attention is paid to the human capital, its role in ensuring the development of the modern economy, and the priorities of economic development. The article discusses the issues of inclusive growth in the Republic of Armenia as well.

**Keywords:** *Human capital, inclusive development, economic growth, sectoral priorities, quality of life, welfare.*

## ԱՐՓԻՆԵ ՄԵԽԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթայանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ

### ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Գործարար միջավայրը յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն է, որի զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմելու անցումային տնտեսությունների բնորոշ տնտեսական և սոցիալական դժվարությունները՝ կայուն պայմաններ հետագա տնտեսական աճի համար, հետևաբար գործարար միջավայրի զարգացումն ազդում է տվյալ երկրի կյանքի որակի բարելավման և բարձրացման վրա:

Բազմաթիվ հեղինակներ, այդ թվում նաև հայազգի և օտարազգի, իրականացրել են գործունային վերլուծություն գործարար միջավայրի բարելավման, դրա գործոնների վերլուծության, հարկային համակարգի, ներդրումային միջավայրի առումով, հետևաբար «գործարար միջավայր» տնտեսագիտական հասկացության վերաբերյալ տրվել են տարբեր սահմանումներ, որոնց բովանդակությունը, կարծես թե, համընկնում է<sup>1</sup>:

Այսպես՝ ըստ Ֆիլ Քելիի գործարար միջավայրը բոլոր պայմանների, իրադարձությունների ամբողջությունն է, որոնք շրջապատում և ազդում են վերջինիս վրա<sup>2</sup>, իսկ ըստ Քեյթ Դենի՝ գործարար միջավայրը այն բոլոր պայմանների, իրադարձությունների և «ազդեցությունների» հանրագումարն է, որոնք շրջապատում և ազդում են դրա վրա:

Պետք է նշել, որ գործարար միջավայրի ուսումնասիրությամբ ներգրավված են միջազգային տարբեր կառույցներ, մասնավորապես, ըստ Համաշխարհային բանկի գործարար միջավայրը գործոնների համախումբ է, որը բնութագրում է տվյալ երկրի առևտրային կազմակերպությունների գործարարությամբ զբաղվելու մոտիվացիան՝ արդյունավետ ներդրումային քաղաքականության, նոր աշխատատեղերի ստեղծման, համաշխարհային մրցակցային շուկաներին ինտեգրման արդյունքում<sup>3</sup>:

Հետևաբար՝ ընդհանրացնելով գոյություն ունեցող սահմանումներն

<sup>1</sup> Дергунов А. Системный подход развитию национальной инновационной среды. Инновации N3.2008 53-56 с.

<sup>2</sup> Phil Kelly and Ashwin “The Business Environment”, 2013, pp.78-81.

<sup>3</sup> Всемирный Банк, “Доклад о мировом развитии”, 2005, с. 9-11.

ու ձևակերպումները, գործարար միջավայրը կարելի է բնութագրել որպես ներքին և արտաքին գործոնների փոխազդեցության հետևանքով տնտեսվարող սուբյեկտի գործարար ունակությունը կարգավորող գործընթաց, որի նպատակը նվազագույն ռեսուրսներով առավելագույն շահույթի ապահովումն է: Բացի այդ, գործարար միջավայրը գործարարների տնտեսական, ձեռնարկատիրական, իրավական, սոցիալական, մշակութային արժեքները համակարգող և ձեռնարկատիրական անկայունությունը նկարագրող գործընթաց է:

Հարկ է նշել, որ դեռևս գոյություն ունեն, այսպես ասած, «պետական կառավարման մարմինների» և բիզնեսի «սերտաճման» խնդիրներ, որոնց պատճառով Հայաստանում գործարար միջավայրի բարելավում տեղի չի ունենում, քանի որ բախվում են օրինական հարկ վճարողների և «պետական հովանավորչական» հարկ վճարողների բիզնես շահերը, որի արդյունքում կորում է օրինական դաշտում գործող տնտեսվարող սուբյեկտների մոտիվացիան, հետևաբար Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման գործում հրատապ խնդիրներից մեկը տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն է, հատկապես սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համատեքստում:

Հայաստանի Հանրապետության տնտեսության իրական հատվածում գոյություն ունեն բազմաթիվ խնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի կառուցվածքային զարգացմանը: Այդ առումով, տնտեսության առանձին ոլորտներում իրականացվող բարեփոխումները կարող են նպաստել տնտեսության և գործարարության ենթակառուցվածքների արդիականացմանը և նոր հարթակ ձևավորել արտադրություն-վերամշակում-շուկա շղթայի լիարժեք գործարկմանը, որն էլ կնպաստի հատկապես, ՀՀ հագուստի ոլորտում համախառն ավելացված արժեքի և այդ ոլորտում ներգրավված զբաղվողների եկամուտների ավելացմանը, հետևաբար անհրաժեշտ է գնահատել գործարար ակտիվության հնարավորությունները հագուստի ոլորտը զարգացնելու նպատակով:

Հագուստի արդյունաբերության ոլորտը, թեպետ, ներկայումս բավարար չափով մրցունակ չէ, սակայն, եթե հաշվի ենք առնում, որ երկրում առկա են բրդի, մետաքսի սեփական արտադրություն հիմնելու նախադրյալներ, գորգագործության, հագուստի, կոշիկեղենի արտադրության մեջ հարուստ ավանդույթների, էժան և որակյալ աշխատուժի առկայությունը, ինչպես նաև ԱՊՀ երկրների շուկաներ ազատ մուտքի հնարավորությունը, հեռանկարային է դառնում ոլորտում արտահանման և արտադրության

փոխկապակցված աճի հնարավորությունը: Վերջին ժամանակներս ոլորտում հայտնված արտերկրյա մի քանի հայտնի ընկերություններ ցույց տվեցին, որ հնարավոր է առկա ռեսուրսներով միջազգայնորեն մրցունակ արտադրանք թողարկել: Բացի այդ, տեքստիլ արդյունաբերությունը քիմիական արդյունաբերության հետ փոխկապակցված զարգացնելու պարագայում լայն հնարավորություն է բացվում նաև քիմիական արհեստական մանրաթելերի և դրանցից արտադրանքի արտահանման ծավալների մեծացման համար: Ներկայումս նման արտադրանք արտահանվում է, սակայն չնչին ծավալներով (ընդհանուրի 0.1%-ը):

Վերոնշյալից բացի, կարելի է զուգահեռաբար սկսել համաշխարհային շուկայում այս ոլորտի համեմատաբար նոր ճյուղի զարգացումը՝ չիրկիզվող պոլիմերային նյութերի և կտորների արտադրություն, որոնք օգտագործվում են մեքենաների, ինքնաթիռների, նավերի ներքին սրահների երեսպատման, հյուրանոցների, դպրոցների և այլ կառույցների շինարարության մեջ, ինչպես նաև վարագույրների, գորգերի արտադրության մեջ: Հարկ է նշել, որ այս նյութերը ներկայումս չունեն այլ փոխարինիչներ: Բհարկե, սավածը ենթադրում է միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացում, քանզի անհրաժեշտ է նորարարական մոտեցում ցուցաբերել և նախ և առաջ մշակել նման նյութերի արտադրության արդյունավետ տեխնոլոգիա: Ընդ որում, հարկ է նշել, որ համաշխարհային տնտեսության մեջ նման նյութերի բավականին զգալի պահանջարկ կա: Տեքստիլ արդյունաբերության մեջ նորարարության ներդրման պարագայում կարելի է մտածել նաև Հայաստանում տեխնիկական տեքստիլի արտադրություն սկսելու մասին, որը, ի դեպ, կնպաստի ոչ միայն ՀՀ արտահանման աճի հնարավորությանը, այլ նաև տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը (տեխնիկական տեքստիլն օգտագործվում է բժշկության, շինարարության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում):



## 2008-2016թթ շշ-ի արտահանումը ըստ ապրանքային խմբերի

(մլն դրամ)<sup>4</sup>

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Մետաքս	-	-	1.0	-	-	-	-	-	1.5
Բուրդ	45.9	10.7	1.4	23.7	0.4	-	0.1	-	-
Բամբակ	12.9	13.8	3.6	87.7	26.0	67.2	3.0	18.6	309.1
Այլ բուսական մանածագոր- ծական գործվածք	1.4	-	0.3	-	-	3.4	-	10.7	-
Քիմիական թելեր	43.5	11.6	22.7	41.6	7.9	47.0	-	19.7	82.7
Քիմիական գործվածք	33.4	31.5	44.1	3.7	64.7	23.0	26.0	0.5	53.2
Բամբակ, հա- տուկ գործվածք, ճուպան	12.2	4.2	279.9	25.4	12.3	15.6	93.3	80.2	111.6
Գորգեր և հա- տակի այլ ծած- կոցներ	7.8	3.6	54.7	38.7	76.6	95.5	69.2	42.9	215.7
Հատուկ կտոր- ներ, ասեղնա- գործ կտորներ	51.7	1.8	0.2	9.0	1.8	1.3	1.3	0.3	17.7
Տեքստիլ, կրկնագործված իրեր	0.7	2.4	26.2	4.3	0.2	2.3	-	0.5	39.3
Տրիկոտաժե պաստառ մե- քենայական կամ ձեռքի գործվածքով	72.6	63.0	0.7	15.1	4.6	-	-	39.7	757.3

<sup>4</sup> ՀՀ ՄԿՄ շրապարակումներ «արտաքին տնտեսական գործունեություն, ըստ արտաքին գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման» 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ., էջեր 53, 51-52, 49-50, 40, 49-50, 49-50, 50-51, 50-51, 50-51, [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_08\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_08_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_09\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_09_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_10\\_8.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_10_8.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_11\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_11_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_12\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_12\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_12\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2\\_nish\\_2016\\_9.pdf](http://armstat.am/file/article/ft_2_nish_2016_9.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2\\_nish\\_2017\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2_nish_2017_10.pdf).

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Տրիկոտաժե հագուստ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	406.9	311.2	622.6	607.7	1284.8	1882.4	1041.4	3032.9	7796.3
Տրիկոտաժե հագուստ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	86.3	62.8	1244.3	2085.7	6094.2	13629.7	19464.3	29359.4	36830.9
Կոշիկ, զուգագուլպաներ	270.6	276.9	501.8	544.3	910.1	886.9	650.1	574.4	1039.3
Գլխարկներ և դրանց մասեր	97.6	28.2	9.5	5.5	26.3	8.9	11.4	136.9	106.2

Անդրադառնալով ՀՀ-ի հագուստի ոլորտի արտահանմանը ըստ ապրանքային խմբերի (դիտարկվել են 50-65 ապրանքախմբերը), պետք է նշել, որ 2014-2016թթ. հիմնականում արտահանվել են տրիկոտաժե հագուստ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով (միջինը կազմելով 28551.5 մլն դրամ), տրիկոտաժե հագուստ մեքենայական կամ ձեռքի գործվածքով (միջինը կազմելով 3956.8 մլն դրամ) և կոշիկ, զուգագուլպաներ (միջինը կազմելով 754.6 մլն դրամ) ապրանքախմբերը (**տե՛ս աղյուսակ 1-ը**), իսկ ներմուծվել են տրիկոտաժե հագուստ բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով (միջինը կազմելով 22571.1 մլն դրամ), տրիկոտաժե հագուստ մեքենայական կամ ձեռքի գործվածքով (միջինը կազմելով 16057.0 մլն դրամ) և կոշիկ, զուգագուլպաներ (միջինը կազմելով 12583.0 մլն դրամ) ապրանքախմբերը (**տե՛ս աղյուսակ 2-ը**), սակայն տրիկոտաժե հագուստ մեքենայական կամ ձեռքի գործվածք և կոշիկ, զուգագուլպաներ ապրանքախմբերի ներմուծումը 12100.2 մլն դրամով և 11828.4 մլն դրամով գերազանցում է այս ապրանքախմբերի գծով արտահանմանը, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել ներմուծման փոխարինում այս ապրանքի գծով, որն էլ հնարավորություն կտա մեծացնել միջազգային համագործակցության կապերը, ստեղծել նոր հարթակներ այս ապրանքների շուկաների գրավման և միջազգային ասպարեզ դուրս գալու, հետագայում նաև երկրի վարկանիշը բարձրացնելու առումով, ինչպես նաև այս ոլորտի զարգացումը հնարավորություն կտա լուծելու սոցիալ-տնտեսական շատ խնդիրներ՝ զբաղվածության մակարդակի բարձրացում, աղքատության մակարդակի կրճատում, եկամուտների բարձրացում, սակայն տրիկոտա-

ժե հագուստ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքի ապրանքախմբի արտահանումը 5980.4 մլն դրամով գերազանցում է ներմուծմանը, այսինքն՝ այս ապրանքախմբի նկատմամբ կա կայուն պահանջարկ:

*Աղյուսակ 2*

**2008-2016թթ. ՀՀ-ի ներմուծումը ըստ ապրանքային խմբերի**

(մլն դրամ)<sup>5</sup>

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Մետաքս	0.7	0.6	4.9	19.5	8.9	12.4	13.6	9.4	14.1
Բուրդ	162.4	299.2	188.0	288.8	327.6	314.1	261.1	749.4	263
Բամբակ	309.1	201.8	3213.1	5076.9	3961.4	4310.6	4594.3	4763.9	6465
Այլ բուսական մանածագործական գործվածք	3.3	0.3	80.0	43.8	42.8	45.1	138.1	91.7	140.6
Քիմիական թելեր	26.7	40.9	3355.6	5621.8	5475.1	6652.1	7473.7	7176.0	9646.6
Քիմիական գործվածք	120.8	75.6	2566.3	4836.8	6268.9	7030.9	9948.2	17077.0	22471.3
Բամբակ, հատուկ գործվածք, ճոպան	28.8	37.0	866.6	1126.9	1320.2	1597.4	1908.8	1873.0	2835.8
Գորգեր և հատակի այլ ծածկոցներ	83.0	15.3	1462.6	2012.1	2064.9	1970.9	1878.0	894.9	1535.0
Հատուկ կտորներ, ասեղնագործ կտորներ	34.7	7.1	437.8	755.6	901.4	967.4	1243.5	1212.9	1652.2
Տեքստիլ, կրկնագործված իրեր	54.9	110.4	1047.6	1365.1	1455.6	1217.2	1415.5	1710.7	2368.7

<sup>5</sup> ՀՀ ԱՎԾ Շրապարակումներ՝ «Արտաքին տնտեսական գործունեություն» 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ., էջեր 53, 51-52, 49-50, 40, 49-50, 49-50, 50-51, 50-51, 50-51, [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_08\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_08_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_09\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_09_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_10\\_8.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_10_8.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_11\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_11_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_12\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_12\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2nish\\_12\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2\\_nish\\_2016\\_9.pdf](http://armstat.am/file/article/ft_2_nish_2016_9.pdf), [http://armstat.am/file/article/ft\\_2\\_nish\\_2017\\_10.pdf](http://armstat.am/file/article/ft_2_nish_2017_10.pdf):

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Տրիկոտաժե պաստառ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	64.8	31.7	3828.6	4965.7	4938.0	4453.4	3766.1	2776.9	6297.7
Տրիկոտաժե հագուստ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	175.3	232.9	8165.0	9069.1	11255.4	12454.6	12850.6	15091.3	20229.3
Տրիկոտաժե հագուստ բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	162.0	198.5	15090.7	18013.3	17441.3	17879.9	18443.8	21421.4	27848.1
Կոշիկ, գուգա-գուլպաներ	206.0	205.8	11508.9	11917.8	11347.7	12390.8	12175.3	9749.3	15824.6
Գլխարկներ և դրանց մասեր	5.8	7.1	226.4	290.6	334.0	300.7	435.8	400.8	531.0

Հագուստի ոլորտի զարգացմանը նպաստում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի գործոններ, ուստի պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա մշակվել է ռեգրեսիոն մոդել, որտեղ որպես ուղղակի գործոններ ներկայացվել են այս ոլորտի գները, այս ոլորտում վարկային տոկոսադրույքը, հարկային բեռը, իսկ որպես անուղղակի ազդեցության գործոններ ընտրվել են փոխարժեքի և լոգիստիկայի արժեքը, և այդ գործոնների համակարգման արդյունքում տրվել է, թե վերջիններս ինչպես են ազդում օտարերկրյա ներդրումների վրա հագուստի ոլորտում, հետևաբար նպատակ է դրվել այն հիմնավորել, որ Հայաստանի Հանրապետությունում, քանի դեռ գոյություն ունեն ենթակառուցվածքային խնդիրներ, ապա գործարար ակտիվությունը այդ ոլորտում կաշկանդվելու է այնքան ժամանակ, մինչև այդ ենթակառուցվածքները չզարգանան, ուստի անհրաժեշտ է հիմնավորել այն հիմնական ենթակառուցվածքները, որոնք էական և նշանակալի ազդեցություն են ունենում հագուստի ոլորտի զարգացմանը և այս ոլորտում ներդրումային ակտիվության բարձրացմանը, գործարար միջավայրի բարելավմանը, ուստի վերջինիս բարելավման համատեքստում հիմնավորել են տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, որոնք հնարավորություն կտան կրճատեն՝

1. Գործազրկության մակարդակը, այս ոլորտում ստվերի ծավալները և մրցակցության թերացումները,
2. հնարավորություն կտա ավելացնել զբաղվածության մակարդակը, ապահովել կայուն պահանջարկ, ավելացնել այս ոլորտում ավելացված արժեքը, իրականացնել արտահանում և ներմուծման փոխարինում այս ապրանքի գծով,
3. մեծացնել միջազգային համագործակցության կապերը, ստեղծել նոր հարթակներ այս ապրանքների նոր խորշերի գրավման և միջազգային ասպարեզ դուրս գալու հետագայում նաև երկրի վարկանիշը բարձրացնելու առումով:

Ռեգրեսիոն մոդելի համար դիտարկվել են 2000-2017թթ. օտարերկրյա ներդրումների (FDI), վարկային տոկոսադրույքի ( $C_R$ ), հարկային բեռի (TB), հազուստի արտադրության ոլորտի գների (P), հազուստի ոլորտում ներմուծման ծավալների (Im), փոխարժեքի (c) և լոգիստիկ արժեքի (IM-P) տարեկան պաշտոնական վիճակագրական տվյալները: Ներկայացված տնտեսաչափական մոդելում վիճակագրական շարքերը 17 են, իսկ դա նշանակում է, որ ստացված արժեքները գրեթե մոտ են իրականությանը:

$$FDI = a_0 + a_1 C_R + a_2 TB + a_3 P + a_4 Im + a_5 C + a_6 IM - P + \varepsilon_t \quad (1)$$

որտեղ՝

FDI – օտարերկրյա ներդրումներ (մլն դրամ),

$C_R$  – վարկային տոկոսադրույք,

TB – հարկային բեռ (որը հաշվարկվել է հարկեր/ ՇՆԱ հարաբերակցությամբ),

P- հազուստի արտադրության ոլորտի գներ (մլն դրամ),

Im- հազուստի արտադրության ներմուծման ծավալներ (մլն դրամ),

C– դոլարի հաշվարկային փոխարժեքն է դրամ ( 1 ԱՄՆ դոլարի հաշվով)

IM-P- լոգիստիկ արժեք,

$a_0, a_1, a_2, a_3, a_4, a_5, a_6$  – հաստատուն մեծության և անկախ փոփոխականների էլաստիկության գործակիցներն են,

$\varepsilon_t$  – պատահական սխալի մեծությունն է:

(1) մոդելը գնահատվել է փոքրագույն քառակուսիների եղանակով՝ Eviews 9<sup>6</sup> համակարգչային ծրագրային հնարավորությունից՝ իրականացվել

<sup>6</sup> Eviews-ը հանդիսանում է Micro TSP փաթեթի Windows տարբերակը, որը պարունակում է զարգացած «հուշում» (help), որն, ըստ էության, Էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է: Eviews-ի մասին մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ հետևյալ էլ. հասցեում՝ <http://www.eviews.com/home.html> :

է համապատասխան ռեգրեսիոն վերլուծություն, սակայն, մինչ մոդելի գնահատելը, անհրաժեշտ է տվյալները համահարթեցնել, ուստի այդ նպատակով տվյալները լոգարիթմել ենք, որպեսզի խուսափենք կեղծ բազմագործոն գծային ռեգրեսիա ստանալուց:

Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքում ստացված արդյունքները արտացոլված են **աղյուսակ 3-ում**, a0, a1, a2, a3, a4, a5, a6, որտեղ անկախ փոփոխականների գործակիցներն են, և որոնց վիճակագրական հատկություններն են՝ t-վիճականի և Prob: Իսկ մոդելի որակական հատկանիշները ըմբռնելու համար տրվել են դրանց R<sup>2</sup>-ի, ճշգրտված R<sup>2</sup>-ի արժեքները:

Իրականացված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ևս հաստատում են, որ օտարերկրյա ներդրումների և ընտրված գործոնների միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն, քանի որ դետերմինացիայի գործակիցը (R<sup>2</sup>) հավասար է 0.84, այսինքն՝ կախյալ փոփոխականի փոփոխության շուրջ 84%-ը բացատրվում է ռեգրեսիայով, իսկ մնացած 16%-ը՝ պատահական սխալներով: Սա նշանակում է, որ 84%-ի դեպքում ստվերային տնտեսության տատանումները կարող են բացատրվել մեր կողմից դիտարկվող գործոնների ազդեցությամբ, իսկ դետերմինացիայի ճշգրտված գործակիցը (ճշգրտված R<sup>2</sup>) հավասար է 0.83, այսինքն՝ 83%, ինչը ցույց է տալիս, թե դետերմինացիայի ճշգրտման գործակիցը ինչպիսի ազդեցություն է ունեցել դետերմինացիայի գործակցի վրա, և քանի որ գնահատված մոդելում դետերմինացիայի ճշգրտված գործակիցը մոտ է դետերմինացիայի գործակցին, ուստի դա նշանակում է, որ ունենք «որակյալ» ռեգրեսիոն վերլուծություն:

*Աղյուսակ 3*

**Մոդելի գնահատման արդյունքները<sup>7</sup>**

Գործակից	t-վիճականի	Prob.	R <sup>2</sup>	Ճշգրտված R <sup>2</sup>
3.109195	0.825619	0.0066	0.844970	0.832684
-0.678854	-1.495627	0.0009		
-0.540217	3.511784	0.0049		
0.157488	0.321295	0.0000		
-0.182809	2.327454	0.0040		
0.736577	-0.543449	0.0400		
-0.268502	-0.118235	0.0080		

<sup>7</sup> Հաշվարկվել է հեղինակի կողմից:

Արդյունքում գնահատված գծային ռեգրեսիայի հավասարման արժեքները արտացոլվել են՝

$FDI=3.109195-0.678854C_R-0.540217TB+0.157488P-0.182809IM+0.736577C-0.268502IM-P+\epsilon_t$  (2)

(2) մոդելի գնահատման արդյունքների հիման վրա տրվել են հետևյալ եզրակացությունները՝

1. Վարկային տոկոսադրույքը ( $C_R$ ) բացասական ազդեցություն է ունեցել օտարերկրյա ներդրումների (FDI) վրա 0.67 տոկոսային կետի չափով, հետևաբար օտարերկրյա ներդրումների հոսքերը ավելացնելու համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում նվազեցնել վարկային տոկոսադրույքը:
2. Այդ ոլորտում ներմուծման ծավալները ( $Im$ ) բացասական ազդեցություն է ունեցել օտարերկրյա ներդրումների (FDI) վրա 0.18 տոկոսային կետի չափով, հետևաբար այդ ապրանքների ներմուծումը դառնում է անհիմաստ, քանի որ այդ ապրանքները մեր երկրում դառնում են ոչ մրցունակ թանկ լինելու պատճառով:
3. Հարկային բեռը ( $TB$ ) բացասական ազդեցություն է ունեցել օտարերկրյա ներդրումների (FDI) վրա 0.54 տոկոսային կետի չափով, հետևաբար անհրաժեշտ է կրճատել հարկային բեռը, քանի որ այն էականորեն կրճատում է ներդրումների հոսքը, ինչպես նաև առաջիկա 3 տարում թեթևացնել հարկերը այն ընկերությունների համար, որոնք զբաղվում են այս ոլորտով:
4. Լոգիստիկ արժեքի գործոնը ( $IM-P$ ) ևս բացասական ազդեցություն է ունեցել օտարերկրյա ներդրումների (FDI) վրա 0.26 տոկոսային կետի չափով, հետևաբար այստեղ կարևոր խնդիր է հանդիսանում արդյո՞ք այդ ապրանքները ԵՏՄ երկրներից են ներմուծվել թե երրորդ երկրներից, օրինակ՝ եթե այդ ապրանքը ներմուծվել է Թուրքիայից, ապա մաքսային սահմանի վրա այդ ապրանքը թանկանում է 33%-ով (20% գանձում են ավելացված արժեքի հարկ, 10% մաքսատուրք, 3% մաքսազերծման ծառայության վճար), հետևաբար ներմուծումը իրականացվում է ֆրանչայզինգի հիման վրա, այսինքն՝ ներմուծում են արդեն իսկ միջազգային ոլորտում հեղինակություն (Brand) ունեցող ապրանքներ:
5. Օտարերկրյա ներդրումների (FDI) վրա դրական ազդեցություն են ունեցել հագուստի արտադրության ոլորտի գները ( $P$ )՝ 0.15 և փոխար-

ժեքը(c)՝ 0.73, վերջինիս դրական ազդեցության պատճառ է հանդիսացել դրամ/դոլար փոխարժեքային կուրսի տատանումները:

Կատարված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ օտարերկրյա ներդրումների վրա դրական ազդեցություն ունեն հագուստի արտադրության ոլորտի գները և փոխարժեքը, իսկ բացասական ազդեցություն ունեն լոգիստիկ արժեքի գործոնը, այդ ոլորտում ներմուծման ծավալները, վարկային տոկոսադրույքը և հարկային բեռը, ուստի վերջիններիս բացասական ազդեցությունները նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել այնպիսի կանխարգելիչ միջոցառումներ, ինչպիսիք են՝ վարկային տոկոսադրույքի նվազեցումը, առաջիկա 3 տարում թեթևացնել հարկերը այն ընկերությունների համար, որոնք զբաղվում են այս ոլորտով:

## **ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

### **ԱՐՓԻՆԵ ՄԵՆԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ*

**Համառոտագիր:** Հագուստի արտադրության ոլորտի վրա ազդում են ուղղակի և անուղղակի գործոններ, որոնք իրենց դրական և բացասական ազդեցությունն են ունենում այս ոլորտի զարգացման և գործարար ակտիվության մակարդակի բարելավման վրա, սակայն դիտարկված անուղղակի գործոնները ավելի մեծ ազդեցություն են ունենում, քան ուղղակի գործոնները, հետևաբար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միասնական կառույց, որը օտարերկրյա ներդրողին հնարավորություն կտա հավաստի և համակարգված տեղեկատվություն այս ոլորտի մասին, վերջիններիս իրականացումն էլ կբերի հագուստի ոլորտում ստվերի ծավալների և մրցակցության թերացումների կրճատման, միջազգային համագործակցության կապերի ընդլայնման, երկրի վարկանիշի բարձրացման:

**Բանալի բառեր.** *գործարար միջավայր, օտարերկրյա ներդրումներ, տոկոսադրույք, փոխարժեք, հարկային բեռ, արտահանում, ներմուծում, լոգիստիկ արժեք, ռեգրեսիոն վերլուծություն, ուղղակի և անուղղակի գործոններ:*



## ПРИОРИТЕТЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ УЛУЧШЕНИЯ БИЗНЕС-СРЕДЫ

**АРПИНЕ МЕХАКОВНА КЮРЕГЯН**

*Экономист Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** Индустрия одежды влияет на прямые и косвенные факторы, которые оказывают положительное и отрицательное влияние на развитие этой отрасли и повышение уровня деловой активности. Однако, наблюдаемые косвенные факторы оказывают большее влияние, чем просто факторы, поэтому необходимо создать унифицированную структуру, которая даст надёжность иностранному инвестору на получение и реализацию информации об этой сфере, также эти факторы влияют на сокращение теневого объема и недостатков конкуренции в текстильной промышленности, для расширения международного сотрудничества и повышения рейтинга страны.

**Ключевые слова:** *бизнес-среда, иностранные инвестиции, процентная ставка, обменный курс, налоговое бремя, экспорт, импорт, логистическая ценность, регрессионный анализ, прямые и косвенные факторы.*

## THE PRIORITIES OF ECONOMIC DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF IMPROVING THE BUSINESS ENVIRONMENT

**ARPINE MEKHAK KYUREGHYAN**

*Economist, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The output of the wearing apparel industry is affected by both direct and indirect factors, that either positively or negatively influence the development of the given sector of the economy and the level of business activity. However, the indirect factors discussed in the article, have a much higher impact on the development of the given sector and the levels of the business activity than direct ones, hence stressing the need for establishing a single institution that will enable foreign investors to be provided with reliable and systematized information on the sectors; and the implementation of thereof will entail a reduction of the size of the unregistered turnover in the wearing apparel industry, and result in strengthening the competition in the local market, expansion of international cooperation, and higher country rankings.

**Keywords:** *Business environment, foreign investment, interest rate, exchange rate, tax burden, export, import, logistic value, regression analysis, direct and indirect factors.*

**ԱՐՏԱԳՆԱՆԱՆ ԽՅՈՒՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ  
ՈԼՈՐՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ներքին փոքր շուկա ունեցող երկրների պարագայում, ինչպիսին է Հայաստանը շատ կարևոր է արտահանման խթանման ճանապարհով արտահանման ծավալների մեծացումը (օտարերկրյա շուկաները հանդիսանում են որպես տեղական շուկայի փոխարինողներ)<sup>1</sup>, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել տնտեսական աճի, քանի որ մի շարք երկրների պարագայում ապացուցվել է «արտահանմամբ պայմանավորված տնտեսական աճ» հիպոթեզի առկայությունը (export-led growth hypothesis), ինչպիսիք են Ենթասահարյան Աֆրիկայի որոշ երկրները<sup>2</sup>, Բանգլադեշը<sup>3</sup>, Հորդանանը<sup>4</sup>, Չիլին<sup>5</sup>, Բրազիլիան, Հնդկաստանը, Հարավ-աֆրիկյան Հանրապետությունը<sup>6</sup> և այլն:

Արտահանման խթանման տեսանկյունից կարևոր դեր է խաղում այն ապրանքախմբերի ընտրությունը, որոնք ունեն համեմատական առավելություններ և համարվում են մրցունակ: Հատկապես այդ ապրանքախմբերը ներկայացնող ապրանքների արտահանման խթանումը կնպաստի դեպի երկիր արտարժույթի հոսքերի ավելացմանը, ինչն էլ հնարավորություն կտա արտադրության ծավալների աճին զուգահեռ ստեղծել նոր աշխատատեղեր, որն էլ իր հերթին կավելացնի զբաղվածների թիվը՝ կրճատելով գործազրկության մակարդակը:

---

<sup>1</sup> Sala-i-Martin, Xavier, Bilbao-Osorio, Beñat, Di Battista, Attilio, Drzeniek Hanouz, Margareta, Geiger, Thierry and Galvan, Caroline (2014). “The Global Competitiveness Index 2014–2015: Accelerating a Robust Recovery to Create Productive Jobs and Support Inclusive Growth,” Chapter 1.1 in The Global Competitiveness Report 2014–2015: Full Data Edition, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, p.8

<sup>2</sup> Ee, C. Y. (2016). Export-led Growth Hypothesis: Empirical Evidence from Selected Sub-saharan African Countries. *Procedia Economics and Finance*, 35, 232–240. doi:10.1016/s2212-5671(16)00029-0

<sup>3</sup> Al Mamun, K. A., & Nath \*, H. K. (2005). Export-led growth in Bangladesh: a time series analysis. *Applied Economics Letters*, 12(6), 361–364. doi:10.1080/13504850500068194.

<sup>4</sup> Abual-Foul, B. (2004). Testing the export-led growth hypothesis: evidence from Jordan. *Applied Economics Letters*, 11(6), 393–396. doi:10.1080/1350485042000228268.

<sup>5</sup> Siliverstovs, B., & Herzer, D. (2006). Export-led growth hypothesis: evidence for Chile. *Applied Economics Letters*, 13(5), 319–324. doi:10.1080/13504850500407293.

<sup>6</sup> Rani, R., & Kumar, N. (2018). Is There an Export- or Import-led Growth in BRICS Countries? An Empirical Investigation. *Jindal Journal of Business Research*, 7(1), 13–23. doi:10.1177/2278682118761748.

Այդ իսկ պատճառով այս հոդվածի նպատակն է բացահայտել այն ոլորտները, որոնց արտահանումը անհրաժեշտ է խթանել միջնաժամկետ հատվածում, որի հիման վրա էլ մատնանշել զբաղվածության քաղաքականության առաջնայնությունները:

Համեմատական առավելություններ և մրցունակ համարվող խմբերի բացահայտման ժամանակ կիրառվող անալիտիկ գործիքներից մեկը համարվում է ապրանքների քարտեզավորումը (products mapping), որը մշակվել և առաջարկվել է Վիդոդոյի (2008թ.) կողմից<sup>7</sup>: Այս հետազոտության համար օգտագործվել է Ուլլահի և Կազուի (2012թ.) կողմից առաջարկված գործիքը<sup>8</sup>, որն իր մեջ ներառել է երկու ցուցանիշ՝ «Առևտրային հաշվեկշռի ինդեքս» (Trade Balance Index (TBI)), որն առաջարկվել է Լաֆեյի կողմից (1992թ.)<sup>9</sup> և/կամ «Համեմատական զուտ արտահանում» (Relative Net Export (RNX)) ինդեքսը, որն առաջարկվել է 1982թ.-ին Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից<sup>10</sup>, ինչպես նաև «Նորմալացված բացահայտված համեմատական առավելություն» (Normalized Revealed Comparative Advantage (NRCA)) ինդեքսը:

«Համեմատական զուտ արտահանում» ինդեքսը սահմանվել է հետևյալ կերպ՝

$$RNX_{i,c,t} = (X_{i,c,t} - M_{i,c,t}) / (X_{i,c,t} + M_{i,c,t}) \quad (1),$$

որտեղ՝

$X_{i,c,t}$ -ն  $c$ -րդ երկրի  $i$ -րդ ապրանքի արտահանման ծավալն է  $t$ -րդ տարում:

$M_{i,c,t}$ -ն  $c$ -րդ երկրի  $i$ -րդ ապրանքի ներմուծման ծավալն է  $t$ -րդ տարում:

$RNX_{i,c,t}$ -ն  $c$ -րդ երկրի  $i$ -րդ ապրանքի «Համեմատական զուտ արտահանում» ինդեքսի արժեքն է  $t$ -րդ տարում<sup>11</sup>:

<sup>7</sup> Tri Widodo, (2008) "Dynamic changes in comparative advantage: Japan "flying geese" model and its implications for China", Journal of Chinese Economic and Foreign Trade Studies, Vol. 1 Issue: 3, pp.200-213, DOI: 10.1108/17544400810912365.

<sup>8</sup> Ullah, M. & Kazuo, I. (2012) Dynamics of Comparative Advantage and Export Potential in Bangladesh, The Ritsumeikan Economic Review, Vol. 61, No. 4, pp. 471-484.

<sup>9</sup> Lafay, G., (1992), "The Measurement of Revealed Comparative Advantages" in M.G. Dagenais and P.A. Muet (eds.), International Trade Modelling, London: Chapman & Hall, pp. 209-234

<sup>10</sup> UNIDO (1982). Changing Patterns of Trade in World Industry: An Empirical Study on Revealed Comparative Advantage. New York: United Nations, 203p.: Andrey A. Gnidchenko, Vladimir A. Salmikov (2015) "Net Comparative Advantage Index: Overcoming the Drawbacks of the Existing Indices", Basic Research Program Working Papers Series: Economics, WP BRP 119/EC/2015, 39p. <https://www.hse.ru/data/2015/12/29/1136287015/119EC2015.pdf>, p.10

<sup>11</sup> Andrey A. Gnidchenko, Vladimir A. Salmikov (2015) "Net Comparative Advantage Index: Overcoming the Drawbacks of the Existing Indices", Basic Research Program Working Papers Series: Economics, WP BRP 119/EC/2015, p.5, 10.

Այս ինդեքսի արժեքը ընկած է -1.0-ից +1.0 միջակայքում: 0-ից բարձր արժեքը փաստում է այն մասին, որ տվյալ ապրանքը համարվում է «գուտ արտահանող», իսկ բացասական արժեքի պարագայում՝ «գուտ ներմուծող», մինչդեռ 0-ական ներմուծման կամ արտահանման դեպքում ինդեքսի արժեքը չի որոշվում: <sup>12</sup>

Այս ինդեքսի արժեքները հաշվարկվել են 3 ժամանակահատվածի համար՝ 2012-2016թթ. և 2013-2017թթ. միջին արժեքները, և 2017թ. ինդեքսի արժեքները՝ ըստ ապրանքների նկարագրման և ծածկագրման «Ներդաշնակեցված համակարգի» ապրանքային խմբերի երկնիշ դասակարգմամբ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**«Համեմատական գուտ արտահանում» ինդեքսի հիման վրա համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերը<sup>13</sup>**

Ծածկագիր	Խումբ	2012-2016թթ. միջին	2013-2017թթ. միջին	2017
03	Չուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ	+	+	+
06	Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	-	+	+
07	Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և էլպպտուղներ	-	+	+
20	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	+	+	+
22	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	+	+	+
24	Օխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	+	+	+
26	Հանրաքար, խարամ և մոխիր	+	+	+
47	Փայտյա և այլ մանրաթելավոր նյութերից գանգված	-	-	+
62	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	-	+	+
71	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	+	+	+
72	Սև մետաղներ	+	+	+
74	Պղինձ և իրեր դրանից	+	+	+
76	Ալյումին և իրեր դրանից	+	+	+
81	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	+	+	+
88	Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր	+	-	-
91	Ժամացույցներ և դրանց մասեր	+	+	+

<sup>12</sup> Andrey A. Gnidenchenko, Vladimir A. Salmikov (2015) “Net Comparative Advantage Index: Overcoming the Drawbacks of the Existing Indices”, Basic Research Program Working Papers Series: Economics, WP BRP 119/EC/2015, p.10.

<sup>13</sup> Միավորված ազգերի կազմակերպության «UN Comtrade» առցանց տվյալների բազա, <https://comtrade.un.org/data/>:

Աղյուսակ 1-ում ապրանքային խմբի դիմացի «+» նշանը փաստում է այն մասին, որ տվյալ ապրանքային խումբը տվյալ ժամանակահատվածում համարվել է որպես «զուտ արտահանող», իսկ «-» նշանը՝ որպես «զուտ ներմուծող»:

«Համեմատական զուտ արտահանում» ինդեքսի 2012-2016թթ. և 2013-2017թթ. միջին, ինչպես նաև 2017թ. արժեքների համեմատությունը փաստում է հետևյալի մասին՝

- «Զուտ արտահանող» համարվող ապրանքային խմբերի քանակը ավելացել է 2013-2017թթ.-ին, ինչպես նաև 2017թ.-ին 2012-2016թթ.-ի համեմատ:

- Որպես «զուտ արտահանող» են համարվել «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով» ապրանքային խումբը, որը հիմնականում պայմանավորված էր 2015-2017թթ. արտահանման ծավալների աճով՝ ինչպես Գերմանիայից և Իտալիայից ստացվող արտադրության պատվերների և դեպի ՌԴ հիմնականում սեփական արտադրության ապրանքների արտահանման ծավալների աճով<sup>14</sup>:

- «Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր» և «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ» ապրանքային խմբերի «զուտ արտահանող» դառնալու փաստը պայմանավորված էր դեպի ՌԴ արտահանման ծավալների աճով հատկապես 2015-2017թթ., ինչն էլ իր հերթին պայմանավորված էր ՌԴ-ի կողմից մի շարք երկրների հանդեպ պատժամիջոցների կիրառելու հետևանքով ներմուծման ծավալների սահմանափակմամբ:

- «Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր» 2013-2017թթ. միջին և 2017թ. ցուցանիշի արժեքների հիման վրա դասվել է որպես «զուտ ներմուծող», ինչը հիմնականում պայմանավորված է եղել 2015-2017թթ. արտահանման ծավալների կրճատմամբ, որն էլ իր հերթին ուղեկցվել է ներմուծման ծավալների աճով:

- 2017թ.-ի «Փայտյա և այլ մանրաթելավոր նյութերից զանգված» ապրանքային խմբի ի հայտ գալը որպես «զուտ արտահանող» բացատրվում է նրանով, որ տվյալ խմբի պարագայում 2013-2017թթ. ընթացքում միայն 2017թ.-ին է գրանցվել տվյալ խմբի ապրանքների արտահանում, որն էլ գերազանցել է ներմուծման ծավալները: Մակայն այս խումբը միայն մեկ տարվա տվյալների հիման վրա չի կարող համարվել

---

<sup>14</sup> Եթե այս հոդվածում տվյալների այլ աղբյուր նշված չէ, ապա այն հետևյալն է՝ ՄԱԿ-ի «ՍՈ Comtrade» աղյուսակի տվյալների բազա, <https://comtrade.un.org/data/>: Մեփական հաշվարկ:

մրցունակ ապրանքային խումբ՝ հաշվի առնելով նաև արտահանման ծավալները, որոնք կազմել են մոտ 25,000 ԱՄՆ դոլար:

Անդրադառնանք «Նորմալացված բացահայտված համեմատական առավելության» ինդեքսին, որը սահմանվել է հետևյալ կերպ՝

$$\Delta E_j^i = E_j^i - (E^i - E_j) / E \quad (2),$$
$$NRCA_j^i \equiv \Delta E_j^i / E = E_j^i / E - E_j E^i / EE \quad (3),$$

Որտեղ՝

*E<sub>j</sub><sup>i</sup>-ն i-րդ երկրի j-րդ ապրանքի արտահանման ծավալն է:*

*E<sub>j</sub><sup>i</sup>-ն j-րդ ապրանքի համաշխարհային արտահանման ծավալն է:*

*E<sup>i</sup>-ն i-րդ երկրի ընդհանուր արտահանման ծավալն է:*

*E-ն համաշխարհային արտահանման ծավալն է:*

*NRCA<sub>j</sub><sup>i</sup>-ն i-րդ երկրի j-րդ ապրանքի «Նորմալացված բացահայտված համեմատական առավելության» ինդեքսի արժեքն է<sup>15</sup>:*

Ինդեքսի արժեքը տատանվում է -1/4-ից +1/4 միջակայքում, որի դեպքում 0-ն համարվում է համեմատական առավելության տեսանկյունից չեզոք կետը<sup>16</sup>: Որքան արժեքը մեծ է 0-ից, այնքան ավելի ուժեղ է տվյալ երկրի համեմատական առավելությունը տվյալ ապրանքի արտադրության գործում և ընդհակառակը:

«Նորմալացված բացահայտված համեմատական առավելություն» ինդեքսի 2012-2016թթ. և 2013-2017թթ. միջին, ինչպես նաև 2017թ. արժեքների համեմատությունը (աղյուսակ 2) փաստում է հետևյալի մասին՝

- 2013-2017թթ. միջին արժեքների հիման վրա ստացված համեմատական առավելության տեսանկյունից չեզոք կետը գերազանցող ապրանքային խմբերի թվաքանակը զիջել է 2012-2016թթ.-ի միջին արժեքների հիման վրա բացահայտված խմբերի թվաքանակին:

- «Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ» և «Ապակի և դրանից իրեր» խմբերի դեպքում գրանցվել էր համեմատական առավելության տեսանկյունից չեզոք կետից ցածր արժեք, որի հետևանքով այդ ապրանքախմբերը դասվել են որպես բացահայտված համեմատական առավելություններ չունեցող խմբեր:

- 2017թ.-ին որպես համեմատական առավելության տեսանկյունից չեզոք կետը գերազանցող ապրանքային խմբեր են դասակարգվել «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Կակաո և դրանից պատրաստված մթերք» և «Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր» խմբերը:

<sup>15</sup> Yu, R., Cai, J. & Leung, P. (2009). The normalized revealed comparative advantage index, The Annals of Regional Science, Volume 43, Issue 1, p.268, 270, DOI: 10.1007/s00168-008-0213-3

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 273:

**«Նորմալացված բացահայտված համեմատական առավելության» -ի հիման վրա համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերը<sup>17</sup>**

Ծածկագիր	Խումբ	2012-2016թթ. միջին	2013-2017թթ. միջին	2017
01	Գենդանի կենդանիներ	+	+	+
03	Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ	+	+	+
04	Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք	+	+	+
06	Գենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	+	+	+
07	Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և էլպպտուղներ	+	+	+
08	Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ	+	+	+
09	Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	+	-	-
18	Կակաո և դրանից պատրաստված մթերք	-	-	+
20	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	+	+	+
22	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	+	+	+
24	Օլիախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	+	+	+
25	Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	+	+	+
26	Հանքաքար, խարամ և մոխիր	+	+	+
61	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	-	-	+
62	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	+	+	+
68	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	+	+	+
70	Ապակի և դրանից իրեր	+	-	-
71	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	+	+	+
72	Սև մետաղներ	+	+	+
74	Պղինձ և իրեր դրանից	+	+	+
76	Ալյումին և իրեր դրանից	+	+	+
81	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	+	+	+
91	Ժամացույցներ և դրանց մասեր	+	+	+
94	Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	-	-	+

• «Կակաո և դրանից պատրաստված մթերք»-ի պարագայում 2017թ.-ին կտրուկ աճել էր հատկապես տեղական արտադրության և դեպի ՌԴ արտահանվող կոնֆետների արտահանումը (մոտ 533%):

<sup>17</sup> Միավորված ազգերի կազմակերպության «UN Comtrade» առցանց տվյալների բազա, <https://comtrade.un.org/data/>: Հեղինակի սեփական հաշվարկ:

Հետևաբար, այս խմբի պարագայում միջնաժամկետ հատվածում ոլորտի՝ որպես համեմատական առավելություն ունեցողի դասակարգումը կախված է լինելու հենց դեպի ՌԴ արտահանման ծավալների փոփոխությունից (կկարողանան արդյո՞ք ՀՀ արտադրողները ՌԴ շուկայում առնվազն պահպանել իրենց դիրքերը):

- «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով» խմբի պարագայում 2017թ.-ին նախորդ տարվա համեմատ կտրուկ աճել էին արտահանման ծավալները դեպի ՌԴ (մոտ 93%): Այստեղ ևս կարևոր է լինելու ՌԴ շուկայում 2017թ.-ին գրանցած մասնաբաժնի առնվազն պահպանումը և դիրքերի ամրապնդումը:

- «Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր» ապրանքային խմբի պարագայում «Լուսավորման ջահ, լամպ, լուսարձակ, մասեր» ենթախմբի արտահանումը դեպի ՌԴ 2017թ.-ին 2016թ. համեմատ աճել էր մոտ 3008%-ով: Այստեղ ևս կարևոր է միջնաժամկետ հատվածում ՌԴ շուկայում հայկական ծագում ունեցող այդ ապրանքների մասնաբաժնի ամրապնդելը:

- Բացառելով հանքարդյունաբերության հետ առնչություն ունեցող ապրանքային խմբերը, ինչպես նաև «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ» և որոշ այլ խմբեր, արտահանման մեծ մասը բաժին է ընկել ՌԴ արտահանմանը, ինչը նշանակում է, որ մի շարք ապրանքային խմբերի համեմատական առավելությունը պայմանավորված է եղել դեպի ՌԴ արտահանման ծավալների փոփոխությամբ, հատկապես 2017թ.-ին:

Ինչ վերաբերում է ապրանքների քարտեզավորման եղանակով ապրանքային խմբերի բաժանմանը ըստ վերը ներկայացված ինդեքսների արժեքների, ապա այստեղ դիտարկվում է երկու խումբ՝ «Խումբ A»-ն և «Խումբ B»-ն (աղյուսակ 3, 4): Հաշվի առնելով Ուլլահի և Կազուոյի (2012թ.) տեսակետը այն մասին, որ «Խումբ C»-ում ընդգրկված ապրանքախմբերի հետ կապված կառավարության ռազմավարությունը լինելու է կամ այն միջոցառումների իրականացումը, որոնք կուժեղացնեն տվյալ խմբերի մրցակցային առավելությունները, կամ էլ այդ գումարների հատկացումը այլ ոլորտներին, որոնք համարվում են մրցունակ, քանի որ այդպիսի խմբերը կարող են հիմնականում դառնալ մրցունակ միայն երկարաժամկետ հատվածում<sup>18</sup>, այդ իսկ պատճառով, այստեղ չեն դիտարկվում այդ ապրանքախմբերը, քանի որ այս հետազոտության նպատակն է միջնաժամկետ հատվածում մրցունակ համարվող ոլորտների բացահայ-

<sup>18</sup> Ullah, M. & Kazuo, I. (2012) Dynamics of Comparative Advantage and Export Potential in Bangladesh, The Ritsumeikan Economic Review, Vol. 61, No. 4, pp. 481-482.



տելը: Այս ոլորտների ընտրությունը կառավարությանը հնարավորություն կտա սահմանափակ ռեսուրսները ուղղել այն ոլորտները, որոնք մրցունակ են և միջնաժամկետ հատվածում զբաղվածության խնդիր կարող են լուծել՝ արտահանման ծավալների աճին զուգընթաց: Ինչպես նաև այստեղ չեն դիտարկվում «Խումբ D»-ում ընդգրկված ապրանքախմբերը, քանի որ վերջիններս չունեն ոչ մրցակցային առավելություններ, ոչ էլ մասնագիտացում<sup>19</sup>:

Աղյուսակ 3

**Ապրանքախմբերի քարտեզավորման արդյունքներ: Խումբ A** <sup>20</sup>

Ծածկագիր	Խումբ	2012-2016թթ. միջին	2013-2017թթ. միջին	2017թ.
<b>ապրանքախմբեր, որոնք կարևոր նշանակություն ունեն արտահանման տեսանկյունից և նպաստում են բնթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը (NRCA&gt;0 և RNX&gt;0)</b>				
03	Ձուկ և խեցգետնավորներ, մանրուրներ և այլ ծովային անողնաշարավորներ	+	+	+
06	Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	-	+	+
07	Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և էլպատուղներ	-	+	+
20	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	+	+	+
22	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	+	+	+
24	Մխախտ և ծխախտի արդյունաբերական փոխարինողներ	+	+	+
26	Հանքաքար, խարամ և մոխիր	+	+	+
62	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	-	+	+
71	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	+	+	+
72	Սև մետաղներ	+	+	+
74	Պղինձ և իրեր դրանից	+	+	+
76	Ալյումին և իրեր դրանից	+	+	+
81	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	+	+	-
91	Ժամացույցներ և դրանց մասեր	+	+	+

«Խումբ A»-ում (աղյուսակ 3) ընդգրկված ապրանքախմբերը այն խմբերն են, որոնք համարվում են «զուտ արտահանողներ», ինչպես նաև

<sup>19</sup> Ullah, M. & Kazuo, I. (2012) Dynamics of Comparative Advantage and Export Potential in Bangladesh, The Ritsumeikan Economic Review, Vol. 61, No. 4, p.476:

<sup>20</sup> Միավորված ազգերի կազմակերպության «UN Comtrade» աղանց տվյալների բազա, <https://comtrade.un.org/data/>: Հեղինակի սեփական հաշվարկ: 2012-2016թթ. արդյունքները վերցվել են հետևյալ աղբյուրից՝ Makaryan. A. (2018). “Products Mapping of the Harmonized System Standard Groups and Armenia’s Choice for Import Substitution and Export Promotion,” Региональные проблемы преобразования экономики (ISSN 1812-7096), 4(90), p.88, DOI: 10.26726/1812-7096-2018-4-84-90

համեմատական առավելության տեսանկյունից չեզոք կետը գերազանցող ապրանքային խմբեր (ունեն բացահայտված համեմատական առավելություններ) և նպաստում են ընթացիկ հաշվի՝ հատկապես առևտրային հաշվի պակասուրդի կրճատմանը:

Աղյուսակ 4

**Ապրանքախմբերի քարտեզավորման արդյունքները: Խումբ B<sup>21</sup>**

Ծածկագիր	Խումբ	2012-2016թթ.	2013-2017թթ.	2017թ.
		միջին	միջին	
<b>մրցունակ համարվող ապրանքախմբեր, սակայն որոնց մասնագիտացման մակարդակը այդքան էլ բարձր չէ (NRCA&gt;0 և RNX&lt;0)</b>				
01	Կենդանի կենդանիներ	+	+	+
04	Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք	+	+	+
08	Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեաներ	+	+	+
09	Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	+	-	-
25	Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	+	+	+
18	Կակաո և դրանից պատրաստված մթերք	-	-	+
61	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	-	-	+
68	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	+	+	+
70	Ապակի և դրանից իրեր	+	+	-
94	Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	-	-	+

«Խումբ B»-ում ընդգրկված են այն խմբերը (աղյուսակ 4), որոնք համեմատական առավելության տեսանկյունից չեզոք կետը գերազանցող ապրանքային խմբեր են (ունեն բացահայտված համեմատական առավելություններ), սակայն որոնց մասնագիտացման աստիճանը բարձր չէ:

Մյուս կողմից հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքահումքային արդյունաբերության հետ առնչություն ունեցող և մրցակցային առավելություններ ունեցող ապրանքային խմբերի (ներառյալ ոսկու արդյունահանումը) մասնաբաժինը զգալի առկոս է կազմում ՀՀ արտահանման ծավալների մեջ (2017թ.-ին՝ 47.5%, իսկ 2013-2016թթ.-ին՝ տասանվել է 43.5-47.9% միջակայքում), վերջիններից կախումը կրճատելու

<sup>21</sup> Միավորված ազգերի կազմակերպության «UN Comtrade» առցանց տվյալների բազա, <https://comtrade.un.org/data/>: Հեղինակի սեփական հաշվարկ: 2012-2016թթ. արդյունքները վերցվել են հետևյալ աղբյուրից՝ Makaryan. A. (2018). “Products Mapping of the Harmonized System Standard Groups and Armenia’s Choice for Import Substitution and Export Promotion,” Региональные проблемы преобразования экономики (ISSN 1812-7096), 4(90), p.88, DOI: 10.26726/1812-7096-2018-4-84-90

նպատակով ցանկալի կիլնի այլ ոլորտները ներկայացնող ապրանքային խմբերի ապրանքների արտահանման խթանումը դիտել որպես առաջնայնություն: Այս պարագայում ցանկալի կիլնի զգալի արտարժույթ ապահովող երկու խմբերին զուգընթաց («Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» և «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ»), որոնց բաժին էր ընկնում ՀՀ արտահանման 22.3%-ը 2017թ.-ին, զարգացնել հետևյալ ապրանքների խմբերը ներկայացնող ոլորտները և խթանել վերջիններիս ապրանքների արտահանումը՝

- Գյուղատնտեսություն («Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր», «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ», «Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ» «Կենդանի կենդանիներ»),

- Սննդամթերքի արտադրություն («Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», «Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք»՝ հատկապես պանրի արտադրություն, «Կակաո և դրանից պատրաստված մթերք»՝ հատկապես շոկոլադի արտադրություն),

- Հագուստի արտադրություն («Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով»),

- Ակնագործություն, ոսկերչություն և ժամագործություն («Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ», «Ժամացույցներ և դրանց մասեր»)

- Այլ («Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր» և հատկապես «Լուսավորման ջահ, լամպ, լուսարձակ, մասեր» ենթախումբ):

Իսկ բացառելով գյուղատնտեսության ոլորտը, ստացվում է, որ մնացած ոլորտները հիմնականում ցածր տեխնոլոգիական<sup>22</sup> ոլորտներն են ներկայացնում, որոնք նաև համարվում են աշխատատար: Հետևաբար, տվյալ պարագայում գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը զուգահեռ կառավարության առաջնահերթությունը պետք է լինի վերը նշված արտադրությունների զարգացումը և վերջիններիս արտադրանքի արտահանման խթանումը հատկապես դեպի ՌԴ՝ միջնաժամկետ հատվածում: Այս ամենի կարևորությունը պայմանավորված է նաև 2012-2017թթ.-ին զբաղվածությունը նկարագրող մի շարք ցուցանիշներով (աղյուսակ 5):

<sup>22</sup> <https://www.oecd.org/sti/ind/48350231.pdf>

Այս ոլորտների զարգացումը կհանգեցնի նաև զբաղվածների քանակի ավելացմանը կրճատելով գործազրկության մակարդակը:

*Աղյուսակ 5*

**Զբաղվածության և մակրոտնտեսական որոշ ցուցանիշներ, 2012-2017թթ.<sup>23</sup>**

Ցուցանիշ	2012	2013	2014	2015	2016	2017
ՀՆԱ-ի աճի տեմպ	7.13%	3.30%	3.61%	3.25%	0.26%	7.48%
Արտադրողականության աճի տեմպ	7.34%	4.10%	6.38%	9.12%	6.88%	6.89%
Զբաղվածների քանակի աճի տեմպ	-0.20%	-0.77%	-2.60%	-5.37%	-6.19%	0.55%
Գործազրկության մակարդակ, ընդամենը	17.3%	16.2%	17.6%	18.5%	18.0%	17.8%
ՀՆԱ-ի նակատամար գբաղվածության առաձգականություն	-0.028	-0.237	-0.745	-1.725	-24.503	0.076

2012-2016թթ. զբաղվածների քանակի կրճատումը ուղեկցվել է մեկ զբաղվածի հաշվով իրական արտադրողականության աճով: 2016թ.-ին 6.88% արտադրողականության աճը բացառապես պայմանավորված է եղել զբաղվածների քանակի կրճատմամբ, քանի որ իրական ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել էր 0.26%: Իսկ արդեն 2017թ.-ին զբաղվածների քանակի 0.55% և իրական ՀՆԱ-ի 7.48% աճի պարագայում արտադրողականության աճը կազմել է 6.89%, ինչից էլ կարելի է ենթադրել, որ զբաղվածների քանակի աճը չի հանգեցրել համապատասխան չափի արտադրողականության աճի: Ինչ վերաբերում է ՀՆԱ-ի նակատամար գբաղվածության առաձգականությանը, ապա այս ցուցանիշի արժեքը միայն 2017թ.-ին է եղել դրական և կազմել է 0.076, որը բացատրվում է նրանով, որ 2017թ.-ին զբաղվածների քանակի ոչ մեծ չափերի հասնող փոփոխությունը ուղեկցվել է իրական ՀՆԱ-ի բավականին բարձր աճի տեմպի պարագայում: Ցուցանիշի 2016թ.-ի արժեքը (-24.503) բացատրվում էր նրանով, որ զբաղվածների քանակի կրճատման չափը շատ ավելին է եղել, քան իրական ՀՆԱ-ի փոփոխությունը: Մինչդեռ 2017թ.-ին իրական ՀՆԱ-ի 7.5% աճի տեմպը հանգեցրել է միայն 0.55% զբաղվածների քանակի աճի: Այստեղից

<sup>23</sup> ՀՀ ԱՎԾ-ի «ArmStatBank»-ի «Բնակչություն և սոցիալական գործընթացներ» բաժնի «Զբաղվածություն և գործազրկություն» ենթաբաժնի «Զբաղվածություն (15-75 տարեկաններ) ըստ ցուցանիշների և տարիների» և «Գործազրկության մակարդակ (15-75 տարեկաններ) ըստ ցուցանիշների և տարիների» առցանց տվյալների բազա, [http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank\\_2%20Population%20and%20social%20processes\\_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-13-2017.px/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a](http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-13-2017.px/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a) և [http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank\\_2%20Population%20and%20social%20processes\\_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-1-2017.px/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a](http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-1-2017.px/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a): ԱՄՀ-ի «World Economic Outlook», <https://www.imf.org/external/pubs/ft/weo/2018/02/weodata/index.aspx> (ըստ «ԱՀՀ 1993»-ի):

կարելի է ենթադրել, որ հավանաբար բավականին բարձր ՀՆԱ-ի աճի տեմպերի դեպքում է, որ ավելանալու է զբաղվածների թիվը: Իսկ այս դեպքում, երբ ՀՆԱ-ի աճի տեմպը դրական է, իսկ ՀՆԱ-ի նակատամբ զբաղվածության առաձգականության գործակիցը դրական է սակայն բավականին ցածր է, ապա ըստ Իսլեմի (2004թ.), որը զարգացման տարբեր հիպոթետիկ տարբերակներն է դիտարկում, հնարավոր է ՀՆԱ-ի աճի համեմատաբար ոչ բարձր տեմպերի դեպքում մեծացնել ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականության գործակցի արժեքը աշխատատար ոլորտներում զբաղվածների թվաքանակի ավելացման ճանապարհով<sup>24</sup>:

Այս պարագայում ՀՀ զբաղվածության քաղաքականության երկու առաջնայնությունները միջնաժամկետ հատվածում պետք է լինեն հետևյալները՝

1. Գործող ակտիվ ծրագրերին զուգահեռ մշակել և իրականացնել այնպիսիները, որոնք հիմնականում ուղղված կլինեն վերը նշված և մեր կողմից որպես առաջնայնություն դիտարկվող ապրանքային խմբերը ներկայացնող ոլորտի ընկերությունների համար, որի շնորհիվ կավելանա աշխատուժի նկատմամբ պահանջարկը:

2. Գործող ակտիվ ծրագրերին զուգահեռ մշակել և իրականացնել այնպիսիները, որոնք հիմնականում ուղղված կլինեն ավելացնելու աշխատուժի առաջարկը վերը նշված և մեր կողմից որպես առաջնայնություն դիտարկվող ապրանքային խմբերը ներկայացնող ոլորտի ընկերությունների պահանջարկը բավարարելու նպատակով:

Ապրանքների քարտեզավորման եղանակով բացահայտված ապրանքային խմբերը ներկայացնող ոլորտների արտադրանքի խթանմանը ուղղված միջոցառումները (բացառությամբ հանքահումքային արդյունաբերության հետ առնչություն ունեցող և այլ որոշ ոլորտների) հիմնականում նախատեսված են լինելու ՌԴ տարբեր ապրանքային շուկաների համար: Որպես առաջնայնություն դիտարկվող ապրանքային խմբերը ներկայացնող ոլորտներն են մատնանշվել գյուղատնտեսությունը, սննդամթերքի արտադրությունը, հագուստի արտադրությունը, ակնագործությունը, ոսկերչությունը և ժամագործությունը, ինչպես նաև լուսավորության հետ կապված պարագաների արտադրությունը: Որպես առաջնայնություն մատնանշված ոլորտները (բացառության գյուղատնտեսության) համարվում են աշխատատար, ցածր տեխնոլոգիական

---

<sup>24</sup> Islam, Rizwanul (2004). “The Nexus of Economic Growth, Employment and Poverty Reduction: An Empirical Analysis,” Issues in Employment and Poverty Discussion Paper No. 14, Geneva, Switzerland: International Labour Office, p.4.

ուղորտներ: Զբաղվածության ցուցանիշների և մատնանշված ուղորտների համադրության դեպքում առաջնայնությունը տրվելու է աշխատատար ուղորտներում զբաղվածների թվաքանակի ավելացմանը՝ ակտիվ զբաղվածության քաղաքականության միջոցառումների իրականացմանը և այդ ուղորտների զարգացման՝ արտադրանքի հիմնականում դեպի ՌԴ արտահանման խթանման հետ միասին:

## **ԱՐՏԱԶԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**ԱՆՆԱ ՌՈՒԶՎԵՆՏԻ ՄԱԿԱՐՅԱՆ, տ.գ.թ.,**

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթայանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** «Ապրանքների քարտեզավորում» անալիտիկ գործիքի միջոցով մատնանշվել են առաջնային համարվող ինչպես ապրանքային խմբերը, այնպես էլ վերջիններս ներկայացնող ուղորտները, որոնց պետք է զարգացնել և արտադրանքի արտահանումը խթանել հատկապես ՌԴ-ում՝ բացառությամբ հանքարդյունաբերությունը ներկայացնող և որոշ այլ ուղորտների, միջնաժամկետ հատվածում: Շեշտադրվել է որպես առաջնայնություն դիտարկվող ուղորտների զարգացման և արտադրանքի խթանման կարևորությունը՝ հաշվի առնելով զբաղվածությունը նկարագրող մի շարք ցուցանիշների դինամիկան, ինչպես նաև առաջարկվել են ակտիվ զբաղվածության քաղաքականության 2 առաջնայնությունները:

**Բանալի բառեր.** *ապրանքների քարտեզավորում, արտահանում, արտահանման խթանում, համեմատական գուտ արտահանում, նորմալացված բացահայտված համեմատական առավելություն, զբաղվածություն, աշխատատար ոլորտ, ցածր տեխնոլոգիական ոլորտ:*

## ВЫБОР ОТРАСЛЕЙ ДЛЯ ПРОДВИЖЕНИЯ ЭКСПОРТА И ПРИОРИТЕТЫ ПОЛИТИКИ ЗАНЯТОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**АННА РУЗВЕЛЬТОВНА МАКАРЯН**, *к.э.н.*,

*научный сотрудник Института  
экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** На основе аналитического инструмента картирования продуктов в качестве приоритетных выделены продуктовые группы и сектора экономики, нуждающиеся в развитии, а также идентифицированные для продвижения товаров в основном в Россию в среднесрочной перспективе, за исключением, горнодобывающей и других отраслей. Была подчеркнута важность развития секторов экономики, выделенных в качестве приоритетных, и продвижения продуктов с учетом динамики роста переменных, связанных с занятостью; также предложены два приоритета активной политики занятости.

**Ключевые слова:** *картирование продуктов, экспорт, стимулирование экспорта, относительный чистый экспорт, нормализованное выявленное сравнительное преимущество, занятость, трудоемкий сектор, низкотехнологичный сектор.*

## THE CHOICE OF INDUSTRIES FOR EXPORT PROMOTION AND PRIORITIES OF THE LABOR POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA

**ANNA ROOSEVELT MAKARYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Based on the analytical tool, Products Mapping, both the product groups and sectors of the economy that need to be developed and the identified groups represent, have been singled out as priorities the products of the respective sectors need to be promoted especially to Russia, excluding mining and quarrying and other sectors' related product groups, in the medium term. The importance of developing the sectors of economy singled out as a priority and the promotion of products of thereof has been stressed, by taking into account the growth pattern of employment-related variables; and two priorities of active labor policy have been proposed as well.

**Keywords:** *Products Mapping, export, export promotion, Relative Net Export, Normalized Revealed Comparative Advantage, employment, labor-intensive sector, low-technology sector.*

**ԲԻԶՆԵՍԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ներկայումս ՀՀ-ում իրականացվում է ՀՀ կառավարության ծրագիրը նախատեսված 2017-2022թթ. համար, որի հիմնական գերակայություններից է տնտեսության մրցունակության բարձրացումը բիզնես միջավայրում բարեփոխումների շնորհիվ: Ըստ այդ ծրագրի՝ Հայաստանում պետք է ստեղծվեն գրավիչ ներդրումային և բիզնես միջավայրեր, ապահովվեն հավասար մրցակցային պայմաններ բոլորի համար, մեծացվի նորարարական տեխնոլոգիաների ներգրավվածության աստիճանը: Քանի որ Հայաստանը չունի ելք դեպի բաց ծով և հարուստ չէ բնական ռեսուրսներով, մեր հարաբերական առավելությունը պետք է լինի բիզնես միջավայրը և այն պետք է լինի այնքան արդյունավետ, որ կարողանա փոխհատուցել աշխարհագրական դիրքով պայմանավորված բոլոր տրանսպորտային ծախսերը: Մրան գուգահեռ կառավարության նպատակն է հայրենական արտադրության և արտահանման խթանումը:

Կարևորելով բիզնեսի համար առավելագույն հարմարավետ պայմանների անհրաժեշտությունը՝ 2017 թվականին Պետական եկամուտների կոմիտեն նախաձեռնել է գործարար միջավայրի բարելավմանը միտված նոր ծրագիր<sup>1</sup>:

Արտահանման խթանման, փոքր ու միջին բիզնեսի աջակցմանն ուղղված քաղաքականության շրջանակում պարզեցվել է ԱԱՀ-ի զրոյական գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցման ընթացակարգը, ինչը լրացուցիչ խթան է տնտեսվարողների ներդրումային ակտիվության բարձրացման: Կոմիտեի ղեկավարի հանձնարարականով միաժամանակ հստակ խնդիր է դրվել կրճատել ԱԱՀ-ի գումարների վերադարձի ժամանակահատվածը:

Այսօր հայաստանյան գործարարները լուրջ ուշադրություն չեն հատկացնում բիզնեսի արդյունավետ կառավարմանը, քանի որ շուկայում գրավում են մենաշնորհային դիրքեր և արդի մրցակցային պայմաններում իրենց զգում են պաշտպանված, ինչն էլ թուլացնում է նրանց մոտիվա-

<sup>1</sup> <http://politik.am/բիզնես-միջավայրի-բարելավման-նոր-ծրագ/>



ցիան կառավարման նորարական մոտեցումների ներդրման հարցում: Բայց ներկայումս ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները ի վերջո հանգեցնելու են հավասար մրցակցային դաշտի ստեղծմանը, հայկական շուկա նոր մրցակիցների մուտքին, օտարերկրյա ուղղակի ներդրումների աճին, ինչն, իր հերթին, կբերի մրցակցության աճ: Այս պայմաններում շուկայում դիրքերը պահպանելու միակ միջոցը արդյունավետության աճն է, ինչն էլ կախված է բիզնեսի արդյունավետ կառավարումից:

Օտարերկրյա կազմակերպությունների փորձն արդեն իսկ փաստում է, որ արդյունավետության աճի հասնելու լավագույն ուղիներից մեկը բիզնեսի գործընթացային կառավարման ներդրումն է: Եթե այսօր բիզնեսի ֆունկցիոնալ կառավարումը քիչ թե շատ բավարարում է մրցակցության պահանջները, ապա առաջիկայում այն ընդհանրապես չի բավարարի սուր մրցակցային դաշտի պահանջները: Հետևաբար, հայաստանյան գործարարներն այսօրվանից պետք է պատրաստ լինեն ապագա մրցակցությանը կիրառելով բիզնեսի գործընթացային կառավարումը, ինչը հնարավորություն կտա հասնելու բիզնեսի արդյունավետության աճի և ձեռք բերելու մրցակցային առավելություն:

Այսօր Հայաստանում գործող շատ կազմակերպություններ արդեն հասկացել են բիզնեսի գործընթացային կառավարման անհրաժեշտությունը և, կամ արդեն կիրառել են գործընթացային մոտեցումը և ստացել ակնհայտ արդյունքներ, կամ էլ սկսում են կատարել առաջին քայլերը դեպի գործընթացային կառավարում: Մեծ թափ է ստացել կազմակերպությունների շահագրգռվածությունն աշխատել ISO որակի կառավարման ստանդարտներին համապատասխան, ինչն էլ հնարավոր է միայն բիզնեսի գործընթացային կառավարման կիրառմամբ:

### **Բիզնեսի գործընթացային կառավարման ներդրման խնդիրները:**

Բոլոր կազմակերպություններն էլ ձգտում են արդյունավետության բարձրացման, և նրանցից շատերն են գիտակցում, որ այդ նպատակին կարելի է հասնել բիզնեսի գործընթացային կառավարման կիրառմամբ<sup>2</sup>: Բայց ձգտել նշանակում է գործել, այլ ոչ երազել, իսկ գործելն այս պարագայում այդքան էլ հեշտ չէ: Բիզնես գործընթացների ներդրումը կապված է բազմաթիվ դժվարությունների հետ և, ի վերջո, ներդնելը մի բան է, այն արդյունավետ կառավարելը և շարունակական բարելավելը՝ մեկ այլ բան: Հայաստանում դեռ կայացած չէ կառավարման նման մշակույթը, ինչը մեծ դժվարություններ է առաջացնում: Տեսականորեն թվում է, թե խոսքը

<sup>2</sup> Коллектив авторов Harvard Business School Press - Руководство по улучшению бизнес-процессов – Москва 2016, էջ 127-146.

տարրական, տարածված և միևնույն ժամանակ ձանձրալի մոտեցման մասին է, բայց իրականում այն չափազանց բարդ է: Երբ իրականում փորձ է կատարվում ներդնել գործընթացային կառավարում, այդ տարրական ու պարզ թվացող գործընթացը հանդիպում է խնդիրների մի մեծ կույտի: Ներդրման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում կիրառել իրականում գործող մեթոդներ, որոնք համակարգային բնույթ են կրում, այլ ոչ թե ազդում են առանձին տարրերի վրա<sup>3</sup>:

Նշենք այն բոլոր դժվարություններն ու խնդիրները, որոնք առաջանում են բիզնեսի գործընթացային կառավարման ներդրման ժամանակ.

- Երբ մենեջմենթը չի գիտակցում գործընթացային մոտեցման՝ որպես գաղափարախոսության ներդրման անհրաժեշտությունը: Ո՞րն է նշված խնդրի պատճառը: Բնչու՞ է գործընթացային մոտեցման իրական, այլ ոչ թե ձևական ներդրումը այդքան բարդ գործ: Դժվարությունը կայանում է կառավարման, առաջնորդության և աշխատակիցների մասնակցության պակասի մեջ: Անհրաժեշտ են փոփոխություններ նախ և առաջ կազմակերպության անձնակազմի մտածելակերպի մեջ: Նրանք պետք է պատրաստ լինեն դրան և ձգտեն օգտագործել կառավարման նոր մեթոդները, որն էլ պահանջում է ղեկավարության կողմից աջակցություն: Կազմակերպության մենեջմենթը նախ և առաջ գործընթացային մոտեցմանը պետք է վերաբերվի որպես գաղափարախոսության, որն անհրաժեշտ է ներդնել, դրանից հետո միայն դրանում տեսնել մեթոդների ամբողջություն:

- Կազմակերպության կառավարման համակարգում կատարվելիք լուրջ փոփոխություններին պատրաստ չլինելը: Շատ կազմակերպությունների ինչպես տերերը, այնպես էլ կառավարիչները պարզապես պատրաստ չեն լուրջ փոփոխությունների, որոնք գործընթացային մոտեցման ներդրման դեպքում անխուսափելիորեն կազդեն կազմակերպության կառավարման համակարգի վրա: Սկսելով գործընթացային մոտեցման ներդնումը՝ շատերը չեն գիտակցում, թե ինչ մեծ ջանքեր են պահանջվում ցանկալի արդյունքների ստացման համար:

- Գործընթացային համակարգի կառուցում, որը չի համապատասխանում կազմակերպության գործունեության բնույթին: Ցանկացած կազմակերպության գործունեությունը գործընթացների իրականացում է: Դեկլարներն ու մասնագետները ինտուիտիվ մակարդակում հասկանում են դա, բայց որպես կանոն դժվարանում են համապատասխան ձևով առանձնացնել գործընթացները: Նրանք չեն կարողանում պատասխանել

---

<sup>3</sup> Исаев Р.А. Секреты успешных банков: бизнес-процессы и технологии - Москва, 2015, էջ 139-150.

հետևյալ հարցերին: Ի՞նչ նպատակով է անհրաժեշտ տարբերակել դրանք և կառուցել կազմակերպության գործընթացների համակարգ: Այդ համակարգը ինչի՞ն պետք է համապատասխանի:

• Չհասկանալը, թե ինչու՞ է անհրաժեշտ գործընթացների դասակարգումը և ինչպե՞ս ճիշտ ձևով այն կատարել: Ինչու՞ են կազմակերպությունները բնութագրում և այնուհետև դասակարգում իրենց բիզնես գործընթացները, և արդյո՞ք դա բերում է արդյունավետության նշանակալի աճի: Փորձը ցույց է տալիս, որ դրանց մեջ ուղիղ կապ չկա: Ավելին, գործընթացների դասակարգումը հաճախ չի հանգեցնում արդյունավետության աճի: Ամեն դեպքում գործընթացները կարելի և անհրաժեշտ է բնութագրել և դասակարգել՝

- ✓ խնդիրների և նեղ մասերի վերլուծության, գործընթացների հաջորդաբար մշակման և իրականացման բարելավմանն ուղղված միջոցառումների ընթացքում տեղի ունեցած կորուստների հայտնաբերման համար,
- ✓ գործունեության ստանդարտացման, գործընթացների շարունակական լինելու ապահովման և դրանց միջոցով կառավարման հնարավորության համար,
- ✓ այլ կազմակերպություններում փորձի կիրառման համար,
- ✓ մրցակիցների հետ համեմատվելու և գործընթացների բարելավման համար,
- ✓ աշխատանքների կատարման ձևը սահմանելու համար,
- ✓ գիտելիքների կուտակման և նոր աշխատակիցներին դրանց փոխանցման համար,
- ✓ ներքին աուդիտի իրականացման համար:

• Այն թյուրմբռնումը, թե գործընթացային մոտեցման ներդրումը միայն գործընթացների մանրամասն բնութագրումն ու վերակազմակերպումն է: Նույնիսկ, եթե կազմակերպությանը հաջողվի դրանց առանձին մասերի բարելավումը, ապա ժամանակի ընթացքում արդյունավետությունը նորից կսկսի նվազել: Դա բնական է, քանի որ ինչպես մարդկանց, կազմակերպություններին նույնպես հատուկ է ծերանալը և դառնալն ավելի քիչ ուժեղ և փոփոխությունների պատրաստ: Գործընթացներն անհրաժեշտ է անընդհատ բարելավել: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է պահպանել արդյունավետության մակարդակը: Վերջինս անել առանց բիզնեսի նպատակներին և գործընթացների կառավարման ցուցանիշներին համապատասխանեցման, ուղղակի անհնար է:

• Անհրաժեշտ համբերատարության, ցանկության և ռեսուրսների պակասը, որն անհրաժեշտ է գործընթացների օպտիմալացման համար:

- Կազմակերպության տերերը և ղեկավարները կարող են անկեղ-ծորեն ցանկանալ ոչ ֆորմալ ձևով ներդնել գործընթացային կառավարում և նույնիսկ կայացնել համապատասխան որոշումներ, բայց միայն ցանկությունը բավական չէ, կարևոր է հատկացնել ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են փոփոխությունների իրականացման համար: Առաջին հերթին այդ ռեսուրսների շարքին է պատկանում ձեռնարկատերերի և ղեկավարների ժամանակը: Նրանք պետք է զինվեն համբերությամբ և ցանկությամբ երկար ժամանակ ծրագրին մասնակցելու համար:

- Գործընթացների կառավարումը կազմակերպել չկարողանալը: Գործընթացային մոտեցումը կարելի համարել ներդրված միայն այն ժամանակ, երբ կազմակերպությունում իրականացվում է գործընթացների կառավարում: Շատ կազմակերպություններում գործընթացային մոտեցման ներդրումը դադարեցվել է գործընթացների բնութագրման և դրան հաջորդող դասակարգման փուլում, որոշ կազմակերպություններում այն ժամանակ, երբ ստեղծված է եղել ցուցանիշների համակարգ: Այնինչ միայն շատ քիչ կազմակերպությունների մոտ է մենեջմենթը հասել կազմակերպության գործընթացների կառավարման հարցին:

- Գործընթացների կառավարման համար բավարար չէ միայն փաստաթղթերում գրելը, որ գործընթացները պետք է կառավարվեն գործընթացի տերերի կողմից և այլն: Անհրաժեշտ է ստեղծել ռեալ գործող կառավարման համակարգ: Նման գործունեությունն ուղղակիորեն կախված է ղեկավարների մտածելակերպի փոփոխության հետ, իսկ դա կախված է որոշակի դժվարությունների հետ՝ պահանջվում է բավական երկար ժամանակ, որպեսզի ղեկավարությունը սկսի աշխատել նոր ոճով: Եթե գործընթացային մոտեցման ներդրման ընթացքում ձեռնարկատերերը և վերին օղակի ղեկավարները համապատասխան ուշադրություն չեն դարձնում այդ հարցին, ապա գործընթացների կառավարման համակարգը դժվար թե կայանա:

- Չկարողանալը ստեղծել գործընթացների շարունակական բարելավման համակարգ (առավել ևս ներդնել PDCA համակարգը):

- Ձեռնարկատերերը կազմակերպության ղեկավարության առաջ կարող են դնել նպատակ, ըստ որի անհրաժեշտ է ներդնել գործընթացների շարունակական բարելավման համակարգ: Այնինչ հաճախ ձևական հայտարարագրերից և փաստաթղթերում համապատասխան լրացումներից գործն առաջ չի գնում:

- Անընդհատ բարելավման համակարգը կազմակերպությունում ինքն իրեն չի ներդրվում, դրա իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան մեխանիզմներ, իսկ առաջին հերթին՝ մոտիվացված

անձնակազմ: Եթե նման մեխանիզմներ չեն ստեղծվում, կազմակերպությունում ոչ մի դրական փոփոխություն տեղի չի ունենա:

- Որակի կառավարման համակարգի գործնականում ներդրման անհաջող փորձը:

- Գործընթացային մոտեցման ներդրումը ISO 9001:2008-ի ամենակարևոր պահանջներից է: Ստանդարտը առաջարկում է տարբերակել գործընթացները և կազմակերպել դրանց կառավարումը, բայց դրանում չի նշվում, թե ինչ մեխանիզմով այն կատարել: Շատ կազմակերպությունների ղեկավարները, սկսելով մշակել և ներդնել որակի կառավարման համակարգը, ասում են, որ իրենց համար կարևոր է ոչ թե հավաստագիրն, այլ իրական բարելավումը: Սակայն ծրագրի պրակտիկ իրականացման ժամանակ շատ դժվարություններ են առաջանում: Այդ իսկ պատճառով, ցավոք, կազմակերպության ղեկավարությունը հաճախ ձգտում է սահմանափակվել ISO-ի ֆորմալ պահանջների իրականացմամբ: Համակարգը հաճախ դառնում է ֆորմալ, իսկ անձնակազմի մոտ ձևավորվում է բացասական վերաբերմունք ինչպես որակի կառավարման համակարգի, այնպես էլ դրա կարևոր մաս հանդիսացող գործընթացային մոտեցման հանդեպ:

- Հայաստանում գործընթացային մոտեցման ներդրման մեծ խնդիր է համարվում նաև կադրերի պակասն այս ոլորտում: Քիչ են մասնագետները, որոնք կարող են ստանձնել նման կարևոր և բարդ աշխատանք կատարելու պարտականությունը:

- Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրների առկայությունը՝ կազմակերպությունների ղեկավարությունները բիզնեսի գործընթացային կառավարման մոտեցման ներդրումից առաջ պետք գիտակցեն, թե ինչ ճանապարհ են անցնելու վերջնական արդյունքի հասնելու համար, նախատեսեն համապատասխան ռեսուրսներ այդ գործընթացի համար և պատրաստեն իրենց աշխատակիցներին այդ փոփոխություններին:

Բիզնեսի գործընթացային կառավարման Հայաստանում ներդրման հնարավորությունները և մոտեցումները հասկանալու համար՝ դիտարկել ենք բանկային ոլորտը և դրա առաջատարին՝ փորձելով պարզել հաջողության հասնելու նրա գաղտնիքը:

Քննարկենք «Ամերիա» բանկը, որը մեծ թափով մուտք գործեց հայաստանյան բանկային համակարգ և ստանձնեց առաջատար դիրքեր: Ո՞րն է դրա գաղտնիքը: «Ամերիա» բանկի վերածնունդը<sup>4</sup> հայկական բանկային համակարգում կարելի է համարել 2008 թվականը, իսկ այսօր

---

<sup>4</sup> <http://www.ameriabank.am/About.aspx?lang=33>

նա արդեն առաջատարներից մեկն է: Գաղտնիքը կայանում է նրանում, որ հենց 2008 թ. էլ սկսվեց ներդրվել գործընթացային կառավարումը: Նման համակարգի շարունակական կատարելագործումն էլ համարվում է բանկի զարգացման հիմնաքարը: Բիզնես գործընթացների մշակումն ու կանոնակարգումն ավարտին է հասցվել դեռ 2008թ., որի արդյունքում մշակվել և ներդրվել է ավելի քան 70 բիզնես-գործընթաց, ստեղծվել է լուրջ իրավական դաշտ, որը կարգավորում է թե՛ ծառայությունների մատուցմանն առնչվող հիմնական բիզնես գործընթացները, թե՛ հիմնական գործընթացներին առընթեր և բանկի գործունեության ապահովմանն ուղղված սպասարկող գործընթացներ: Բանկի գործունեության շարունակական կատարելագործման մասին խոսելիս՝ նկատի ունենք հենց գործող գործընթացների բարելավումը, որովհետև գործընթացի մշակումն ու ներդրումը մի բան է, իսկ շարունակական կատարելագործումն ու շահագրգիռ կողմերի պահանջներին համապատասխանեցումը՝ լրիվ այլ բան: Բանկի զարգացմանը զուգահեռ փոփոխվել և կատարելագործվել են գործող բիզնես գործընթացները՝ 100-ից ավելի իրագործած բարելավումների շնորհիվ: Հիմնականում բարելավվել են ծառայությունների մատուցմանն ուղղված հիմնական բիզնես գործընթացները, մասամբ նաև դրանց ապահովմանն ուղղված սպասարկող գործընթացները:

Ներկայումս «Սմերիա» բանկն աշխատում է հիմնական գործընթացների ավտոմատացման ուղղությամբ CRM համակարգի շրջանակներում: Այն ենթադրում է նոր մոտեցման կիրառում բիզնես գործընթացների կազմակերպման հարցում, երբ համակարգը նախապես մշակած ալգորիթմի համաձայն ուղղորդում է գործընթացը սահմանված չափանիշներով և ժամկետներում: Ավտոմատացումը հնարավորություն կտա նվազեցնել փաստաթղթաշրջանառությունը ստորաբաժանումների միջև, բարձրացնել գործընթացի շրջանակում պատասխանատուների միջև փոխազդեցության արդյունավետությունը, նվազեցնել ռիսկերը, հսկել և բացահայտել գործընթացի թույլ օղակները՝ դրանց անընդհատ բարելավման նպատակով: Այս նախագծի իրագործումը ևս մեկ կարևոր քայլ կդառնա բանկի գործունեության կատարելագործման ճանապարհին: Այս ամենը ենթադրում է հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման Հայաստանի համար նոր հայեցակարգ և ծառայությունների մատուցման բոլոր բիզնես գործընթացների ավտոմատացում: Այդ համակարգը կլինի այն գործիքը, որի օգնությամբ կապահովվի որակի կառավարման համակարգի ավելի արդյունավետ գործունեությունը:

Գործընթացային կառավարման արդյունք հանդիսացավ նաև 2009 թ. ISO 9001:2008 որակի կառավարման միջազգային ստանդարտի հավաս-

տագրի ստացումը, ինչը մեծ առավելություն է մրցակիցների նկատմամբ: Ըստ ISO չափանիշի՝ որակն ապրանքի, համակարգի կամ գործընթացի հատկանիշների համախմբության ունակությունն է բավարարելու սպառողների և այլ շահագրգիռ կողմերի կարիքները: Ինչպես երևում է այս բնորոշումից, որակը վերաբերում է ոչ միայն ծառայություններին, այլ նաև համակարգի մյուս բաղադրիչներին և ուղղված է նաև մյուս շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանը: Հետևաբար որակի մասին խոսելիս մենք նկատի ունենք ոչ միայն բանկի ծառայություններն ու ապրանքները, այլև ամբողջ համակարգի որակը, որն ուղղված է թե՛ հաճախորդների, և թե՛ այլ շահագրգիռ կողմերի (բաժնետերեր, աշխատակիցներ, մատակարարներ, գործընկերներ և այլն) կարիքների բավարարմանը:

Բայց մի բան է հավաստագիր ստանալը, մեկ այլ բան՝ դրա պահպանումը: «Ամերիա» բանկն ապացուցեց, որ կարող է պահպանել այն. 2010 թ. «Ամերիա» բանկը ստացավ կատարած աշխատանքի հերթական գնահատականը TUV RHEINLAND GROUP ընկերության կողմից իրականացված հերթական աուդիտի արդյունքում, որն իրականացվում է յուրաքանչյուր տարի վկայականի գործողության ընթացքում: Աուդիտորների կարծիքով բանկը ոչ միայն ապահովել է համապատասխանությունը որակի չափանիշի պահանջներին, այլև կարողացել է շատ ավելի առաջ գնալ կառավարման համակարգի կատարելագործման ոլորտում:

Գործընթացային կառավարումը, փաստորեն, տվեց իր պտուղները ներդրման առաջին իսկ օրվանից՝

- ISO 9001:2008 որակի կառավարման ստանդարտի հավաստագրի ստացում
- Արժանացել է բազմաթիվ մրցանակների<sup>5</sup>, որոնցից են՝ «Որակի գերազանցության», «Հայաստանի լավագույն ներդրումային բանկ», «Տարվա լավագույն բանկը Հայաստանում», «Moody's B1/NP (LC) & B2/NP (FC) », «STP Award Excellent Quality», «Տարվա գործարք էներգաարդյունավետության ոլորտում», «Ֆակտորինգային ծառայությունների ոլորտում լավագույն բանկը Հայաստանում», «Հայաստանում արտարժույթ փոխանակող լավագույն բանկ», «Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում լավագույն բանկ», որոնցից շատերը ստացել է մի քանի անգամ:
- «Ամերիա բանկի» թիմը նաև ճանաչվել է հաղթող եվրոպական բանկերի միջև անցկացված Բանկային կառավարման առցանց մրցույթում:

<sup>5</sup> <http://ameriabank.am/IR/hy/about-us/developments-achievements>

Փաստորեն, գործընթացային կառավարումը «Ամերիա» բանկին հնարավորություն տվեց արագ մուտք գործել հայկական բանկային համակարգ և բոլոր առևտրային բանկերի մեջ գրավել առաջատար դիրքեր: Մրցակցային առավելության հասնելու և բիզնեսի աճ ապահովելու համար մյուս առևտրային բանկերը պետք է հետևեն «Ամերիա» բանկի փայլուն օրինակին:

Հաշվի առնելով գործընթացային կառավարման անհրաժեշտությունը՝ այսօր ՀՀ պետական մարմինները նույնպես սկսել են կիրառել այս մոտեցումը: Քանի որ կառավարությունը առևտրային կառույց չէ, այս պարագայում ապրանք և սպառող հասկացությունները մի քիչ շեղվում են իրական շուկայականից և ապրանքը, որն անցնում է մի գործընթացից մյուսը, հանդիսանում է տեղեկատվությունը: Այս դեպքում գործընթացները կառուցված են DFD (Data Flow Diagrams) մեթոդով:

DFD մեթոդոլոգիայի գործիքները թույլ են տալիս բացահայտել տվյալների աղբյուրները, ճանաչել գործընթացները և տվյալների խմբերը, որոնք կապում են հոսքային մեկ գործառույթը մյուսին և արդյունավետ օգտագործում են գործընթացային կառավարման նկարագրության դեպքում, քանի որ այն հնարավորություն է տալիս առավելագույնս նվազեցնել բիզնես գործընթացների նկարագրության սուբյեկտիվությունը: Բացի այդ DFD մեթոդը թույլ է տալիս նկարագրել փաստաթղթերի և ռեսուրսների հոսքերը (օրինակ, նյութերի շարժը մի աշխատանքից մեկ այլ աշխատանք):

Այսօր ՀՀ-ում պետական գնումների գործընթացի կազմակերպման ժամանակ նույնպես օգտագործվում են բիզնես գործընթացները<sup>6</sup>:

Բացի վերոնշյալը ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ ստեղծվեց ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» պետական հիմնարկը<sup>7</sup>: Վերջինիս նպատակն էր էականորեն թեթևացնել բիզնեսի և քաղաքացիների վրա ընկնող կարգավորումների բեռը՝ առնվազն երկու անգամ կրճատելով գործառնական ծախսերը: 2012 թ. մայիսից կենտրոնի կողմից իրականացվել է «Կարգավորիչ գիյոտին» ծրագիրը<sup>8</sup>: Վերջինս արագ բարեփոխումների գործիք էր, որի ներդրումը հնարավորություն ընձեռեց Հայաստանին թարմացնել կարգավորիչ քաղաքականությունը և էապես բարելավել բիզնես-միջավայրը՝ նպաստելով բյուրոկրատիայի կրճատմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանը: Օրենսդրական կար-

<sup>6</sup> [http://transparency.am/files/publications/procurement\\_guide%20\(2\).pdf](http://transparency.am/files/publications/procurement_guide%20(2).pdf)

<sup>7</sup> <http://www.regulations.am/am/national-centre-for-legislative-regulation>

<sup>8</sup> <http://www.e-guillotine.am/>



գավորման ազգային կենտրոնի միջազգային փորձագետ Սքոթ Յակոբսը կարծիք է հայտնել, որ լավ բիզնես-միջավայրի ստեղծման համար անհրաժեշտ է բարելավել երկրի իրավական դաշտը, ինչին էլ ուղղված էր ծրագիրը: «Կարգավորիչ գիլտոին» ծրագրի շրջանակներում վերանայել են 326 բիզնես-գործընթաց և դրանք սահմանող 2500 իրավական ակտեր: Սա թույլ է տվել էապես արագացնել և պարզեցնել բիզնես-գործընթացները, ազատվել թղթաբանական քաշքշուկից, կրճատել ավելորդ ծառայությունների ծախսերը: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի կողմից ներկայացված առաջարկություններով ձեռնարկատիրության ոլորտում բիզնես գործընթացների ծախսերը այդ ժամանակահատվածում նվազել են 1 մլդ դրամով<sup>9</sup>:

Այսպիսով՝ գալիս ենք այն եզրակացության, որ գործընթացային կառավարումն անհրաժեշտ է ոչ միայն հայկական կազմակերպություններին, այլ նաև մեր պետական կառավարման համակարգին. չէ՛ որ վերջինս էլ է ձգտում արդյունավետության աճի:

## **ԲԻԶՆԵՍԻ ԳՈՐԾՆԹԱՑԱՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԻՄԱՆՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

### **ՀԱՅԿ ՍԱՄՎԵԼԻ ՄԵԻԹԱՐՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Այսօր հայաստանյան գործարարները լուրջ ուշադրություն չեն հատկացնում բիզնեսի արդյունավետ կառավարմանը, քանի որ շուկայում գրավում են մենաշնորհային դիրքեր և իրենց պաշտպանված են զգում, ինչն էլ թուլացնում է նրանց մոտիվացիան կառավարման նորարական մոտեցումների ներդրման հարցում: Օտարերկրյա կազմակերպությունների փորձը փաստում է, որ արդյունավետության աճի հասնելու լավագույն ուղիներից մեկը բիզնեսի գործընթացային կառավարման ներդրումն է: Հաշվի առնելով այդ ներդրման անհրաժեշտությունը՝ այսօր ՀՀ պետական մարմինները նույնպես սկսել են կիրառել այս մոտեցումը:

*Բանալի բառեր. բիզնես գործընթաց, բիզնես-միջավայր, կառավարում,  
ներդրում, հիմնախնդիր:*

<sup>9</sup> <http://www.regulations.am/am/reform-activities/>

## ОСНОВНЫЕ ЗАДАЧИ УПРАВЛЕНИЯ БИЗНЕС-ПРОЦЕССАМИ И ЕГО ВНЕДРЕНИЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**ГАЙК САМВЕЛОВИЧ МХИТАРЯН**, к.э.н.

*Младший научный сотрудник*

*Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** Сегодня армянские бизнесмены не уделяют много внимания эффективному управлению бизнесом, поскольку у них монопольные позиции на рынке и они чувствуют себя защищенными, что ослабляет их мотивацию внедрить инновационные подходы при управлении. Опыт зарубежных организаций показывает, что одним из лучших способов добиться роста производительности является внедрение управления бизнес-процессами. Принимая во внимание необходимость таких внедрений, государственные органы РА уже начали применять этот подход.

*Ключевые слова:* бизнес-процесс, бизнес-среда, управление, инвестиции, основные задачи.

## THE ISSUES OF BUSINESS PROCESS MANAGEMENT AND THE INTRODUCTION OF THEREOF IN THE REPUBLIC OF ARMENIA

**HAYK SAMVEL MKHITARYAN**, Ph.D. in Economics

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Nowadays, Armenian businessmen do not pay much attention to the effective business management, since they have monopolistic positions in the markets and seem to be protected, thus weakening their motivation to introduce innovative management approaches. The study of best practices utilized by foreign companies states that one of the best ways to ensure higher efficacy is the introduction of business process management. By taking into account the need for introducing thereof, the public institutions of the Republic of Armenia have recently started introducing and utilizing this approach as well.

*Keywords:* business process, business environment, management, investment, main issues.

## **ՀՀ ԸՆԹԱՑԻԿ ԶԱՇԻՎԸ, ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ՍԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱ ՎՐԱ**


Համաշխարհային տնտեսության ներկայիս գլոբալացման պայմաններում էլ ավելի է կարևորվում վճարային հաշվեկշռի դերը: Այն դրսևորվում է ոչ միայն որպես տնտեսագիտական խնդիր, այլև դրանից բխող իր սոցիալ-տնտեսական հետևանքներով: Վճարային հաշվեկշիռը տնտեսության արտաճումն է, այն թույլ է տալիս ուսումնասիրել տնտեսության ինչպես ներկայիս, այնպես էլ անցյալում ձևավորված պատկերը: Տնտեսության ներքին հավասարակշռությունը կարելի պահպանել միայն այն դեպքում, երբ զուգորդվում են տնտեսական քաղաքականության առանձին տարրերը, պետությունն ապահովում է տվյալ տնտեսության առանձնահատկություններին համապատասխան մաքսային և հարկային քաղաքականություն, խթանում է արտահանումը, ստեղծվում են միջազգային չափանիշներին համապատասխանող և արտաքին շուկայում մրցունակ արտադրատեսակներ:

Վճարային հաշվեկշիռը քննարկելիս հատկապես կարևորվում է ընթացիկ հաշվի կարգավորման հարցը: Ներկայիս պայմաններում յուրաքանչյուր երկրի զարգացման և կայունության առաջնային գրավականը արտաքին տնտեսական կապերի զարգացումն ու ամրապնդումն է: Փոքր շուկա ունեցող երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանն է, որտեղ չկան զարգացած ֆինանսական ենթակառուցվածքներ, արտահանման ծավալների ընդլայնումն էլ ավելի է կարևորվում:

Ներկայումս համաշխարհային տնտեսությունը պետք է դիտարկել որպես մեկ միասնական շուկա, որտեղ իրենց ուրույն տեղը կարող են ունենալ միայն մրցունակ ապրանք արտադրողները: Այս համատեքստում էլ ավելի է կարևորվում պետություն-մասնավոր համագործակցությունը, քանի որ երկրի արտաքին հավասարակշռությունը պահպանելու մեջ մասնավոր հատվածի դերը չափազանց մեծ է: Իհարկե, համաշխարհային շուկան չի կարելի բնորոշել որպես կատարյալ մրցակցային, քանի որ այստեղ ևս պետությունների կողմից կիրառվում են բազմաթիվ խթանող և խոչընդոտող գործիքներ իրենց երկրի արտաքին առևտրաշրջանառությունը կարգավորելու համար: Առավել մեծ դեր են ստանում միջպետական ինտեգրացիոն միավորները՝ մաքսային և տնտեսական միություն-

ները, ինչպես նաև պետությունների միջև կնքվող առևտրային համաձայնագրերը:

ՀՀ-ն ևս անմասն չի մնացել համաշխարհային տնտեսության զարգացման այսպիսի իրադարձություններից: Անկախությունից ի վեր Հայաստանը ինտեգրվել է միջազգային առևտրային հարաբերություններում, իսկ 2003 թվականի փետրվարի 5-ին այն պաշտոնապես դարձավ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ: ԱՀԿ-ին անդամակցությունը նպաստում է երկրի ազատ առևտրական և տնտեսական քաղաքականությանը, դա էլ իր հերթին էական ազդեցություն է ունենում երկրի արտահանման և վճարային հաշվեկշռի բարելավման գործում:



Գծապատկեր 1. ՀՀ ընթացիկ հաշիվը 1993-2017թթ. (մլն. ԱՄՆ դոլար)

2003 թվականից սկսած ակնհայտ կրճատվել է Հայաստանի ընթացիկ հաշվի բացասական մնացորդը, ինչը արտահանման ծավալների մեծացման հետևանք է: 2003 թվականին ընթացիկ հաշվի բացասական մնացորդը կազմել է 173,5 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2004 թվականին այն կրճատվել է հասնելով 78,8 մլն ԱՄՆ դոլարի<sup>1</sup>: Ընթացիկ հաշվի բացասական մնացորդը էականորեն աճել է նախաձգնաժամային 2007-2008 թվականներին, որը հատկապես պայմանավորված է համախառն սպառման բարձր մակարդակով (գծապատկեր 1):


Ի սկզբանե, դեռևս չունենալով ամրապնդված արտաքին տնտեսական հարաբերություններ՝ ՀՀ ընթացիկ հաշիվը ունեցել է բացասական մնացորդ,

<sup>1</sup> Տվյալները վերցված են ՀՀ ԿԲ պաշտոնական կայքից:

որը 1993 թվականին կազմել է 67,1 մլն ԱՄՆ դոլար<sup>2</sup>: Նույն թվականին «Ապրանքներ և ծառայություններ» հաշվի բացասական մնացորդը կազմել է 129,6 մլն դոլար, որից 98 մլն դոլարը ապրանքների արտահանումից և ներմուծումից առաջացած բացասական սալտոն է, իսկ 31,6 մլն դոլարը ծառայությունների բացասական սալտոն: Ծառայությունների հաշվում մեծ տեսակարար կշիռ էր զբաղեցնում բեռնատար տրանսպորտային ծառայությունների ներմուծումը: Ապրանքների և ծառայությունների ենթահաշվից առաջացած բացասական մնացորդը որոշակի չափով ծածկվում է երկրորդային եկամուտների ենթահաշվում առաջացած դրական մնացորդի շնորհիվ, որտեղ մեծ տեսակարար կշիռ ունի «պետական կառավարում» հոդվածը՝ 62,9 մլն դոլար դրական մնացորդ:

Հաշվի առնելով նաև կապիտալի հաշվից գոյացած 5,1 մլն դոլարի դրական մնացորդը կապիտալի և ընթացիկ հաշիվներից առաջացած գուտ փոխառությունը կազմել է -62,6 մլն դոլար:

ՀՀ տնտեսության զարգացման ամբողջ ընթացքում վճարային հաշվեկշիռը պահպանել է սկզբնական շրջանում ձևավորած հիմնական կառուցվածքը: Ենթարկվելով որոշակի տնտեսական և քաղաքական ազդեցությունների՝ ՀՀ վճարային հաշվեկշռում միայն տեղի են ունեցել այսպես ասած, մասշտաբների փոփոխություններ:



Գծապատկեր 2. Վճարային հաշվեկշռի կառուցվածքը 1995-2017թթ. համար

<sup>2</sup> Սյուսիետ դոլարը նկատի կառնվի որպես ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 2-ից երևում է, որ կառուցվածքային առումով, ամբողջ ընթացքում ՀՀ վճարային հաշվեկշիռը պահպանել է իր տեսքը, այսինքն, ընթացիկ հաշիվը կազմող հիմնական չորս ենթահաշիվներից երկուսը՝ ապրանքները և ծառայությունները, եղել են բացասական սալտոյով, իսկ սկզբնական և երկրորդային եկամուտները պահպանել են դրական մնացորդը: Կարելի է պնդել, որ ՀՀ տնտեսության արտաքին հատվածը էական փոփոխություններ չի կրել: Միայն ժամանակ առ ժամանակ, կախված տնտեսության արտաքին և ներքին իրավիճակներից, փոփոխվել են գործարքների ծավալները:

Ընթացիկ հաշվի բացասական մնացորդի մեծացումը 2017 թվականին մեծապես պայմանավորված է ապրանքների ներմուծման աճով՝ 3760,7 մլն դոլար նախորդ տարվա 2835,1 մլն դոլարի փոխարեն<sup>3</sup>: Մնացած բոլոր հաշիվների մասով գրանցվել է դրական տեղաշարժ՝ մասնավորապես ծառայությունների հաշվի բացասական մնացորդը 2016 թվականի համեմատ կրճատվել է 43,5 մլն դոլարով և կազմել է -27,9 մլն դոլար, վերջինս անկախությունից ի վեր արձանագրված լավագույն ցուցանիշն է: Սկզբնական և երկրորդային եկամուտների մասով արձանագրվել է համապատասխանաբար 222,1 և 106,3 մլն դոլար աճ, որը հիմնականում պայմանավորված է անձնական տրանսֆերտների և աշխատողների վարձատրության աճով:

Սակրոտնտեսական առումով կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոյություն ունի ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերության որոշակի մակարդակ, որը որոշում է երկրի արտաքին պարտքի կայունության պայմանը:

Արտաքին պարտքի կայունության ամենապարզ մոտեցումը նույնպես հիմնված է արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերության բացահայտման վրա: Այն հիմնված է այն փաստի վրա, որ արտաքին պարտքի զարգացումները կապված են երկու հիմնական գործոնների հետ՝ առևտրային հաշվեկշռի մնացորդի և արտաքին տոկոսադրույքի: Ուստի արտաքին ֆինանսավորումը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով՝

$$B_t = (1 - i_t)B_{t-1} - (X - M)_t \quad (1)$$

կամ

$$B_t = (1 - i_t)B_{t-1} - CA_t \quad (2)$$

որտեղ  $B_t$ -ն  $t$ -րդ ժամանակահատվածի արտաքին պարտքի մեծությունն է,  $i_t$ -ն նույն ժամանակաշրջանի համար արտաքին տոկոսադրույքի չափը,

<sup>3</sup> Ըստ կենտրոնական բանկի հրապարակած վճարային հաշվեկշռի տվյալների:

$(X - M)$ -ը արտահանման և ներմուծման տարբերությունն է՝ այսինքն՝ առևտրային հաշվեկշիռը,  $CA_t$ -ն ընթացիկ հաշիվն է:

Բանաձևից երևում է, որ ընթացիկ ժամանակաշրջանի արտաքին պարտքի մեծությունը կախված է նախորդ ժամանակաշրջանի պարտքի մեծությունից և ընթացիկ հաշվից: Այսինքն՝ տրված տոկոսադրույքի և ընթացիկ հաշվի մնացորդի պայմաններում կարելի է որոշել արտաքին պարտքի ուղղությունը: Եթե երկիրն ապահովում է տնտեսության հավասարակշռված վիճակ, այսինքն՝ ընթացիկ հաշիվը զրոյական է ( $CA_t = 0$ ), ապա արտաքին պարտքը կավելանա բացարձակապես տոկոսավճարի չափով: Եթե ընթացիկ հաշիվը ավելցուկային է, ապա պարտքը կավելանա ավելի ցածր տեմպով, իսկ դեֆիցիտային ընթացիկ հաշվի պայմաններում՝ ավելի արագ տեմպով:

Արտաքին պարտքի կայունության պայմանը ստանալու համար (2) հավասարության երկու մասերը բաժանենք  $Y_t$  վրա, որով նշանակված է տվյալ ժամանակահատվածի ՀՆԱ ցուցանիշը: Նշանակենք նաև  $\frac{Y_t}{Y_{t-1}} = (1 + g_t)$  - ՀՆԱ աճի տեմպը:

$$\frac{B_t}{Y_t} = \frac{(1 + i_t)B_{t-1}}{Y_t} - \frac{CA_t}{Y_t} \quad (3)$$

$$b_t = \frac{(1 + i_t)B_{t-1}}{(1 + g_t)Y_{t-1}} - ca_t \quad (4)$$

$$b_t = \frac{(1 + i_t)}{(1 + g_t)} b_{t-1} - ca_t \quad (5)$$

Հավասարման երկու կողմերից հանենք  $b_{t-1}$ :

$$b_t - b_{t-1} = \frac{(i_t - g_t)}{(1 + g_t)} b_{t-1} - ca_t \quad (6)$$

Վերոնշյալ բանաձևից կարելի է անել հետևություն. որպեսզի երկրի արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերությունը կայուն լինի՝  $b_t - b_{t-1} = 0$ , անհրաժեշտ է, որ պահպանվի հետևյալ հավասարությունը՝

$$\frac{(i_t - g_t)}{(1 + g_t)} b_{t-1} = ca_t \quad (7)$$


Այսպիսով, պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը որոշվում է արտաքին տոկոսադրույքի և ՀՆԱ աճի տեմպի ցուցանիշների տարբերությամբ: Եթե տոկոսադրույքը ավելի մեծ է քան ՀՆԱ աճի տեմպը, ապա պարտք/ՀՆԱ հարաբերությունը կմեծանա: Այս պայմաններում անհրաժեշտ է ապահովել ընթացիկ հաշվի ավելցուկ արտաքին պարտքը սպասարկելու համար:

Այս մեթոդի թերությունն այն է, որ այն հաշվի չի առնում ներդրողների և վարկատուների դերակատարությունը պարտքի ձևավորման գործում: Այստեղ ներկայացված տեսության համաձայն արտաքին պարտքը բացառապես կախված է տոկոսադրույքի և ՀՆԱ աճի տեմպի տարբերությունից:

Բացի այդ, այս մեթոդում, ինչպես նաև պարտքի կայունության մյուս մեթոդներում, վճարունակությունը գնահատելիս հաշվի չի առնվում երկրի առկա պարտքի բեռը: Այսպես՝ ըստ վերոնշյալ մեթոդի պարտքի կայունության պայմանը հանգում է տնտեսական աճի՝ պարտքի գծով տոկոսադրույքներին գերազանցմանը: Իսկ տվյալ պայմանի ապահովման դեպքում, երբ ՀՆԱ-ն աճում է ավելի արագ, քան արտաքին պարտքը, ապա առավել մեծ պարտքի պայմաններում, պարտքի բեռի նվազման տեմպը ավելի արագ կլինի, քան առավել ցածր արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշի դեպքում: Վերջինս էլ իր արտահայտությունը կստանա ընթացիկ հաշվի կայուն մակարդակի արժեքներում՝ առավել մեծ պարտքի պայմաններում (եթե ապահովված է պարտքի կայունության պայմանը) ենթադրելով ընթացիկ հաշվի՝ ՀՆԱ-ում ավելի մեծ պակասուրդ ձևավորելու հնարավորություն: Այսինքն, արտաքին պարտքի մեծ կշիռը հնարավոր է պահպանել ընթացիկ հաշվի ավելի մեծ պակասուրդով, քան պարտքի փոքր բեռը, չնայած որ առավել մեծ պարտքը լրացուցիչ մտավախություններ է առաջացնում վերջինիս կայունության տեսանկյունից: Չնայած նշված թերություններին, սույն մեթոդաբանությունը գրականության մեջ ընթացիկ հաշվի կայունության գնահատման ամենատարածված մոտեցումներից է:

Գծապատկեր 3-ից երևում է, որ ընթացիկ հաշիվ ՀՆԱ հարաբերությունը ՀՀ համար միշտ կազմել է բացասական մեծություն, ընդ որում ամենացածր մակարդակին հասել է 2009 թվականին, իսկ վերջին երեք տարիներին էականորեն կրճատվել է բացասական մնացորդը՝ գրեթե մոտենալով 0-ի: (7) բանաձևից պարզ է դառնում, որ ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերության հավասարակշռության մակարդակը հնարավոր է ապահովել բացասական մեծություն միայն այն դեպքում, երբ ՀՆԱ աճի տեմպը մեծ է արտաքին տոկոսադրույքի մակարդակից:





**Գծայատկեր 3. 2000-2017թթ. ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում, տոկոս**

Այսպիսով, ընթացիկ հաշվի կարգավորման կարևորությունը հասկանալով՝ փորձենք մաթեմատիկական մոդելի միջոցով գնահատել մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը ընթացիկ հաշվի վրա:

Գնահատման համար օգտագործվել են 1999-2017թթ. եռամսյակային տվյալներ՝ մասնավորապես, ընթացիկ հաշվի եռամսյակային ցուցանիշները, ՀՆԱ եռամսյակային տվյալները, դրամ-դոլար փոխարժեքի կուրսը, ներմուծման և արտահանման ծավալները, ՀՀ արտաքին պարտքը, ոչ ռեզիդենտների կողմից ռեզիդենտներին վճարվող աշխատավարձերի եռամսյակային ծավալները և ֆիզիկական անձանց բանկերի միջոցով փոխանցված ընթացիկ տրանսֆերտների եռամսյակային ծավալները:

Ընթացիկ հաշվի, ներմուծման և արտահանման, արտաքին պարտքի, փոխարժեքի կուրսի, աշխատավարձերի և տրանսֆերտների ցուցանիշները վերցված են ՀՀ ԿՊ պաշտոնական կայք էջից: ՀՆԱ եռամսյակային տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքից:

Նախնական ռեգրեսիայի արդյունքում ստացվել են հետևյալ արդյունքները:

**Ընթացիկ հաշվի գնահատման արժեքները<sup>4</sup>**

Source	SS	df	MS		
Model	19.5830034	7	2.79757191	Number of obs =	53
Residual	9.39135075	45	.208696683	F( 7, 45) =	13.40
Total	28.9743541	52	.557199118	Prob > F =	0.0000
				R-squared =	0.6759
				Adj R-squared =	0.6255
				Root MSE =	.45683

current_hp	Coef.	Std. Err.	t	P> t	[95% Conf. Interval]	
transfers_hp	1.153119	.4233543	2.72	0.009	.3004391	2.005798
export_hp	1.443447	.3258403	4.43	0.000	.7871709	2.099723
import_hp	-3.868688	.5810688	-6.66	0.000	-5.039021	-2.698355
rate_hp	.0368952	.2744243	0.13	0.894	-.5158237	.5896141
GDP_hp	.4954055	.453724	1.09	0.281	-.4184414	1.409252
Grossexternaldebt_hp	-.7125418	.6920019	-1.03	0.309	-2.106305	.6812216
salary_hp	-.6345735	.6446322	-0.98	0.330	-1.932929	.6637824
_cons	-.0017619	.0654372	-0.03	0.979	-.1335591	.1300353

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, փոփոխականների մեծ մասը 95% նշանակալիության միջակայքում ոչ նշանակալի են, ուստի դրանք դուրս են հանվել մոդելից:

Արդյունքում գնահատված է միայն արտահանման, ներմուծման և ընթացիկ տրանսֆերտների ազդեցությունը ընթացիկ հաշվի վրա:

Նախքան ռեգրեսիան կատարելը փոփոխականները լոգարիթմել են ստանդարտացվել և ազատվել տրենդից: Բոլոր ժամանակային շարքերը լոգարիթմելուց, ապատրենդավորելուց և ստանդարտացնելուց հետո դիտարկենք հետևյալ բազմաչափ գծային ռեգրեսիոն մոդելը:

$$\Delta U_t = \beta_1 \Delta E_t + \beta_2 \Delta I_t + \beta_3 \Delta T_t + \Delta \varepsilon_t, \quad t = 1999(q2); 2017(q4) \quad (8)$$

որտեղ

$\Delta U_t$  -ն ընթացիկ հաշվի փոփոխության տեմպն է,

$\Delta E_t$  -ն արտահանման փոփոխման տեմպն է,

$\Delta I_t$  -ն ներմուծման փոփոխության տեմպն է,

$\Delta T_t$  -ն տրանսֆերտների փոփոխման տեմպն է,

$\Delta \varepsilon_t$  -ն սխալներն են:

Stata ծրագրային փաթեթի միջոցով իրականացնելով գնահատում փոքրագույն քառակուսիների եղանակով(OLS) կատանանք հետևյալ արդյունքները:

<sup>4</sup> Հաշվարկվել է հեղինակի կողմից:

Ընդհանուր ռեգրեսիայի նշանակալիությունը կարելի է ստուգել Ֆիշերի հայտանիշով: Գնահատման արդյունքներից կարելի է տեսնել, որ  $F(3, 51) = 28,64$ , ինչը պետք է համեմատել Ֆիշերի բաշխման աղյուսակ 2-ի 3 և 51 (համարիչի և հայտարարի ազատության աստիճաններն են) ազատության աստիճանների կրիտիկական կետի հետ: Ակնհայտ է, որ գնահատման արդյունքում ստացված արդյունքը գերազանցում է կրիտիկական արժեքը, ինչը նշանակում է, որ ընդհանուր ռեգրեսիայի ոչ նշանակալի լինելու վարկածը մերժվում է:

Աղյուսակ 2

**ՀՀ ընթացիկ հաշվի փոփոխության տեմպի արժեքները՝  
ըստ Stata ծրագրային փաթեթի<sup>5</sup>**

Source	SS	df	MS	Number of obs =	55
Model	18.2107767	3	6.07025889	F( 3, 51) =	28.64
Residual	10.8106314	51	.211973165	Prob > F =	0.0000
				R-squared =	0.6275
				Adj R-squared =	0.6056
Total	29.0214081	54	.537433483	Root MSE =	.46041

current_hp	Coef.	Std. Err.	t	P> t	[95% Conf. Interval]	
export_hp	1.535336	.3246266	4.73	0.000	.8836213	2.187051
import_hp	-3.47533	.4256137	-8.17	0.000	-4.329785	-2.620875
transfers_hp	.924516	.1726441	5.36	0.000	.5779184	1.271114
_cons	.0139107	.0620826	0.22	0.824	-.1107254	.1385468

Յուրաքանչյուր գործոնի, ինչպես նաև ընդհանուր մոդելի նշանակալիությունը ստուգելուց հետո Jarque-Bera, Breusch-Pagan, Breusch-Godfrey թեստերի միջոցով ստուգվել են դասական պայմաններին բավարարելը:

Այսպիսով, համոզվելով, որ ստացված գործակիցները անշեղ և ունակային գործակիցներն են, մեկնաբանենք դրանք տնտեսագիտորեն: Շարքերի համար հաշվարկվել են ստանդարտ շեղումները և ստացվել են հետևյալ արժեքները՝  $S_U = 0.1902$ ,  $S_E = 0.6242$ ,  $S_I = 0.6259$ ,  $S_T = 0.4415$ , որտեղ  $S$ -երը համապատասխանաբար ընթացիկ հաշվի, արտահանման, ներմուծման և տրանսֆերտների փոփոխման տեմպերի ստանդարտ շեղումներն են:

<sup>5</sup> Հաշվարկվել է հեղինակի կողմից:

Այսպիսով, արտահանման ծավալների՝ իր միջինից մեկ ստանդարտ շեղումը (0.6242 կամ 62.4%) առաջացնում է ընթացիկ հաշվի փոփոխման տեմպի 29,07% դրական աճ՝

$$\beta_1 * S_U = 1.53 * 19\%:$$

Նմանապես ներմուծման փոփոխման տեմպի իր միջինից մեկ ստանդարտ շեղումը (աճը երկարաժամկետ տրենդից) առաջացնում է 65.93% ընթացիկ հաշվի փոփոխման տեմպի բացասական փոփոխություն, և տրանսֆերտների փոփոխման տեմպի մեկ ստանդարտ շեղումը իր միջինից (աճը երկարաժամկետ տրենդից) կառաջացնի 17.48% ընթացիկ հաշվի փոփոխման տեմպի դրական փոփոխություն:

### **ՀՀ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԸ, ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ՍԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱ ՎՐԱ**

**ՆԱՐԵԿ ՍԱՀԱԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Ներկայում տնտեսության գլոբալացման պայմաններում առավել մեծ կարևորություն է ստանում ընթացիկ հաշվի ուսումնասիրությունը և դրա դերը տնտեսության զարգացման գործընթացում: Ցանկացած գործարք, որ տեղի է ունենում տվյալ երկրի ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև, արտացոլվում է ընթացիկ հաշվում: Ուստի ընթացիկ հաշիվը և դրանում կատարվող փոփոխությունները չեն կարող անմասն մնալ երկրում տեղի ունեցող տնտեսական վայրիվերումներից: Հոդվածում ներկայացված ՀՀ ընթացիկ հաշվի դինամիկան տնտեսության զարգացման տարբեր փուլերում, ինչպես նաև ռեզրեսիոն մոդելի միջոցով գնահատված է մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների ազդեցությունը ընթացիկ հաշվի վրա:

***Բանալի բառեր.** ընթացիկ հաշիվ, մակրոտնտեսական ցուցանիշներ, ռեզրեսիոն մոդել, արտաքին պարտք, կայունության մակարդակ:*

## ТЕКУЩИЙ СЧЕТ РА, ЕГО ДИНАМИКА И ВОЗДЕЙСТВИЕ МАКРОЭКОНОМИЧЕСКИХ ПОКАЗАТЕЛЕЙ НА НЕГО

**НАРЕК СААКОВИЧ МКРТЧЯН**, *к.э.н.*,

*младший научный сотрудник*

*Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** В условиях глобализации экономики наиболее важное значение приобретает изучение текущего баланса и его роли в экономическом развитии. Любая сделка, проводимая между резидентами и нерезидентами страны, отражается в текущем балансе. Поэтому текущий баланс и изменения в нем не могут оставаться в стороне от экономических потрясений, происходящих в стране. В статье представлена динамика текущего баланса РА на разных этапах развития экономики, также с помощью модели регрессии оценено влияние ряда макроэкономических показателей на текущий баланс.

**Ключевые слова:** *текущий баланс, макроэкономические показатели, регрессионная модель, внешний долг, уровень стабильности.*

## CURRENT ACCOUNT OF THE REPUBLIC OF ARMENIA, DYNAMICS OF THEREOF AND THE IMPACT OF MACROECONOMIC VARIABLES ON IT

**NAREK SAHAK MKRTCHYAN**, *Ph.D.in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Nowadays, under the conditions of globalizing the economy, the study on the current account and its role in ensuring the economic development is highly stressed. The current account records any transaction that is carried out between a resident of a given nation and a non-resident(s). Hence, the current account balance reflects the developments reported in the economy. The article illustrates the current account dynamics in various stages of economic development in Armenia and provides the impact of various macroeconomic variables on the current account, estimated through the regression model.

**Keywords:** *Current account, macroeconomic variables, regression model, external debt, the level of stability*

## ՏԱԹԵՎԻԿ ՎԱՉԳԵՆԻ ՇԱՅԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ

### ՀՀ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԾԱԽՍ-ԱՐԴՅՈՒՆՔ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

ՀՀ բանկային համակարգն առաջարկում է բանկային ծառայությունների լայն ընտրանի, սակայն բանկերից պահանջվում է կամ կատարելագործել այդ ծառայություններն ու դրանց տեխնոլոգիաները կամ ներդնել հաճախորդների պահանջմունքները բավարարող բոլորովին նոր ծառայություններ:

Բանկերի կողմից մատուցվող հիմնական ծառայությունների ծախսատարության և դրանց արդյունավետության խնդիրների վերլուծության համար մենք մշակել ենք ՀՀ-ում ակտիվների մեծությամբ առաջատար երեք բանկերի կողմից մատուցվող ծառայությունների գնահատման մի մոտեցում՝ ծախս-արդյունք մեթոդի կիրառմամբ: Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ բանկերի առաջատար տասնյակի ակտիվների մեծության ցուցանիշները 2016-2017 թթ. ընթացքում:

Աղյուսակ 1

ՀՀ բանկերի առաջատար տասնյակի ակտիվների մեծության  
ցուցանիշները 2016-2017 թթ.<sup>1</sup>

h/h	Բանկեր	Ակտիվներ (մլն ՀՀ դրամ)	
		2016	2017
1	Ամերիաբանկ	719,4	677,7
2	Հայբիզնեսբանկ	404,4	574,9
3	Արդշինբանկ	548,4	568,3
4	Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	283,3	311
5	Ինեկոբանկ	236,2	277,8
6	Կոմվերսբանկ	191	252,7
7	ՎՏԲ բանկ	232,7	216
8	Արարատբանկ	215,6	212,6
9	Էյչ-Էս-Բի-Մի բանկ	215,2	208,6
10	Յունիբանկ	185,4	203,2

Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ համեմատվում է բանկի կողմից մատուցվող ծառայության ծախսատարությունը բանկի

<sup>1</sup> Տվյալները վերցված են բանկերի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից:

եկամտաբերության տեսանկյունից տվյալ ծառայության ունեցած օգտակարության հետ<sup>2</sup>:

Դիտարկվող 3 բանկերի կողմից ֆիզիկական անձանց մատուցվող հիմնական ծառայությունները ներկայացված են ստորև.

1. Վարկային ծառայություններ,
2. Ավանդային ծառայություններ,
3. Քարտերի տրամադրում և սպասարկում,
4. Հեռահար սպասարկման ծառայություններ,
5. Հաշիվների սպասարկում,
6. Փոխանցումներ,
7. Անհատական պահատուփեր,
8. Դրամարկղային ծառայություններ:

Քանի որ բանկերի տվյալ ծառայությունների ծախսատարությունը համարվում է առևտրային գաղտնիք, ուստի առավել նպատակահարմար ենք համարել ներկայացնել այդ ծառայությունների ծախսատարությունը՝ ըստ մեծության հաջորդականության՝ 1 թվանիշը համապատասխանում է ամենաշատ, իսկ 8-ը՝ ամենաքիչ ծախսատարությանը: Աղյուսակ 2-ում ներկայացված են առաջատար եռյակի՝ Ամերիաբանկի, Հայբիզնեսբանկի և Արդշինբանկի համապատասխան ծառայությունների ծախսատարությունները՝ ներկայացված բանկերի կողմից:

*Աղյուսակ 2*

**Դիտարկվող բանկերի կողմից մատուցվող ծառայությունների  
ծախսատարությունը<sup>3</sup>**

<i>Ծառայություններ</i>	<i>Ամերիաբանկ</i>	<i>Հայբիզնեսբանկ</i>	<i>Արդշինբանկ</i>
<b>1. Վարկային ծառայություններ</b>	1	1	1
<b>2. Ավանդային ծառայություններ</b>	3	2	4
<b>3. Քարտերի տրամադրում և սպասարկում</b>	4	3	5
<b>4. Հեռահար սպասարկման ծառայություններ</b>	2	4	2
<b>5. Հաշիվների սպասարկում</b>	6	6	6
<b>6. Փոխանցումներ</b>	5	5	3
<b>7. Անհատական պահատուփեր</b>	8	8	8
<b>8. Դրամարկղային ծառայություններ<sup>4</sup></b>	7	7	7

<sup>2</sup> Amerkhalil V., Functional analysis and choosing the best method, ECS LLC, 2006, p.10-15.

<sup>3</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ յուրաքանչյուր բանկի կողմից ներկայացված ծախսատարության մեծության: Ծախսատարության մեջ հաշվարկված չեն աշխատողների աշխատավարձերը:

Այնուհետև, այս ծառայությունների օգտակարությունը բանկի եկամտաբերության ապահովման տեսանկյունից գնահատելու համար մեր կողմից ընտրվել է փորձագիտական խումբ՝ կազմված տնօրենների խորհրդի մեկ անդամից, մարքեթինգի բաժնի, ռիսկերի կառավարման բաժնի, ֆինանսական բաժնի ղեկավարներից: Նրանցից յուրաքանչյուրին խնդրել ենք լրացնել տվյալ ծառայությունների գույգային համեմատության մատրիցը՝ ելնելով բանկի եկամտաբերության ապահովման տեսանկյունից տվյալ ծառայությունների օգտակարության մասին իր պատկերացումներից: Յուրաքանչյուր ընտրված փորձագետ գնահատել է ծառայությունների գույգային կարևորությունը՝ տալով դրանց 0 (հերթական համարի ներքո գտնվող ծառայությունը կարևոր չէ՝ համեմատած տվյալ պահին դիտարկվող մյուս ծառայության հետ), 1 (համեմատվող ծառայություններն ունեն հավասար կարևորություն) և 2 (հերթական համարի ներքո գտնվող ծառայությունը ավելի կարևոր է, քան համեմատվող ծառայությունը) արժեքը:

Աղյուսակ 3

**Ծառայությունների ծախսատարության և դրանց կարևորության համեմատությունը<sup>5</sup>**

Ծառայություններ	Ամերիաբանկի տվյալ ծառայության		Հայրիգնեսբանկի տվյալ ծառայության		Արդշինբանկի տվյալ ծառայության	
	Ծախսողականություն	Կարևորություն	Ծախսողականություն	Կարևորություն	Ծախսողականություն	Կարևորություն
1. Վարկային ծառայություններ	1	1	1	1	1	1
2. Ավանդային ծառայություններ	3	5	2	4	4	6
3. Քարտերի տրամադրում և սպասարկում	4	3/4	3	2	5	3
4. Հեռահար սպասարկման ծառայություններ	2	2	4	7	2	7
5. Հաշիվների սպասարկում	6	6	6	6	6	4
6. Փոխանցումներ	5	3/4	5	3	3	2
7. Անհատական պահատուփեր	8	8	8	8	8	8
8. Դրամարկղային ծառայություններ	7	7	7	5	7	5

<sup>4</sup> Դրամարկղային ծառայությունների մեջ ներառվում են նաև արտաբժույթի առք ու վաճառքի հետ կապված գործարքները:

<sup>5</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից



Այնուհետև հաշվարկել ենք յուրաքանչյուր փորձագետի գնահատականներով առանձին ծառայության կարևորության աստիճանը՝ ըստ յուրաքանչյուր ծառայության համար ստացված գումարային միավորի, ապա՝ դրանց միջին թվաբանական արժեքը և ռանգը, որն էլ ցույց է տալիս տվյալ ծառայության կարևորությունը բանկի եկամտի ստացման տեսանկյունից:

Աղյուսակ 3-ում ներկայացված է դիտարկվող 3 բանկերի տվյալ ծառայությունների ծախսատարության համեմատությունը բանկի եկամտաբերության տեսանկյունից այդ ծառայությունների կարևորության հետ:

Աղյուսակ 3-ից կարելի է նկատել, որ բանկային ծառայությունների ցանկում առկա են այնպիսի ծառայություններ, որոնք ծախսատարության և կարևորության հետ կապված խնդիրներ չունեն: Այդ ծառայությունների թվին են պատկանում, օրինակ՝ վարկային ծառայությունները, որոնց մասով ծախսատարության և կարևորության համապատասխանություն է գրանցվել դիտարկվող 3 բանկերի ցուցանիշներում էլ: Ծախսատարության և կարևորության մասով բանկերում նույն արդյունքն են գրանցել անհատական պահատուփերի տրամադրման ծառայությունները:

Քարտերի տրամադրման և սպասարկման մասով գրանցված անհամապատասխանությունները միանգամայն ընդունելի են բանկերի կողմից, քանի որ ծառայություններն ունեն ավելի փոքր ծախսատարություն և ավելի մեծ օգուտ են բերում բանկին: Նույն պատկերը նկատելի է նաև հաշիվների սպասարկման, բանկային փոխանցումների և դրամարկղային ծառայությունների մասով:

Այնուամենայնիվ, առկա են նաև այնպիսի ծառայություններ, որոնք ըստ փորձագետների ավելի ծախսատար են և նվազ կարևորություն ունեն բանկերի համար: Այժմ ներկայացնենք առկա անհամապատասխանություններն ու դրանք շտկելու հնարավոր տարբերակները:

Բոլոր բանկերի ավանդային ծառայություններում նկատելի է ծախսատարության և կարևորության անհամապատասխանություն: Արդյունքներից պարզ է դառնում, որ ավանդային ծառայություններն առավել ծախսատար են և ըստ փորձագիտական գնահատականների նվազ կարևորություն ունեն բանկերի համար: Բանկային ավանդները դրամական միջոցների ապահով պահպանման և կուտակման կարևորագույն գործիքներից են, որոնց գրավչության և արդյունավետության վրա մեծ ազդեցություն են ունենում դրանց մատչելիությունը, այսինքն՝ ներդրվող գումարի ցածր սահմանաչափերը, ավանդների երաշխավորվածության հանգամանքը, ինչպես նաև տոկոսադրույքները: Օրինակ՝ Ամերիաբանկում, դրամով ներդրվող ավանդների նվազագույն սահմանաչափը 50,000

ՀՀ դրամ է, Հայբիզնեսբանկում՝ 30,000 ՀՀ դրամ, իսկ Արդշինբանկն իր պաշտոնական կայք-էջում ավանդների ներդրման նվազագույն սահմանաչափ չի նշել<sup>6</sup>: Բոլոր բանկերում ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու սահմանաչափերով: Համեմատության համար կարելի է նշել, որ վերոնշյալ բանկերից ավանդների ներգրավման տոկոսադրույքը ամենաբարձրը՝ բոլոր ավանդատեսակների մասով, Հայբիզնեսբանկում է: ՀՀ դրամով, 366 օր ժամկետով և տոկոսների տարեկան վճարման պայմաններով ավանդի տոկոսադրույքը Հայբիզնեսբանկում առավելագույնը 10,10% է<sup>7</sup>, Ամերիաբանկում՝ 8,5%<sup>8</sup>, իսկ Արդշինբանկում՝ 9,5%<sup>9</sup>: Կարևոր է ընդգծել, որ մինչև մեկ տարի ժամկետայնությամբ ավանդների դեպքում տոկոսադրույքները նշանակալիորեն ցածր են բոլոր բանկերում էլ, որոնք էլ մեծ ազդեցություն ունեն ավանդային ծառայությունների արդյունավետության և գրավչության վրա: Այսպիսով, ավանդային ծառայությունների ծախսատարությունն արդարացնելու, դրանց արդյունավետությունն ու գրավչությունը բարձրացնելու, ինչպես նաև ըստ կարևորության աստիճանի բանկի ծառայությունների ցանկում առավել բարձր հորիզոնականներ գրավելու համար բանկերին առաջարկում ենք վերանայել ավանդների տոկոսադրույքներն ու մշակել առավել ձկուն ավանդային փաթեթներ: Մասնավորապես, մշակվող ավանդային փաթեթներում կարելի է չկիրառել ավանդի նվազագույն սահմանաչափի պայմանը, ինչն էլ ավանդային ծառայություններն առավել հասանելի ու գրավիչ կդարձնի: Բանկերում ավանդային ծառայությունների գրավչությունը մեծացնելու, ինչպես նաև ծախսատարությունը նվազեցնելու համար կարող ենք առաջարկել նաև հետևյալ գործիքի կիրառումը, որը ներկայումս մասամբ կիրառվում է Հայբիզնեսբանկում: Բանկերին առաջարկում ենք մեկ տարի և ավել ժամկետով ներդրված ավանդների պարագայում գումարը ժամկետից շուտ հանելու դեպքում կիրառել այլընտրանքային տոկոսադրույքներ, որոնք առաջին եռամսյակից հետո յուրաքանչյուր ամսվա համար կունենան աճի միտում:

Հաջորդ անհամապատասխանությունը նկատելի է հեռահար սպասարկման ծառայություններում: Ամերիաբանկն այս խնդիրը չունի, քանի որ տրամադրում է հեռահար սպասարկման ծառայությունների լայն ու մշտապես կատարելագործվող տեսականի: Հայբիզնեսբանկի տվյալներում

<sup>6</sup> Տեղեկությունները՝ բանկերի պաշտոնական կայք-էջեր՝ <http://www.ameribank.am/>, <http://www.armbusinessbank.am/>, <http://www.ashib.am/>

<sup>7</sup> <http://www.armbusinessbank.am/uploads/attachments/article/ABB-Shahavet-arm.pdf>

<sup>8</sup> [https://www.ameribank.am/userfiles/file/Retail/Leaflet\\_deposit\\_AMD\\_arm\\_12.pdf](https://www.ameribank.am/userfiles/file/Retail/Leaflet_deposit_AMD_arm_12.pdf)

<sup>9</sup> [https://www.ardshinbank.am/sites/default/files/ampopagir\\_avand\\_am\\_\(19.06.2018\).pdf](https://www.ardshinbank.am/sites/default/files/ampopagir_avand_am_(19.06.2018).pdf)

նկատելի է, որ հեռահար սպասարկման ծառայություններն ըստ կարևորության նախավերջին հորիզոնականում են, սակայն ունեն ծախսատարության համեմատաբար բարձր ցուցանիշ: Հեռահար սպասարկման ծառայությունների ծախսատարությունն արդարացնելու համար բանկին առաջարկում ենք միջոցներն ուղղել բջջային հավելվածների մշակմանն ու ներդրմանը: Այն կմեծացնի հեռահար սպասարկման ծառայություններից օգտվող հաճախորդների թվաքանակը, ինչով էլ պայմանավորված կմեծանա ծառայության կարևորությունը բանկի կողմից տրամադրվող ծառայությունների ցանկում: Գրեթե նույն արդյունքն է նկատվում նաև Արդշինբանկում, սակայն, այստեղ ըստ փորձագիտական գնահատականների հեռահար սպասարկման ծառայությունների ծախսատարությունն ավելի բարձր է: Այս հանգամանքը կարելի է բացատրել նրանով, որ բանկը բոլորովին վերջերս է ներդրել հեռահար սպասարկման բջջային հավելվածը, ինչի համար կատարված ծախսերը կարելի է ենթադրել՝ դեռևս չեն փոխհատուցվել: Ծառայությունը ներդրվել է 2018 թվականի ամռանը և մեծ կարևորություն ունի բանկի համար: Ուստի, հեռահար սպասարկման ծառայությունների կարևորությունը մեծացնելու, ինչպես նաև դրանց ծախսատարությունն արդարացնելու համար բանկին առաջարկում ենք մշտապես թարմացնել տրամադրվող հեռահար ծառայությունների ցանկն ու կատարելագործել ծառայությունների որակը:

Այսպիսով, ծախս-արդյունք մեթոդի կիրառմամբ ՀՀ բանկային ոլորտում ակտիվների մեծությամբ առաջատար երեք բանկերի համար մեր կողմից իրականացվել է մատուցվող հիմնական ծառայությունների ծախսատարության և դրանցից բանկի ստացած օգտակարության համեմատական վերլուծություն: Արդյունքում, բացահայտվել է, որ տվյալ երեք բանկերի կողմից մատուցված որոշ ծառայություններ ծախսատարության և կարևորության տեսանկյունից գտնվում են նույն դիրքում: Դրանք են վարկային ծառայություններն ու անհատական պահատուփերի տրամադրումը: Մի քանի ծառայությունների գծով արձանագրել ենք նվազ ծախսատարություն, քան դրանցից բանկի ստացած օգուտն է: Դրանց թվին են պատկանում քարտերի տրամադրման ու սպասարկման, հաշիվների սպասարկման, բանկային փոխանցումների, ինչպես նաև դրամարկղային ծառայությունները: Ծառայությունների երրորդ խումբը, որ առանձնացվել է մեր կողմից, աչքի է ընկնում առավել ծախսատարությամբ և նվազ օգտակարությամբ: Դրանք են ավանդային և հեռահար սպասարկման ծառայությունները, որոնց համար էլ մեր կողմից առաջարկվել են մի շարք ուղիներ՝ ուղղված ծառայությունների ծախսատարության նվազեցմանն ու օգտակարության մեծացմանը:

# ՀՀ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԾԱԽՍ-ԱՐԴՅՈՒՆԸ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

## ՏԱԹԵՎԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՇԱԳԻՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ*

**Համառոտագիր:** Հոդվածում ծախս-արդյունք մեթոդի կիրառմամբ իրականացվել է ՀՀ բանկային ոլորտում ակտիվների մեծությամբ առաջատար երեք բանկերի կողմից մատուցվող հիմնական ծառայությունների ծախսատարության և դրանցից բանկի ստացած օգտակարության համեմատական վերլուծություն: Այնուհետև բացահայտվել են առկա անհամապատասխանությունները, ինչպես նաև բանկերից յուրաքանչյուրի համար առաջարկվել են անհամապատասխանությունները շտկելու ու մի շարք ծառայությունների ծախսատարության նվազեցման և օգտակարության մեծացման հնարավոր տարբերակներ:

*Բանալի բառեր. բանկեր, բանկային ծառայություններ, ակտիվներ, ծախս-արդյունք մեթոդ, վերլուծություն, եկամտաբերություն, ավանդային ծառայություններ, հեռահար սպասարկման ծառայություններ:*

## ОЦЕНКА УСЛУГ, ОКАЗЫВАЕМЫХ БАНКАМИ АРМЕНИИ С ИСПОЛЬЗОВАНИЕМ МЕТОДА “ЗАТРАТА-ВЫГОДА”

### ТАТЕВИК ВАЗГЕНОВНА ШАГИНЯН

*Аспирант, младший научный сотрудник Института  
экономики имени М. Котаяна НАН РА*

**Аннотация:** В статье с использованием метода “затрата-выгода” был проведен сравнительный анализ между стоимостью основных услуг и их полезностью трех ведущих банков банковского сектора Армении. Затем были выявлены существующие расхождения, а также для каждого из банков были предложены возможные варианты устранения расхождений, сокращения стоимости и возможные пути повышения полезности ряда услуг.

**Ключевые слова:** банки, банковские услуги, активы метод “затрата-выгода”, анализ, доходность, депозитные услуги, дистанционные услуги.

## THE EVALUATION OF SERVICES PROVIDED BY ARMENIAN BANKS USING THE “ COST-OUTCOME ” METHOD

**TATEVIK VAZGEN SHAHINYAN**

*Ph.D. student, junior research associate of the M. Kotanyan*

*Institute of Economics, NAS of RA*

**Abstract:** The author, by utilizing the Cost-Outcome Tool, provides a comparative analysis of the costs of main services and usefulness of thereof that are provided by 3 leading banks (based on the amount of the assets) of the banking sector of Armenia. The article identifies the existing discrepancies and proposes possible options for eliminating thereof with respect of each of the banks, and measures and approaches to reducing the costs of the specific services and increasing the usefulness of thereof.

**Keywords:** *banks, banking services, assets, “cost-outcome” method, analysis, profitability, deposit services, remote customer care services.*

**ԵՏՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԴՅ ԱՐՏԱՅԱՆՍԱՆ  
ԸՆԴՂԱՅՆՍԱՆ ԴՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓԱՍՏԱՑԻ  
ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԶԱՄԵՍԱՏԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Տնտեսավարման ներկայիս պայմաններում յուրաքանչյուր երկիր անխուսափելիորեն փոխկապակցված է համաշխարհային տնտեսությանը, ուստի աշխարհում տեղի ունեցող յուրաքանչյուր գլոբալ ցնցում այս կամ այն չափով ազդում է բոլոր երկրների վրա:

Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը դրա վառ ապացույցն էր: Անգամ Հայաստանը, շատ փոքր չափով ինտեգրված լինելով համաշխարհային ֆինանսական շուկային, էականորեն ցնցվեց այդ ճգնաժամից արդյունքում 2009թ. ՀՀ տնտեսությունում գրանցելով 14.1%<sup>1</sup> տնտեսական անկում, այն դեպքում, երբ մինչ այդ ՀՀ տնտեսությունը տևական ժամանակահատված գրանցում էր երկնիշ տնտեսական աճ: Ուստի տեղի ունեցածը վկայում է, որ ՀՀ տնտեսական աճի հենասյուները ճիշտ չէին ընտրված: Հետևապես՝ իրավիճակը շտկելու և հետագայում կայուն աճ ապահովելու նպատակով տնտեսական աճի նոր մոդելի անհրաժեշտություն առաջացավ, որի հիմքը պետք է լիներ արտադրական ոլորտի զարգացումը և արտահանման հեռանկարային ոլորտների ճիշտ թիրախավորումը:

«Ի՞նչ արտադրելու» հարցը մշտապես արդիական է յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման մոդել մշակելիս: Հիմնականում երկրները արտադրության համար թիրախավորում են այն ապրանքները, որոնց արտադրությունում ինտենսիվորեն կիրառվող ռեսուրսներով համեմատաբար հարուստ են: Սակայն Հայաստանի պարագայում տնտեսության զարգացման մոդելը ճիշտ ուղու վրա դնելիս բացի ռեսուրսատարությունից այլ խնդիր էլ է ծառայում: Հայտնի է, որ Հայաստանի ներքին շուկան շատ սահմանափակ է, հետևաբար ազգային տնտեսությունը չի կարող երկարատև զարգացում ունենալ՝ բավարարելով մեծամասամբ ներքին պահանջարկը: Փոխարենը՝ արտաքին պահանջարկը Հայաստանի համար գրեթե անսահմանափակ մեծություն է և կարող է տնտեսության


<sup>1</sup> <http://armstat.am/am/?nid=126&id=01001>

հետագա զարգացման շարժիչ ուժ դառնալ: Ուստի պատրաստի արտադրանքի արտահանումը կարող է ՀՀ հետագա տնտեսական զարգացման գրավականը դառնալ: Հենց այս հանգամանքն էլ հիմք հանդիսացավ 2011թ. «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության» ռազմավարության մշակման համար<sup>2</sup>:

Մակայն, 2014թ. սկսած ՀՀ-ն որդեգրեց արտաքին տնտեսական քաղաքականության նոր ուղղություն, որի արդյունքում 2015թ. հունվարից անդամակցեց ԵՏՄ-ին: Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում պարզելու, թե ի՞նչ տնտեսական ակնկալիքներով էր Հայաստանն անդամակցում ԵՏՄ-ին, այդ ակնկալիքներից որո՞նք են արդարացված ներկայիս վիճակագրական տվյալների համաձայն և ինչո՞վ են պայմանավորված առկա շեղումները:

ԵՏՄ անդամակցությամբ ՀՀ-ն ակնկալիքներ ուներ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում: Սույն վերլուծության շրջանակներում կանդրադառնանք միայն կարճաժամկետ ակնկալիքների և փաստացի տվյալների համեմատական վերլուծությանը, քանզի դեռևս առկա են անդամակցությունից հետո միայն 3 տարվա փաստացի տվյալներ:

ԵՏՄ անդամակցությամբ Հայաստանն ակնկալում էր ընդլայնել ԵՏՄ անդամ-երկրների հետ առևտրի ծավալները: Գծապատկեր 1-ը և 2-ը ցույց են տալիս ՀՀ ընդհանուր արտահանումն ու ներմուծումը դեպի ԵՏՄ և մյուս երկրներ 2010-2017թթ.:




**Գծապատկեր 1. ՀՀ արտահանումը դեպի ԵՏՄ և այլ երկրներ 2010-2017թթ., մլն ԱՄՆ դոլար»**

<sup>2</sup> [http://mineconomy.am/uploads/glxavor\\_1\\_Razmavarutyun\\_ardyunaberutyun.pdf](http://mineconomy.am/uploads/glxavor_1_Razmavarutyun_ardyunaberutyun.pdf)

<sup>3</sup> <https://wits.worldbank.org/>

Ինչպես նկատում ենք, 2015թ. նախորդ տարվա համեմատ կրճատվել է դեպի ԵՏՄ ուղղվող ՀՀ արտահանումը (27%), իսկ դեպի մյուս երկրներ ուղղվող արտահանումն աճել է (3%): Սա վկայում է այն մասին, որ արտահանման կրճատումը չի եղել ընդհանուր միտում, այլ պայմանավորված է եղել ԵՏՄ անդամակցությամբ առաջ եկած որոշակի անորոշությամբ: 2015-2017թթ., սակայն, ինչպես դեպի ԵՏՄ, այնպես էլ մյուս երկրներ ուղղվող արտահանումն աճել է, ընդ որում՝ դեպի ԵՏՄ արտահանման աճի տեմպը վերջին երկու տարում կազմել է միջինում 55%, իսկ դեպի այլ երկրներ՝ 16%: Այսպիսով, հաշվի առնելով անգամ վերջին 3 տարվա աճի և նվազման տեմպերը՝ դեպի ԵՏՄ ուղղվող արտահանումն աճել է ավելի մեծ տեմպով:



**Գծապատկեր 2. ՀՀ ներմուծումը դեպի ԵՏՄ և այլ երկրներ 2010-2017թթ., մլն ԱՄՆ դոլար<sup>4</sup>**

Ներմուծման պարագայում պատկերն այլ է: Ակնհայտ է, որ 2015թ. նախորդ տարվա համեմատ ՀՀ ներմուծումը կրճատվել է ինչպես ԵՏՄ-ից, այնպես էլ մյուս երկրներից: Սակայն հետաքրքրական է այն հանգամանքը, որ աշխարհի մյուս երկրներից ՀՀ ներմուծումը կրճատվել է էականորեն ավելի մեծ չափով: Սա ևս մասամբ ԵՏՄ անդամակցությամբ պայմանավորված անորոշության հետևանք է: Հայտնի էր, որ ԵՏՄ անդամակցությամբ փոխվելու էին ՀՀ ներմուծման մաքսադրույքները երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ, ուստի տնտեսվարող սուբյեկտների մի մասը խուսափեցին այլ երկրներից ապրանքներ ներմուծելուց, քանի դեռ հայտնի չէին մաքսային հստակ դրույքաչափերը և դրանց համար սահմանված արտոնյալ ժամանակահատվածը: Սակայն, բացի ԵՏՄ անդամակցությունը, այլ գործոններ ևս ազդել են 2015-2016թթ. այլ երկրներից ՀՀ ներմուծման կրճատման վրա: Որպես այդպիսին կարող ենք նշել

<sup>4</sup> <https://wits.worldbank.org/>



2015թ. նախորդ տարվա համեմատ դոլարի նկատմամբ դրամի էական արժեզրկումը և 2016թ. արժեզրկման ոչ մեծ չափը:

Այլ է պատկերը ԵՏՄ երկրներից ներմուծման պարագայում. այստեղ ներմուծման կրճատումը 2015-2016թթ. գուգորդվել է ռուբլու նկատմամբ դրամի արժևորման հետ: Արժևորման պարագայում այլ հավասար պայմաններում ներմուծումը պետք է աճեր, ուստի փաստացի տվյալներով արձանագրված նվազումը կրկին կարել է բացատրել ինչպես ԵՏՄ անդամակցությամբ առաջացած անորոշությամբ, այնպես էլ այլ գործոններով: 2017թ. արդեն արձանագրվեց ՀՀ ներմուծման աճ ինչպես ԵՏՄ, այնպես էլ այլ երկրներից:

Անդրադառնանք ԵՏՄ առանձին երկրների հետ ՀՀ առևտրի վերլուծությանը: Աղյուսակ 1-ը ցույց է տալիս ՀՀ արտահանման և ներմուծման տվյալները դեպի ԵՏՄ առանձին երկրներ:

*Աղյուսակ 1*

**ՀՀ արտահանումն ու ներմուծումը դեպի ԵՏՄ երկրներ 2010-2017թթ.,  
մլն ԱՄՆ դոլար<sup>5</sup>**

	արտահանում				ներմուծում			
	Բելառուս	Ղազախստան	Ղրղըզստան	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղըզստան	Ռուսաստան
2010	4.52	2.62	0.15	145.00	31.86	12.74	0.04	811.91
2011	5.29	4.05	0.37	179.94	29.52	25.34	0.00	879.55
2012	6.24	3.46	0.20	269.71	33.56	8.89	0.06	1046.66
2013	8.24	6.93	0.96	326.49	40.84	0.73	0.01	1099.16
2014	8.74	6.75	0.31	299.40	31.02	0.55	0.10	1068.87
2015	5.42	4.86	0.35	220.83	33.78	0.29	0.08	991.12
2016	13.11	5.27	1.13	371.54	23.20	0.68	0.08	990.51
2017	6.94	4.92	1.76	540.40	37.64	4.04	0.09	1165.60

Ինչպես դեպի ԵՏՄ ուղղվող ընդհանուր արտահանումը, այնպես էլ դեպի ԵՏՄ առանձին երկրներ ուղղվող արտահանումը 2015թ. նախորդ տարվա համեմատ կրճատվել է, սակայն 2016թ. արձանագրվել է արտահանման աճ դեպի ԵՏՄ անդամ բոլոր երկրներ: 2017թ. պատկերը փոխվել է, ՌԴ և Ղրղըզստան ուղղվող արտահանումն է աճել, իսկ դեպի Բելառուս և Ղազախստան ուղղվող արտահանումը կրճատվել է:

<sup>5</sup> <https://wits.worldbank.org/>

Հարկ է նշել նաև, որ ՌԴ-ն ինչպես նախկինում, այնպես էլ դիտարկվող ժամանակահատվածի վերջի դրությամբ հանդիսանում է ԵՏՄ անդամ երկրներից ՀՀ ամենախոշոր գործընկերը, որին բաժին են ընկնում դեպի ԵՏՄ ՀՀ արտահանման և ներմուծման ավելի քան 95%-ը: Ընդ որում թե՛ արտահանման, և թե՛ ներմուծման պարագայում ՌԴ տեսակարար կշիռը ՀՀ-ի ԵՏՄ անդամակցությունից հետո միայն աճել է, որն ըստ էության կասկածի տակ է դնում ԵՏՄ կառույցին ՀՀ-ի անդամակցության տնտեսական արդյունավետությունը:

Դիտարկելով առանձին երկրների հետ ՀՀ արտահանման կառուցվածքը՝ հարկ է նշել, որ դեպի Ռուսաստան արտահանվող հիմնական ապրանքախմբերը հետևյալն են՝ սննդամթերք և կենդանի կենդանիներ, խմիչք և ծխախոտ, արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի, տարբեր տեսակի պատրաստի արտադրանք: Ընդ որում՝ նշված ապրանքախմբերի արտահանումը դեպի ՌԴ ՀՀ-ի ԵՏՄ անդամակցությունից հետո էլ ավելի է մեծացել: ՀՀ-ից դեպի Բելառուս արտահանվող հիմնական ապրանքախմբերը խմիչքն ու ծխախոտը և տարբեր տեսակի պատրաստի արտադրանքն է: Ինչ վերաբերում է ՀՀ-ից Ղազախստան արտահանմանը, ապա այստեղ հիմնական ապրանքախմբերը խմիչք և ծխախոտ, արդյունաբերական ապրանքներն են՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի, ինչպես նաև տարբեր տեսակի պատրաստի արտադրանքներն են: Նշենք, սակայն, որ տվյալ ապրանքների արտահանումը ՀՀ-ի ԵՏՄ անդամակցությունից հետո ամեննին էլ չի աճել, որոշ դեպքերում անգամ փոքր է եղել մինչև անդամակցությունը գրանցած արտահանման ծավալներից: Դեպի Ղրղըզստան արտահանվող հիմնական ապրանքախմբերը խմիչք և ծխախոտ, ինչպես նաև քիմիական արտադրության ապրանքներ և հարակից իրերն են, որոնց արտահանման ծավալները համեմատաբար աճել են ԵՏՄ անդամակցությունից հետո:

Քննարկելով ԵՏՄ երկրների հետ ՀՀ առևտրի, իսկ մասնավորապես՝ արտահանման ընդհանուր պատկերը, անդրադառնանք այն հարցին, թե ինչպիսին էին արտահանման աճի հետ կապված ակնկալիքները ԵՏՄ անդամակցությունից առաջ: Բնական է, որ ԵՏՄ անդամակցությամբ կանխատեսվում էր արտահանման ծավալների աճ դեպի միության անդամ-երկրներ: Հասկանալի է, սակայն, որ ոչ բոլոր ապրանքախմբերի արտահանումը կարող էր էապես աճել: Պարզելու համար, թե ԵՏՄ անդամ-երկրներում որ ապրանքներն ունեին բավարար չափով մրցունակություն մինչև ՀՀ-ի ԵՏՄ անդամակցումը՝ մենք հաշվարկել ենք դեպի ԵՏՄ առանձին երկրներ ուղղվող ՀՀ արտահանման մեջ բացահայտ

համեմատական առավելություն (այսուհետ՝ ԲՀԱ) ունեցող ոլորտները՝ օգտագործելով Բելլա Բալասայի կողմից մշակված մեթոդաբանությունը<sup>6</sup>: Հաշվարկների համար հիմք է ընդունվել ապրանքախմբերի տարանջատումը ըստ հարմոնիզացված համակարգի: Հաշվարկը կատարվել է 2010-2014թթ. տվյալների հիման վրա<sup>7</sup>: Հաշվարկի արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

**ԵՏՄ երկրներում ՀՀ արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբերը 2010-2014թթ.<sup>8</sup>**

Երկիր	Պեպի տվյալ երկիր արտահանման ԲՀԱ ունեցող ապրանքախմբեր	Երկիր	Պեպի տվյալ երկիր արտահանման ԲՀԱ ունեցող ապրանքախմբեր
Ռուսաստան	Ձուկ և խեցգետնավորներ	Բելյարուս	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք
	Ուտելի մրգեր և ընկույզներ		Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ
	Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ		Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ
	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	Ղազախստան	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ
	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ		Դեղագործական մթերք
	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ		Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ
	Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման		Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և

<sup>6</sup> Համաձայն Բելլա Բալասայի մեթոդաբանության՝  $ԲՀԱ_i = (x_i: X) / (x_{iw}: X_w)$ , որտեղ՝  $x_i$ -ն տվյալ երկրում  $i$ -րդ ապրանքի արտահանումն է,  $X$ -ը՝ տվյալ երկրի ընդհանուր արտահանումը,  $x_{iw}$ -ն՝  $i$ -րդ ապրանքի համաշխարհային արտահանումը, իսկ  $X_w$ -ն ընդհանուր համաշխարհային արտահանումը: Ընդ որում՝ երկիրն ունի  $i$ -րդ ապրանքի արտահանման գծով բացահայտ համեմատական առավելություն, եթե  $ԲՀԱ_i > 1$ : (Աղբյուրը՝ Balassa, B. (1965), Trade Liberalisation and Revealed Comparative Advantage, The Manchester School, V 33, May 1965, pp. 99-123):


<sup>7</sup> Ժամանակային շարքի նման ընտրանքը պայմանավորված է նրանով, որ հաշվարկների մեջ չներառվեն ճգնաժամային և ետճգնաժամային տարիները, քանզի ֆորս-մաժորային իրավիճակի տվյալների ներառումը կարող էր ձևախեղել իրական պատկերը:

<sup>8</sup> Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ համաձայն <https://wits.worldbank.org/> կայքի վիճակագրական տվյալների:

<i>Երկիր</i>	<i>Դեպի տվյալ երկիր արտահանման ԲՀԱ ունեցող ապրանքախմբեր</i>	<i>Երկիր</i>	<i>Դեպի տվյալ երկիր արտահանման ԲՀԱ ունեցող ապրանքախմբեր</i>
	նյութեր, կրաքար և ցեմենտ		քացախ
	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից		Դեղագործական մթերք
	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ		Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ

Այսպիսով, ստացվում է, որ «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբի արտահանման տեսանկյունից ՀՀ-ն բացահայտ համեմատական առավելություն է ունեցել ԵՏՄ բոլոր երկրների շուկայում, «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», ինչպես նաև «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ» ապրանքախմբերի արտահանման տեսանկյունից՝ Ռուսաստանի և Բելառուսի շուկաներում, «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ» ապրանքախմբի արտահանման տեսանկյունից՝ Ռուսաստանի և Ղազախստանի, «Դեղագործական մթերքի» համար՝ Ղազախստանի և Ղրղըզստանի շուկաներում: Բացի այդ «Ձուկ և խեցգետնավորներ», «Ուտելի մրգեր և ընկույզներ», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից» ապրանքախմբերի տեսանկյունից ՀՀ-ն գրանցել է ԲՀԱ Ռուսաստանի շուկայում, իսկ «Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ» ապրանքախմբի համար՝ Ղրղըզստանում: Ստացվում է, որ վերոնշյալ բոլոր ապրանքախմբերը մրցունակ են ԵՏՄ համապատասխան երկրների շուկաներում, ուստի և ԵՏՄ անդամակցությամբ ակնկալվում էր տվյալ ապրանքախմբերի արտահանման աճ:

Իրականացնենք համեմատական վերլուծություն ակնկալվող արդյունքների և առկա փաստերի հիման վրա: Գծապատկեր 3-ում ներկայացված է ՀՀ-ից դեպի ՌԴ համապատասխան ապրանքախմբերի արտահանման դինամիկան:




**Գծապատկեր 3. ՌԴ շուկայում ԲՀԱ ունեցող ապրանքախմբերի արտահանման դինամիկան<sup>9</sup>**

Համաձայն գծապատկերի տվյալների՝ ԲՀԱ ունեցող 9 ապրանքախմբերից 2015-2017թթ. ընթացքում էական աճ է գրանցվել «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների» արտահանման տեսանկյունից: Աճել է նաև «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», ինչպես նաև «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից ապրանքների» արտահանումը: Մինչդեռ մնացյալ 5 ապրանքախմբերի արտահանումն արժեքային արտահայտությամբ գրանցել է անկայուն հետադարձ՝ հաճախ նաև ցածր լինելով ՀՀ-ի ԵՏՍ անդամակցությունից առաջ գրանցած արդյունքներից: Փաստորեն ՌԴ շուկայում ՀՀ արտահանման բացահայտ համեմատական առավելությունները դեռևս չեն օգտագործվել լիարժեք:

Գծապատկեր 4-ում ներկայացված է Բելառուսի շուկայում ԲՀԱ ունեցող ապրանքների արտահանման դինամիկան:


Բելառուսի շուկայում գրանցած ցուցանիշները ևս գոհացուցիչ չեն: ԲՀԱ ունեցող 3 ապրանքախմբերից 2-ի արտահանումը 2015-2017թթ. չի գրանցել կայուն աճի միտում ի համեմատ նախորդ տարիների տվյալների, իսկ «Բանջարեղենի և պտուղների վերամշակումից մթերքների» արտահանումը, թեպետ 2015-2017թթ. կայուն աճել է, այդուհանդերձ, դեռևս ցածր է մինչև անդամակցությունը արձանագրված ցուցանիշներից:

<sup>9</sup> <https://wits.worldbank.org/>



**Գծապատկեր 4. Բեյառուսի շուկայում ԲՀԱ ունեցող ապրանքախմբերի արտահանման դինամիկան<sup>10</sup>**

ՀՀ-ից Ղազախստան արտահանման դինամիկան ներկայացված է գծապատկեր 5-ում:



**Գծապատկեր 5. Ղազախստանի շուկայում ԲՀԱ ունեցող ապրանքախմբերի արտահանման դինամիկան<sup>11</sup>**


Ղազախստանի շուկայում «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների» արտահանումը 2015-2017թթ. գրանցել է կայուն աճի միտում՝ սակայն դեռևս չի գերազանցում նախորդ տարիների ցուցանիշը: Այդուհանդերձ, աճի միտումը պահպանելու պարագայում մոտակա տարիներին ՀՀ արտահանման ծավալները ոչ միայն կգերազանցեն 2010-2014թթ. ցուցանիշները,

<sup>10</sup> <https://wits.worldbank.org/>

<sup>11</sup> <https://wits.worldbank.org/>

այլն տվյալ ոլորտում ՀՀ-ն դազախական շուկայում ձեռք կրերի միանձնյա առաջատարի դիրքեր: Այնուամենայնիվ, մյուս երկու ապրանքախմբերի գծով ՀՀ արձանագրած ցուցանիշները ևս գոհացուցիչ չեն:

Ղրղըզստանի շուկայի համար համապատասխան վերլուծությունը ներկայացված է գծապատկեր 6-ում:



**Գծապատկեր 6. Ղազախստանի շուկայում ԲՀԱ ունեցող ապրանքախմբերի արտահանման դինամիկան<sup>12</sup>**

Ղրղըզստանի շուկայում էլ ԲՀԱ ունեցող 3 ապրանքախմբերից «Դեղագործական մթերքների» արտահանումը 2015-2017թթ. գրանցել է շարունակական աճ, սակայն դեռևս չի հասել 2013թ. արտահանման մակարդակին: «Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ» ապրանքախմբի արտահանումը դեռևս փոքր չափի է, սակայն ունի աճի միտում, իսկ «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ» ապրանքախմբի արտահանումը 2015-2017թթ. նվազել է:

Այսպիսով ստացվում է, որ ԵՏՄ անդամ և ոչ մի երկրում ՀՀ արտահանման բացահայտ համեմատական առավելությունները լիարժեք չեն օգտագործվել, ինչի արդյունքում նաև լիարժեք չի դրսևորվել անդամակցությունից առաջ ակնկալվող արտահանման աճի ներուժը:

Այսուհանդերձ, արտահանման ակնկալիքների և փաստացի տվյալների համեմատական վերլուծությունից գատ հարկ ենք համարում նաև անդրադառնալ հնարավոր հեռանկարային զարգացումներին, քանզի հասկանալի է, որ ԵՏՄ անդամակցությամբ պայմանավորված տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ մաքսադրույքների, տեխնիկական ստանդարտների և այլ չափորոշիչների տեսանկյունից, որոնք նույնպես

<sup>12</sup> <https://wits.worldbank.org/>

կարող էին ազդել ԵՏՄ երկրներում հայկական ապրանքների մրցունակության վրա: Այդ նպատակով հաշվարկվել է նաև ՀՀ արտահանման ԲՀԱ-ն ԵՏՄ երկրներում 2015-2017թթ. ընթացքում: Վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

*Աղյուսակ 3*

**ԵՏՄ երկրներում ՀՀ արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբերը 2015-2017թթ.<sup>13</sup>**

<i>Երկիր</i>	<i>Ղեկի տվյալ երկիր արտահանման ԲՀԱ ունեցող ապրանքախմբեր</i>	<i>Երկիր</i>	<i>Ղեկի տվյալ երկիր արտահանման ԲՀԱ ունեցող ապրանքախմբեր</i>
<b>Ռուսաստան</b>	Ձուկ և խեցգետնավորներ	<b>Քելաոու</b>	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք
	Ուտելի մրգեր և ընկույզներ		Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ
	Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ		Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ
	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք		Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր
	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ		Դեղագործական մթերք
	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ		Ապակի և դրանից իրեր
	Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ		Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ
	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից		Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ
	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ		
	Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք		
Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և	<b>Ղազախստան</b>	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	
		Դեղագործական մթերք	
		Բնական կամ արհեստական	

<sup>13</sup> Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ համաձայն <https://wits.worldbank.org/> կայքի վիճակագրական տվյալների:



ելապտուղներ	Դրոշմատան	մարգարիտ, թանկարժեք կամ կիսա-թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ
Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք		Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք
Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով		Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ
Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով		Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից
		Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ
		Դեղագործական մթերք
		Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ
		Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր

Աղյուսակից երևում է, որ ՀՀ-ն ԵՏՄ բոլոր երկրներում պահպանել է նախկինում ունեցած բացահայտ համեմատական առավելությունները, ավելին՝ 2015-2017թթ. ընթացքում արդեն իսկ նշված ոլորտների կողքին բացահայտ համեմատական առավելություն են ձեռք բերել նորերը: Հավանաբար սա պայմանավորված է մաքսադրույքների և այլ չափորոշիչների փոփոխությամբ: Մասնավորապես ՌԴ շուկայում նախկին 9-ի փոխարեն, այժմ մրցունակ են 14 անուն-ապրանքներ, Բելառուսում՝ նախկին 3-ի փոխարեն՝ 8-ը, Ղազախստանում 3-ի փոխարեն՝ 6-ը և Դրոշմատանում՝ 3-ի փոխարեն՝ 4-ը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ թեպետ ԵՏՄ անդամակցությամբ ՀՀ արտահանման ծավալները չեն ավելացել ըստ ակնկալվող չափի, այդուհանդերձ նախկինում ԵՏՄ տարածքում մրցունակություն ունեցող հայկական ապրանքները պահպանել են իրենց մրցունակությունը և դրանց կողքին ավելացել են նորերը՝ ընդլայնելով ՀՀ արտահանման ծավալները և դիվերսիֆիկացիան: Ուրախալի է այն հանգամանքը, որ մի շարք հայկական ապրանքներ, որոնք նախկինում մրցունակ էին ԵՏՄ երկրներից միայն 1-ի շուկայում, ներկայումս արդեն իրենց դիրքերն են ամրապնդում

ԵՏՄ 2 և ավելի երկրներում, իսկ մի շարք ապրանքներ էլ, ինչպիսիք են, օրինակ՝ տրիկոտաժե հագուստը, կաթնամթերքը, միրգը, բանջարեղենը և այլն, նոր իրողության պայմաններում արդեն դարձել են մրցունակ:

## **ԵՏՄ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅԱՄ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՀ ԱՐՏԱՋԱՆՄԱՆ ԸՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓԱՍՏԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ**, *տ.գ.թ.*,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** 2015թ. Հայաստանը, անդամակցելով ԵՏՄ-ին, ուներ մի շարք տնտեսական ակնկալիքներ: Հողվածի նպատակն է համեմատական վերլուծություն իրականացնել ԵՏՄ անդամակցությամբ պայմանավորված ՀՀ արտահանման ընդլայնման առկա ներուժի և դրա փաստացի դրսևորման միջև: Հողվածի գիտական նորույթն է ԵՏՄ երկրների շուկաներում հայկական մրցունակ ապրանքների և ոլորտների բացահայտումը: Վերլուծությունն իրականացվել է ԲՀԱ ինդեքսի հիման վրա: Հողվածի համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ ԱՎԾ և ՀԲ վիճակագրական տվյալները:

*Բանալի բառեր.* *Եվրասիական տնտեսական միություն, արտահանում, ներմուծում, բացահայտ համեմատական առավելություն, մրցունակություն:*

## **СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ФАКТИЧЕСКИХ ТЕНДЕНЦИЙ И ВОЗМОЖНОСТЕЙ РОСТА ЭКСПОРТА РА В РАМКАХ ЕАЭС**

**ЛИЛИТ НОРАЙРОВНА САРГСЯН**, *к.э.н.*,

*научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** В 2015г. Армения, присоединившись к ЕАЭС, имела ряд экономических ожиданий. Целью данной статьи является проведение сравнительного анализа существующего экспортного потенциала Армении и ее фактического выражения, обусловленного членством в ЕАЭС. Научная новизна статьи – выявление армянских конкурентоспособных продуктов и сфер на рынках стран ЕАЭС. Анализ был основан на индексе ВСП. Базой данных для этой статьи послужили статистические данные НСС РА и ВБ.

**Ключевые слова:** *Евразийский экономический союз, экспорт, импорт, выявленные сравнительные преимущества, конкурентоспособность.*

## **COMPARATIVE ANALYSIS OF ARMENIA'S EXPORT GROWTH OPPORTUNITIES AND ACTUAL TRENDS, CONDITIONED BY THE COUNTRY'S ACCESSION TO THE EAEU**

**LILIT NORAYR SARGSYAN**, *Ph.D.in Economics*  
*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** In 2015, Armenia, by joining the EAEU, had various economic expectations in mind. The purpose of the article is to make a comparative analysis between the current exports potential of Armenia and its actual trends reported, conditioned by the accession to the EAEU. The scientific novelty of the article is to reveal Armenia's comparative advantage in producing certain types of products and respective sectors of the economy the goods of thereof would be competitive in the markets of the EAEU member-states. The analysis is based on the RCA index. The statistical data were retrieved from the online databases of the National Statistical Service of the Republic of Armenia and the World Bank.

**Keywords:** *Eurasian Economic Union, export, import, revealed comparative advantage, competitiveness*

## **ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ԶԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԶՅ-ՈՒՄ (ՇԱՅՈՒԹԱԶԱՐԿ, ԱԱԶ)**

Առաջնորդվելով ՀՀ հարկային տեսչության «Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին հրամանով՝ վերլուծենք ոչ ռեզիդենտ հասկացությունը, համախառն եկամտի տարբերը, համախառն եկամտից նվազեցումները, հարկվող շահույթը, շահութահարկի դրույքաչափերը, շահութահարկի արտոնությունները<sup>1</sup>: Վերջում ամբողջական պատկերացում կկազմվի ՀՀ-ում ոչ ռեզիդենտների հարկման մեխանիզմների մասին:

Շահութահարկ վճարող են հանդիսանում օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ): ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտը ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնում է ստորաբաժանման և վայրի միջոցով: Ոչ ռեզիդենտի ստորաբաժանումը՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ոչ ռեզիդենտի առանձնացված ստորաբաժանումն է: Ոչ ռեզիդենտի գործունեության իրականացման վայրը՝ ՀՀ-ում առանձնացված ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտի ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փաստացի վայրն է:

Հարկվող շահույթը ոչ ռեզիդենտի համախառն եկամտի (հաշվետու տարում ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացվող բոլոր եկամուտների հանրագումար) և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է, որն էլ հետագայում հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հարկվող շահույթի տարր կազմող բոլոր ակտիվները և պարտականությունները ներառվում են սկզբնական արժեքով: Համախառն եկամտի ձևավորման հիմքում շեշտը դրվում է հենց ՀՀ-ի տարածքում իրականացրած գործունեությանը: Ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում՝

---

<sup>1</sup> ՀՀ ՇՕ, ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 04.03.1999թ. «Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» N 01/13 հրաման:

1. ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, մասնավորապես՝

- ՀՀ-ում արտադրանքի և ապրանքների իրացումից, ծառայությունների մատուցումից ստացված եկամուտ՝ անկախ վճարման վայրից,

- «Հայաստանի Հանրապետությունում միջնորդական գործունեությունից (հանձնարարության, կոմիսիայի) ստացված եկամուտը (միջնորդավճարը՝ գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևեր),

- կառավարման, ֆինանսական և ապահովագրական ծառայություններից ստացված եկամուտները, եթե դրանք համարվում են ծախսվճարող ստորաբաժանման կամ վայրի համար,

- հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված եկամուտը և (կամ) ավել ցույց տրված նվազեցումը,

- Հայաստանի Հանրապետության տարածքում ամբողջությամբ կամ մասնակիորեն արտադրված կամ մշակված (վերամշակված) ապրանքներից (արտադրանքից) ստացված եկամուտը:

2. Ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից՝ իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով), Հայաստանի Հանրապետության տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, մասնավորապես՝

- շահաբաժիններ. շահաբաժիններ են համարվում իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունում մասնակցությունից (բաժնետոմսից, բաժնեմասից, փայբաժնից) ստացված եկամուտները: Ոչ ռեզիդենտի շահաբաժինները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ շահաբաժինները ստացվել են մասնակցությունից՝ ռեզիդենտ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում կամ ռեզիդենտ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունում, ինչպես նաև ռեզիդենտ ինվեստիցիոն հիմնադրամներում:

- տոկոսներ. տոկոսներ են համարվում ցանկացած տեսակի պարտապահանջների (փոխառություն, վարկ, ավանդ (դեպոզիտ), մուրհակ) դիմաց ստացված եկամուտները՝ անկախ պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից:

- Ռոյալթիներ (եկամտամաս). ռոյալթիներ են համարվում գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման, կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից,

ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումները օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի, կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումները: Ռոյալթի թվին են դասվում նաև համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգ) պայմանագրով (երբ մեկ կողմը (իրավատերը) պարտավորվում է վարձատրությամբ, ժամկետի նշումով կամ առանց դրա, մյուս կողմին (օգտագործողին) իրավունք տրամադրել իր ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը, ներառյալ՝ իրավատիրոջ ֆիրմային անվանման, օրենքով պահպանվող առևտրային տեղեկատվության, ինչպես նաև պայմանագրով նախատեսված բացառիկ իրավունքների այլ օբյեկտների՝ ապրանքային նշանի, սպասարկման նշանի և այլնի նկատմամբ իրավունքները) ոչ ռեզիդենտի ստացված եկամուտները: Ոչ ռեզիդենտի ռոյալթիները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե ռոյալթի վճարողը հանդիսանում է ռեզիդենտը, կամ Հայաստանի Հանրապետությունում այլ ոչ ռեզիդենտի ստորաբաժանումը կամ վայրը, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որոնց հետ կապված առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը:

- Հայաստանում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտը. գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտ է համարվում վարձատուի կողմից վարձակալին ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնված գույքի դիմաց ստացված վճարները, այդ թվում նաև ֆինանսական վարձակալությունից (լիզինգ) ստացված եկամուտը: Ոչ ռեզիդենտի կողմից անշարժ գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտները համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ եկամուտները ստացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գույքը վարձակալության տալուց: Անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազամայա տնկիները, շենքերը, շինությունները և հողին ամրակայված այլ գույք, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այլ գույքի նշանակությանն անհամաչափ վնաս պատճառելու: Ոչ ռեզիդենտի կողմից շարժական գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտները

համարվում են հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ, եթե այդ գույքը վարձակալության պայմանագրի գործողության ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվում է (ենթակա է գրանցման) Հայաստանի Հանրապետությունում (բացառությամբ՝ օդանավերի) կամ այդ գույքը վարձակալության տալուց կամ վարձակալության պայմանագրի կնքման պահին գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Շարժական գույք է համարվում անշարժ չհամարվող գույքը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի ստացած այլ եկամուտները: ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտի ստացած այն եկամուտներն են, որոնք չեն հանդիսանում ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ: Դրանք են՝

- կառավարման ծառայությունների դիմաց ստացված եկամուտներ,
- բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ,
- սարքավորումների, հոսքագծերի, մեխանիզմների և հարմարանքների տեղակայման և շահագործման համար անհրաժեշտ օգնությունցույց տալու դիմաց ստացված եկամուտներ,

- ապահովագրության հետևանքով ստացված ապահովագրական վճարներից, ինչպես նաև ապահովագրական հատուցումներից ստացված եկամուտներ և այլն:

Վերը թվարկված եկամուտների հանրագումարը կազմում է ոչ ռեզիդենտի ստացած համախառն եկամուտ, որից պակասեցվում են օրենքով սահմանված նվազեցումները: Պետք է նշել, որ նվազեցումների միևնույն գումարը պակասեցվում է միայն մեկ անգամ: Ծախսերի դասին են պատկանում՝

- նյութական,
- աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ,
- վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստներ,
- ամորտիզացիոն մասհանումներ,
- ապահովագրական վճարներ,
- պարտադիր սոցիալական ապահովության վճարներ,
- վարկերի և փոխառությունների տոկոսներ,
- գովազդային, կադրերի պատրաստման և վերապատրաստմանն ուղղված ծախսեր:

Հաշվարկելով համախառն եկամուտը, նվազեցնելով ծախսերը՝ ստացվում է հարկվող շահույթի մեծությունը, ինչի նկատմամբ էլ կիրառվում է շահութահարկի տոկոսադրույքը:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, բացառությամբ օրենքով սահմանված գործարքների դեպքում(աղյուսակ 1): Օրենքով սահմանված դեպքերում շահութահարկը փոխարինվում է շրջանառության հարկով և (կամ) արտոնագրային վճարով: Հարկատուները, ովքեր իրականացնում են այնպիսի գործունեություն, որի դեպքում կիրառվում են տարբեր դրույքաչափեր, վարում են եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում՝ ըստ գործունեության առանձին տեսակների:

*Աղյուսակ 1*

**Ոչ ռեզիդենտների կողմից վճարվող շահութահարկի դրույքաչափը՝ ըստ եկամուտների աղբյուրների<sup>2</sup>**

Եկամտի տեսակ	Շահութահարկի չափը տոկոսներով
Արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելածի	0
Համահայկական բանկից ստացվող շահաբաժինների	0
Ապահովագրական հատուցումներ, վերաապահովագրական վճարներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	5
Շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ, գույքը վարձակալության տալուց ստացած եկամուտ, գույքի արժեքի հավելված և այլ պասիվ եկամուտներ (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից)	10
Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից մատուցվող այլ ծառայություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս Հայաստանի Հանրապետության ռեզիդենտին կամ այլ ոչ ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված առանձնացված ստորաբաժանմանը մատուցվող ծառայությունների դիմաց ստացված եկամուտներ	20

<sup>2</sup> «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 57:



Եթե որոշակի գործունեությունից ստացված եկամուտները հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը դուրս չեն գրվել մշտական հաստատության միջոցով, հետևաբար գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի եկամուտները չեն վերագրվում մշտական հաստատությանը: Մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի մշտական հաստատությանը չվերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է զրո տոկոս դրույքաչափերով:

*Աղյուսակ 2*

**2012-2017թթ. շահութահարկի մուտքերը(մլրդ դրամ)<sup>3</sup>**

Ցուցանիշ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Շահութահարկայր թվում	79.1	98.1	118.7	124.6	103.6	103.7	127.2	110.0
շահութահարկ ռեզիդենտից	69.0	87.6	105.8	104.5	83.9	83.9	98.4	84.0
շահութահարկ ոչ ռեզիդենտից	10.1	10.5	12.9	20.7	19.7	19.8	28.8	26.0

2017թ.-ին շահութահարկի մուտքերը կազմել են 110 մլրդ դրամ: 2016թ.-ի համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 17.2 մլրդ դրամով: 2017թ. շահութահարկի մուտքերից 84 մլրդ դրամն ապահովվել է ՀՀ ռեզիդենտ հարկ վճարողների կողմից, իսկ 26 մլրդ դրամը՝ ոչ ռեզիդենտ: 2014-2015թթ. հարկային մուտքերի մեջ գրեթե փոփոխություն չի նկատվում:

Ոչ ռեզիդենտ հարկ վճարողների կողմից վճարված շահութահարկի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2016թ., որը կազմել է 28.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 9 մլրդ դրամով: 2016թ. շահութահարկի ընդհանուր մուտքերի ամենաբարձր ցուցանիշն է գրանցվել: Նշված աճի մեջ իրենց դրական ազդեցություններն են ունեցել ոչ պետական կազմակերպությունների, ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից վճարվող շահութահարկի և ոչ ռեզիդենտ կազմակերպությունների եկամուտների վճարման աղբյուրի մոտ հաշվարկված և պահված շահութահարկի աճերը՝ համապատասխանաբար կազմելով 6.6 մլրդ դրամ, 3.7 մլրդ դրամ և 5.3 մլրդ դրամ<sup>4</sup>:

<sup>3</sup> <http://www.petekamutner.am/siPublications.aspx?ptname=AnnualReports>

<sup>4</sup> [http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report2016.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report2016.pdf), ,page11

Հաշվետու ժամանակաշրջանը ռեզիդենտ և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների մասով շահութահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին: Հարկային արտոնությունների շարքում կարելի է դասել ոչ միայն դրույքաչափերի փոփոխությունները, այլև հարկերից ազատումը, համախառն եկամուտների տարրերի փոփոխությունը, նվազեցումների ցանկի փոփոխությունը և այլն:

**Հարկային հետևյալ արտոնություններից օգտվում են և՛ ռեզիդենտ, և՛ ոչ ռեզիդենտ հարկ վճարողները.**

1) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը: Այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ տասը տոկոսը գերազանցելու դեպքում սույն մասով նախատեսված արտոնությունը գործում է միայն գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մասով:

2) Շահութահարկի վճարումից ազատվում են ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող շահութահարկ վճարողները՝ ձեռագործ գորգերի իրացումից ստացվող եկամտի մասով:

3) Շահութահարկի վճարումից ազատվում են ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամտի մասով:

4) Շահութահարկի վճարումից ազատվում է Համահայկական բանկը:

**Ոչ ռեզիդենտ հարկ վճարողներին տրվող արտոնություններ.**

Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության պետական արտաբաժնային պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս գեղջի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:

Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով գոյություն ունեն եկամուտների տեսակներ, որոնք չեն ներառվում այդ բազայի մեջ, հետևաբար հետագայում նաև չեն հարկվում.

✓ ոչ ռեզիդենտի շահութահարկ վճարողի կողմից ռեզիդենտ կամ այլ ոչ ռեզիդենտ հարկ վճարողին ապրանքի մատակարարում, եթե գործարքը կատարվել է ՀՀ տարածքից դուրս,

✓ ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտ հարկ վճարողին ապրանքների մատակարարումը, եթե գործարքի իրականացման բոլոր փաստաթղթերը վկայում են, որ ներմուծումը կատարվել է հենց ռեզիդենտ հարկ վճարողի անունով՝ անկախ ապրանքի ՀՀ տարածքում հանձնման հանգամանքից,

✓ նախորդ կետով սահմանված գործարքի հետ անմիջական կապ ունեցող գործողությունները (փաթեթավորում, բեռնաթափման, ապահովագրության և համանման այլ աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը) կատարվել և (կամ) մատուցվել են ոչ ռեզիդենտի կողմից՝ ըստ ապրանքի մատակարարման պայմանագրի:

«ԱԱՀ մասին» ՀՀ օրենքում նշվում է, որ հարկ վճարողներ են համարվում հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված բոլոր կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Օրենքում չի առանձնացվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հարկ վճարող, այլ ուշադրության կենտրոնում են ապրանքներ ներմուծումը և արտահանումը, ծառայությունների մատուցումը և աշխատանքների կատարումը: ԱԱՀ-ով հարկման օբյեկտի և հարկման բազայի հողվածներում տարանջատվում են ԵՏՄ և այլ երկրներից ապրանքների ներմուծումը, բայց ներկրողի ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ լինելու փաստի մասին խոսք չկա: «ԱԱՀ մասին» ՀՀ օրենքի հետ գործում է նաև «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքը, գոյություն ունեն գործարքներ, որոնց դեպքում պետք է առաջնորդվել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով:

*Աղյուսակ 3*

**2015-2017թթ. ԱԱՀ-ի մուտքերը(մլրդ դրամ)5**

	2015	2016	2017
ԱԱՀ՝ այդ թվում	<b>423.9</b>	<b>391.1</b>	<b>452.8</b>
ԱԱՀ ներքին շրջանառությունից	<b>187.3</b>	<b>157.0</b>	<b>165.0</b>
ԱԱՀ ներմուծում	<b>191.0</b>	<b>168.2</b>	<b>203.3</b>
ԱԱՀ ԵՏՄ պետություններից ներմուծում	<b>45.6</b>	<b>65.9</b>	<b>84.5</b>

<sup>5</sup> [http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th\\_annual\\_report\\_2017.pdf](http://www.petekamutner.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2017.pdf), էջ 9 :

2017թ.-ին ԱԱՀ-ի մուտքերը կազմել են 452.8 մլրդ դրամ: 2016թ.-ի համեմատ ԱԱՀ-ի մուտքերը աճել են 61.7 մլրդ դրամով կամ 15.8%-ով: 2017թ. ԱԱՀ-ի մուտքերից 287.8 մլրդ դրամն ապահովվել է ՀՀ ներմուծումովող ապրանքներից, որից 84.5 մլրդ դրամը ԵՏՄ պետություններից, իսկ 165 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից:

2017թ. 2016թ.-ի համեմատ ներքին շրջանառությունից ԱԱՀ աճել է 5.1%, այլ երկրներից ներմուծվող ապրանքներից գանձվող ԱԱՀ աճել է 20.9%-ով, իսկ ԵՏՄ անդամ երկրներից ներմուծվող ապրանքներից ԱԱՀ-ի աճը 28.2%-ով:

Օրենքում սահմանված դրույքաչափերն են՝ 0% (նշված են ավելի քան 13 կետեր իրենց ենթակետերով), ԱԱՀ-ից ազատված գործարքներ ու գործառնություններ (նշված են ավելի քան 50 գործարքներ ու գործառնություններ) և 20% (օրենսգրքով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, բացառությամբ 0% և ԱԱՀ-ից ազատված գործարքների ու գործառնությունների): Այստեղից կարելի է եզրակացնել, որ ոչ ռեզիդենտների մասով արտոնություններ չկան:

Հաջորդ փուլն է հարկային հաշիվների դուրս գրումը (բոլոր ԱԱՀ վճարողները սահմանված դեպքերում պարտավոր են դուրս գրել հաշիվներ) և հաշվարկումը: Վերջինիս մասով պետք է նշել որ, ըստ հողված 70, կետ 2-ի մասով<sup>6</sup>, ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ-ում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման, ինչպես նաև այդ ոչ ռեզիդենտ կազմակերպությանը կամ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող ապրանքները ՀՀ ներմուծելու (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից)՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների գծով օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի փոխարեն՝ որպես հարկային գործակալ, կրում են պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարողները:

Հակառակ դեպքում օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է ՀՀ-ում

<sup>6</sup> ՀՀ ՀՕ «ԱԱՀ մասին» օրենք, հոդված 70, կետ 2:

մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը, եթե պայմանագրային հարաբերությունների կողմը համարվում է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ կամ շրջանառության հարկ վճարող կամ արտոնագրային հարկ վճարող՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով (այլ խոսքերով պայմանագրային հարաբերությունների կողմը չի համարվում հարկ վճարող):

Արտոնություններից կարելի է նշել ԱԱՀ-ի գումարի վճարման հետաձգումը, որի շրջանակներում ապրանքները ստանում են արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի (USԳԱԱ) ծածկագրեր, և այդ ապրանքների ներմուծման մասով հաշվարկված գումարների վճարման ժամկետները հետաձգվում են: Այս հատվածում նույնպես շեշտը դրվում է գործարքների և գործառնությունների տեսակների վրա, այլ ոչ թե դրանց իրականացնողի ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ լինելու հանգամանքի վրա:

Ոչ ռեզիդենտներին վերաբերող հոդվածներից վերջինում նշվում է, որ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների արտահանման դեպքում դրանց գների մեջ ներառված և ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի գումարները կառավարության սահմանած դեպքերում և կարգով փոխհատուցվում են օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքում թվարկված հոդվածները իրենց հաջորդականությամբ նվիրված են գործարքներին և գործառնություններին: Հարկ վճարող կազմակերպությունների դեպքում չի մանրամասնում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպություններ հասկացությունը, այլ ուշադրություն է դարձնում կատարած գործարքներին ու գործառնություններին: Ավելացված արժեքի հարկին վերաբերող օրենքում հարկման օբյեկտ են դիտարկում միջանկյալ օղակը՝ այսինքն մատակարարվող ապրանքները, կատարվող աշխատանքը, մատուցվող ծառայությունը: Զուգահեռական անցկացնելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հետ՝ կարելի է նկատել, որ վերջինիս դեպքում հարկը կիրառվում է վերջնական արդյունքի վրա (ստացված շահույթ), և օրենքում հստակ տարանջատվում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունների հարկման ընթացակարգերը: Կարելի է կատարել հետևյալ *առաջարկությունները*.

- ըստ ՀՀ Հարկային օրենսգրքի հոդված 135-ի «Շահութահարկի կանխավճարները» ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հարկ վճարողները պարտավոր են կատարել շահութահարկի կանխավճարներ՝ նախորդ հարկային տարվա շահութահարկի 20 տոկոսի չափով: Ընդ որում, կանխավճարները կատարվում են եռամսյակային: Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ տվյալ տարին կարող է քիչ եկամտաբեր լինել, քան նախորդը, առաջարկվում է կանխավճարի տոկոսադրույքի իջեցում (մոտ 10 տոկոս):

- ՀՀ ՀՕ-ում քննարկվում է ոչ ռեզիդենտների համախառն եկամտի ձևավորման հարցը: Հարկվում են միայն հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները: Նշվում է նաև, որ եթե եկամուտների ստացման վերաբերյալ փաստաթղթեր չկան, ապա այդ եկամուտները ամբողջությամբ համարվում են հայաստանյան աղբյուրներից ձեռք բերված և հարկվում են օրենքով սահմանված կարգով: Առաջարկվում է սահմանել միջին տոկոսադրույք (7 տոկոս (աղյուսակ 1-ից միջին թվաբանական)) վերը նշված դեպքերի համար, որպեսզի ոչ ռեզիդենտ հարկ վճարողները իրենց պաշտպանված համարեն:

## **ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԳՅՈՒՄ (ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ, ԱԱՀ)**

### **ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր.** «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում հարկ վճարող կազմակերպությունների դեպքում չի մանրամասնվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպություններ հասկացությունը, ինչպես նաև հարկման օբյեկտ են դիտարկվում միջանկյալ գործարքները, այսինքն՝ մատակարարվող ապրանքները, կատարվող աշխատանքները, մատուցվող ծառայությունները: Զուգահեռական անցկացնելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի հետ՝ կարելի է նկատել, որ վերջինիս դեպքում հարկը կիրառվում է վերջնական արդյունքի վրա(ստացված շահույթ): Օրենքում հստակ տարանջատվում են ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ կազմակերպությունների հարկման ընթացակարգերը:

*Բանալի բառեր. շահութահարկ, հարկման օբյեկտ, շահաբաժին, ռոյալթի, տոկոս, հարկային արտոնություններ, ֆրախտ, հարկային նվազեցումներ, ավելացված արժեքի հարկ:*

## НАЛОГОВЫЕ МЕХАНИЗМЫ ДЛЯ НЕРЕЗИДЕНТОВ В АРМЕНИИ (НАЛОГ НА ПРИБЫЛЬ, НДС)

**ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДАНЯН**, *к.э.н.*,

*младший научный сотрудник*

*Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** В законе «О налоге на добавленную стоимость» в случае налогоплательщиков организаций не указывается понятие резидентов и нерезидентов, а также объектом налогообложения являются промежуточные сделки: поставляемые товары, выполненные работы, предоставляемые услуги. При аналогии с законом РА «О налоге на прибыль», можно заметить, что в этом случае налог применяется к окончательному результату (прибыль). В законе четко излагаются процедуры налогообложения организаций резидентов и нерезидентов.

**Ключевые слова:** *налог на прибыль, налогооблагаемый объект, дивиденды, роялти, проценты, налоговые льготы, фрахт, налоговые отчисления, налог на добавленную стоимость.*

## TAXATION MECHANISMS FOR NON-RESIDENTS IN ARMENIA (PROFIT TAX, VAT)

**TATEVIK SMBAT PARSADANYAN**, *Ph.D. in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The law of the Republic of Armenia “On Value Added Tax” doesn’t differentiate between resident and non-resident entity concepts, and considers intermediate transactions as objects (namely: goods supplied, works implemented, and services delivered) of taxation as well. It should be noted, that in the contrast with the law of the Republic of Armenia “On Value Added Tax”, the law “On Profit Tax” states that final outcome is subject to taxation (profit earned). The law clearly differentiates between the procedures applied for taxation of resident and non-resident entities.

**Keywords:** *Profit tax, object of taxation, dividend, royalty, interest, tax exemptions, freight, tax deductions, value added tax.*

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

**ՍԿԵՏԼԱՆԱ ԱՐԿԱԴԻԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ, տ.գ.թ.,**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

## ՆՈՐԱՍՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ԿԼԱՍՏԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Համաշխարհային զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է նոր՝ նորարարական տիպի տնտեսությունների ձևավորմամբ, որտեղ գիտելիքների հատվածն ունի որոշիչ դեր, իսկ գիտելիքների արտադրությունը տնտեսական աճի կարևորագույն աղբյուր է: Նորարարական տնտեսություններին բնորոշ են մի շարք հիմնարար հատկանիշներ, մասնավորապես, տնտեսությունը համարվում է այդպիսին, եթե հասարակության մեջ տեղի են ունենում հետևյալ գործընթացները.

- կարևորվում է գիտելիքների առանձնահատուկ դերը,
- իրականացվում է կառավարման և արտադրության բոլոր ոլորտների և ճյուղերի ավտոմատացում և համակարգչայնացում, թվայնացում, որի արդյունքում ապահովվում է ազգային տեղեկատվական ռեսուրսների ստեղծումն այն ծավալով, որն անհրաժեշտ է անընդհատ աճող գիտատեխնիկական առաջընթացի ապահովման համար,
- ձևավորված են զարգացած նորարարական ենթակառուցվածքները, որոնք կարող են օպերատիվ ու ճկուն իրացնել նորարարական գործընթացը,
- տեղի են ունենում սոցիալական կառույցների արմատական փոփոխություններ, որոնք նպաստում են նորարարական գործունեության ընդլայնմանն ու ակտիվացմանը ոչ միայն արտադրության, այլև այլ ոլորտներում՝ կառավարման, ֆինանսական, կրթության, մշակույթի, ինչպես նաև կենցաղում,
- ստեղծված է ինովացիաների բնագավառում մասնագիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման առաջանցիկ համակարգ<sup>1</sup>:

Դեռևս անցյալ դարի 20-30-ական թվականներին գիտության և առաջավոր տեխնոլոգիաների ավելի ու ավելի մեծացող դերը նկատում և արձանագրում էին այդ ժամանակաշրջանի հայտնի տեսաբան-տնտեսա-

<sup>1</sup> [http://www.ssau.ru/resources/ump/kiselev\\_spio/2/](http://www.ssau.ru/resources/ump/kiselev_spio/2/)



գետները: Մասնավորապես, ամերիկյան հանրահայտ տեսաբան Յո.Շումպետերը իր հետազոտություններում ընդգծում է տեխնոլոգիայի և նորարարության դերը տնտեսական աճի և զարգացման գործընթացում<sup>2</sup>:

Մենք ապրում ենք աննախադեպ տեխնոլոգիական նորարարությունների դարաշրջանում: Տեխնոլոգիաները մեր կյանքում գրեթե ամենուր են՝ սոցիալական շփումներից մինչև ֆինանսական գործարքներ: Տեխնոլոգիական նորարարությունները տնտեսական աճի հզոր շարժիչ ուժն են: Դրանց շնորհիվ ողջ աշխարհում զգալիորեն բարձրանում է միլիոնավոր մարդկանց կենսամակարդակը և նվազում է աղքատությունը:

Այսպիսով՝ տեխնոլոգիայի և գիտելիքների վրա հիմնված տնտեսության ձևավորման կարևորագույն պայմանը բարձր նորարարական ակտիվությունն է կառավարման բոլոր մակարդակներում՝ հասարակական, պետական, ձեռնարկատիրական, ինչպես նաև հասարակության նորարարական ներուժի հիմնարար բաղադրիչը, նորարարական տնտեսության հիմքը հանդիսացող արդյունավետ նորարարական ենթակառուցվածքի առկայությունն է<sup>3</sup>:

Ժամանակակից նորարարական տնտեսության արդյունավետ աշխատանքը ենթադրում է դրան համահունչ ձևավորվող մեխանիզմների և գործիքների, տեղեկատվական ենթակառուցվածքների և վենչուրային գործարարության համակարգված և ծրագրավորված մոտեցումներ: Այսպես, դրանց համակարգված մոտեցումը նշանակում է, որ տնտեսությանն անհրաժեշտ ենթակառուցվածքները և նրա առաջընթացն ապահովող ճյուղերից և ոչ մեկը հնարավոր չէ զարգացնել, առանց հաշվի առնելու տվյալ ոլորտի առանձնահատկությունները: Ժամանակակից պայմաններում զարգացած երկրների նորարարական ներուժը չափվում է բազմաթիվ ինդեքսների միջոցով, որոնք ընդգրկում են տվյալ երկրները բնութագրող զանազան ցուցանիշներ: Երկրների իրական ներուժը արտացոլող և առավել մշակված ու տարածված ինդեքսները երեքն են՝ GII-BCG, ICI և GII-INSEAD:

GII-BCG (Global innovation index-Boston consulting group) մեթոդն առաջին անգամ կիրառվել է 2009թ.՝ Բոստոնում, որպես այլընտրանք INSEAD համաշխարհային նորարարական ինդեքսի: Տվյալ մեթոդի շրջանակներում տնտեսության նորարարական ներուժը գնահատվում է ըստ երկու ցուցանիշների՝ «Նորարարական մուտքերի» և «Ձեռնարկատիրական կատարողականի»: Համաշխարհային նորարարական ինդեքսով առաջին

<sup>2</sup> Schumpeter J. "Business Cycles: A Theoretical, Historical and Statistical Analysis of the Capitalist Process" New York, 1939, vol. p.100-101.

<sup>3</sup> Мухамедьяров А.М., Инновационный менеджмент: учебное пособие, М.; 2008.

տեղում Մինգապուրն է՝ 2.45 գործակցով, իսկ Հայաստանը 110 երկրների մեջ 75-րդն է՝ -0,66 գործակցով<sup>4</sup>: Հաջորդը ICI (Innovation Capacity Index) ինդեքսն է, որն իր մեջ պարունակում է 61 փոփոխական, և ըստ որոնց տնտեսության նորարարական ներուժը գնահատվում է հինգ հիմնական ենթաինդեքսների միջոցով: Դրանք են՝

- ինստիտուցիոնալ միջավայրը,
- մարդկային կապիտալը,
- իրավական կարգավորման դաշտը,
- նորարարական հետազոտությունները,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ներթափանցվածության մակարդակը:


Համաձայն 2010-2011թթ. հրապարակված ցուցանիշների՝ այս ցուցանիշով առաջինը Շվեդիան է՝ 80.3 միավոր, իսկ Հայաստանը 130 երկրների մեջ 41-րդն է՝ 56 միավորով<sup>5</sup>:

Նորարարական ոլորտի երրորդ և միգուցե ամենահամապարփակ գնահատականը INSEAD համաշխարհային նորարարական ինդեքսն է (ՀՆԻ) (Global Innovation Index (INSEAD)), որը բաղկացած է սկզբում 80, իսկ այժմ 101 փոփոխականներից, որոնք միավորված են յոթ ենթաինդեքսներում: ՀՆԻ-ը մանրամասն բնութագրում է աշխարհի տարբեր երկրների նորարարական զարգացումը, որոնք գտնվում են տնտեսության զարգացման տարբեր մակարդակներում: Ուսումնասիրության հեղինակները կարծում են, որ տնտեսության հաջողությունը պայմանավորված է ինչպես նորարարական ներուժի առկայությամբ, այդպես էլ դրա արդյունավետ իրականացման աստիճանից: Այդ իսկ պատճառով ինդեքսը հաշվարկվում է որպես կշռադատված երկու խմբի ցուցանիշների գնահատականների գումար (տե՛ս աղյուսակ 1): Վերջինս, ի տարբերություն նախորդ երկու ինդեքսների, մշակվում և ներկայացվում է առ այսօր:

Այսպիսով, մի շարք ենթացուցանիշների համադրմամբ ձևավորվում է համաշխարհային նորարարական ինդեքսը, որն իրենից ներկայացնում է ծախսերի և արդյունքի հարաբերակցություն, ինչը հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել այս կամ այն երկրում ինովացիայի զարգացմանն ուղղված ջանքերի արդյունավետությունը: Համեմատության համար ներկայացնենք ԵՄՏՄ երկրների համաշխարհային նորարարական ինդեքսը 2013-2018թթ.:

<sup>4</sup> Jemse P.Andrew, Emily Stover De Rocco, Andrew Taylor " The innovation imperative in manufacturing" BCG, March 2009, P.26, <http://www.themanufacturinginstitute.org/~media/6731673D21A64259B081AC8E083AE091.ashx>

<sup>5</sup> [http://www.innovationfordevelopmentreport.org/papers/ICFrankings2010\\_11.pdf](http://www.innovationfordevelopmentreport.org/papers/ICFrankings2010_11.pdf)



**Գծապատկեր 1. ԵԱՏՄ երկրների դիրքը համաշխարհային նորարարական ինդեքսի ռեյտինգավորման մեջ 2013-2018թթ.<sup>6</sup>**

Այս ռեյտինգավորման գործընթացում 2011թ.-ից մինչ օրս Շվեյցարիան գտնվում է առաջին տեղում: Ինչպես նկատում ենք, համաշխարհային նորարարական ինդեքսի ցուցանիշներում ՀՀ 2018 թվականին իր դիրքերը վատթարացրել է՝ իջնելով ինը հորիզոնականով 59-րդից՝ 68-րդը, իսկ ՀՆԻ-ի միավորը համապատասխանաբար 35.65-ից՝ 32.81 միավոր: Վերջինս պայմանավորված է այն ձևավորող երկու ենթաինդեքսներում ներառված ցուցանիշների անկմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ որքան ցուցանիշի միավորը մոտենում է 100-ին, այնքան տվյալ ենթաինդեքսի և ցուցանիշի դիրքը բարելավվում է և հակառակը: Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ից, Հայաստանի ՀՆԻ-ի ենթաինդեքսները 2018թ.-ին 2017թ. համեմատությամբ իրենց ցուցանիշներով ավելի են հեռացել հարյուր միավորից, և հետևաբար դիրքերը վատթարացել են, ինչը հանգեցրել է համաշխարհային նորարարական ինդեքսի դիրքի անկմանը: Վերջինս բավականին մտահոգիչ է, քանի որ ՀՆԻ-ն բավականին լայն պատկերացում է տալիս տվյալ երկրի տնտեսության մրցունակության առաջընթացի և հեռանկարային զարգացման մասին:

<sup>6</sup> GLOBAL INNOVATION INDEX 2013-2018, Energizing the World with Innovation. Soumitra Dutta, Bruno Lanvin, and Sacha Wunsch-Vincent.


Հայաստանի համաշխարհային նորարարական ինդեքսը իր երկու ենթաինդեքսներով և ցուցանիշներով 2017-2018թթ. -ի կտրվածքով<sup>7</sup>

<i>Ցուցանիշի անվանումը</i>	2017թ.		2018թ.	
	Միավորը (0-100)	Դիրքը	Միավորը (0-100)	Դիրքը
<b>Ենթաինդեքս 1. Նորարարական հետազոտության համար անհրաժեշտ ռեսուրսները և պայմանները (Innovation Input).</b>	39.70	82	24.7	94
• Ինստիտուտներ	61.9	63	60.8	67
• Մարդկային կապիտալ և հետազոտություններ	19.4	103	15.2	110
• Ենթակառուցվածքներ	39.0	91	36.5	93
• Շուկայի զարգացում	50.5	46	43.5	81
• Բիզնեսի զարգացում	27.7	85	26.1	88
<b>Ենթաինդեքս 2: Ինովացիաների իրականացումը և ձեռքբերված գործնական արդյունքը (Innovation Output)</b>	31.6	47	34.1	50
• Գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունք	25.7	50	23.2	62
• Ստեղծագործական գործունեության արդյունք	37.5	44	35.0	48

Այդ նկատառումից ելնելով, հիմք ընդունելով համաշխարհային նորարարական ինդեքսի երկու կշռադատված ենթաինդեքսների (*Innovation Input, Innovation Output*) տարրերը, իրականացրել ենք Հայաստանի նորարարական և տեխնոլոգիական միջավայրի գնահատում: Նորարարական կատարողականն ու արդյունավետությունը գնահատելուն ուղղված ցանկացած վերլուծական մոտեցում ունի իր նպատակն ու տրամաբանությունը: Մենք մշակել ենք սեփական մոտեցում՝ նպատակ ունենալով գնահատելու նոր տեխնոլոգիական իրականության մեջ զարգացման արմատապես տարբեր հարացույց (պարադիգմ) որդեգրելու Հայաստանի պատրաստվածության մակարդակը: Այս մոտեցումը, միաժամանակ, սերտորեն առնչվում է նորարարական համակարգերի գնահատման տարածված այլ մեթոդներում կիրառվող տրամաբանության հետ՝ այդպիսով հնարավոր դարձնելով համեմատական վերլուծությունը:

<sup>7</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով՝ GLOBAL INNOVATION INDEX 2018 Energizing the World with Innovation, 11th edition, p. 221 GLOBAL INNOVATION INDEX 2017 Energizing the World with Innovation, 10-th edition, p.188.

Գնահատման մոտեցումն ունի հետևյալ կառուցվածքը՝ նորարարությունները *խթանող գործոններ* → *ռեսուրսներ* → *կատարողական արդյունք*, որը ներկայացրել ենք հիերարխիկ բուրգի տեսքով (տե՛ս գծապատկեր 2):



**Գծապատկեր 2. Հայաստանի տեխնոլոգիական էկոհամակարգի գնահատման մոտեցում**

Կատարողականը ներդրված ռեսուրսների արդյունք է, մինչդեռ այդ ռեսուրսների ձևավորման հնարավորությունը ստեղծվում է ինստիտուտների, քաղաքականությունների, շուկայի և բիզնեսի զարգացման շնորհիվ: Տվյալ պարագայում հիմնական ռեսուրսներ են հանդիսանում ֆինանսավորման հնարավորությունները, հետազոտություններն ու գաղափարները առևտրայնացնելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, ինչպես նաև նորարարական գործընթացներում ներգրավված մարդկային ռեսուրսների քանակն ու որակը: Նորարարական կատարողականը կարելի է գնահատել վերջնարդյունքների երկու հիմնական խմբերի միջոցով՝ առևտրային արդյունք և հետազոտական արդյունք: Վերջինս ՀՆԻ-ում համապատասխանում է երկրորդ ենթաինդեքսի՝ (*Innovation Output*) ցուցանիշներին գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունք, ստեղծագործական գործունեության արդյունք:

Հարկ է նշել, որ նորամուծական գործունեության իրականացման կարևորագույն ուղղություններից մեկը կլաստերների ձևավորումն է, որը տնտեսական և գիտատեխնիկական զարգացման ժամանակակից միտումների պայմաններում որոշակի հիմքեր է ապահովում նոր գաղափարների առևտրայնացման գործուն մեխանիզմների ստեղծման համար: Կլաստերը որոշակի տարածքում կենտրոնացված փոխկապակցված կազմակերպությունների խումբ է՝ սարքավորումների, կոմպլեկտավորող և մասնագիտացված ծառայությունների մատակարարների, ընդհանուր ենթակառուցվածքի, գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և այլ կազմակերպությունների, որոնք փոխլրացնում են միմյանց և բարձրացնում են ինչպես առանձին կազմակերպությունների, այնպես էլ ողջ կլաստերի մրցակցային առավելությունների մակարդակը<sup>8</sup>: Նորամուծություն և նոր տեխնոլոգիաների առևտրայնացում տեղի է ունենում առավելապես կլաստերների միջոցով: Ինչպես նշում են Բերգմանն ու Ֆեզերը, կլաստերներն իրենց արտաքին էֆեկտներով (էքստերնալներով) նպաստում են նորաստեղծությունների ի հայտ գալուն, դրանք էլ, իրենց հերթին, կախված են այն ինստիտուտներից և ինստիտուցիոնալ մեխանիզմներից, որոնց շրջանակում ձևավորվում և զարգանում են<sup>9</sup>:

Նախ՝ քննարկենք, թե ինչ է կլաստերն ըստ էության: Ըստ Պորտերի՝ կլաստերն աշխարհագրորեն միահյուսված ընկերությունների և ինստիտուտների միացումն է որոշակի ճյուղում: Նկատենք, որ կլաստերը ներառում է նաև մի շարք պետական կառավարման տարրեր և ինստիտուցիոնալ միավորներ<sup>10</sup>: Որպես միավոր՝ այն կարող է հիշեցնել ազգային նորարարական համակարգի պրոյեկցիան մեզոմիջավայրում: Միկրոմակարդակի միջավայրի չորս բաղադրիչներն ազդում են կլաստերի նորարարության աստիճանի, ինչպես նաև դրա մրցունակության վրա: Բարձրացնելով արտադրողականությունն ու արդյունավետությունը կլաստերը ընկերություններին մղում է դեպի ավելի շատ նորարարությունների: Ինստիտուտները մեխանիզմներ են, որոնք հնարավորություն են տալիս մասնակիցներին մի շարք գործիքներով (ֆինանսական, բանակցային) փոխգործակցելու և ստիպելու ու կենտրոնացնելու սոցիալական վարքը՝ տրամադրելով պարզևստրումներ և պատիժներ, որոնք մասնակիցներին տալիս են խթաններ՝ մասնակցելու փոխանակման գործընթացներին և

<sup>8</sup> Якобсон А.Я., Кириллова Т.К. Инновационный менеджмент: учеб. пособие 3-е изд., испр. - М.: Издательство "Омега-Л", 2015, էջ 105.

<sup>9</sup> Bergman E.M. and Feser E.J. Industrial and Regional Clusters: Concepts and Comparative Applications / E. M. Bergman, E. J. Feser. Regionl Research Institute, WVU., 1999. p. 44.

<sup>10</sup> Harvard business review. THE NOVEMBER-DECEMBER 1998 ISSUE, Michael E. Porter Clusters and the New Economics of Competition.

ստանձնելու նախկինում ընդունված պարտավորությունները: Կլաստերն իր մասնակիցներին տրամադրում է մի շարք առավելություններ, որոնք ապահովում են ձգողության (կենտրոնաձիգ) արդյունք, ինչը որոշում է կլաստերի գոյության և նոր մասնակիցների ներգրավման նպատակահարմարությունը: Այս առավելություններն ընդունված է բաժանել 3 խմբի՝ արտադրական գործունեության արդյունավետության բարձրացում, ինստիտուցիոնալ (այդ թվում՝ տրանսակցիոն (գործարքային) ծախսերի տնտեսում) և նորարարական առավելություններ:

Կան երկու հիմնական պատճառներ, որոնց շնորհիվ նորարարական զարգացմամբ շահագրգռված կազմակերպությունները կենտրոնանում են կլաստերների մեջ: Առաջին հերթին՝ նոր գիտելիքներն ունեն անհատականացված (չկոդավորված) մաս և տարածվում են անձնական կապերի միջոցով: Ըստ Պ. Դերոշեի՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կարևոր գիտելիքը ո՛չ ստանդարտ ինֆորմացիա է, ո՛չ էլ գիտական հրատարակում: Դա նաև այն տեղեկությունը չէ, որը կարելի է ստանալ մարքեթինգային վերլուծության արդյունքում<sup>11</sup>: Ի՞նչն է իրականում կարևոր բիզնեսի համար. նորագույն գիտելիքներ, վերջին իրադարձությունների ու փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն, որոշակի մարդկանց սխալների հիման վրա ձեռք բերած փորձ: Փոխգործակցող սուբյեկտները կապ չունեն միմյանց հետ, որի վառ ապացույցը նորարարական ակտիվության անհամաչափ բաշխումն է տնտեսությունում: Երկրորդ հերթին՝ նորարարական գործունեությունը նախատեսում է բազմաթիվ տարատեսակ կազմակերպությունների հետ (մատակարարների, արտադրողների, վաճառողների, սպառողների, ֆինանսական կազմակերպությունների և այլն) համաձայնեցված գործողություն:

Անհրաժեշտ է պարզել, թե ինչ պայմանների դեպքում կարող է ձևավորվել և պահպանվել կլաստեր: Քանի որ ներկայումս կլաստերացման պայմաններում կազմակերպությունների նորամուծական զարգացման արդյունքների մասին հստակ տվյալներ ստանալ հնարավոր չէ, այդ իսկ պատճառով ներկայացնենք արդյունաբերական կազմակերպությունների նորամուծական զարգացման սոցիալ-տնտեսական գնահատման հիպոթետիկ մոդել: Այսպես, կլաստերում ներգրավվելու մասին որոշման կայացման վրա ազդում է երկու գործոն՝ նորամուծական ներուժի միացյալ օգտագործման և ծախսերի տնտեսման հնարավորությունները: Դրա հետ կապված, կարելի է առաջարկել կազմակերպությունների կլաստերային միավորման հետևյալ մոդելը, հիմնված

<sup>11</sup> Дероше П. Возможна ли новая Кремниевая долина? // Круглый стол «полит.ру», 2011 // URL: [www.polit.ru/article/2011/04/08/deroche](http://www.polit.ru/article/2011/04/08/deroche) (дата обращения 6.12.2012).

սուբյեկտների կողմից սիներգետիկ արդյունքի հաշվին սեփական առավելություններն առավելագույնի հասցնելու ձգտման վրա: Օգտագործելով Մ. Շերեշևայի<sup>12</sup> ցանցի հիմնավորման առաջարկած մեթոդիկան, կարելի է ենթադրել, որ կլաստերը կձևավորվի և կպահպանվի հետևյալ պայմանների առկայության դեպքում:

$$(C_{hl} - C_{hv} + T_{hv}) > T_{hl} + 3_{hl-hv} \quad (1),$$

որտեղ՝  $C_{hl} - C_{hv}$  -ն ստացվող ավելացված արժեքի տարբերությունն է կազմակերպության կլաստերի կազմում և ինքնուրույն գործելու պայմաններում,

$T_{hl}$  և  $T_{hv}$  -ն տրանսակցիոն ծախսերն են կազմակերպության կլաստերի կազմում և ինքնուրույն գործելու պայմաններում,

$3_{hl-hv}$  - ն կազմակերպության կլաստերում և ինքնուրույն աշխատելու իրավիճակների միջև արտադրական ծախսերի տարբերությունն է:

(1) բանաձևից հետևում է, որ ինչպես ինքնուրույն, այնպես էլ կլաստերի կազմում գործող արդյունաբերական կազմակերպությունների կողմից ստացված ավելացված արժեքների հավասարության դեպքում տնտեսական տեսանկյունից ավելի ձեռնտու է աշխատել կլաստերի կազմում, քանի որ գործարքային ծախսերը փոքր են,

$$(\sum_{i=1}^n T_{in} + \sum_{i=1}^n 3_{i1} - in) > T_{i1} \quad (2)$$

Պետք է նշել, որ նորամուծական կլաստերն իրենից ներկայացնում է ոչ միայն բիզնեսի ներկայացուցիչների, այլ նաև գիտական կազմակերպությունների, կրթական հաստատությունների, կառավարման մարմինների, սպառողների ռեսուրսները և հիմնական կարողությունները միավորող ռազմավարական միջկազմակերպական ցանց: Համաձայն Մ. Աուզանի<sup>13</sup> կարծիքի, կլաստերները պետք է դասել ինտեգրացված կառույցների շարքին, քանի որ դրանցում առկա է այնպիսի հատկություն, ինչպիսին է կլաստերի մասնակիցների սիներգիզմի հատկությունը: Նորամուծական կլաստերը՝ որպես սիներգետիկական համակարգ, ընդունակ է համակցել փոխլրացնող տարրերի և միավորվող սուբյեկտների ռեսուրսները և ապահովել տնտեսական արդյունքների աճ: Այդ իսկ պատճառով, պետք է հաշվի առնել կլաստերի նորամուծական զարգացման սիներգե-

<sup>12</sup> Шерешева М.Ю. Межфирменные сети. М.: Экономический факультет МГУ, ТЕЗИС, 2006г. Стр. 168-169.


<sup>13</sup> Институциональная экономика: Новая институциональная экономическая теория: Уч. Коллектив авторов. Под ред. А.А.Аузана.-2-е изд. М.:ИНФРА-М, 2011г. стр. 139.



տիկական արդյունքը, որն իրենից ներկայացնում է հետևյալ արդյունքների գումարը<sup>14</sup>

- «դասական տարբերակով» տնտեսական, սոցիալական, էկոլոգիական արդյունքներ,
- մենեջմենթի տեսակետից՝ գիտելիքի ներհոսքի, նորամուծական ենթակառուցվածքների համատեղ օգտագործման, գործարքային ծախսերի տնտեսման, դրամական հոսքերի աճի, տեղեկատվական ապահովման և ներդրումային սիներգետիկ արդյունքներ,
- կազմակերպչական տեսակետից՝ մեքենասարքավորումների համատեղ օգտագործման, հեղինակային միջոցառումներին համատեղ մասնակցության, մարքեթինգային ընդհանուր հաղորդակցություններից օգտվելու արդյունքներ,
- նորամուծական կապիտալի ձևավորման տեսակետից՝ նյութական (ներառյալ ֆինանսական), մտավոր (ներառյալ կազմակերպչական, գործընկերային և մարդկային) և սոցիալական կապիտալի ձևավորման արդյունքներ:

Ներկայացնենք կլաստերի սիներգիկ հատկությունը գծապատկերով:



**Գծապատկեր 3. Կլաստերի սիներգետիկ արդյունքը<sup>15</sup>**

<sup>14</sup> Портер М. Конкуренция / Пер. с англ. — М.: Изд. дом «Вильямс», 2005. — стр.543.

<sup>15</sup> Хасанов Р. Х., "Синергетический эффект кластера", ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РЕГИОНОВ И ОТРАСЛЕВЫХ КОМПЛЕКСОВ, Проблемы современной экономики, N 3 (31), 2009.

Այսպիսով՝ նորարարական ակտիվության լիարժեք դրսևորման համար կազմակերպությունները պետք է տեղաբաշխվեն և գործեն կլաստերների շրջանակներում, որոնք ներկայացնում են միմյանց հետ փոխկապված, մրցակցային առավելությունները կատարելագործող, աշխարհագրական տարածքով մոտ և գործունեության ընդհանուր շրջանակով միավորված կազմակերպություններ: Այս ամենը նպաստում է նոր գիտելիքների ձեռքբերման ծախսերի կրճատմանը (դրանք ունեն անհատականացված բնույթ) և նորամուծության ստեղծմանը (նոր գիտելիքի տարածումը հանգեցնում է դրա կրկնապատկմանը), նորամուծական պարբերաշրջանի տևողության կրճատմանը, ֆիրմաների նորարարական գործունեության ակտիվությանը՝ մյուս ընկերություններից «եկող» ինովացիայի հաշվին, գնորդների խստապահանջության մակարդակի բարձրացմանը և մրցակցային պայքարի սրմանը:

## ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ԿԼԱՍՏԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**ՍԿԵՏԼԱՆԱ ԱՐԿԱԴԻԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ, տ.գ.թ.,**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հռոկվածում հիմնավորվել է առկա տեխնոլոգիական ժամանակաշրջանում նորարարական տնտեսության անհրաժեշտությունը և զարգացման հեռանկարները: Մշակվել և ներկայացվել է ՀՀ տնտեսության տեխնոլոգիական էկոհամակարգի գնահատման մոտեցում «խթանող գործոններ → ռեսուրսներ → կատարողական արդյունք» տրամաբանությամբ: Հիմնավորվել է նաև, որ նորամուծական գործունեության իրականացման կարևորագույն ուղղություններից մեկը կլաստերների ձևավորումն է, որը տնտեսական և գիտատեխնիկական զարգացման ժամանակակից միտումների պայմաններում հիմքեր է ապահովում նոր գաղափարների առևտրայնացման մեխանիզմների ստեղծման համար:

***Բանալի բառեր.** ինովացիա, կլաստեր, սիներգիա, համաշխարհային նորարարական ինդեքս, տրանսակցիոն ծախսեր, ենթակառուցվածքներ, առևտրայնացում:*

## ИНОВАЦИОННОЕ РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ В КОНТЕКСТЕ КЛАСТЕРОВ

**СВЕТЛАНА АРКАДЬЕВНА ДАЛЛАКЯН**, *к.э.н.*,  
*научный сотрудник Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация.** В статье обосновывается необходимость инновационной экономики на современном технологическом этапе и перспективы их развития. Разработан и представлен подход к оценке технологической экосистемы в экономике Республики Армения «Стимулирование факторов ресурсов → результатов → исполнения». Обосновывается также, что одним из важнейших направлений инновационной деятельности является формирование кластеров, которые в условиях современных тенденций в экономическом и научно-техническом развитии создают основы для создания новых механизмов коммерциализации идей.

*Ключевые слова:* инновации, кластер, синергичный, глобальный инновационный индекс, транзакционные издержки, инфраструктура, коммерциализация.

## THE DEVELOPMENT OF INNOVATIONS-DRIVEN ECONOMY IN THE CONTEXT OF CLUSTERIZATION

**SVETLANA ARKADI DALLAQYAN**, *Ph.D. in Economics*,  
*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article substantiates the need for innovation-driven economy in the era of technological advancement and development perspectives of thereof. An approach to assess the technology ecosystem of the economy of the Republic of Armenia has been elaborated and presented with the following logic behind: “stimulating factors → resources → performance”. The article justifies that one of the main directions for implementing innovations is building clusters to ensure the creation of mechanisms for commercializing inventions and new ideas under the condition of science and technology advancements and economic development.

*Keywords:* Innovation, cluster, synergy, Global Innovation Index, transaction costs, infrastructures, commercialization

**ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ**, *տ. գ. թ.*

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

## **ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Ներկայումս ագրոարդյունաբերական համալիրն իր բոլոր ենթակառուցվածքներով դարձել է յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման կարևորագույն ոլորտներից մեկը: Ուստի տնտեսավարման ժամանակակից պայմաններում ավելի է կարևորվում Հայաստանի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկի՝ ագրարային ոլորտի ֆինանսավորման և գյուղատնտեսական ապրանքների արտադրության հիմնահարցերի վերլուծությունն ու համապատասխան լուծումների ներկայացումը: Ոլորտի արդյունավետ գործելու դեպքում հնարավորություն կստեղծվի ավելացնել աշխատատեղերը, զարգացնել գյուղատնտեսական տարածքները, բարձրացնել երկրի պարենային ապահովությունը և այլն:

Սակայն գյուղատնտեսությունն առանձնանում է իր անկայուն բնույթով՝ պայմանավորված բերքի ստացման հստակ կանխատեսման անհնարիությամբ: Բացի դրանից, ոչ պակաս դեր է խաղում գյուղատնտեսական արտադրության սեզոնային բնույթը: Նմանատիպ գործոնները նվազեցնում են ոլորտի ներդրումային գրավչությունը, քանի որ հանգեցնում են ագրարային նախագծերի ցածր եկամտաբերության և ունեն բարձր ռիսկայնություն: Հետևաբար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ոլորտի արդյունավետ վարկավորման և ֆինանսավորման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման գործընթացին:

ՀՀ ագրարային ոլորտի զարգացման ներկա փուլում ճյուղի առջև ծառայած են բազմաթիվ խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել ագրոտեխնիկական պահանջների համապատասխան արտադրական գործընթացների կատարման ու նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովվածության ցածր մակարդակը, հետբերքահավաքային և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների կիրառման պակասը և այլն: Նշված խնդիրների լուծումը հնարավոր է միայն մեծածավալ ներդրումների միջոցով, որի կարևորագույն և իրատեսական ուղիներից է ագրոպարենային համակարգի տարբեր բաղադրիչների վարկավորման մեխանիզմների կատարելագործումն ու մատչելիության բարձրացումը:

Հանրապետության ագրարային ոլորտը, իր առանձնահատկություններով պայմանավորված, ամենից շատ է տուժել բնակչության վճարունակ

պահանջարկի ցածր մակարդակից, գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների անբարենպաստ գնային հարաբերակցությունից, տնտեսական կապերի խզումից, արտադրության նոր տեխնոլոգիաների ներդրման բարդություններից: Վերջիններս հանգեցրել են գյուղատնտեսությունում տնտեսվարողների զգալի մասի անվճարունակության և ֆինանսական անկայունության: Ստեղծված իրավիճակում գյուղատնտեսության արտադրության արդյունավետության բարձրացման և հետագա զարգացման կարևոր հիմնախնդիրներից է գյուղատնտեսությունում տնտեսվարողների վարկավորման կազմակերպատնտեսական մեխանիզմների կատարելագործման միջոցով տնտեսվարողների համար վարկերի մատչելիության բարձրացումը:

Ագրոպարենային համալիրի առանձնահատկությունները և երկրի կենսագործունեության համար դրա կարևոր նշանակությունը պահանջում է ագրարային ոլորտի վարկավորման յուրահատուկ համակարգի ձևավորում, որը պետք է համապատասխանի շուկայական տնտեսության պահանջներին և պայմաններին, ինչպես նաև նպաստավոր լինի գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար: Այս ուղղությամբ կարևոր նշանակություն ունի ոլորտի գործող վարկավորման մեխանիզմների կատարելագործումը, գյուղատնտեսությունում տնտեսվարողների վարկունակության գնահատման այնպիսի մոտեցումների կիրառումը, որոնք թույլ կտան վարկային ռեսուրսները նպատակաուղղել դեպի գյուղատնտեսական արտադրության առաջնահերթ, կարևոր և միննույն ժամանակ բարձր արդյունավետություն ապահովող ուղղություններ: Վարկային համակարգը պետք է խթանի գյուղատնտեսական արտադրությանը և գյուղատնտեսական մթերքներ արտադրող, վերամշակող ու սպասարկող տնտեսվարողների միջև փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների ձևավորմանն ու զարգացման ամրապնդմանը:

ՀՀ մարզերում և տարածաշրջաններում նախընտրելի արտադրական ուղղություններով գյուղատնտեսական և գյուղատնտեսական հումքի վերամշակման տնտեսվարող սուբյեկտների կարողությունների ուժեղացման և նոր սուբյեկտների ձևավորման նպատակով պետական աջակցության կարևոր գործոն է նպատակային վարկավորումը<sup>1</sup>:

Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ մարզերում և Երևան քաղաքում իրականացված գյուղատնտեսական վարկավորման վերաբերյալ որոշ տվյալներ:

<sup>1</sup> ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարություն, էջ 65:

**Գյուղատնտեսության վարկերի վերաբերյալ ամփոփ տվյալները ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2011-2016թթ.<sup>2</sup>**

ՀՀ մարզերը և Երևան քաղաքը	Միավոր վարկի միջին-նացված արժեքը (ՀՀ դրամ)	Վարկառուների բաշխումն ըստ մարզերի (%)
Արմավիր	959,986	22.53
Արարատ	848,614	18.38
Արագածոտն	806,648	10.25
Շիրակ	984,503	10.41
Կոտայք	731,666	9.77
Լոռի	818,513	7.54
Տավուշ	677,643	6.64
Գեղարքունիք	893,135	5.75
Սյունիք	1,097,344	5.22
Վայոց Ձոր	719,288	3.50
Երևան	2,516,667	0.03

Աղյուսակում ներկայացված տվյալները հիմնավորում են, որ միավոր վարկի միջիննացված արժեքով ամենաբարձր ցուցանիշը Սյունիքի մարզում է՝ 1 097 344 դրամ, իսկ ամենացածր ցուցանիշը՝ Տավուշի մարզում՝ 677 643 դրամ: Վարկառուների բաշխման կառուցվածքում ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Արմավիրի մարզում՝ 22,53%, իսկ ամենացածրը՝ Վայոց Ձորում՝ 3,5%:

Ցանկացած երկիր, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը, գյուղատնտեսական արտադրության հետագա ընդլայնմանն ուղղված արտադրական հիմնական և շրջանառու միջոցների ավելացումն իրականացնում է ոչ միայն ի հաշիվ սեփական կապիտալի, այլ նաև լրացուցիչ նյութական և դրամական ներդրումների, որոնք կարող են դրսևորվել ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ առումներով: Այդ ներդրումները օգտագործվում են գյուղատնտեսական կազմակերպությունների հնացած ու մաշված սարքավորումների փոխարինման, նոր տեխնոլոգիաների ներդրման և ժամանակակից տեխնիկայի ու սարքավորումների հագեցվածության, գյուղատնտեսական արտադրության ընդլայնման և նոր տեսակի արտադրությունների զարգացման նպատակով:

Վարկերի դերը ագրարային ոլորտի ֆինանսավորման գործում սկսեց առավելապես աճել 1960-1970-ական թթ.: Այդ տարիներին արևմտյան

<sup>2</sup> ԳՖԿ տվյալների հիման վրա՝ <http://www.raed.am/images/Scan0135.jpg>

որոշ երկրներում վարկերի բաժինը ագրոարդյունաբերական կապիտալում կազմեց շուրջ 50%:

ՀՀ անկախացումից առ այսօր ձևավորված բանկային համակարգը և առհասարակ վարկային շուկան, արմատապես տարբերվում է նախկին համակարգից: Այսօր ՀՀ գյուղատնտեսության վարկային շուկայի առաջարկը ներկայացնող կողմը առևտրային բանկերն են և վարկային ծրագրեր իրականացնող տարբեր միջազգային կազմակերպությունները, իսկ վարկային միջոցների նկատմամբ պահանջ ունեն գյուղացիական և բնակչության տնտեսությունները, վերամշակող կազմակերպությունները և այլն: Ներկա պայմաններում, ՀՀ բանկային համակարգի զարգացումը պահանջում է ինչպես արտասահմանյան երկրների զարգացած բանկային համակարգերի և առհասարակ բանկային գործունեության փորձի անընդհատ ուսումնասիրություն, այնպես էլ մեր կողմից կուտակված փորձի մանրակրկիտ ուսումնասիրություն, որի արդյունքում հնարավոր կլինի ՀՀ բանկային օրենսդրությունը համապատասխանեցնել համաշխարհային զարգացումներին և ինտեգրվել տարբեր միջազգային կազմակերպություններին:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ներկայումս ՀՀ-ում մի շարք գյուղատնտեսական կազմակերպություններ աշխատում են իրենց սեփական կապիտալի, խնայողությունների հաշվին և չեն օգտվում առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերից, որը, թերևս լուրջ հիմնախնդիր է դրանց արդյունավետության բարձրացման հարցում:

Գյուղատնտեսական ապրանքարտադրողների վարկավորման միջազգային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առանձնացնել մի քանի պայմաններ, որոնք անհրաժեշտ են մեր հանրապետությունում վարկավորման արդյունավետ մեխանիզմների ներդրման համար: Արտասահմանյան մի շարք զարգացած երկրների վարկավորման ուսումնասիրությունները հստակ մատնանշում են, որ ազատ շուկայական տնտեսվարման պայմաններում իդեալական է համարվում կոոպերատիվ համագործակցության միջոցով ագրարային ոլորտի վարկավորումը: Մովորաբար զարգացած երկրներում գործում են հատուկ ագրարային ոլորտը վարկավորող բանկեր, վարկային կազմակերպություններ և մասնավորապես վարկային կոոպերացիաներ<sup>3</sup>:

<sup>3</sup> М. Л. Лишанский “Краткосрочное кредитование сельскохозяйственных предприятий”, Москва 2004, стр. 67.

Ապահովելով երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 20%-ը, զբաղվածության շուրջ 40%-ը և արտահանման մեջ գյուղատնտեսական ու դրանց վերամշակման արդյունքում ստացվող ապրանքների ավելի քան 20-ը, գյուղատնտեսությունը կարևոր դերակատարում ունի Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Պատկերն ամբողջանում է, եթե նշվածին ավելացնում ենք նաև գյուղատնտեսության կարևորությունը երկրի պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից: Ինչպես նկատում ենք՝ ներկայումս գյուղատնտեսությունը հիմնարար նշանակություն ունի ՀՀ ՀՆԱ-ի ձևավորման գործընթացում, և այս հանգամանքն առավել նկատելի է դարձնում գյուղատնտեսության ոլորտի առևտրային կազմակերպությունների, ֆերմերային տնտեսությունների, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների ֆինանսական միջոցների բավարարման նպատակով տարաբնույթ վարկային ծրագրերի մշակման և դրանց կիրառման անհրաժեշտությունը: Չնայած այս կարևորագույն ոլորտի դերի առջև ծառայած մի շարք խնդիրների լուծմանը, երկրում դեռևս բացակայում է համակարգված ու հետևողական քաղաքականության իրականացումը՝ ուղղված ոլորտի երկարաժամկետ և կայուն զարգացման ապահովմանը: Նշվածը վերաբերում է ոլորտի խնդիրների հիմքում ընկած թերևս կարևորագույն հարցի՝ գյուղատնտեսության ֆինանսավորմանը, այս դեպքում՝ վարկավորման ծրագրերի իրականացմանը:

Գյուղատնտեսության հիմնական առանձնահատկությունը ճյուղի արտադրության սեզոնային բնույթն է: Տնտեսության այլ ոլորտներում նույն ժամանակահատվածում ներդրված կապիտալը կարող է մի քանի շրջապտույտ իրականացնել: Գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ կամ ֆերմերային տնտեսության եկամուտների հետ մնալը տնտեսության այլ ոլորտների համեմատ խորացնում է այդ հիմնախնդիրը, և սեզոնային ներդրումները հնարավոր է լինում իրականացնել գյուղատնտեսական ապրանք արտադրողների միջոցներով:

Ագրարային ոլորտն, ի տարբերություն այլ ոլորտների, ենթարկվում է անկանխատեսելի բնակլիմայական փոփոխությունների, բույսերի և կենդանիների առավել վտանգավոր հիվանդությունների, բնական աղետների: Բացի բերքի կորստից և շուկայում գների էական տատանումներից՝ դա ազդում է գրավի առարկայի արժեքի վրա, և այն զգալիորեն կորցնում է իր իրացվելիությունը տուժած գոտում: Այդ պատճառով գյուղատնտեսության ոլորտը սովորաբար դուրս է մնում բանկային կառույցների ուշադրությունից, քանի որ փոքր հաճախորդների սպասարկման (տրան-



սակցիոն) ծախսերը երբեմն գերազանցում են բանկերի պոտենցիալ օգուտները: Ագրարային ոլորտը ֆինանսավորող բանկերի գործունեության դժվարացման գործոններից է հանդիսանում գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից վարկավորման միաժամանակյա պահանջարկի առաջացումը՝ հատկապես բուսաբուծական մթերքներ արտադրողների համար:

Գյուղատնտեսության վարկավորման հիմնախնդիրը ծառացած է յուրաքանչյուր երկրի պետական տնտեսական քաղաքականության և տնտեսությունում առկա առևտրային բանկերի միջև, որի լուծումը պահանջում է վերը նշվածների համատեղ ջանքերի արդյունքում տվյալ երկրի տնտեսական զարգացման ուղղվածության և մակարդակին, բնակլիմայական պայմաններին և ազգային առանձնահատկություններին բնորոշ գյուղատնտեսության վարկավորման հստակ մեխանիզմի մշակում և կիրառում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական արտադրության ֆինանսական ապահովումը նշանակալի չափով իրականացվում է պետության կողմից արդյունավետ վարկային քաղաքականության կիրառման միջոցով: Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում ձևավորվել և հաջող գործում է արտադրողների վարկային սպասարկումների լայն ցանց: Մեր կարծիքով, առավել կարևոր է ուսումնասիրել և վերլուծել այդ երկրներում ագրարային ոլորտի վարկային շուկայի կայացման մեխանիզմները, դրա արդյունքում բացահայտել այն հնարավորությունների կիրառումը, որոնք կարող են նպաստել մեր հանրապետության ագրարային ոլորտի վարկային շուկայի կատարելագործմանն ու զարգացմանը:

Անհրաժեշտ է նշել, որ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությանը ֆինանսավորման առաջատար է հանդիսանում «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ն, որի ընդհանուր վարկային պորտֆելում գյուղատնտեսության բաժինը 2017թ. տարեվերջին կազմել է 32%՝ գերազանցելով 56 մլրդ ՀՀ դրամը (116 մլն ԱՄՆ դոլար), ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 9%-ով<sup>4</sup>:

Վարկային միջոցների տրամադրումը և բաշխումը կատարվում է նաև գյուղական ֆինանսավորման կառույցի (ԳՖԿ) կողմից: Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 31

<sup>4</sup> ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկի տարեկան հաշվետվություն, 2017:

մարտի 2011 թվականի N349-Ն որոշմամբ հաստատված կարգի: Դրա համաձայն՝ ԳՖԿ-ի և ֆինանսական կազմակերպությունների միջև կնքվել են համագործակցության պայմանագրեր, որոնցով իրականացվում են սուբսիդավորման ծրագրերը: Համագործակցող բանկերը տրամադրում են ծրագրի պայմաններին համապատասխան վարկեր, այնուհետև, համաձայն հաստատված ձևաչափերի, ներկայացվում են ԳՖԿ-ին սուբսիդավորման նպատակով: Վարկառուի կողմից կատարված յուրաքանչյուր վճարումից հետո բանկի կողմից ԳՖԿ-ին է ներկայացվում ֆինանսավորման հայտ, որից հետո սուբսիդավորված տոկոսակետին համարժեք գումարը ԳՖԿ-ի կողմից փոխանցվում է վարկառուի անձնական հաշվեհամարին: ԳՖԿ-ի կողմից կատարվում են վարկերի նպատակայնության մշտադիտարկումներ: ԳՖԿ-ն վերը նշված ծրագրի շրջանակներում համագործակցում է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի հետ: Բանկերի կողմից վարկերի տրամադրման պայմաններն են<sup>5</sup>

1. Նպատակը՝ գյուղատնտեսություն,
2. Վարկի գումարը՝ մինչև 3 մլն ՀՀ դրամ,
3. Վարկի արժույթը՝ ՀՀ դրամ,
4. Վարկի ժամկետը՝ 2 տարի,
5. Վարկի տոկոսադրույքը՝ առավելագույնը տարեկան 14%,
6. Մայր գումարի և տոկոսադրույքի արտոնյալ ժամանակահատվածը՝ առնվազն 6 ամիս,
7. Տարածքը՝ ՀՀ ողջ տարածքով:

Ներկայացնենք առևտրային բանկերի վարկային ներդրումների կազմը և կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի (աղյուսակ 2, 3):

---

<sup>5</sup> www.minagro.am

Աղյուսակ 2

Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ տնտեսության  
 ճյուղերի 2012-2017թթ. (տարվա վերջի դրությամբ)<sup>6</sup>

մլն. դրամ

Տնտեսության ճյուղերը	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Արդյունաբերություն	373535	364971	429094	375117	419999	426164
Գյուղատնտեսություն	91890	103222	127598	137691	136345	131497
Շինարարություն	100093	109408	124194	106577	102813	143778
Տրանսպորտ և կապ	39647	45431	44295	70555	74233	68645
Առևտուր	320981	352324	386268	345486	335818	419602
Սպառողական վարկեր	295486	365592	451520	423078	434223	217400
Հիպոթեքային վարկեր	127384	143197	172432	178967	183689	209054
Այլ վարկեր	167026	200098	274801	139497	167676	246081
Ընդամենը	1516042	1684243	2010202	1776968	1854796	1862221

Աղյուսակ 3

Առևտրային բանկերի վարկային ներդրումների կառուցվածքն ըստ  
 տնտեսության ճյուղերի 2012-2017թթ.<sup>7</sup>


%

Տնտեսության ճյուղերը	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Արդյունաբերություն	24,6	21,7	21,3	21,1	22,6	22,9
Գյուղատնտեսություն	6,1	6,1	6,3	7,7	7,4	7,1
Շինարարություն	6,6	6,5	6,2	6,0	5,5	7,7
Տրանսպորտ և կապ	2,6	2,7	2,2	4,0	4,0	3,7
Առևտուր	21,2	20,9	19,2	19,4	18,1	22,5
Սպառողական վարկեր	19,5	21,7	22,5	23,8	23,4	11,7
Հիպոթեքային վարկեր	8,4	8,5	8,6	10,1	9,9	11,2
Այլ վարկեր	11,0	11,9	13,7	7,9	9,1	13,2
Ընդամենը	100	100	100	100	100	100

Աղյուսակներից երևում է, որ 2017թ.-ին 2012թ.-ի համեմատ գյուղատնտեսությանը տրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերի մեջ ավելացել է 1%-ային կետով (2012թ.՝ 6,1%, 2017թ.՝ 7,1%), իսկ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2015թ.-ին՝ կազմելով ընդհանուր վարկային պորտֆելի 7,7%-ը:

<sup>6</sup> ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2012-2017թթ., վիճակագրական ժողովածու, Երևան 2018, էջ 50-52:

<sup>7</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:



**Գծապատկեր 2. Առևտրային բանկերի վարկային ներդրումների կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի 2012-2017թթ.**

Նշենք, որ մինչև 2011-2015թթ. բանկային համակարգի գյուղատնտեսական վարկերի ընդհանուր վարկային պորտֆելում «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի մասնաբաժինը կազմել է ավելի քան 96%<sup>8</sup>, իսկ 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, ըստ Արմինֆո գործակալության, այդ մասնաբաժինը նվազել է և դարձել 52%<sup>9</sup>, ինչը վկայում է այն մասին, որ ընդլայնվել է գյուղատնտեսական վարկավորում իրականացնող բանկերի և ֆինանսական այլ կառույցների թիվը:

Ուսումնասիրությունների ընթացքում հանգել ենք այն եզրակացության, որ ՀՀ մի շարք ֆինանսատնտեսական գործընթացների զարգացման բազմաշերտ և լուծման անհրաժեշտություն պահանջող հիմնախնդիրների լուծման համար պետք է ստեղծել բարենպաստ պայմաններ, որոնք մասնավոր կապիտալը, ֆինանսական շուկայի ու շուկայական մեխանիզմների միջոցով, կողողեն դեպի գյուղատնտեսության ֆինանսավորումը՝ ապահովելով ոլորտի զարգացման համար վարկավորման ծավալների աճ և, մինևույն ժամանակ, ձևավորել փոխադարձ շահավետ պայմաններ ինչպես ֆինանսական կազմակերպությունների, այնպես էլ գյուղացիական տնտեսությունների համար: Չնայած վերջին տարիներին մշակվել և իրագործվում են տարբեր բնույթի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, սակայն դեռևս չի ակնկալվում հանրապետության ագրարային

<sup>8</sup> <http://www.raed.am/images/Scan0135.jpg>  
<sup>9</sup> [http://finport.am/full\\_news.php?id=30371&lang=1](http://finport.am/full_news.php?id=30371&lang=1)

ուղորտի կայունության ապահովում, որը պետք է դրսևորվի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտել ենք, որ ՀՀ մարզերում և տարածաշրջաններում նախընտրելի արտադրական ուղղություններով գյուղատնտեսական և գյուղատնտեսական հումքի վերամշակման տնտեսվարող սուբյեկտների կարողությունների ուժեղացման և նոր սուբյեկտների ձևավորման նպատակով պետական աջակցության կարևոր գործոն է նպատակային վարկավորումը: Ցանկացած երկիր, այդ թվում նաև Հայաստանը գյուղատնտեսական արտադրության հետագա ընդլայնմանն ուղղված արտադրական հիմնական և շրջանառու միջոցների ավելացումը պետք է իրականացնի ոչ միայն ի հաշիվ սեփական կապիտալի, այլ նաև լրացուցիչ նյութական և դրամական ներդրումների միջոցով, որոնք կարող են դրսևորվել ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ առումներով: Այդ ներդրումները պետք է օգտագործվեն գյուղատնտեսական կազմակերպության հնացած ու մաշված սարքավորումների փոխարինման, նոր տեխնոլոգիաների ներդրման և ժամանակակից տեխնիկայի ու սարքավորումների հագեցվածության, գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ընդլայնման և նոր տեսակի արտադրությունների զարգացման նպատակով:

ՀՀ ագրարային ոլորտի զարգացման համար ՀՀ կառավարության հսկողության ներքո ՀՀ ագրարային ոլորտի առանձնահատկությունների և գյուղատնտեսության վարկավորման հայրենական ու միջազգային փորձի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա անհրաժեշտ է կիրառել վարկերի մատչելիությանն ու վարկային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված վարկավորման տարբեր մեխանիզմներ և տեխնոլոգիաներ, որոնք նաև կնպաստեն գյուղատնտեսական վարկերի վերադարձմանը, ճյուղում վարկային ռիսկի մեղմմանը, գյուղատնտեսության ապահովագրության ներդրմանը և դրա հետագա զարգացմանը: Առաջարկվում է ներգրավել օտարերկրյա ուղղակի ներդրումներ և նպաստել լիզինգի զարգացմանը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա իրականացնել ծառայությունների մատուցման խրախուսում և պետության աջակցությամբ առկա բարձրորակ կադրային ներուժի արդյունավետ օգտագործում՝ աշխատուժի արտահոսքը կանխելու համար:

## ՎԱՐԿՎՎՈՐՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԲԱՐԵԼԱԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

**ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ, տ.գ.թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հնդվածում ներկայացվել է ՀՀ ագրարային հատվածի վարկավորման համակարգի զարգացման հիմնական ուղղությունները: Սահմանվել են բանկերի և ֆինանսական այլ կառույցների հետ գյուղատնտեսական կազմակերպությունների վարկային հարաբերությունների առանձնահատկությունները, նկարագրվել են ագրարային ոլորտի վարկավորման ժամանակ առաջացող համընդհանուր խնդիրները: Ներկայացվել են ոլորտի վիճակի վերլուծության, ինչպես նաև տնտեսության առանձին ճյուղերի վարկավորման ընդհանուր ծավալների վիճակագրական տվյալները: Վերլուծվել են ագրարային ոլորտի վարկավորման համակարգի բարելավման և արդիականացման ուղղությունները, գյուղատնտեսական ապրանք արտադրողների ներկայիս վարկային մեխանիզմները, կատարվել են եզրակացություններ և առաջարկվել են ռացիոնալ լուծումներ:

***Բանալի բառեր.** վարկավորում, սուբսիդիաներ, ֆինանսավորում, ագրարային ոլորտ, տոկոսադրույքներ, արդյունավետություն, բանկեր, գյուղատնտեսական ապրանքարտադրող:*

## РОЛЬ КРЕДИТОВАНИЯ В РАЗВИТИИ АГРАРНОГО СЕКТОРА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ПУТИ ЕЕ УЛУЧШЕНИЯ

**МЕРИ ГАГИКОВНА МАНУЧАРЯН, к.э.н.**

*старший научный сотрудник  
Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье рассмотрены основные направления развития системы кредитования аграрного сектора Республики Армения. Определены особенности кредитных взаимоотношений аграрных предприятий с банками и финансовыми структурами, описаны распространенные проблемы, возникающие при кредитовании аграрного сектора. Также приведены статистические данные для анализа состояния отрасли, а также общие объемы кредитования по отраслям. В статье предоставлены направления усовершенствования и

модернизации системы банковского кредитования аграрного сектора, приведена оценка современным действующим механизмам кредитования сельскохозяйственных товаропроизводителей, изложены выводы по данной проблеме и предложены рациональные пути решения.

**Ключевые слова:** *кредитование, субсидии, финансирование, аграрный сектор, процентные ставки, эффективность, банки, сельскохозяйственный товаропроизводитель*

## THE IMPORTANCE OF LENDING IN ENSURING THE GROWTH OF AGRICULTURE AND APPROACHES TO IMPROVING THE ACCESS TO LOANS

**MERI GAGIKI MANUCHARYAN**, *Ph.D. in Economics*  
*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article provides the main directions for developing the lending system focused on the agriculture industry of the Republic of Armenia. The features of credit relations between agricultural entities and commercial banks and/or other financial institutions have been defined, and common issues faced while lending to agriculture has been discussed. The article provides statistical data on general lending per each sector, and the analysis of the state of the development of the sector. It also provides statistical data for analyzing the state of the sphere, as well as general volumes of lending by industry. The directions of improving bank lending system and the modernization of thereof, and the current lending mechanisms available for agricultural goods' producers have been analyzed, respective conclusions have been made and rational solutions to these issues have been proposed.

**Keywords:** *lending, subsidies, financing, the agriculture, interest rates, efficacy, banks, producers of agricultural goods*

## **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԳԾՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ**

ՀՀ-ում ագրարային ոլորտի ֆինանսավորումն իրականացվում է ինչպես պետական բյուջեի միջոցների, այնպես էլ մասնավոր հատվածի կապիտալի հաշվին: Բյուջեից ֆինանսավորվող միջոցները հիմնականում ուղղված են այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են, մասնավորապես, բույսերի պաշտպանություն, կենդանիների պատվաստում, հողատեսքերի պահպանություն և բարելավում, անտառպահպանական աշխատանքների իրականացում և այլն, որոնք ըստ էության, ավելի շատ իրավիճակի պահպանման խնդիրներ են լուծում և ոչ թե զարգացման<sup>1</sup>: Բանկերը տրամադրում են գյուղատնտեսական վարկեր բոլոր այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք զբաղվում են կամ նախատեսում են զբաղվել գյուղատնտեսական արտադրությամբ կամ գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ: Մտանդարտ գյուղատնտեսական վարկերը տրամադրվում են գյուղատնտեսության ոլորտում, ինչպես երկարաժամկետ ներդրումներ կատարելու նպատակով (այգիների հիմնում, ջերմատների և անասնագուների կառուցում, հողատարածքների ձեռքբերում, գյուղտեխնիկայի գնում և այլն), այնպես էլ կարճաժամկետ ներդրումների համար, ինչպիսիք են անասնակերի, սերմացուի, պարարտանյութերի գնումը, անասնազվաքանակի ավելացումը, արտադրական տարածքների, անասնագուների, սառնարանների վերանորոգումը և այլն<sup>2</sup>:

Գյուղատնտեսական վարկի, ինչպես նաև վարկի ցանկացած այլ տարատեսակների հետ, սերտորեն կապված է «վարկային ռիսկ» հասկացությունը: Վարկային ռիսկը բոլոր երկրների բանկերում առկա խնդիրների հիմնական աղբյուրն է, ուստի բանկերի համար կարևոր է հստակ պատկերացնել վարկային ռիսկը ճանաչելու, չափորոշելու, հսկելու և կառավարելու անհրաժեշտությունը: Անհրաժեշտ է, որ բանկերը կառավարեն ամբողջ պորտֆելի վարկային ռիսկը՝ առանձին վարկերի կամ գործառնությունների գծով առկա ռիսկերի հետ միաժամանակ: Փոխառու-

<sup>1</sup> Արտակ Ենգոյան, Սուբսիդավորման և ֆինանսավորման մեխանիզմները գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական ապրանքների արտահանման խթանումը, Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան, 54 էջ, 11:

<sup>2</sup> <https://www.acba.am/hy/farmers/legal-entity-farmers/Standard-agricultural-loans-legal>



թյունների ռիսկայնությունն առկա է տարաբնույթ ֆինանսական գործառնությունների դեպքում և չի սահմանափակվում միայն վարկերով: Վարկային ռիսկի կառավարումը ռիսկի կառավարման համակողմանի մոտեցման կարևորագույն բաղադրիչներից է և էական նշանակություն ունի ցանկացած բանկի երկարաժամկետ հաջողության համար<sup>3</sup>:

Գոյություն ունեն վարկային ռիսկի կառավարման մի շարք գործիքներ, որոնցից մեկը հանդիսանում է վարկերի ապահովագրությունը, քանի որ, ֆինանսական համակարգում հաճախ են հանդիպում վարկի չվճարման դեպքեր: Վարկերի ապահովագրությանն է դասվում շարժական և անշարժ գույքի ապահովագրությունը, որը պատկանում է հաճախորդին և հանդիսանում է վարկի գրավի առարկա, ինչպես նաև հաճախորդի առողջության և կյանքի ապահովագրությունը: Շատ երկրներում վարկի ձևակերպման նախապայման է հանդիսանում ապահովագրությունը: Վարկավորման հիմնական սկզբունքները ենթադրում են վարկի գումարի պարտադիր վերադարձ, իսկ գրավը երաշխավորում է վարկի մարումը ժամանակին: Ապահովագրությունը բանկի համար լրացուցիչ երաշխիք է հանդիսանում, այսինքն՝ երաշխավորում է, որ հաճախորդը կկարողանա կատարել վարկային պայմանագրով սահմանված իր պարտականությունները:

Վարկի ապահովագրությունն իրենից ներկայացնում է ապահովագրության մի շարք տարատեսակների համախումբ, որի էությունը կայանում է նրանում, որ ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության պայմանագրով նախատեսված դեպքերի ի հայտ գալու պարագայում կատարել հատուցում՝ վարկառուի կողմից վարկը չմարելու իր պարտավորությունների հետ կապված:

Վարկերի ապահովագրության դեպքում ապահովադիրներ կարող են հանդիսանալ ինչպես բանկերը, այնպես էլ վարկառուները: Հաճախ բանկերը վարկը տրամադրելու համար «պարտադրում են» իրենց հաճախորդներին կնքել ապահովագրության պայմանագիր, որպեսզի վարկը տրամադրվի: Ապահովագրավճարները վճարում է ոչ թե բանկը, այլ հենց հաճախորդը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Որպեսզի բանկերը «թաքցնեն» ապահովագրության փաստը, ապահովագրական ծառայությունների արժեքը ներառում են սպասարկման արժեքի մեջ և հետո այդ գումարների մի մասը փոխանցում են ապահովագրական ընկերու-

---

<sup>3</sup>«Բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույցին» հավանություն տալու մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդ, արձանագրային որոշում, 25 դեկտեմբերի 2001թվականի, թիվ 30, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=15416>

թյանը: Այսպես՝ առաջանում է հաճախորդին հասանելի վարկեր «առանց լրացուցիչ ապահովագրության»<sup>4</sup>:

Վարկային ռիսկը ֆինանսական համակարգի տարբեր մասնակիցների պարագայում դրսևորվում է տարբեր ձևերով: Ապահովագրողների համար վարկային ռիսկի աղբյուր կարող են հանդիսանալ.

1. Ներդրումային պորտֆելի ռիսկը. ընդհանուր առմամբ. ապահովագրողների համար սա ամենամեծ և տարածված վարկային ռիսկի տեսակն է: Ներդրումային պորտֆելի դեպքում ռիսկն իրենից ներկայացնում է վարկանիշի իջեցման, բաժնետոմս թողարկողի սնանկացման, վարկի արագության փոփոխության, մակրոտնտեսական պարբերաշրջանների կամ պայմանների և այլ գործոնների արդյունքում ներդրումների արժեքի կորստի հավանականություն:
2. Կոնտրազենտի ռիսկը. սա յուրահատուկ ռիսկ է ապահովագրողների համար, որն իրենից ներկայացնում է, շուկայի փոփոխություններով պայմանավորված, կոնտրազենտի կողմից իր պարտականությունները չկատարելու վտանգ:
3. Վերաապահովագրական կոնտրազենտի ռիսկը. երբ ապահովագրական ընկերությունը փոխանցում է ռիսկերը վերաապահովագրողին այն պարունակում է ռիսկ, այն է, որ վերաապահովագրական ընկերությունը կսնանկանա և չի կարողանա կատարել իր պարտավորությունները: Նման դեպքերի համար ապահովագրական ընկերությունը կարիք ունի ձևավորելու համապատասխան պահուստներ:
4. Երկրի ռիսկը կամ տրանսֆերային ռիսկը. երկրի ռիսկը հիմնականում առաջանում է մեկ այլ երկրում սոցիալ-տնտեսական տագնապներից կամ քաղաքական անկայությունից: Տրանսֆերային ռիսկը արդյունք է հիմնականում արտասահմանյան փոխանցումների պակասի կամ սահմանափակ լինելու, որոնք անհրաժեշտ են պարտավորությունները կատարելու համար<sup>5</sup>:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների, 2018թ. սեպտեմբերի վերջի դրությամբ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրվել է 2.666.441 մլն. ՀՀ դրամ վարկ, որից 143.153 մլն. ՀՀ դրամը բաժին է ընկել գյուղատնտեսության ոլորտին<sup>6</sup>: Այսինքն, գյուղատնտեսական վարկերը կազմել են տրամադրված ընդհանուր վարկերի 5.4%-ը: Ըստ Արմինֆո

<sup>4</sup> <http://www.incred.ru/pub/strahovanie-kredit/51895/>

<sup>5</sup> Credit risk management, Why it matters and how insurers can enhance their capability, 2017, 9p., p. 3, [https://www.ey.com/Publication/vwLUAssets/EY-credit-risk-management/\\$FILE/EY-credit-risk-management.pdf](https://www.ey.com/Publication/vwLUAssets/EY-credit-risk-management/$FILE/EY-credit-risk-management.pdf)

<sup>6</sup> <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

գործակալության՝ Հայաստանի բանկերի ֆինանսական վարկանիշների, 2017թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղատնտեսական վարկերի ծավալով ավանդաբար առջևում է ԱԿԲԱ-Կրեդիտ-Ագրիկոլ բանկը, որի վարկային պորտֆելում այդ ոլորտի վարկերը կազմել են ավելի քան 37%: Բանկային համակարգի գյուղատնտեսական վարկերի ընդհանուր վարկային պորտֆելում «ԱԿԲԱ-Կրեդիտ-Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի մասնաբաժինը կազմել է ավելի քան 52%<sup>7</sup>:

Ինչպես հայտնի է, ՀՀ-ում գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքները ֆինանսավորվում են պետական ծրագրի շրջանակներում, որի նպատակն է հանրապետության ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել տնտեսվարողների կարողությունների ընդլայնմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը: Ֆերմերների սուբսիդավորման պետական ծրագիրը հաստատվել է 2011թ. ապրիլի 1-ին: Ֆինանսավորումը տեղի է ունեցել 14% տոկոսադրույքով, որի 4%-ը սուբսիդավորում է պետությունը, իսկ սահմանամերձ գյուղերում այն կազմում է 6%՝ 6 ամիս արտոնյալ ժամանակահատվածով: Վարկավորման միջին չափը կազմել է 625 հազար դրամ: 2015թ. կառավարությունը որոշեց բարձրացնել սուբսիդավորումը 3 մլն. դրամով և 2 տարի ժամկետով: Սուբսիդիաների չափը կազմել է 6%, ինչի հաշվին գյուղացիները կարող են գյուղատնտեսական վարկեր վերցնել 8% տարեկան տոկոսադրույքով<sup>8</sup>: Աղյուսակ 1-ում ներկայացրել ենք ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման» ծրագրի վերաբերյալ ամփոփ տվյալները:

Պետք է նշել, որ ծրագրի իրականացման արդյունքում աճել են և՛ տրամադրվող վարկերի ծավալները, և՛ վարկառուների թիվը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսությունը, հատկապես բուսաբուծության ճյուղը, գործունեություն է բաց երկնքի տակ՝ աճել է նաև այն վարկառուների թիվը, որոնք տարատեսակ ռիսկերի ի հայտ գալու արդյունքում չեն կարողացել մարել իրենց վարկի գումարները՝ սահմանված տոկոսագումարների հետ միասին:

<sup>7</sup> [http://finport.am/full\\_news.php?id=30371&lang=1](http://finport.am/full_news.php?id=30371&lang=1)

<sup>8</sup> [http://finport.am/full\\_news.php?id=30371&lang=1](http://finport.am/full_news.php?id=30371&lang=1)

**«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի  
տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի վերաբերյալ ամփոփ  
տվյալներ (14.09.2017-30.09.2018թ.)<sup>9</sup>**

Ֆինանսական կառույց	Տրամադրված վարկերի ընդհանուր գումար (ՀՀ դրամ)	Վարկերի տոկոսա- դրույքի սուբսիդավոր- ման գումար (ՀՀ դրամ)
1. «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ	13 331 730 000	235 951 196
2. «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ	2 518 600 000	67 761 031
3. «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ՓԲԸ	2 763 890 000	91 171 048
4. «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ	1 085 900 000	27 65 498
5. «ՀԶ և ՆԿ» ՈՒՎԿ ՓԲԸ	65 025 000	797 717
6. «Կոնվերս բանկ» ՓԲԸ	125 500 000	978 620
Ընդամենը	19 890 645 000	424 225 109

Վարկառուի կողմից իր պարտականությունները ժամանակին չկատարելու դեպքում կիրառվում են տույժեր: Բանկերի կողմից կիրառվող տույժերն են.

1. Վարկառուի կողմից պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում բանկը կարող է պահանջել վարկի գումարի և հասանելիք տոկոսների վաղաժամկետ մարում:
2. Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում պարտավորությունների մարումը կարող է իրականացվել վարկառուի այլ գույքի հաշվին:
3. Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տուժանք 0.2%-ի չափով:
4. Տուժանքի հաշվարկման պահից սկսած, այն գումարի վրա, որի նկատմամբ հաշվարկվում է տուժանք, պայմանագրով սահմանված տոկոսների հաշվարկը դադարում է:
5. Բանկի կողմից կարող է վարկատուի գրավադրված գույքը վարկառուի կողմից վարկի մարումներն ուշացնելու կամ վարկը չմարելու պատճառով առգրավվել դատական կամ արտադատական կարգով:

<sup>9</sup>Աղյուսակը տրամադրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից:

6. Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարի մաքումները ժամկետին չվճարելու դեպքում հաճախորդի մասին տեղեկատվությունը կարող է գրանցվել վարկային ռեգիստրում, որը հետագայում խոչընդոտ կհանդիսանա նոր վարկ վերցնելու համար:

Ռոպեսգի վարկառուն տարատեսակ ռիսկերի ի հայտ գալու արդյունքում չհայտնվի անելանելի վիճակում, շատ երկրներում վարկային գործարքների անբաժանելի մաս է հանդիսանում ապահովագրությունը:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն վարկերի ապահովագրությունը հանդիսանում է ոչ կյանքի ապահովագրության 14-րդ դասը: Ընդ որում, նշված օրենքում վարկի ապահովագրության մեջ ներառվում է՝

- ա) անվճարունակություն (ընդհանուր),
- բ) արտահանման վարկ,
- գ) տարածամկետ վճարման պարտավորություն (ապառիկ),
- դ) հիփոթեկային վարկ,
- ե) գյուղատնտեսական վարկ,
- զ) այլ վարկի ապահովագրություն:<sup>10</sup>

Արմինֆո տեղեկատվական գործակալության կողմից մշտապես հրապարակվում է ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեության հիմնական ցուցանիշները: Աղյուսակ 2-ում ներկայացրել ենք 2017թ. դրությամբ վարկային ռիսկերի ապահովագրության գծով ապահովագրական ցուցանիշները:

*Աղյուսակ 2*

**ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեության հիմնական ցուցանիշները (հազ. դրամ)<sup>11</sup>**

Ընկերություն	Ապահովագրավճար	Ապահովագրական հատուցում	Վերաապահովագրական հատուցում
1. Ինգո Արմենիա	9 641 417.1	4 069 838.1	2 300 142.9
2.Նաիրի Ինշուրանս	6 224 248.0	3 079 103.8	337 639.2
3.Արմենիա Ինշուրանս	2 068 563.0	1 055 834.0	162 871.0
4.Ռեստ	3 596 111.0	1 966 728.8	343 676.0
5.Ռոսգոսստրախ Արմենիա	9 437 949.7	5 305 169.0	1 122 621.4
6.Սիլ Ինշուրանս	3 980 249.0	2 289 973.0	242 897.0
Ընդամենը	34 948 537.8	17 762 648.7	4 709 847.5

<sup>10</sup> «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, 2007թ., հոդված 7, կետ 2:

<sup>11</sup> ARMINFO, InformationCompany, РЕНКИНГ СТРАХОВЫХ КОМПАНИЙ АРМЕНИИ НА 31.12.2017, N "52" 06.02.2017, 45с., с.39.

Աղյուսակից երևում է, որ ՀՀ ապահովագրական շուկայում 2017թ. գանձված ապահովագրավճարների և կատարված հատուցումների ծավալով առաջատար է «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ն, համապատասխանաբար 9437949.7 հազ. դրամ և 5305169.0 հազ.դրամ, իսկ վերաապահովագրության փոխանցված ապահովագրավճարների ծավալով առաջատար է «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն՝ 2 300 142.9 հազ. դրամ: Նշված ցուցանիշներով վերջին տեղում է գտնվում «Արմենիա Ինշուրանս» ՍՊԸ-ն:

Հաշվի առնելով «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲ-ի առաջատար դիրքը շուկայում՝ որոշեցինք փոքրիկ հարցում անցկացնել ընկերության համապատասխան մասնագետի հետ: Հարցման նպատակն էր պարզել, թե բանկերի հետ ապահովագրության որ դասի կամ ենթադասերի գծով են կնքել ապահովագրության պայմանագրեր: Հարցման արդյունքում պարզ է դարձել, որ ընկերությունը ապահովագրում է հիմնականում գրավադրված շենք-շինությունները, տրանսպորտային միջոցները, ինչպես նաև վարկառուի կյանքը՝ դժբախտ պատահարներից:

Գործակալության կողմից վարկի ապահովագրության ենթադասերն առանձնացված չեն, այդ իսկ պատճառով հնարավոր չէ պարզել՝ ապահովագրական ցուցանիշները, որ ենթադասի գծով որքան են կազմել:

Գյուղատնտեսության ոլորտի վարկավորման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների եկամուտների կայունացման նպատակով առաջարկում ենք գյուղատնտեսական վարկերի տրամադրման պարտադիր նախապայման դարձնել գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրի կնքումը: Ըստ այդ պայմանագրի պետք է ապահովագրվեն այն գյուղատնտեսական մշակաբույսերը կամ կենդանիները, որոնց մշակման կամ բուծման համար ձևակերպվել է վարկը: Ընդ որում, այս պարագայում կարելի է կիրառել գյուղատնտեսության ապահովագրության ինչպես ավանդական (անվանական ռիսկից և բազմակի ռիսկերից ապահովագրություն), այնպես էլ ինովացիոն պրոդուկտները (ինդեքս ապահովագրություն): Կարծում ենք գյուղատնտեսության ապահովագրության ապահովագրավճարների գծով պետական սուբսիդիաների տրամադրումը կապահովի ավելի բարձր արդյունավետություն, քան գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը, քանի որ այս դեպքում տրամադրվում է նաև «երաշխիք», որ անկանխատեսելի իրադարձությունների տեղի ունենալու դեպքում վարկառու-ֆերմերը կստանա հատուցում ապահովագրական ընկերությունից և կկարողանա կատարել վարկային պայմանագրով սահմանված իր պարտավորությունները:

## ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԳԾՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՎԱՌՎԱՐՈՒՄՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

**ԳՈՐԱՐ ՎԱԶԳԵՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Յամառոտագիր:** Հոդվածում ներկայացվել է վարկային ռիսկի և վարկերի ապահովագրության էությունը, գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման պետական ծրագրի հիմնական ցուցանիշները ՀՀ-ում: Վարկային ռիսկը բանկերին և վարկային կազմակերպություններին սպառնացող հիմնական ռիսկերից է, որն, ամենաընդհանուր ձևով, իրենից ներկայացնում է վարկառուի կողմից վարկային պայմանագրով սահմանված իր պարտավորությունները չկատարելու վտանգը կամ հավանականությունը: Վարկային ռիսկն ավելի ցայտուն դրսևորվում է գյուղատնտեսական վարկերի դեպքում: Այս հանգամանքը բացատրվում է հիմնականում նրանով, որ գյուղատնտեսությունը, և հատկապես բուսաբուծության ճյուղը, գործունեություն է բաց երկնքի տակ և ենթարկվում է բազմաթիվ բնակլիմայական ռիսկերի ազդեցությանը: Վարկային ռիսկի կառավարման նպատակով կիրառվում են ռիսկի կառավարման տարբեր գործիքներ, որոնցից է ապահովագրությունը: Այս հարցերն ուսումնասիրելուց հետո տրվել են համապատասխան եզրահանգումներ և արվել առաջարկություններ:

***Բանալի բառեր.** վարկային ռիսկ, բանկ, ապահովագրական ընկերություն, սուբսիդավորում, ապահովագրություն, ապահովագրական ցուցանիշներ, հատուցում, պայմանագիր:*

## УПРАВЛЕНИЕ КРЕДИТНЫМИ РИСКАМИ ЧЕРЕЗ СТРАХОВАНИЕ В СФЕРЕ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ КРЕДИТОВ

**ԳՕՐ ՎԱԶԳԵՆՈՎՆԱ ՎՕՏԿԱՅՆԱ**, *կ. Յ.Ո.*

*младший научный сотрудник*

*Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье представлена суть кредитного риска, кредитного страхования, основные показатели государственной программы субсидирования процентных ставок по сельскохозяйственным кредитам в Армении. Кредитный риск является одним из основных рисков для банков и кредитных организаций, который, в самой универсальной форме, представляет собой риск и вероятность невыполнения заемщиком своих обязательств по кредит-

ному соглашению. Кредитный риск более заметен в случае сельскохозяйственных кредитов. Это обстоятельство объясняется главным образом тем, что сельское хозяйство, и особенно растениеводство, деятельность под открытым небом и подвергается многочисленным климатическим рискам. Различные инструменты используются для управления кредитным риском, одно из которых – страхование. После изучения этих вопросов были сделаны соответствующие выводы и даны рекомендации.

*Ключевые слова:* Кредитный риск, банк, страховая компания, субсидии, страхование, страховые индексы, возмещение, контракт.

## **LOAN RISK MANAGEMENT FOR LENDING TO AGRICULTURE THROUGH INSURANCE**

**GOHAR VAZGEN VOSKANYAN**, *Ph.D. in Economics*  
*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article provides the essence of credit risk, loan insurance, and key indicators of the state program on subsidizing agricultural loan interest rates in the Republic of Armenia. Credit risk is one of the main risks that banks and credit organizations face, and in the most general way, is a threat and probability of the failure of the borrower to fulfill his/her obligations under the loan agreement. Credit risk is mostly faced in the case of agricultural loans. This is largely explained by the fact that agriculture, and namely the crop husbandry and/or plant growing is an economic activity that takes place in the open and is subject to numerous climate risks. Various tools are utilized to manage credit risks, and one of them is insurance. Upon considering and discussing these issues, respective conclusions have been made and recommendations proposed.

**Keywords:** *Credit risk, bank, insurance company, subsidizing, insurance, insurance indicators, compensation, contract*



## **ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀՀ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

*«Տեխնոլոգիան դարձել է, թերևս, ժամանակակից աշխարհի փոփոխության ամենամեծ գործիքը», - գրում է գործարար Նուբար Աֆեյանը: «Այստեղ հնարավոր չէ առանց ռիսկի, բայց դրական տեխնոլոգիական առաջընթացը խոստանում է նորագույն լուծումներ ապահովել աշխարհի ամենավտանգավոր գլոբալ խնդիրների՝ ռեսուրսների անբավարարությունից մինչև գլոբալ բնապահպանական փոփոխություններ»<sup>1</sup>:*

21-րդ դարի սոցիալական, տնտեսական և բնապահպանական մարտահրավերները, ինչպես նաև կայուն զարգացման պահանջները համընկնում են առաջնային տեխնոլոգիաների ներդրման հետ, որը կարող է մեծ դեր խաղալ գլոբալ լուծումների համար: Բարձր տեխնոլոգիաները հիմնականում նոր են և առաջարկում են զարգացման տեսանկյունից հնարավորությունների լայն շրջանակ՝ շրջակա միջավայրի պահպանման, կրթության և կառավարման համար:

Պետության սոցիալ-տնտեսական զարգացման համար նոր գիտելիքների և տեխնոլոգիաների ստեղծումն ու դրանց օգտագործումը սահմանում են ազգային անվտանգության մակարդակը, ինչպես նաև երկրի տեղը և դերը համաշխարհային տնտեսության մեջ: Չարգացած երկրներում համախառն ներքին արդյունքի աճի 80-95%-ը բաժին է ընկնում է տեխնոլոգիական բնագավառում կիրառվող նոր գիտելիքներին. այս երկրներում զարգանում է նորարարական տնտեսություն: Նորարարական տնտեսության հիմնական առանձնահատկություններն են<sup>2</sup>

- Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային համակարգերի առկայություն,
- ազգային տեղեկատվական ռեսուրսների ստեղծումը ապահովող զարգացած ենթակառուցվածքի առկայություն,

<sup>1</sup> МИА «Россия сегодня» <https://ria.ru/studies/20140227/997318433.html>

<sup>2</sup> Исмаилов Т.А., Гамидов Г.С. Инновационная экономика-стратегическое направление развития России в XXI веке. //Инновации, №1, 2003 г., <http://masters.donntu.org/2010/iem/syrovaya/library/article1.htm>

- արտադրության և կառավարման բոլոր ոլորտների արագացված ավտոմատացում,
- տարբեր ֆունկցիոնալ նպատակների նորարարությունների օպերատիվ ներդրում,
- դրակյալ մասնագետների վերապատրաստում և վերապատրաստման ձևուն համակարգի առկայություն:

Բարձր տեխնոլոգիայի հիմքում ընկած է ինովացիան (նորարարությունը), որը գիտելիքի արդյունավետ կիրառման արտահայտությունն է, երբ հավելյալ տնտեսական արժեքը ստացվում է գիտելիքը նոր արտադրանքի, գործընթացների և ծառայությունների փոխակերպելու ճանապարհով: Հետևաբար, ինովացիոն գործունեության խթանումը առանձնակի կարևորություն ունեցող խնդիր է պետության համար՝ պայմանավորված գիտատեխնոլոգիական և ինովացիոն ներուժի նպատակային զարգացմամբ ու արդյունավետ օգտագործմամբ:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտի կարևորությունը տնտեսական աճի տեսանկյունից հետևյալն է.

- բարձր տեխնոլոգիաների ոլորտների ձեռնարկություններում իրականացվում է ավելի ինտենսիվ նորարարական գործունեություն, որը նպաստում է նոր շուկաների ընդլայնմանը և ստեղծմանը, ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը.
- արտադրվող արտադրանքի ծավալում ավելացված արժեքի բարձր մասնաբաժինը նպաստում է բարձր աշխատավարձ և վճարում աշխատողների աշխատանքը,
- ոլորտներում իրականացվող հետազոտության արդյունքները, խթանում են տնտեսության այլ ոլորտների արագ զարգացմանը (Science and Engineering Indicators - 1998):

Փորձը ցույց է տալիս, որ ինովացիոն ոլորտի (գիտության, տեխնոլոգիաների, գիտելիքահենք արդյունաբերության) զարգացման մակարդակը ստեղծում է կայուն տնտեսական աճի հիմք, սահմանում է հարուստ և աղքատ երկրների սահմանները: Հետևաբար, ազգային ինովացիոն համակարգերի ձևավորումը (NIS) համաշխարհային տնտեսության երկարաժամկետ աճի գլխավոր գործոնն է: Ազգային ինովացիոն համակարգը հանրային և մասնավոր կազմակերպությունների (ձեռնարկությունների) համադրություն է, առաջատար գիտահետազոտական մշակում, բարձր տեխնոլոգիական արտադրանքի մշակում և արտադրություն, ինչպես նաև կառավարման և ֆինանսավորման աղբյուրների առկայություն: NIS գործունեությունը կարգավորվում է օրենսդրական և կանոնակարգային ակտերի, կանոնակարգերի և ստանդարտների համադրությամբ: Նշենք,

որ NIS-ի հաջող գործունակության պայմանները, բացի գիտության և կրթության հասանելիությունից, կազմում են.

- մրցունակ բիզնես ոլորտը՝ խոշոր կորպորացիաների տեսքով,
- կրթության, գիտության և տեխնոլոգիայի զարգացման պետական քաղաքականության առաջնայնությունը, նորարարական աճի համար բարենպաստ ինստիտուցիոնալ պայմանների ստեղծումը,
- ինտեգրումը գլոբալ նորարարության ոլորտին:

Տեխնոլոգիապես զարգացած երկրներում կորպորացիաները տնտեսական զարգացման հիմքն են, որտեղ ստեղծագործական ինստիտուտները (ձեռնարկությունները) դերակատարում ունեն՝ արժևորելով գիտելիքները և տեղեկատվական ռեսուրսները՝ ապահովելու պետության քաղաքական, տնտեսական, գիտական և մշակութային կարիքները: Գոյություն ունի նոր արտադրության ձևավորում, որի մեջ գիտությունը դառնում է առանցքային, հաղորդելով գիտելիքին ինտենսիվ բնույթ:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ընդլայնում է տնտեսական գործունեության միջազգայնացման գործընթացը: Ներկայումս այս գործունեությունը, որը հայտնի է որպես տնտեսական գլոբալացում, ներառում է աշխարհի գրեթե բոլոր շրջանները:

Զարգացած երկրները, որոնք ստեղծում են ինովացիոն տնտեսություն, իրագործում են հետևյալ ռազմավարությունները.

- գիտատեխնիկական հետազոտությունների համար կատարված ծախսերի աճ,
- երկրում գիտատար արտադրությունների տեղաբաշխում, տեղական և օտարերկրյա ֆիրմաների խրախուսում,
- ազգային տեխնոպարկերի ստեղծում,
- վարչական և հարկային խթանների օգտագործում:

Տեխնոլոգիական առաջընթացի և գլոբալացման շնորհիվ անհրաժեշտություն է առաջանում ինովացիոն ռազմավարության պարբերաբար վերանայման, այս առումով այն դիտվում է որպես դինամիկ գործընթաց: ՀՀ-ում պետական ինովացիոն քաղաքականությունը պետք է ուղղվի հետևյալ հիմնախնդիրների լուծմանը.

- տնտեսավարող սուբյեկտների ինովացիոն ակտիվության բարձրացում,
- ազգային տնտեսության տեխնոլոգիական հիմքի կատարելագործում և վերազինում,
- ինովացիոն ձեռնարկատիրության շահերի պաշտպանություն:

Ինովացիոն գործունեության հաջողության էական բաղադրիչն է ինովացիոն միջավայրի ձևավորման պետական քաղաքականությունը,

որն իրականացվում է ինովացիոն գործունեությունը կարգավորող իրավական դաշտի՝ օրենսդրական և նորմատիվային-իրավական մեխանիզմների ստեղծման ճանապարհով: 2006 թվականի մայիսի 23-ին ընդունվեց «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում պետական ինովացիոն քաղաքականության ձևավորման և իրականացման իրավական և տնտեսական հիմքերը, ինովացիոն գործունեությանը պետական աջակցության ձևերը<sup>3</sup>:

Տարածաշրջանում գիտահետազոտական ներուժի և բարձր տեխնոլոգիաների ոլորտի առկայությունը պայմաններ է ստեղծում տնտեսության ավանդական ճյուղերի արդիականացման և բարձր տեխնոլոգիաների ոլորտի համալիրների ստեղծման, ինչպես նաև համաշխարհային շուկաներում գիտական արտադրանքի դիրքերի ընդլայնման համար: Այս ուղղության շրջանակներում յուրաքանչյուր առանձին տարածաշրջանում անհրաժեշտ է.

- ստեղծել բարենպաստ պայմաններ ձեռնարկություններում առաջատար տեխնոլոգիաների ինտենսիվ ներդրման և ստեղծել բարձր տեխնոլոգիաների արտադրություն նոր տնտեսության ճյուղերի հիման վրա, ինչպես նաև ստեղծել պայմաններ ՓՄՁ նորարարական բիզնեսի համար,
- ստեղծել տեխնոլոգիական աուդիտի համակարգված կենտրոններ, որոնք իրականացնում են գիտական և նորարարական մշակումների գնահատում և մոնիթորինգ, ինչպես նաև միջազգային ստանդարտներին համապատասխան սերտիֆիկացումը,
- աջակցել ձեռնարկությունների և կազմակերպությունների բարձր տեխնոլոգիական կլաստերների ձևավորմանը,
- աջակցել ձեռնարկություններին տարածաշրջանային և միջտարածաշրջանային ծրագրերի միջոցով բարձր տեխնոլոգիաների արտադրանքի արտադրության և առաջխաղացման կազմակերպմանը ներքին և արտաքին շուկաներում,
- ստեղծել գիտատեխնիկական բազաներ, որոնք ուղղված են զարգացնելու ինովացիոն ձեռնարկատիրությունը, ընդ որում ընդգրկելով փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք գործում են գիտատեխնոլոգիաների առևտրայինացման ոլորտում,

<sup>3</sup> «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք (2006թ. մայիսի 23-ի **ՀՕ-63-Ն**)

- զարգացնել ինտեգրացիոն գործընթացները և ստեղծել ցանցային կազմակերպություններ, որոնք կներառեն փոքր նորարարական ձեռնարկատիրական միավորումներ,
- նվազեցնել ներդրումային և ձեռնարկատիրական ռիսկերը:

Հայաստանում ինովացիոն գործունեության աջակցմանն ուղղված ռազմավարության հայեցակարգը ենթադրում է սոցիալ-տնտեսական հարակից ոլորտների, մասնավորապես, գիտության, կրթական, հարկաբյուջետային, արդյունաբերական և արտահանման խրախուսման քաղաքականությունների ինտեգրում մեկ ամբողջական համակարգում:

Տեխնոլոգիական հնարավորություններ ստեղծելու և աջակցելու համար հարկավոր է ազգային և միջազգային մակարդակներում համատեղ ջանքեր գործադրել կիրառելով նորարարության բոլոր ձևերը (տեխնոլոգիական և ոչ տեխնոլոգիական, ձեռնարկատիրական, սոցիալական, ինստիտուցիոնալ) երկրների զարգացման համար:

Տեխնոլոգիական զարգացման տեսանկյունից կարևոր է երկրում կազմակերպություններին հասանելի տեխնոլոգիայի մակարդակը տարբերակել երկրի հնարավորությունից՝ իրականացնելու նախագծային հետազոտություններ և մշակելու տեխնոլոգիաներ նորաստեղծության համար, ինչը կընդլայնի գիտելիքների սահմանները: Դա է պատճառը, որ միջազգային դասակարգումներում ինովացիան և տեխնոլոգիական պատրաստվածությունը առանձնացվում են (աղյուսակ 1):

*Աղյուսակ 1*

**Միջազգային մրցունակության ՀՀ բարձր տեխնոլոգիաների հիմնական ցուցանիշները**

	տեղը 137 երկրների շարքում 2017-2018 <sup>4</sup>	Ցուցանիշ	տեղը 140 երկրների շարքում 2015-2016 <sup>5</sup>	Ցուցանիշ
<b>Տեխնոլոգիական պատրաստվածություն</b>	77	4.1	75	3.7
Նորագույն տեխնոլոգիաների հասանելիություն	77	4.5	87	4.4
Ընկերությունների մակարդակով տեխնոլոգիաների ընկալում	77	4.3	113	4.1
Օտարերկրյա ներդրումների և տեխնոլոգիաների փոխանցում	90	4.1	79	4.3
Ինտերնետ օգտագործող անհատների թիվ (%)	62	62.0	75	46.3

<sup>4</sup> World Economic Forum, «The Global Competitiveness Report 2017-2018» p.99.

<sup>5</sup> World Economic Forum, «The Global Competitiveness Report 2015-2016» p.49.

	տեղը 137 երկրների շարքում 2017-2018 <sup>4</sup>	Ցուցա- նիշ	տեղը 140 երկրների շարքում 2015-2016 <sup>5</sup>	Ցուցա- նիշ
Լայնաշերտ ինտերնետին բաժանորդագրու- թյուններ	70	10.1	71	9.1
Միջազգային ինտերնետ թողունակություն կբ/վրկ (1 սպառողի հաշվով)	67	59.9	58	44.5
Շարժական լայնաշերտ կապին բաժանոր- դագրություններ (100 բնակչի հաշվով)	76	53.9	78	34.2
<b>Նորաստեղծություն</b>	70	3.3	107	3.0
Նորաստեղծության կարողություն	59	4.2	87	3.8
Գիտական հետազոտական կազմակեր- պությունների որակ	88	3.5	105	3.2
Ընկերությունների R&D ծախսեր (research and development)	71	3.2	109	2.8
Հետազոտության և զարգացման հարցում համալսարան-արդյունաբերություն համա- գործակցությունը	88	3.2	111	3.1
Կառավարության կողմից առաջատար տեխ- նոլոգիական ապրանքների գնում	80	3.2	109	2.8
Գիտնականների և ինժեներների առկայու- թյուն	48	4.3	59	4.1
ԱՀՊ (Արտոնագրային համագործակցության պայմանագիր) արտոնագրերի դիմումներ (մլն բնակչի հաշվով)	57	2.6	49	3.7

Գիտատեխնիկական գործունեության արդյունքների գնահատման տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ԱՀՊ արտոնագրերի դիմումների քանակը (մլն բնակչի հաշվով), որը համաձայն Գլոբալ մրցունակության ինդեքսի գրանցել է 2016թ. 2.6 ցուցանիշը, չնայած որ 2014թ. ցուցանիշը եղել է ավելի բարձր՝ 3.7:

Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում կազմում է 4%, որը համապատասխանում է զարգացած երկրների մակարդակին: ՀՀ կառավարությունը դեռ 15 տարի առաջ ՏՏ ոլորտը հայտարարել էր տնտեսության զարգացման առաջնահերթ ուղղություն, և այս տարիների ընթացքում զգալի առաջընթաց է գրանցվել: ՏՏ ոլորտի տարեկան աճը Հայաստանում կազմում է մոտ 25-30%: Մինևնույն ժամանակ, այս ոլորտում ներգրավված են շուրջ 800 ընկերություններ, և բացվել են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առաջատար միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություն-

ներ: Երևանի քաղաքային տնտեսության շատ ոլորտներ թվայնացվել և ավտոմատացվել են: Ավելին, ներդրվել են կառավարման, վերահսկման և անվտանգության համակարգեր: Ներկայումս մշակվում են ծրագրեր հանրային տրանսպորտի մենեջմենթի, ջրամատակարարման, կեղտաջրերի մաքրման ոլորտում, ջեռուցման էներգախնայող համակարգերի օգտագործման և կենցաղային աղբի կառավարման համար<sup>6</sup>: Նշենք, որ ՀՀ տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարության տվյալներով 2017 թվականին ՏՏ ոլորտում նոր ստեղծված աշխատատեղերի թիվը հասել է 15.000, իսկ ընկերություններինը՝ 570-ի: 2018թ.-ին, նախարարության հաշվարկներով, կանխատեսվում է աշխատատեղերի թվի ավելացում ևս 10%-ով, հաշվի առնելով միջազգային համագործակցության ընդլայնումը, այդ թվում, պատվերների քանակի ավելացումը և այլն: Նախարարության տվյալներով, Հայաստանի ՏՏ ոլորտը 2017 թվականին աճել է 29.6%, մինչև 76 մլրդ դրամ (\$157,4 մլն)<sup>7</sup>: Համեմատության համար նշենք, որ հարևան Վրաստանում 2015 թվականին ՏՏ ոլորտի բաժինը ՀՆԱ-ում կազմել է 4.8% (ՀՀ-ում 5%), Բելառուսի Հանրապետությունում՝ 5.2% (այս երկրում գործում են միջազգային ճանաչում ունեցող ՏՏ ընկերությունների մասնաճյուղեր), Մոլդովայում՝ 6%<sup>8</sup>: Ներկայումս բարձր տեխնոլոգիական ոլորտում առկա են հետևյալ խնդիրները՝

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի առաջնահերթ խնդիրն ինժեներական կրթությունն է, նորագույն տեխնոլոգիաների յուրացումն ու դրանց հիմքի վրա նորարարական լուծումների ձևավորումը: Հայաստանում անհրաժեշտ է ավելացնել նորարարական ընկերությունների թիվը, որոնք իրենց հետ երկիր կբերեն նոր տեխնոլոգիաներ, կյուրացնեն և կստվորեցնեն մյուսներին: Ընդ որում՝ դրանք կարող են լինել ինչպես արտասահմանյան, այնպես էլ տեղական ընկերություններ, որոնք ուղղորդված են դեպի արտահանում:
2. ՀՀ-ն լուրջ խնդիրներ ունի բարձր տեխնոլոգիաների արտադրության հետ կապված, քանի որ չենք կարողանում լաբորատորիայից արդյունավետորեն դուրս գալ արտադրություն<sup>9</sup>:
3. Հայկական ՏՏ ընկերությունները պետք է լայնորեն ներկայացված լինեն կառավարման ոլորտում, այսինքն՝ թվայնացման և կիրքեր-

<sup>6</sup> Լրատվական գործակալության <https://news.am/arm/news/459302.html>

<sup>7</sup> **ԱՐՄԻՆՖՈ** [http://finport.am/full\\_news.php?id=35132&lang=1](http://finport.am/full_news.php?id=35132&lang=1)

<sup>8</sup> «Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն <https://enlightngo.org/post/3727>

<sup>9</sup> Լրատվական գործակալության <https://news.am/arm/news/461570.html>

անվտանգության ապահովման գործընթացում, որ կարողանան յուրացնել այդ տեխնոլոգիաները և փորձարկել:

Ներկայացնենք տեխնոլոգիական զարգացման մակարդակը բնութագրող մի շարք ցուցանիշներ ըստ Համաշխարհային բանկի 2010-2016թթ. կտրվածքով:

*Աղյուսակ 2*

**ՀՀ տեխնոլոգիական ցուցանիշներն ըստ Համաշխարհային բանկի 2010-2016թթ.<sup>10</sup>**

	Արտահանում (վն. ԱՄՆ դոլար)	Բարձր տեխնոլոգիաների արտահանումը ընդհանուր արտահանման մեջ (%)	Բարձր տեխնոլոգիաների արտահանում (ԱՄՆ դոլար)	Պատենտավորման հայտեր (ռեգիլենտներ)	R&D Օախսեր (ՀՆԱ-ի մեջ %)	Գիտատեխ. հոդվածներ
2010	1041.1	0.4	3,759,946	136	0,24	494
2011	1334.3	0.4	5,737,622	121	0,27	618
2012	1380.2	0.5	7,045,295	137	0,23	550
2013	1478.7	0.6	8,886,596	125	0,22	552
2014	1547.3	0.5	8,317,916	121	0,24	559
2015	1485.3	0.7	11,067,794	113	0,25	531
2016	1791.7	1.2	21,142,634	125	-	521


Բարձր տեխնոլոգիաների մասնաբաժինը ընդհանուր արտահանման կառուցվածքում վերջին տարիներին տատանվում է 0.5-1.2% սահմաններում, սակայն բարձր տեխնոլոգիաների արտահանումը 2016թ.- ին 2015թ. համեմատ գրեթե կրկնապատկվել է: Մշակող արդյունաբերության արտահանման մեջ բարձր տեխնոլոգիաների մասնաբաժինը 2010-2016թթ, տատանվել է 2-5.9% միջակայքում: Ինչ վերաբերում է R&D ծախսերին (ՀՆԱ-ի մեջ %), որը 2017թ. կազմել է 0.27%, ՀՀ այս ցուցանիշով աշխարհում զբաղեցնում է 64 տեղը , իսկ առաջատարը այս ցուցանիշով Իսրայելն է՝ 4.40%, Ֆինլանդիան՝ 3.88% և Հվ. Կորեան 3.74%<sup>11</sup>: 2017թ, միայն SS արտահանման ծավալները զգալիորեն աճել են՝ հասնելով 338,6 միլիոն ԱՄՆ դոլարի: SS ոլորտի ընկերությունների ավելի քան 50%-ը

<sup>10</sup> Աղբյուր՝ Համաշխարհային բանկ 2017, WDI -online

<sup>11</sup> Рейтинг стран мира по уровню расходов на НИОКР. Гуманитарная энциклопедия. <https://gtmarket.ru/ratings/research-and-development-expenditure/info>



արտահանում է սեփական արտադրանքն ու ծառայությունները, սակայն արտահանման տարբեր ծավալներով. որոշ ընկերությունների համար արտահանման ծավալները քիչ տոկոս են կազմում եկամտի մեջ, մինչդեռ այլ ընկերություններ ամբողջությամբ են (100%) արտահանում իրենց արտադրանքը<sup>12</sup>:



**Գծապատկեր 1. Բարձր տեխնոլոգիաների մասնաբաժինը մշակող արդյունաբերության արտահանման մեջ**

Բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների, հատկապես SS ոլորտի, զարգացմանը նպաստող կարևոր խթաններից է նաև արդյունավետ ներդրումների մակարդակը մարդկային կապիտալում, քանի որ դրանք ամենամեծ հավելյալ արժեք ստեղծող հիմնական գործոնն են: Պետք է հաշվի առնել, որ կրթության ոլորտում ծախսերը՝ ունեն ամենամեծ ազդեցությունը ոլորտի զարգացման վրա և կրթության ծախսերի ավելացումը կբերի այս ոլորտում զգալի ավելացման՝ իր համապատասխան տնտեսական հետևանքներով:

Հետազոտության և զարգացման վրա ծախսերի և բարձրագույն կրթությամբ բնակչության քանակի ցածր մակարդակները սովորաբար վկայում են R&D ծախսերի և բարձրագույն կրթության անարդյունավետության մասին:

<sup>12</sup> Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Երևան 2017, էջ 41

ՀՀ տնտեսության հիմնական խնդիրներից մեկը հայկական արտադրանքի և ծառայությունների մրցունակության պակասն է աշխարհի զարգացած երկրների արտադրանքի համեմատ: Միայն նորարարական զարգացման ուղին կարող է ապահովել Հայաստանի տնտեսության կայուն, դինամիկ զարգացումը և համաշխարհային շուկայում տեղական ապրանքների մրցունակությունը: Այն բարձր տեխնոլոգիաների ոլորտները, ինչպիսիք են էլեկտրաէներգիան, աերո-տիեզերական, կենսաքիմիական, տեղեկատվական, ռոբոտաշինության, հեռահաղորդակցման, համակարգչային տեխնոլոգիաների, բիոտեխնոլոգիական, նանոարդյունաբերության և այլն, պետք է օգնեն ՀՀ-ին առաջընթաց ապահովել բարձր տեխնոլոգիաների ոլորտում: Երկրում հատկապես առաջընթաց է նկատվում այլընտրանքային էներգետիկայի ոլորտում՝ արևային վահանակների արտադրության հետ կապված: Ներկայումս Հայաստանը քննարկում է Չինաստանի Hanergy ընկերության հետ Հայաստանում արևային վահանակի արտադրության ներդրման հարցը, քանի որ չինացի ներդրողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել վերականգնվող էներգիայի ոլորտում՝ երկրում նման արտադրության ստեղծման համար:

Ներկայիս իրավիճակը խոսում է ՀՀ միջազգային մասնագիտացման անհրաժեշտության մասին՝ արտահանման կառուցվածքը բարելավելու նպատակով ապահովել մտավոր սեփականություն պարունակող բարձրակարգ մշակված արտադրանքի մասնաբաժնի ավելացում և մտավոր ներուժի հետագա ներդրում: Ցավոք, վերամշակված արտադրանքի օտարերկրյա մատակարարումների ավելացման ներկա հնարավորությունները սակավ են՝ էլնելով նրանց գերակշռող ցածր մրցունակությունից: Միջազգային առևտրի կենտրոնի հաշվարկներով բարձր տեխնոլոգիական ապրանքների մասնաբաժնի առումով, որոնց արտադրության մեջ օգտագործվում են ինտելեկտուալ ռեսուրսներ, ընդհանուր արտահանման մեջ Հայաստանը զիջում է զարգացած և նոր արդյունաբերված երկրներին:

Վերջին տարիներին երկրում բարձր տեխնոլոգիական ծառայությունների վաճառքի աճ է արձանագրվել: Բարձր տեխնոլոգիական ծառայությունների խմբում առավել դինամիկ են եղել համակարգչային, ծրագրային ապահովման ծառայությունները, հեռահաղորդակցության, դիզայներական, ինժեներական ծառայությունների ոլորտները: Վերոնշյալ բոլոր դրոյթները խոսում են ՀՀ նորարարության գործընթացի զարգացման դրական միտումների մասին:

Կարևոր խնդիրներից մեկն էլ այն, որ այս ոլորտի մասնագետների մեծ արտահոսք է նկատվում այլ երկրներ, խնդիրն այն է, որ ՀՀ դեռևս բարձր տեխնոլոգիաներ կիրառող երկրների խմբին չի դասվում և հետևա-

բար նման մասնագետները փորձում են իրենց մասնագիտական ունակությունները ներդնել այլ երկրներում, իսկ արդյունքում ՀՀ-ում մնում են, կարելի է ասել, ոլորտից «անտեղյակ» մասնագետներ: Այս առումով անհրաժեշտ է որպեսզի ՀՀ տնտեսությունը ավանդական տեխնոլոգիաներից որքան հնարավոր է արագ անցում կատարի ոչ ավանդականի:

## **ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԴՅ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**ՇՈՂԵՐ ՊՅՈՏՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ, տ. գ. թ.**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հայաստանի տնտեսության աճի ու զարգացման գործում մեծ դեր կարող են ունենալ բարձր տեխնոլոգիաները՝ միաժամանակ խթանելով ինովացիոն տնտեսության կայացմանը: Այսօր հայաստանյան ՏՏ ընկերությունները ունեն մեծ պոտենցիալ և կարող են առաջարկել միջազգային բարձր ստանդարտներին համապատասխանող արտադրանք ու ծառայություններ: Սակայն դեռևս կան որոշակի խնդիրներ արտաքին շուկաներ դուրս գալու և այդ ոլորտում մասնագետներ պատրաստելու հարցում: Այս տեսանկյունից կարևոր է կառավարության կողմից շարունակական աջակցման ծրագրերի իրականացումը:

***Բանալի բառեր.** բարձր տեխնոլոգիաներ, նորարարություն, հետազոտություն, աջակցություն, ցուցանիշ, մասնաբաժին, ծախսեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ:*

## **ВЫСОКИЕ ТЕХНОЛОГИИ В ИННОВАЦИОННОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ СИСТЕМЕ АРМЕНИИ**

**ШОГЕР ПЕТРОВНА ПОГОСЯН, к.э.н.**

*научный сотрудник Институт экономики*

*им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** Высокотехнологичные продукты могут играть важную роль в развитии экономики Армении, одновременно способствуя созданию инновационной экономики. Сегодня армянские ИТ-компании обладают большим потенциалом и могут предлагать продукты и услуги, соответствующие международным высоким стандартам. Однако существуют проблемы, связанные с выходом на внешние рынки и с подготовкой специалистов в этой области.

С этой точки зрения важно, чтобы правительство предоставляло непрерывные программы поддержки.

**Ключевые слова:** высокие технологии, инновация, исследования, поддержка, индикатор, доля, стоимость, информационные технологии.

## HIGH TECHNOLOGIES IN THE INNOVATION DRIVEN ECONOMIC SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

**SHOGER PYOTR POGHOSYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** High technologies can play a major role in ensuring the growth and development of the Armenian economy, while simultaneously contributing to building an innovation-driven economy. Nowadays, Armenian IT companies have a great potential and can offer world-class products and services. However, there are still some issues with regard to the access to foreign markets and educating professionals, competent and knowledgeable in this area. Hence, the role of government in designing, implementing permanent support programs is stressed.

**Key words:** *High technology, innovation, research, support, indicator, share, cost, information technology*

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

**ԲԵԼԼԱ ՎԱԼԵՐԻԻ ԳԱՐԻԵԼՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ,*  
*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸԱՅՎԱՐԴՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԻ ԾՈՒՐՁ

Մենեջմենթի հայտնի մասնագետ Փ.Դրաքերը տարբեր ազգերի պատմական հաջողությունների 80%-ը պայմանավորում է կառավարման արդյունավետությամբ, որի կարևորագույն բաղադրիչներից մեկը աշխատանքային ռեսուրսների շահադրդումն է<sup>1</sup>: Վերջինս հանդես է գալիս որպես կառավարման գործառույթ, որը մարդկանց դրդում է որոշակի գործունեության, կամ, այլ կերպ ասած, պայմանավորում է ջանքեր և եռանդի այն քանակը, որը մարդը ներդնում է կատարվող աշխատանքի մեջ: Շահադրդման հիմքում մղումն է (մոտիվը, պատճառը, նպատակը)՝ հիմնված գիտակցված և չգիտակցված պահանջմունքների, հետաքրքրությունների, ակնկալիքների արժեքների վրա, որը պայմանավորում է մարդու ներքին մղումը դեպի ակտիվություն:

Մարդու աշխատանքային վարքի կառավարումը միշտ էլ հետաքրքրել է մենեջմենթի մասնագետներին: Աշխատողի ցանկալի վարքն ապահովելու և կազմակերպության շահերին առավելագույնս ծառայեցնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել այն իրական մղումները, որոնք դրդում են աշխատողին բարելավել իր գործելակերպը: Շահադրդումը մղում է այնպիսի գործունեության, որը հնարավորություն է տալիս հասնելու կազմակերպության առջև դրված նպատակներին:

XX դարի սկզբին, երբ ձևավորվեց աշխատանքի գիտական կազմակերպման դպրոցը, և իշխում էր «տնտեսական մարդու» տեսությունը, լայն կիրառում գտավ նյութական խթանման քաղաքականությունը: Վերջինս, իր հիմքում ունենալով կատարված աշխատանքին համապատասխան վարձատրության սկզբունքը, բարձր արտադրողականություն և մեծ առաջընթաց ապահովեց կազմակերպությունների համար: Մակայն «տնտեսական մարդու» տեսությունը բացարձականացնում էր աշխա-

<sup>1</sup> О.С. Виханский, А.И. Наумов «Менеджмент», Москва, Гардарика, 1998, 133 с.

տանքի վարձատրության գործոնը և անտեսում էր մարդու աշխատանքային վարքը կարգավորող մյուս գործոնները:

XX դարի կեսերից առաջադրվում է «ամբողջական մարդու» հայեցակարգը, որը մարդուն դիտարկում է տնտեսական, բարոյական և հոգևոր պահանջմունքների կապերի մեջ: Ինչպես վկայում են ԱՄՆ-ում կատարված հետազոտությունները (Հերցբերգ)<sup>2</sup>՝ անցյալ դարի 60-ական թվականներին ամերիկացիների նյութական պահանջմունքները բավարարված էին 90%-ով, անվտանգությունը՝ 70%-ով, հարգանքի պահանջմունքը՝ 40%-ով, ինքնարտահայտման պահանջմունքը՝ 15%-ով:

Արտադրության հետագա զարգացումը և կենսամակարդակի աճը կառավարման տեսաբանների առջև դրեցին նոր խնդիրներ: Ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում, որ նյութական խթանման մեթոդը պակաս արդյունավետություն է ապահովում՝ սրելով շահադրդման խնդրի սոցիալ-հոգեբանական տեսանկյուններից քննությունը: Շահադրդման խնդրին առնչվող տարածված մոտեցման համաձայն մարդու մղումները ծագում ու ձևավորվում են պահանջմունքների ու շահերի հիմքի վրա: Ուստի այստեղ մենեջերը պետք է ստեղծի այնպիսի իրավիճակ, որի պայմաններում աշխատողների վարքը առավելագույնս կհանգեցնի կազմակերպության նպատակների իրագործմանը: Դրանում է դրսևորվում այն հայտնի ճշմարտությունը, որ պահանջմունքներն են ծառայում որպես մարդկանց գործողությունների դրդապատճառ:

Ընկերության աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն մարդկային ռեսուրսների քանակային բաղադրիչով, այլ նաև աշխատողների որակավորումների և ունակությունների՝ իրենց զբաղեցրած պաշտոններին համապատասխանությամբ: Այս առումով աշխատակազմը անհրաժեշտ է ձևավորել հետևյալ ցուցանիշներին համապատասխան<sup>2</sup>.

1. աշխատակիցների փաստացի քանակությամբ, որը ներառում է ինչպես մշտական և ժամանակավոր, այնպես էլ համատեղությամբ աշխատողներին,
2. ըստ իրականացվող գործունեության բնույթի (հիմնական, օժանդակ և ադմինիստրատիվ),
3. ըստ սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների (սեռի, տարիքի, կրոնական ուղղվածության, ազգության և այլն),
4. ըստ մարդկային ռեսուրսների որակավորման ցուցանիշների:

---

<sup>2</sup> [http://www.cfin.ru/management/people/culture/corporate\\_culture.shtml](http://www.cfin.ru/management/people/culture/corporate_culture.shtml)

Անձնակազմի կառավարման հայեցակարգը հիմնվում է կազմակերպությունում անձի և տեղերի վերաբերյալ պատկերացման վրա: Հիմնական դրույթներն են.

- ղեկավարության միասնություն,
- խստորեն սահմանված ստորակարգություն (հիերարխիա),
- կարգապահություն,
- թիմային աշխատանքի զաղափարախոսություն,
- հավասարակշռություն ղեկավարության իրավունքների ու պարտավորությունների միջև:

Անձնակազմի կառավարման հիմնական խնդիրներն են<sup>3</sup>.

1. կազմակերպության նպատակին հասնելու համար օգնության ցուցաբերում,
2. կազմակերպությանը որակավորված և շահագրգիռ աշխատակիցների ապահովում,
3. աշխատակիցների հմտությունների ու ունակությունների արդյունավետ օգտագործում,
4. շահադրդման համակարգի բարելավում,
5. կատարված աշխատանքից բավարարվածության մակարդակի բարձրացում,
6. որակավորման և մասնագիտական կրթության համակարգերի զարգացում և ներդրում,
7. բարենպաստ աշխատանքային մթնոլորտի պահպանում,
8. կարիերայի պլանավորում, որն արտահայտվում է մասնագիտական ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական առաջնադասումբ,
9. անձնակազմի ստեղծագործական ունակությունների գործածման ավելացում,
10. անձնակազմի աշխատանքի արդյունավետության գնահատման մեթոդների կատարելագործում,
11. աշխատանքային բարենպաստ պայմանների և, ընդհանուր առմամբ, բարձր կենսամակարդակի ապահովում:

Անձնակազմի արդյունավետ կառավարման 3 ամենալայն տարածում գտած խնդիրներն են կադրային ապահովումը, կադրերի արդյունավետ օգտագործումը, կադրերի մասնագիտական և սոցիալական զարգացումը:

Դիտարկենք կառավարման հիմնական տեսակները, որոնցում արտացոլվում են մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից

---

<sup>3</sup> Кибанов А.Я. Мотивация и стимулирование трудовой деятельности, Москва, 2010. с. 63.

հայեցակարգի հիմնարար սկզբունքները: Ըստ արդյունքների՝ կառավարումը կարելի է սահմանել որպես մի գործընթաց, որը միտված է հասնելու դրված նպատակներին և արդյունքներին, որտեղ.

- պլանավորման գործընթացի միջոցով սահմանվում են ժամանակի տարբեր հատվածներում կազմակերպության և դրա անդամների նպատակները (այլ կերպ ասած՝ արդյունքների նկատմամբ պահանջներն ու ակնկալվող արդյունքները),
- պլանների կայուն իրականացումը՝ աշխատանքների, մարդկանց և շրջակա միջավայրի գիտակցաբար և ամենօրյա կառավարմամբ,
- արդյունքների գնահատումը՝ հետագա միջոցառումների իրականացմանը տանող որոշումներ կայացնելու նպատակով:

Կառավարում՝ շահադրդման միջոցով: Այս մոդելը հիմնվում է աշխատակիցների կարիքների, շահերի, տրամադրությունների ու նրանց անձնական նպատակների ուսումնասիրության, ինչպես նաև արտադրական պահանջներին և նպատակներին համահունչ շահադրդման ինտեգրման հնարավորության վրա, որում կադրային քաղաքականությունը կողմնորոշված է մարդկային ռեսուրսների զարգացման, բարոյահոգեբանական մթնոլորտի ամրապնդման և սոցիալական ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Մոտիվացիոն (շահադրդման հիման վրա) կառավարումը կառավարման համակարգի կառուցումն է շահադրդման առաջնայնությունների և արդյունավետ շահադրդման մոդելի հիման վրա: Անձնակազմի կառավարման հարցերին նվիրված մասնագիտական գրականության մեջ կադրային քաղաքականության, անձնակազմի շահադրդման և դրա տիպաբանության, կոլեկտիվում փոխհարաբերությունների և մարդկային ռեսուրսների կառավարման շատ այլ հիմնահարցեր գերազանցապես մեկնաբանվում են զուտ սոցիալ-հոգեբանական տեսանկյունից՝ առանց կազմակերպության, երկրի տնտեսական իրավիճակի և այլ արտաքին գործոնների հետ ունեցած առնչությունների մեջ: Մինչդեռ, մեր կարծիքով, եթե անգամ անձնակազմի մոտ շահադրդման համակարգի ձևավորման գործընթացը զուտ սոցիալ-հոգեբանական է, միևնույն է, դրա ձևավորման վրա մեծապես ազդում են նաև տնտեսական գործոնները, հատկապես երկրի տնտեսական զարգացման իրավիճակը:

Կառավարման տեսության զարգացման ընթացքում համապատասխանաբար զարգացել են նաև շահադրդման տեսությունները, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբի<sup>4</sup>.

<sup>4</sup> www.rsue.ru/doc/FF/FEI/ku.doc




- բովանդակային,
- գործընթացային:

Շահադրդման բովանդակային տեսությունների հետևորդները ձգտում են, տարբեր մոտեցումներից ելնելով, դասակարգել մարդկանց համար ընդհանուր պահանջմունքները, բացահայտել դրանցից յուրաքանչյուրի և աշխատակիցների վարքագծի միջև գործող կապերը: Իսկ երկրորդ խմբի տեսությունները չեն ժխտում պահանջմունքները և համալրում են այն գործոնները, որոնք մղումների հոգեբանական ձևավորման ընթացքում համագործակցում են:

Մեր հիմնական նպատակն է ուսումնասիրել շահադրդումը որպես կառավարման տարր, բացահայտել նրա տնտեսական, սոցիալական և հոգեբանական ազդեցության լծակները ՀՀ պայմաններում: Դրանց են պատկանում նաև ազգային մտածելակերպի, երկրի սոցիալ-տնտեսական արդի վիճակի գործոնների ազդեցությունը շահադրդման մոդելի ձևավորման և նրա որոշակի կիրառման գործում:

Աշխատանքային շահադրդման խնդիրը ներկայումս մեծ ուշադրության է արժանանում: Կառավարման տեսությունը հարուստ է շահադրդման խնդրին առնչվող տարբեր մոտեցումներով և մեկնաբանություններով: Առավել տարածված է այն մոտեցումը, ըստ որի՝ մարդու մոտիվները ծագում ու ձևավորվում են պահանջմունքների և շահերի հիմքի վրա և նրան մղում են գործելու այս կամ այն ձևով: Ուստի հոգեբանները համարում են, որ մարդիկ տարբեր կարգի՝ ֆիզիոլոգիական, հոգեբանական ակտիվ պահանջմունքներ ունենալիս հայտնվում են անհանգիստ վիճակում և ձգտում են որոշակի նպատակներ դնել իրենց առջև: Որոշակի ջանքերի արդյունքում հաջողվում է հասնել պահանջմունքների տարբեր մակարդակների բավարարման: Այսինքն՝ նպատակը պահանջմունքների բավարարման միջոց է, իսկ պահանջմունքները՝ մարդկանց գործողությունների դրդապատճառ: Պահանջմունքը ենթադրում է ձգտման վիճակի արթնացում, իսկ դրդումը՝ որոշակի ուղղվածություն ունեցող ինչ-որ մի բանի նկատմամբ անբավարարվածության զգացում: Դա պահանջմունքի վարքաբանական դրսևորումն է և կենտրոնացված է նպատակի իրականացման վրա:

Նշված նպատակին հասնելուց հետո ստացված բավարարվածության աստիճանը ապագայում ազդում է նման իրավիճակներում մարդու վարքագծի վրա: Ընդհանուր առմամբ մարդիկ ձգտում են խուսափել չբավարարվածությունից և դրսևորել այնպիսի վարք, որը զուգորդվում է պահանջմունքի բավարարվածությամբ, որը և հայտնի է որպես արդյունքի օրենք:



**Գծապատկեր 1. Պահանջումներն էրի միջոցով վարքի շահադրդման պարզեցված մոդելը<sup>5</sup>**

Հարկ է նշել, որ բացակայում են բոլորի կողմից ընդունված նույնականացված որոշակի պահանջումները: Տարբերակվում են առաջնային և երկրորդային պահանջումները, և ընդունված է, որ առաջնային պահանջումներն ավելի էական ազդեցություն են թողնում մարդկանց վարքագծի վրա, քան երկրորդային պահանջումները:

Կազմակերպության արդյունավետ գործունեությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է գործող խթանման համակարգը հաշվի առնում կազմակերպության աշխատողների շահադրդումը: Կարելի է ասել, որ աշխատանքի խթանումը աշխատողի վարքագծի վրա ազդեցությունն է շահադրդման միջոցով:

Օրինակ՝ ՀՀ-ում գործազրկության մակարդակի աճի, աշխատատեղերի կրճատման պայմաններում փոխվում են ինչպես սեփականատերերի և ղեկավարների, այնպես էլ ենթակա անձնակազմի հոգեբանությունը, շարժառիթներն ու շահադրդման համակարգի կառուցվածքը:

Իրավիճակին համապատասխան ձևավորվում է կազմակերպության գործունեության նոր նպատակ, դրան համապատասխան կառավարման մոդել, իսկ անձնակազմի ղեկավարի մոտ՝ այդ մոդելին համապատասխան շահադրդման համակարգ: Եվ եթե տնտեսության զարգացման փուլում կազմակերպությունը հիմնականում լուծում է շահույթի մաքսիմալացման խնդիր և շահագրգռված է որակյալ կադրերի ներգրավմամբ, երկարաժամկետ զարգացման համար պատրաստ է նաև ներդրումներ կատարել մարդկային կապիտալի ձևավորման գործընթացում, ապա ճգնաժամային իրավիճակում կազմակերպությունների զգալի մասը փորձում է վնասը հասցնել նվազագույնի, ինչը բնականաբար ենթադրում

<sup>5</sup> <http://www.moluch.ru/archive/34/3850/>

է ծախսերի կրճատում, այդ թվում՝ նաև ի հաշիվ մարդկային ռեսուրսների:


Այսպիսի իրավիճակում մարդկային ռեսուրսների կառավարումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Աշխատանքի պլանավորման և կազմակերպման ժամանակ կազմակերպության ղեկավարը որոշում է, թե տվյալ իրավիճակում որոշակի ի՞նչ խնդիրներ ունի կազմակերպությունը, ի՞նչը, ինչպե՞ս և ո՞վ է դրանք լուծելու: Եթե ընդունվում են արդյունավետ որոշումներ, ղեկավարը հնարավորություն է ստանում կողողինացնելու անձնակազմի անդամների ջանքերը և իրագործելու համապատասխան հակաճգնաժամային ծրագիր:

Իրականում ղեկավարները հաճախ որոշումներ ընդունելիս ելնում են ոչ թե փաստացի իրավիճակից, այլ ընդօրինակում են այլ՝ արդյունավետ աշխատող ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան կազմակերպությունների փորձը, ենթադրելով, որ այն դրական արդյունք կապահովի նաև իրենց կազմակերպությունում: Մակայն նկատենք, որ եթե զարգացման փուլում անձնակազմի շահադրդման և կառավարման մոտեցումները տարաբնույթ կազմակերպություններում ունեն ընդհանուր շատ գծեր, ապա ճգնաժամային իրավիճակում յուրաքանչյուր կազմակերպություն յուրովի է կրում դրա ազդեցությունը, ինչն անհատական մոտեցում է պահանջում նաև անձնակազմի կառավարման համար՝ դրանում հաշվի առնելով տվյալ կազմակերպության կոնկրետ առանձնահատկությունները, հիմք ընդունելով շահադրդման հիմնական սկզբունքները: Առաջանում են անձնակազմի կառավարմանը վերաբերող մի շարք հարցեր՝ կապված յուրաքանչյուր աշխատողի մոտ ճգնաժամի հաղթահարմանն ուղղված ծրագրի, աշխատանքների որակյալ կատարման համար բարձր պատասխանատվության զգացում առաջացնելու, կազմակերպությունում ստեղծված իրավիճակը ճիշտ ընկալելու մոտեցումների, կոլեկտիվում ձևավորված փոխհարաբերությունների պահպանման, անձնակազմի մոտ ավելորդ խուճապ ու լարվածություն չառաջացնելու հետ և այլն: Խնդիր է առաջանում անձնակազմի կառավարումը իրականացնել՝ չկորցնելով կազմակերպության համար արժեքավոր մասնագետներին, եթե անգամ տվյալ իրավիճակում նրանց լրիվ ծանրաբեռնված աշխատանքի արդյունքի նկատմամբ պահանջարկ չկա:

Հարց է առաջանում, թե արդյո՞ք ճգնաժամային իրավիճակում անձնակազմի կառավարման կարևոր բաղադրիչը՝ շահադրդման գործընթացը, անհրաժեշտություն է, և եթե՝ այո՞, ապա այս պայմաններում ինչ մեթոդներով է նպատակահարմար այն իրականացնել: Առաջադրված հարցերին

պատասխանելու նպատակով ներկայացնենք անձնակազմի շահադրդման գործընթացի որոշ մեկնաբանություններ:

Ինչպես հայտնի է, շահադրդումը, որպես գործընթաց, անհատի այնպիսի վիճակի ապահովումն է, որը որոշակի իրավիճակում պայմանավորում է աշխատողի ակտիվության աստիճանը և գործողությունների ուղղորդվածությունը: Այսինքն, շահադրդման գործընթացի հիմքում դրվում է այն գաղափարը, որ շարժառիթն այն պատճառն է, որն օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջացնում ինչ-որ բան անելու: Հետագոտությունները ցույց են տալիս, որ աշխատանքի արդյունքի կախվածությունը մարդու ակտիվությունից կարելի է նկարագրել լոգիստիկ կորի միջոցով. սկզբնական շրջանում ակտիվության աճը բերում է նաև արդյունքի աճի, իսկ ակտիվության որոշակի աստիճանից սկսած՝ արդյունքը մնում է հաստատուն մակարդակի վրա կամ ունենում է խիստ նվազող ինտենսիվությամբ աճ (գծապատկեր 2):



**Գծապատկեր 2. Աշխատանքի արդյունքի կախվածությունը ակտիվությունից**

Եվս մեկ հանգամանք: Միայն ակտիվությամբ չէ, որ ապահովվում է անհրաժեշտ արդյունքը: Մարդը կարող է աշխատել բավականին ակտիվ, սակայն օգտակար արդյունք չստանալ, եթե գործողությունները ճիշտ ուղղվածություն չունենան: Հատկապես նման իրավիճակ ստեղծվում է, եթե աշխատողը չի պատկերացնում իր կատարած աշխատանքի վերջնական արդյունքը: Հետևաբար, անձնակազմի շահադրդումը օպտիմալ ձևով ուղղորդելու համար անհրաժեշտ է, որ հաշվի առնվեն նրա աշխատանքին ներկայացվող նշված երկու բաղադրիչները:

Տնտեսության ցիկլաձև զարգացման տարբեր փուլերում շահադրդման այդ երկու բաղադրիչների կարևորության աստիճանների փոխհարաբերությունները փոխվում են: Ճգնաժամային իրավիճակում առավել կարևորվում է շահադրդման երկրորդ բաղադրիչի՝ աշխատանքի ուղղորդվածության դերը, և մեծ նշանակություն են ձեռք բերում ղեկավարի կողմից աշխատանքի նպատակի և արդյունքի, ինչպես նաև ստեղծված արտաքին և ներքին պայմանների և դրանց դինամիկայի շուրջ պարբերաբար տեղեկատվության տրամադրումը, ճգնաժամի դեմ պայքարելու շահադրդման գործընթացի ապահովումը:

Կառավարման և ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել, եթե մշակված չէ շահադրդման այնպիսի արդյունավետ մոդել, որը շահագրգի յուրաքանչյուր աշխատողին և ամբողջ անձնակազմին ջանք գործադրել՝ ուղղված անձնական և ընդհանուր նպատակների իրագործմանը: Տնտեսության ու կազմակերպության զարգացման ցանկացած փուլում շահադրդման համակարգը անձնակազմի կառավարման արդյունավետ գործիք է դառնում միայն այն դեպքում, եթե այն մշակված է զարգացման որոշակի իրավիճակին համապատասխան և գործնականում ճիշտ է կիրառվում:

Ասվածից հետևում է, որ կազմակերպության շահադրդման համակարգի մոդելը մշակելիս անհրաժեշտ է նույնական տեղեկատվություն ունենալ ինչպես տնտեսության ու կազմակերպության ներկա իրավիճակի, այնպես և սպասվող փոփոխությունների վերաբերյալ: Նման տեղեկատվության ձեռքբերմանը, մեր կարծիքով, մեծապես կարող է օժանդակել կազմակերպությունում միկրո և մակրո պրոդեցիալ մեթոդներով վերլուծությամբ և կանխատեսումներով զբաղվող բաժնի (կամ մարքեթինգի բաժնում համապատասխան խմբի) առկայությունը: Այդ մեթոդները հնարավորություն են տալիս որոշակի մակրո և միկրո տնտեսական ցուցանիշների վերլուծության միջոցով կանխատեսել տնտեսությունում կամ որոշակի շուկաներում իրավիճակի հնարավոր փոփոխությունները:

Շարադրված դատողությունները թույլ են տալիս եզրակացնել, որ անձնակազմի շահադրդման ծրագրի մշակման հիմքում անհրաժեշտ է դնել կազմակերպության ռազմավարական նպատակները և անձնակազմի համար ապահովել դրա թափանցիկությունը:

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՇԱՀԱԴՐՂՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

**ԲԵԼԼԱ ՎԱԼԵՐԻԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**Համառոտագիր:** Նորագույն տնտեսական հետազոտությունները վկայում են, որ յուրաքանչյուր կազմակերպության գործունեության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բնական ռեսուրսներով, տնտեսական հիմքով, տեխնոլոգիաներով կամ ազգի մտավոր ունակությամբ, այլև կառավարման արդյունավետությամբ:

Անձնակազմի կառավարման արդյունավետությունը, որը դրսևորվում է յուրաքանչյուր կազմակերպության կողմից ստացված արդյունքների տեսքով, կախված է կիրառվող միջոցների կենսունակության աստիճանից, որոնցից կարևորագույն դերը պատկանում է նյութական պարզևատրմանը: Շահադրդումը անձնակազմի կառավարման հիմնական մեթոդներից մեկն է: Սակայն հաճախ դեկավարը շահադրդման տեսակները և միջոցները ընտրում է ենթագիտակցորեն՝ ելնելով իր խառնվածքի առանձնահատկություններից, փորձից և կազմակերպության հնարավորություններից: Կազմակերպության աշխատանքի արդյունավետության բարձրացումը հիմնականում որոշվում է կառավարման համակարգի կազմակերպվածության աստիճանով, որը կախված է նրա կառուցվածքի հստակությունից և ընտրված նպատակի ուղղությամբ նրա բոլոր տարրերի գործունեությունից:

***Բանալի բառեր.** կառավարում, անձնակազմ, խթանում, շահ, շահադրդում, պահանջմունք, ռազմավարություն, արդյունավետություն, աշխատանք, կազմակերպություն, գործառույթ, վարք, ճգնաժամ, մոդել:*

## О ПРОБЛЕМАХ ФОРМИРОВАНИЯ МОТИВАЦИОННОЙ СИСТЕМЫ ПЕРСОНАЛА ОРГАНИЗАЦИИ

**БЕЛЛА ВАЛЕРЬЕВНА ГАБРИЕЛЯН**, *к.э.н., доцент*

*старший научный сотрудник*

*Института экономики им.М.Котаяна НАН РА*

**Аннотация:** Современные экономические исследования доказывают, что эффективная деятельность любой организации обусловлена не только природными ресурсами, экономической базой, технологиями или же умственным потенциалом нации, но и эффективностью управления.

Эффективность управления персоналом, которая проявляется в достигнутых любой компанией результатах, зависит от степени жизнеспособности применяемых мер, важнейшая роль среди которых принадлежит материальному вознаграждению.

Мотивация является одним из основных методов управления персоналом. Однако, достаточно часто руководитель выбирает виды и средства мотивации интуитивно, исходя из возможностей организации, характерных особенностей, собственного опыта. Повышение эффективности работы предприятия в значительной мере определяется организованностью системы управления, зависящей от четкой структуры предприятия и деятельности всех ее элементов в направлении выбранной цели.

**Ключевые слова:** *управление, персонал, стимулирование, мотив, мотивация, потребности, стратегия, эффективность, труд, организация, функция, поведение, кризис, модель.*

## ON THE ISSUES OF DESIGNING THE PERSONNEL MOTIVATION SYSTEM IN AN ORGANIZATION

**BELLA VALERI GABRIELYAN**, *Candidate of Sciences (Economics), Associate Professor Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Contemporary economic studies prove that the effective performance of any organization is associated not only with availability and/or access to natural resources, economic base, technology or human capital of the nation but also with the management efficacy.

The efficacy of HR management, that is reflected in any progress that a company could report, depends on the degree of viability of the measures utilized, and among them, the crucial role belongs to the material reward.

Motivation is one of the main methods of HR management. However, quite often a manager instinctively selects the types and means of motivation, based on the capabilities of the organization, features of own character and experience. Improving the company performance is largely determined by the fact how the management system is organized that depends on the clear structure of an enterprise and the activities of all its units with respect to the selected goal.

**Keywords:** *Management, personnel, stimulation, motive, motivation, needs, strategy, efficacy, labor, organization, function, behavior, crisis, model.*


**ԱՄԱԼՅԱ ՄԿՐՏՉԻ ԳԱԼՍՏՅԱԼ, տ.գ.թ.**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող

**ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱԴԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ**

Հանրային հատվածը պետության կողմից տնօրինվող ռեսուրսների ամբողջությունն է, որոնց կառավարման միջոցով ՀՀ կառավարությունը հանրությանը մատուցում է բազմապիսի ծառայություններ՝ կրթության, առողջապահության, ոստիկանության, պաշտպանության, գիտության, սպորտի, քաղաքաշինության և այլ ոլորտներում: Հանրային հատվածի կազմակերպությունների թվին են դասվում պետական կառավարչական հիմնարկները, համայնքների ղեկավարների աշխատակազմերը, պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ, ՀՈԱԿ), ինչպես նաև պետական առևտրային կազմակերպությունները (ՊԱԿ):

Հանրային հատվածի կազմակերպությունները կամ հիմնադրվում են պետության կողմից, կամ պետությունն այդ կազմակերպություններում ունի 50% և ավելի փայաբաժին:



Գծապատկեր 1. Հանրային հատվածի կառուցվածքը

Յուրաքանչյուր պետություն ի դեմս կառավարության իր առջև խնդիր է դնում լուծել հասարակության գերակա խնդիրները և ապահովել



կայուն և բարեկեցիկ կյանք, որն իրատեսական է դառնում հանրային ֆինանսների արդյունավետ կառավարման առումով, այդ թվում պետական բյուջեի եկամուտների պատշաճ հավաքագրում, ծախսերի առաջնահերթությունների սահմանում և առկա ռեսուրսների արդյունավետ փաշխում: Արդյունավետ հանրային ֆինանսների կառավարման համակարգը Հայաստանի տնտեսության զարգացման կարևորագույն հենքն է, հետևաբար ոլորտում առկա հիմնահարցերը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները մշտապես գտնվում են պետական պատկան մարմինների ուշադրության կենտրոնում:

Վերջին տասնամյակում, ելնելով ժամանակի մարտահրավերներից, տարբեր միջազգային կառույցների աջակցությամբ շարունակական բնույթ են կրում ՀՀ պետական հատվածի արդիականացումը, որի իրականացման նպատակը պետական ծախսերի թափանցիկության և հաշվետվողականության, ամբողջ համակարգի վերահսկողության ապահովումն ու մատուցվող ծառայությունների քանակական և որակական բարելավումն է, հանրային ակտիվների և պարտավորությունների կառավարման արդյունավետության մեծացումը: Հանրային ֆինանսների կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումներն իրականացվել են հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. բյուջետային համակարգ ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրում, բյուջեի կատարման ապահովում,
2. մակրոտնտեսական կանխատեսումների և կայունության վերլուծությունների բարելավում,
3. պետական եկամուտների քաղաքականություն (ֆիսկալ)՝ հարկման հորիզոնական արդարության սկզբունքի ամրապնդում, հարկման բազայի ընդլայնման արդյունքում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավում, հարկային օրենսգրքի մշակում և ներդրում,
4. գանձապետական համակարգ,
5. ներքին վերահսկողություն և աուդիտ,
6. հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգ,
7. պետական գնումների համակարգ<sup>1</sup>:


Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգը, ունենալով իր ուրույն տեղը պետական ֆինանսական համակարգում, կարիք ուներ լայնամասշտաբ օրենսդրական բարեփոխումների, որոնց դիտակետում հաշվապահական համակարգի միասնականացումն ու մի-

<sup>1</sup> ՀՀ Պետական ֆինանսների կառավարման բարեփոխումների առաջնահերթությունները, Աղքատության կրճատում և տնտեսական կառավարում Եվրոպա և Կենտրոնական Ասիա, Համաշխարհային բանկ, 2010թ:

ջազգային ստանդարտներին համապատասխանեցումն էր: Այդ նպատակով գնահատվեց նոր մեթոդաբանության ներդրման և կիրառման հետ կապված անհրաժեշտ ռեսուրսներն ու խոչընդոտները, հաշվապահական հաշվառման համակարգի ինստիտուցիոնալ կարողություններն ու հաշվառման վարման գործող և կիրառվող կանոնները: Արդյունքում բացահայտվեց, որ պետական կառավարչական հիմնարկներում, տեղական ինքնակառավարման համայնքներում չէր գործում հաշվապահական հաշվառման միասնական համակարգ, քանի որ հաշվապահական հաշվառումը հիմնականում վարվում էր դեռևս խորհրդային տարիներին հաստատված հաշվային պլանով և դրա կիրառման հրահանգով, ՊՈԱԿներում՝ մասնավոր հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով, կամ էլ որոշ դեպքերում հաշվապահական հաշվառումը չէր վարվում կրկնակի գրանցմամբ, այլ ընդամենը իրականացվում էր ծախսերի և եկամուտների հաշվառում և համադրում: Մեթոդաբանության տեսանկյունից հաշվառումը եկամուտների համար վարվում էր դրամարկղային, իսկ ծախսերի որոշ տեսակների համար հաշվեգրման մեթոդներով, որը չէր նորմավորվում որևէ իրավական ակտով, այլ պայմանավորված էր տարիների ընթացքում ձևավորված սովորույթով: Արդյունքում գործող հաշվապահական հաշվառման համակարգը հնարավորություն չէր տալիս ստանալ հուսալի և արժանահավատ տեղեկատվություն հանրային կազմակերպությունների գործունեությունների վերաբերյալ, կազմել միասնական սկզբունքների վրա հիմնված պետության համախմբված ֆինանսական հաշվետվություններ:

Այսպիսով՝ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման հիմնական խնդիրներն են.

- հանրային հատվածի կազմակերպությունների և պետության համախմբված ֆինանսական տեղեկատվության ստացում,
- փաստացի ծախսերի և բյուջեի համեմատում,
- օրենքների և այլ օրենսդրական ակտերի պահանջների հետ կատարված ծախսերի համապատասխանության գնահատում,
- հաջորդ տարվա բյուջեի համար նախնական տեղեկատվության ապահովում,
- հաշվառման միասնական մեթոդաբանության կիրառում:



**Գծապատկեր 2. Տեղեկատվության և վերահսկողության հոսքերը**

Պետությունն ի դեմս լիազորված պետական մարմինների՝ սահմանում է հաշվապահական հաշվառման համակարգը կանոնակարգող օրենսդրական դաշտը, իրականացնում է վերից վար վերահսկողություն (տե՛ս գծապատկեր 2): Վարից վեր տեղեկատվության հոսքերի միջոցով հավաքագրվում է նախնական տեղեկատվություն պետական բյուջեի և պետության համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, հետևաբար, որպեսզի պետական բյուջեն լինի իրատեսական, իսկ պետության ֆինանսական հաշվետվություններն արժանահավատ, կարևորվում է, որ բոլոր օղակներում հաշվապահական հաշվառումը իրականացվի միասնական սկզբունքներով: Հաշվի առնելով գործող իրավիճակը և ժամանակի մարտահրավերները հրատապ էր դառնում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր միասնական համակարգի ներդրումը, որի իրականացման համար ընդունվեցին մի շարք օրենքներ և նորմատիվ ակտեր: 2014թ. հունիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը (ՀՀՀՀՄՕ), որի ընդունմամբ մեկնարկեց ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում միջազգային չափանիշներին համապատասխանող հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումը: Օրենքով նախատեսվում է գործող հաշվապահական հաշվառման համակարգից անցում կատարել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի, որը համահունչ և համադրելի կլինի Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվա-

պահական հաշվառման դասակարգումներին (GFSM) և հանրային հատվածի միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին (IPSAS): Օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների, ներառյալ՝ նրանց ստեղծած կազմակերպությունների վրա, բացառությամբ պետական առևտրային կազմակերպությունների, որոնք իրենց գործունեության բնույթով պայմանավորված կիրառում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (IFRS): Սահմանվեց հանրային հատվածի մարմինների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը, որոնք ներառում են.

1. ՀՀՀՀՄ օրենքը,
2. վերոնշյալ օրենքից բխող ՀՀ կառավարության որոշումները,
3. ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը (ՀՀՀՀՄ),
4. կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը,
5. կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելը,
6. կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթը,
7. ՀՀՀՀՄ օրենքով նախատեսված իրավական այլ ակտեր:

2014 թ. հոկտեմբերի 24-ին ընդունվեց ՀՀՀՀՄ, որի **մշակման համար** հիմք է հանդիսացել 2013 թ. հունվարի 1-ի դրությամբ պաշտոնապես հրապարակված հաշվեգրման հիմունքով հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (IPSAS, GFS), կառուցվածքի համար հիմք է հանդիսացել փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը (ՓՄԿ-ների ՖՀՄՄ): Ստանդարտը բաղկացած է 32 բաժնից և, ի տարբերություն բնադրյուրի (IPSAS), առավել պարզեցված է և զերծ այլընտրանքներից: Համաշխարհային մակարդակով հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման վարման (ֆինանսական հաշվետվությունների պատրաստման) ստանդարտները (ՀՀՀՀՄՄ/IPSAS) մշակվում և հրապարակվում են Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC) կողմից, որը 1996 թվականից սկսած հանձն առավ մշակել հանրային հատվածի հաշվապահական ստանդարտները, որոնք մշակվեցին երկու սկզբունքով՝ դրամարկղային և հաշվեգրման: 2018 թվականի դրությամբ գործում է 2017 թվականին վերամշակված դրամարկղային

մեթոդով ստանդարտը և 40 հաշվեգրման մեթոդով ստանդարտները: ՀՀՀՀՄՍ 1-ը գործողության մեջ է մտել 2004 թվականից, որին ժամանակի պահանջներից ելնելով հաջորդել են մյուս ստանդարտները: Յուրաքանչյուր տարի ՀՀՀՀՄՍ անհրաժեշտության դեպքում խմբագրվում կամ վերահրապարակվում են<sup>2</sup>: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ներդրման ինստիտուցիոնալ կարողությունների գնահատմամբ ակնկալվում է, որ հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումը հանրային հատվածում կիրականացվի 6-7 տարվա ընթացքում: Հանրային ֆինանսների կառավարման՝ մասնավորապես հաշվապահական հաշվառման ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակն ամբողջ հանրային ֆինանսական համակարգի ավտոմատացումն է և ՀՀՀՀ միջազգային ստանդարտների (IPSAS) ամբողջական ներդրումը: Հետևաբար ներդրման առաջին փուլը իրականացնելուց հետո նախատեսվում է իրականացնել նոր ուսումնասիրություններ՝ որոշելու համար ամբողջովին ՀՀՀՀՄՍ-ներին անցնելու հնարավորությունները և անհրաժեշտությունը, որոնց արդյունքում կմշակվի համապատասխան ծրագիր՝ անցման աշխատանքներն իրականացնելու համար, կամ կիրականացվի լրացուցիչ միջանկյալ փուլ՝ ՀՀՀՀՄՍ-ներին հնարավորինս ներդաշնակեցնելու համար:<sup>3</sup>

Աշխարհի շատ երկրներ լայնածավալ աշխատանքներ են տանում դրամարկղային և հաշվեգրման հիմունքով ՀՀՀՀՄՍ-ների ամբողջական ներդրման ուղղությամբ, սակայն ոչ բոլորն են, որ ամբողջությամբ ներդրել են: Ստանդարտների ներդրման առաջամարտիկ է համարվում Նոր Զելանդիան, որը ֆիսկալ քաղաքականության, բյուջեի, ֆինանսների կառավարման և ֆինանսական հաշվետվողականության համար հիմք է ընդունել ՀՀՀՀՄՍ-ները: Երկրորդը Ճապոնիան է, որը դրամարկղային մեթոդով հաշվառմանը կից կազմեց հաշվեգրման սկզբունքով կազմված ֆինանսական հաշվետվություններ: Աշխարհում միայն 6 երկիր է՝ Ավստրալիա, Կանադա, Կոլումբիա, Ֆրանսիա, Նոր Զելանդիա, Մեծ Բրիտանիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որ ներդրել են հաշվապահական ստանդարտներ, որոնք ներդաշնակ են ՀՀՀՀՄՍ-ներին:<sup>4</sup>

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների առանձնահատկությունը կայանում է նրա պետական հատվածի՝

---

<sup>2</sup> Pr. Sébastien Rocher The beginning of international public accounting standardsetting: A short history, France,

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 190:

<sup>4</sup> IPSAS implementation: current status and challenges, ACCA,2017

տնտեսության մակրո և միկրո մակարդակների հաշվապահական հաշվառման ընդգրկմամբ: Մակրո մակարդակի հաշվապահությունը ընդգրկում է համազգային արժեքները, տնտեսական ակտիվության մակրոտնտեսական ցուցանիշների գնահատումը և պետության ֆինանսական հաշվետվությունների կազմումը:

Միկրո մակարդակի հաշվապահական դաշտը ընդգրկում է կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց ենթակայության ներքո գործող կազմակերպությունների հաշվապահական հաշվառման համակարգը, ինչպես նաև տնտեսական միավորման ներսում ֆինանսական տեղեկատվության համախմբումն ու բյուջեի ու պետության ամփոփ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար անհրաժեշտ նախնական տեղեկատվության ստացումը: Օրինակ, «Մևան ազգային պարկի» պահպանմամբ զբաղվում է բնապահպանության նախարարության վերահսկողության ներքո գործող կազմակերպությունը, իսկ երկրի ջրային ավազանի պահպանության հետ կապված վերափոխումները հանդիսանում են ազգային/պետական նշանակության խնդիրներ(տե՛ս աղյուսակը):

Այդ առումով և՛ ստանդարտները, և՛ հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը արտացոլում են ինչպես կազմակերպության որպես առանձին հաշվետու միավորի, այնպես էլ պետության որպես առանձին հաշվետու միավորի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները: Օրինակ՝ կազմակերպության տեսանկյունից հասույթ է համարվում ծառայությունների մատուցումից ստացված հասույթը, իսկ պետության համար՝ հավաքագրված հարկերը:

*Աղյուսակ 1*

**Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կառուցվածքը<sup>5</sup>**

<b>Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում</b>	<b>Մակրո հաշվապահություն</b>	Վճարահաշվարկային բալանս	<b>Տեղեկատվության համախմբում</b>	<b>Պետության ֆինանսական հաշվետվություններ</b>	
		Համախառն ազգային արդյունք(ՀԱԱ)			
		Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)			
		Ազգային եկամուտ (ԱԵ)			
		Բնական պաշարների մակրո հաշվառում			
	<b>Միկրո հաշվապահություն</b>	Պետական կառավարչական հիմնարկների և տեղական ինքնակառավարման մարմինների հաշվապահություն			
		Համախմբված հաշվետվությունների պատրաստում			
		Կազմակերպությունների հաշվապահություն			Ֆինանսական հաշվառում
					Կառավարչական հաշվառում
					Հարկային հաշվառում

<sup>5</sup> <http://www.yomiuri.co.jp/adv/chuo/dy/education/20110915.html>

Նոր համակարգին անցման նպատակով լիազորված պետական մարմնի (ՀՀ ֆինանսների նախարարություն) կողմից սահմանվել է նոր համակարգի ներդրման 2016-2018թթ. անցման ժամանակացույց, ըստ որի 2016թ. ներդրումը իրականացվեց թվով 16 պետական կառավարչական հիմնարկներում և նրանց ենթակա ՊՈԱԿ-ներում: Ընտրվել էին այն կազմակերպությունները, որոնք առավել կայացած էին, և որոնց ենթակայությամբ գործող կազմակերպությունների թիվը փոքր էր՝ երկուսից կամ երեքից: 2018թ. անցում կատարեցին մարզային նշանակության կառույցներն ու այն պետական կառավարչական մարմիններն ու նրանց ենթակայության կազմակերպությունները, որոնք ունեն ներկայացուցչություններ, ստորաբաժանումներ և այլ գործող կառույցներ ամբողջ հանրապետության տարածքում: 2016թ. սկսած յուրաքանչյուր տարի ներդրմանը հաջորդում է առաջ եկած խնդիրների ուսումնասիրում, քննարկում, հնարավոր լուծումների առաջարկում, յուրաքանչյուր հաջորդ անցման փուլում ներդրումն առավել դյուրին իրականացնելու նպատակով: Լիազոր մարմնի կողմից (ՀՀ ֆինանսների նախարարություն) սահմանվել են ներդրման հետևյալ հաջորդական միջոցառումները՝

- Ներքին իրավական ակտերի մշակում՝ հաշվապահական հաշվառման քաղաքականություն:
- Ակտիվների և պարտավորությունների (հաշվեկշռային հոդվածների) գույքագրում, գույքային ցուցակների կազմում:
- Կազմակերպության ակտիվների իրական արժեքով ներկայացում:
- Նոր հաշվային պլանի ներդրում:
- Մուտքի հաշվեկշռի կազմում՝ անցումային հաշվետվության սկզբնական մնացորդների պատրաստում:
- Լիազորված պետական մարմնի կողմից հավանության արժանացած ծրագրի (հայկական ծրագիր) ներդրում:
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան հաշվառման վարում:
- Կազմակերպության ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների կազմում:
- Տնտեսական միավորի և պետության ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների կազմում:

Ընդհանուր առմամբ հանրային հատվածի բարելավման՝ ՀՀՀՀՄ ներդրման ուղին բռնած պետությունները բավականին մեծ ռեսուրսներ ներդնելով գործընթացում ակնկալում են.

- մեծացնել հանրային ֆինանսների կառավարման հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, որը կնպաստի ծախսերի նպատակային իրականացմանը, ոլորտում կոռուպցիայի կրճատմանը,
- իրականացնել հանրային ակտիվների արդյունավետ կառավարում,
- բարելավել ներքին վերահսկողության և աուդիտի համակարգը՝ արդյունքը՝ ճիշտ որոշումների կայացում,
- ապահովել ամբողջ պետության մակարդակով համադրելի և արժանահավատ տեղեկատվություն:

Այժմ իրականացվում է հանրային հատվածի հաշվապահական ստանդարտների ներդրման երրորդ, վերջին փուլը, որին հաջողելու է Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը լիազոր(ՀՀ ֆինանսների նախարարություն) մարմնի կողմից: Ներդրման ընթացքում պարբերաբար իրականացվել է մոնթորինգ՝ առաջացած մեթոդական, ծրագրային, տեխնիկական խնդիրներին լուծում տալու նպատակով: 2018 թվականին իրականացված մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ շատ քիչ թվով հանրային կազմակերպություններում է ամբողջությամբ ներդրվել հաշվառման նոր համակարգը, քանի որ մասնագետները առավել զգուշավոր մոտեցում են դրսևորել, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

1. իրազեկվածության ցածր մակարդակ,
2. համակարգչային գիտելիքների ցածր մակարդակ,
3. փոփոխությունների ոչ արդյունավետ կառավարում:

Նոր համակարգին անցումը և ապագայում հաշվապահական հաշվառման միասնական հիմունքներով վարումն առավել դյուրին դարձնելու նպատակով, խիստ կարևորվում է պետական մարմինների դերը ոչ որպես միայն վերահսկողություն իրականացնող լիազոր կառույցներ, այլ նաև ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով՝ իրազեկող, ուսուցանող, առկա խնդիրներին և խոչընդոտներին լուծում տվող կառույցներ: Այս նպատակով ֆինանսների նախարարությունը «պետություն-մասնավոր հատված» համագործակցության շրջանակներում աշխատանքներ է տանում ոլորտի կարգավորման և վերահսկողության նոր՝ «մասնագիտական կառույց-հանրային վերահսկողություն» մոդելի ներդրման ուղղությամբ:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի ամբողջական ներդրումը հնարավորություն կընձեռի ստանալ հուսալի և արժանահավատ տեղեկատվություն հանրային հատվածի կազմակերպությունների գործունեու-



թյան վերաբերյալ՝ բարձրացնելով պետական ծախսերի, կառավարչական որոշումների կայացման, հաշվետվողականության և վերահսկողության արդյունավետությունը

## **ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԸ**

**ԱՄԱԼՅԱ ՄՎՐՏՉԻ ԳԱԼՍՅԱՆ**, *տ. գ. թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին պետական հատվածի արդիականացման շրջանակներում իրականացվում է հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրում: Հնդվածում ներկայացվել է հանրային հատվածի կառուցվածքը, առանձնահատկությունները, հաշվապահական հաշվառման ստանդարտի ներդրման ընթացակարգերն ու ակնկալվող արդյունքները: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշների համապատասխանող համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի ստանալ արժանահավատ տեղեկատվություն պետական մարմինների ֆինանսական գործունեության վերաբերյալ:

*Բանալի բառեր.* *հանրային հատված, հաշվապահական ստանդարտներ, հաշվեգրման սկզբունք, դրամարկային սկզբունք, ֆինանսական հաշվետվություններ*

## **РЕФОРМЫ, ОСУЩЕСТВЛЯЕМЫЕ В ОБЛАСТИ БУХГАЛТЕРСКОГО УЧЕТА ОБЩЕСТВЕННОГО СЕКТОРА**

**АМАЛИЯ МКРТЫЧЕВНА ГАЛСТЯН**, *к. э. н.*

*научный сотрудник Института экономики им. Котаняна НАН РА*

**Аннотация:** В последние годы внедрение новой системы бухгалтерского учета осуществляется в рамках модернизации государственного сектора в Армении. В статье рассматривается структура и особенности государственного сектора, порядок внедрения стандарта бухгалтерского учета и ожидаемые результаты. Внедрение системы, соответствующей международным стандартам учета в государственном секторе, обеспечивает достоверную информацию о финансовых результатах деятельности государственных органов.

**Ключевые слова:** *Государственный сектор, стандарт бухгалтерского учета, принцип начисления, кассовый метод, финансовые отчеты.*

## REFORMS BEING IMPLEMENTED IN THE PUBLIC SECTOR ACCOUNTING

**AMALYA MKRTICH GALSTYAN**, *Candidate of Sciences (Economics)*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Recently, the introduction of a new accounting system has been initiated within the framework of modernizing the system of public administration in the Republic of Armenia. The article presents the structure and features of the public sector, the procedures for introducing accounting standards required and expected results. The introduction of a system that complies with public sector international accounting standards will provide reliable information on the financial transactions and operations carried out by public institutions.

**Keywords:** *Public sector, accounting standard, accrual basis, cash basis, financial statements*

**ԶԲՈՍԱԸՐՋՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՅՈՒՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հասարակությունների էվոլյուցիոն զարգացումները լայն հնարավորություններ են ստեղծում անհատների, ինչու չէ նաև հասարակության լայն զանգվածի համար, ըստ որի շրջազայությունները օր օրի դառնում են առավել հասանելի, համապատասխան ծառայություններից օգտվելու պահանջարկն էլ տարեցտարի աճում է: Սկզբնական շրջանում ճանապարհորդների նպատակը հիմնականում եղել է առևտրով զբաղվելը, կրթություն ստանալը, առողջության վերականգնումը, և այն չի կրել համատարած բնույթ: Ի դեպ, հին ժամանակներում ճանապարհորդելը հիմնականում հասանելի է եղել ունևոր և հարուստ խավերին՝ հաշվի առնելով տվյալ ծառայություններից օգտվելու ոչ այնքան մատչելի լինելը: Ժամանակային փոփոխությունները և էվոլյուցիոն զարգացումները իրենց հետքը թողել են նաև զբոսաշրջության ինդուստրիայի վրա՝ ապահովելով տվյալ ոլորտի թռիչքային զարգացումը: Այժմ հերթականությամբ անդրադառնանք զբոսաշրջության ձևավորման պատմությանը, կազմակերպման ձևերին և զարգացման նորարարական հնարավորություններին Հայաստանի Հանրապետությունում:

Ճանապարհորդության տեսակ է համարվում զբոսաշրջությունը: Զբոսաշրջությունը (ֆրանսերեն տուրիզմ-տուր՝ զբոսանք, ուղևորություն) բնորոշում է մարդկանց տեղաշարժը տարածության մեջ՝ անկախ տեղաշարժման նպատակից, որը, սակայն, չպետք է կրի աշխատանքային բնույթ: Այն մի կողմից հարաբերականորեն երիտասարդ հասկացություն է և զանգվածային է դարձել II համաշխարհային պատերազմից հետո, մյուս կողմից՝ ունի խոր պատմական արմատներ, որովհետև այլ դրսևորումներով հայտնի է դեռևս հին ժամանակներից<sup>1</sup>:

Զբոսաշրջության պատմությունն ընդունված է բաժանել չորս շրջանի:

**Առաջին շրջան.** Անտիկ շրջանում ճանապարհորդությունների նպատակը հիմնականում եղել է առևտուրը, կրթությունը, ուխտագնացությունը, առողջության վերականգնումը: Հին Հունաստանում կազմակերպ-

<sup>1</sup> Աննա Մարգարյան, Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպման իրավական կարգավորումները, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2017թ.:

վում էին օլիմպիական խաղեր, որոնք դարձան սպորտային ճանապարհորդությունների առաջնային դրոշապատճառ: Օլիմպիական խաղերը դիտելու և դրանց մասնակցելու համար տարբեր երկրներից այստեղ էին հավաքվում հյուրեր և մարզիկներ: Միջին դարերում մեծ տարածում ունեցան կրոնական բնույթ կրող ճանապարհորդությունները: Կրոնական հավատալիքների ամրապնդումը միլիոնավոր հավատացյալների հնարավորություն տվեց կազմակերպել ուխտագնացություններ դեպի սրբավայրեր՝ մուսուլմանները՝ Մեքքա, քրիստոնյաները՝ Երուսաղեմ և Հռոմ: Միջնադարյան քրիստոնեական եկեղեցիները ձեռք էին բերել իշխող դիրք և տարբեր երկրներում դարձել միակ ճանաչված իշխանությունը: Իջևանատները (վանատուրեր, քարվանսարաներ) որպես հյուրանոցների տեսակներ, պահպանվում էին կրոնական համայնքների կողմից: Վերածննդի և լուսավորության դարաշրջանում նվազեցին կրոնական նպատակներով ճանապարհորդությունները և ավելացան անհատական բնույթ ու կրթական ուղղվածություն ունեցող ճանապարհորդությունները. երիտասարդ ազնվականները, մինչև իրենց մասնագիտական կամ քաղաքական գործունեությանն անցնելը, հաճախակի մեկնում էին եվրոպական երկրներ՝ իրականացնելով «Մեծ շրջագայություն» (grand-tour): Այդպիսի ճանապարհորդությունները սկիզբ էին առնում Լոնդոնից, Փարիզից (որտեղ մնում էին տևական ժամանակ), այնտեղից էլ ուղևորվում դեպի Իտալիա, Գերմանիա, Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Անգլիա: «Մեծ շրջագայությանը» հիմնականում մասնակից են եղել Հռոմեական կայսրության բարձր խավի ներկայացուցիչները:

XVIII դ. վերջում առավել ցայտուն էր երևում արտադրության զարգացման այն գործընթացը, որը հետագայում, մեր ժամանակներում անվանվեց «արդյունաբերական հեղափոխություն»: Այդ գործընթացը ոչ միայն ազդեց շատ երկրների տնտեսությունների զարգացման վրա, այլ նաև հիմք հանդիսացավ ժամանակակից զբոսաշրջության ձևավորման և զարգացման համար: Ինդուստրիալ զարգացման ժամանակաշրջանի հիմնական առանձնահատկություններից մեկն այն էր, որ հենց այդ փուլում երկրագնդի բնակչության թվաքանակը գրեթե կրկնապատկվեց: Մարդիկ սկսեցին ինտենսիվ կերպով թողնել իրենց մշտական բնակավայրերն ու մեկնել նոր ինդուստրիալ զարգացում ապրող քաղաքներ՝ աշխատանք փնտրելու նպատակով: Ինդուստրացումը հասարակության մեջ ձևավորեց երկու նոր հատված.

ա) քաղաքային բնակչություն, որն իր հերթին հիմք հանդիսացավ երկաթուղային ուղևորափոխադրումների զարգացման ու դրա հետ միասին նաև «Էքսկուրսիոն» շուկայի ստեղծման համար,

բ) ֆինանսիսիտների և ֆոնդատերերի նոր դաս կամ խումբ:

Այսպիսով, ձևավորվեց հարուստ մարդկանց մի նոր խավ, որն էլ ձևավորեց «ճանապարհորդությունների և զբոսաշրջության շուկան»:

**Երկրորդ շրջան.** Այս ընթացքում տրանսպորտի բնագավառում տեղի ունեցան հեղափոխական փոփոխություններ, ստեղծվեցին ճանապարհորդական բյուրոներ, որոնք, ինչպես արդեն նշվել է, զբոսաշրջության զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցան: 1807 թ. Ֆուլտոնի կողմից շոգենավի և 1814 թ. Ստեֆենսոնի կողմից շոգեքարշի հայտնագործումը, ինչպես նաև փոստային կայի, ավտոճանապարհների և ծովագնացության զարգացումը, միջազգային առևտրային կապերի ակտիվացումը նպաստեցին երթուղային ցանցի ընդլայնմանը, համեմատաբար քիչ ծախսերով և մեծ արագությամբ ճանապարհորդությունների կազմակերպմանը:

XIX-րդ դարի կեսերին հանգստի ինդուստրիան ընդլայնեց գործունեության ոլորտը, հանդես եկան առաջին ճանապարհորդական գրասենյակները, որոնց պարտականությունների մեջ էին մտնում զբոսաշրջային ճանապարհորդությունների կազմակերպումը և սպառողների պահանջարկների բավարարումը: Շրջագայության դասական օրինակ է համարվում 1841 թ. Թոմաս Կուկի կողմից կազմակերպած խմբային զբոսաշրջությունը: Այդ ուղևորության նպատակը երկաթուղային ճանապարհով ճանապարհորդելն էր: Բնութագրական էր, որ այդ բնույթի առաջին ուղևորությանը մասնակցեց շուրջ 600 մարդ (այդ ժամանակվա համար դա մեծ թիվ էր): 1845 թ. նա կազմակերպեց նմանատիպ նոր ճանապարհորդություն դեպի Լիվերպուլ, որն ուներ էքսկուրսիոն բնույթ: Զբոսաշրջության ձևավորման, զարգացման բնագավառում կարևոր դեր խաղաց նաև այն, որ Կուկը 1847թ. ստեղծեց «զբոսաշրջային միություն»: Հենց այս միությունն էր, որ սկսեց զբաղվել ուղեգրերի վաճառքով, ոչ միայն Անգլիայի տարածքում, այլև նրա սահմաններից դուրս ճանապարհորդելու նպատակով: Թոմաս Կուկի այս կարևոր նախաձեռնությունների շնորհիվ է, որ նրան անվանում են զբոսաշրջության բնագավառի առաջին մենեջեր: Հատկանշական է, որ 33-ամյա Կուկի մոտ զբոսաշրջության գաղափարը հղացել էր հարբեցողության դեմ պայքարի ժամանակ: Նա կազմակերպում էր ուղևորություններ դեպի Անգլիայի տարբեր քաղաքներ, պայմանով, որ այդ ընթացքում մասնակիցները ավոտով չեն օգտագործի: Ծառայությունների փաթեթը ներառում էր երկաթգծով 20 միլ (32 կմ) ճանապար-

հորդություն, որի ընթացքում գնացքում նվագում էր փողային նվագախումբը, իսկ ուտելիքներից մատուցում էին թեյ և բուլկի: Թոմաս Կուկը առաջին զբոսաշրջային գործակալությունը հիմնեց Լեսթերում, այնուհետև՝ Լոնդոնում: Հետագայում նմանատիպ զբոսաշրջային գործակալություններ բացվեցին նաև Բեռլինում (1854 թ.) և աշխարհի շատ այլ երկրներում: 1862թ.-ից սկսած ստեղծվեցին առաջին զբոսաշրջային ճանապարհորդությունների տեղեկատուները, որոնք ներկայացնում էին զբոսաշրջության պահանջարկի ընդլայնման ընթացքը:

**Երրորդ շրջանը** համարվում է գանգվածային զբոսաշրջության կայացման շրջանը, որն ընդգրկում է երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանը: Այս շրջանում զբոսաշրջության մեջ ներառվեց հասարակության նոր շերտ՝ բնակչության հասարակ խավը, որով էլ սկսեց ընդլայնվել զբոսաշրջության սոցիալական բազան՝ գնալով ավելացնելով շրջագայողների թիվը: Արևմտյան Եվրոպայում շատ վաղուց արդեն զբոսաշրջությունը ձևավորվել էր և զգալի շահույթ էր բերում հատկապես Իսպանիային, Ֆրանսիային, Անգլիային ու մյուս այլ երկրներին: 1920-ական թվականներին Ռուսաստանում, այնուհետև ԽՍՀՄ-ում, ժողկոմիսարիատներին կից ստեղծվեցին մոտակա և հեռավոր էքսկուրսիաների կազմակերպման ընկերություններ: Աշխատանքի և պաշտպանության խորհրդի որոշմամբ 1929թ. ստեղծվեց «Բնտուրիստ» համամիութենական կազմակերպությունը, որը հետագայում լայն ճանաչում ստացավ ամբողջ աշխարհում:

**Չորրորդ շրջանը** համարվում է դիտարկվող ոլորտի ժամանակակից շրջանը: Զբոսաշրջությունն այս շրջանում գանգվածային բնույթ ստացավ՝ ընդգրկելով բնակչության ավելի լայն խավեր: Զարգացած երկրների բնակչության մեծ մասի համար ճանապարհորդությունը ճոխությունից վերածվեց անհրաժեշտության: Ձևավորվեց զբոսաշրջային ինդուստրիան իր ճյուղերով: Այս շրջանը բնութագրվում է ճանապարհորդությունների քանակի արագ աճով, զբոսաշրջային կազմակերպությունների և զբոսաշրջային ենթակառուցվածքների ընդլայնմամբ:

Զբոսաշրջության ժամանակակից ուսմունքն անկասկած չի ընդունում առաջին ճանապարհորդներին որպես զբոսաշրջիկներ: Գնապարհորդությունը չէր կատարվում որոշակի պահանջմունքներ բավարարելու նպատակով, այլ կատարվում էր ոչ անձնական ցանկությամբ և ոչ էլ հանդիսանում էր ինքնանպատակ: Ընդհակառակը, ճանապարհորդությունները շատ հաճախ ծանր (ֆիզիկական և բարոյական իմաստով), տեխնիկական տեսանկյունից շատ դժվարամատչելի գործողություններ էին: Այդ ճանապարհորդությունների հիմնական շարժառիթներն առևտուրն

ու կոմերցիան էին, նոր երկրների հայտնագործումը, նվաճումը, կրոնական առաքելության իրականացումը և այլն <sup>2</sup>:

Զբոսաշրջության գործունեությունը միջազգային մասշտաբով կոորդինացնելու համար 1970թ.-ին պաշտոնական զբոսաշրջային կազմակերպությունների միջազգային միության վեհաժողովի ընթացքում ձայների մեծամասնությամբ որոշվեց ստեղծել Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպությունը: Այն սկսեց իր աշխատանքը 1974 թվականի նոյեմբերի 1-ին: Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության (ՀՋԿ)-ի հիմնական խնդիրներն էին.

ա) միջազգային զբոսաշրջության զարգացմանն աջակցելը, բ) երկրների միջև բարեկամական և մշակութային կապերի ամրապնդումը, գ) ցանկացած միջազգային զբոսաշրջային գործունեության արգելակումների դեմ պայքարը, դ) զբոսաշրջության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների տարածաշրջանային և միջշրջանային մասշտաբով գործունեության կոորդինացումը ՄԱԿ-ի ու զբոսաշրջության զարգացմամբ շահագրգռված միջազգային այլ կազմակերպությունների հետ<sup>3</sup>:

Այժմյա պայմաններում զբոսաշրջային ծառայություններից օգտվելը, մարդկանց փոխադրումները պատկերացնել առանց զբոսաշրջային ինդուստրիայի սուբյեկտներ հանդիսացող զբոսաշրջային օպերատորների և գործակալների, գրեթե անհնար է: Տվյալ սուբյեկտների առաջացումը զբոսաշրջության ոլորտը որակական նոր աստիճանի հասցրեցին և նրա ինստիտուցիոնալ հիմքերը ստեղծեցին, որոնց հիմնական նպատակը սպառողների պահանջմունքների բավարարումն է առավել պարզ և համակարգված ձևերով: Մտորն առանձին-առանձին անդրադառնանք վերը նշված սուբյեկտների հիմնական գործառույթներին որպես տնտեսվարող սուբյեկտների:

**Զբոսաշրջային օպերատորը** տնտեսվարող սուբյեկտ է, որը մշակում է զբոսաշրջային երթուղիներ, ապահովում դրանց գործունեությունը, սահմանում գները: Այսինքն՝ զբոսաշրջային օպերատորը ձեռք է բերում զբոսաշրջային ծառայություն կատարելու համար անհրաժեշտ ռեսուրսներ (տեղեր ինքնաթիռում, համարներ հյուրանոցներում և այլ ծառայություններ), ձևավորում է զբոսաշրջության փաթեթ և իրացնում դրանք՝ շահույթի ստացման նպատակով:

<sup>2</sup> Շուշան Հարությունյան, Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն, Երևան, 2004թ.:


<sup>3</sup> Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպություն, ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն, Իսպանիա, Մադրիդ, 1974թ., unwto.org

Համաշխարհային պրակտիկայում առանձնացվում է զբոսաշրջային օպերատորների չորս տարախումբ.

- զանգվածային շուկայի,
- մասնագիտացված շուկայի,
- տեղական շուկայի,
- մուտքային շուկայի:

Զանգվածային շուկայի զբոսաշրջային օպերատորներն ավելի շատ են, քանի որ նրանք վաճառում են առավել հանրաճանաչ հանգստավայրերի զբոսաշրջային փաթեթներ: Մասնագիտացված շուկան ընդգրկում է այն զբոսաշրջային օպերատորներին, որոնք մասնագիտանում են որոշակի ուղղությամբ, կազմակերպում են համապատասխան ուղղվածության զբոսաշրջային փաթեթներ (օրինակ՝ Ֆրանսիա, Իտալիա, Անգլիա, Գերմանիա և այլն), զբոսաշրջիկներին տեղափոխում որոշակի տրանսպորտային միջոցներով և առաջարկում յուրահատուկ տուրեր (լեռնային, որսորդական զբոսաշրջություն և այլն): Տեղական շուկայի զբոսաշրջային օպերատորները ներքին շուկայի օպերատորներ են, այսինքն՝ կազմակերպում են տուրեր տվյալ երկրի սահմաններում: Մուտքային զբոսաշրջության օպերատորներն աշխատում են արտաքին շուկաներում, այսինքն՝ զբոսաշրջային փաթեթները վաճառում են տարբեր երկրների քաղաքացիներին:

**Զբոսաշրջային գործակալը** նույնպես տնտեսվարող սուբյեկտ է, որը ձեռք է բերում զբոսաշրջային օպերատորի կողմից մշակված զբոսաշրջային տուրերը, դրանց հիման վրա թողարկում է ուղեգրեր և դրանք իրացնում զբոսաշրջիկների շրջանում: Զբոսաշրջային շուկայի կազմակերպման կառուցվածքը կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով:



Գծապատկեր 1. Զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպություններ



Զբոսաշրջային օպերատորների և գործակալների գործառույթները զբոսաշրջության ոլորտի ծառայություններից օգտվելն առավել դյուրին են դարձնում՝ հնարավորինս բարձրացնելով սպառողների պահանջ-մունքների բավարարվածության աստիճանը: Ուստի դիտարկվող ոլորտները պետք է օր օրի զարգացվեն և նորամուծություններից օգտվելու հնարավորություններ ստանան: Ռազմավարությունների մշակումն ու իրականացումն էլ պետք է ուղղորդված լինի տվյալ ոլորտների կատարելագործմանը, որոնք իրենց հերթին խթան կհանդիսանան տվյալ ծառայություններից օգտվողների պահանջմունքների առավելագույնս բավարարմանը:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ոլորտը տարեց-տարի զարգացում է ապրում, և դրա վառ ապացույցներն են վիճակագրական տվյալների ամենամյա դրական միտումները, նաև զբոսաշրջիկների կողմից դեպի մեր երկիր ուղղվող ֆինանսական հոսքերի աճը: Զբոսաշրջության ոլորտը տարբեր երկրների օրինակով տարբեր դրսևորումներ ունի, և քանի որ մեր երկիրը ևս անմասն չի մնում համաշխարհային տնտեսական հարափոփոխ իրադարձություններից, այն մեր երկրում նույնպես հանդես է գալիս իր ուրույն դրսևորումներով և առանձնահատկություններով: Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտի առանձնահատկությունները բազմազան են և որպես օրինակ ստորև ներկայացվել է տվյալ ոլորտի զարգացմանը խթանող մի քանի նորարարություններ, որոնք կիրառվում, կամ կարող են կիրառվել ՀՀ-ում գործող թանգարաններում: Ժամանակակից տնտեսական զարգացումները պատկերացնել առանց նորարարությունների գրեթե անհնար է: Այժմ անդրադառնանք զբոսաշրջության զարգացման ենթաոլորտ հանդիսացող Հայաստանի Հանրապետությունում գործող թանգարաններին, որոնցում ներդրված նորարարությունները հնարավորություն են տալիս ավելի մեծ թվով այցելուների և զբոսաշրջիկների ներգրավել:

Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում նորարարական ծրագրերով ավելի շատ հանդես են գալիս հենց թանգարանները<sup>4</sup>: ՀՀ թանգարանների կողմից մատուցվող ծառայությունների ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել են առավել կիրառվող նորարարությունների արդի մոտեցումները, որոնք նպաստում են թանգարանի այցելուների թվի ավելացմանը: Թանգարանը մշակութային հաղորդակցության կարևոր օղակներից մեկն է ոչ միայն տեղի բնակչության,

---

<sup>4</sup> ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու 2015 թ. տարեկան գիտական նստաշրջանի կուրթեր. Ամալյա Նավասարդյան, (ՀՀ թանգարաններում կիրառվող ինովացիաները) 2015թ., էջ 13-16

այլև տվյալ երկիր կամ տարածք այցելողների համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թանգարանները գրավչություն են ձեռք բերում հասարակության այքերում, եթե բացի հավաքածուների պահպանումից ու ցուցադրությունից, մշակում և կիրառում են նաև նորարարություններ: Թանգարաններում նորարարություններ կիրառելու անհրաժեշտությունն առաջացավ արագ փոփոխվող հասարակական պահանջների, թանգարանների շահույթի ավելացման, դիրքերը պահելու ու ամրապնդելու նպատակով:

Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում կազմակերպվում է Թումանյանի հեքիաթների բեմականացում, նաև տարբեր խաղ-մրցույթները: Նմանօրինակ անիմացիաները գրավում են հարյուրավոր այցելուների: Թանգարանում մեծ կիրառություն է ստանում նաև 3D ձևաչափերի օգտագործումը: Ջայնային և լուսային էֆեկտների շնորհիվ փորձ է արվում ցուցադրել որոշ առարկաներ ու իրեր: Աշխարհում նորարարության եզակի օրինակ է Հովհաննես Թումանյանի հոլոգրաֆիկ պատկերի ստեղծումը 3D ձևաչափով («Պատրանք վերնատանը»), որի նախաձեռնությունը Երևանում գտնվող Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանինն է: Հովհաննես Թումանյանի թանգարանը նաև գրքեր է հրատարակում՝ մասնավորապես «Հասկեր» տարեգիրքը, որը ներկայացնում է Հովհաննես Թումանյանի և նրա ընտանիքի կենսագրական մանրամասնությունները, որը ևս մեկ խթան է ավելի մոտիկից ծանոթանալու իր և իր ընտանիքի պատմության հետ:

Հայաստանի Հանրապետության թանգարաններում կիրառվող նորարարության տեսակներից մեկը թանգարանի այցելուին թույլ է տալիս թանգարանում չօգտվել էքսկուրսավարի ծառայությունից և ստանալ տեղեկատվություն աուդիոգիդերի միջոցով, ինչպես նաև ինքնուրույն շրջել թանգարանում: Վերջինս, ինքնին, արմատական փոփոխություն է թանգարանի գործունեության մեջ, որն ունի իր դրական և բացասական կողմերը: Այս միջոցի կիրառումը կնպաստի անձնակազմի աշխատանքի օպտիմալացմանը և թանգարանի նպատակներից բխող այլ գործառնությունների իրականացմանը: Թանգարանային ցուցանմուշների ծանոթանալ կարելի է նաև վիրտուալ այցելությունների շնորհիվ: Այսօր համացանցը թույլ է տալիս վիրտուալ այցելություններ կատարել թանգարաններում, սակայն սահմանափակում է դիտվող ցուցանմուշների քանակը՝ դրանք որպես «խայծ» օգտագործելով և հետաքրքրությունն առաջացնելով վիրտուալ այցելուների շրջանում: Պոտենցիալ հաճախորդն իրեն զգում է թանգարանի ներսում, «քայլում է թանգարանում», ստանում ցուցանմուշների ու պահվող իրերի մասին մասամբ տեղեկատվություն, որն էլ նրան

դրդում է հետագայում անձամբ այցելել թանգարան: Այս փոփոխության շնորհիվ թանգարանների այցելուները նախքան այցը կարող են պատկերացում կազմել թանգարանի մասին:

Մայրաքաղաք Երևաի պատմության թանգարանը ևս այս ոլորտում իրականացնում է հետաքրքիր միջոցառումներ՝ 3D անիմացիաներ՝ Երևան քաղաքի հատակագիծը դարձնելով շարժող օբյեկտների ամբողջություն: «Թանգարանային գիշեր» միջոցառման ժամանակ իրականացվում է նաև City Tour տարբերակով միջոցառումների շարք, որի ժամանակ այցելուները հնարավորություն ունեն քաղաքում մի թանգարանից մյուսը շրջել ավտոբուսներով: Կրճատելով ժամանակն ու տարածությունը՝ օտարերկրյա հյուրերը հնարավորություն են ստանում ավելի մեծ թվով թանգարաններ այցելել և ծանոթանալ մայրաքաղաքին:

Մարզերում գտնվող թանգարաններում՝ հատկապես Գյումրու և Վանաձորի, ևս իրականացվում են տարաբնույթ մշակութային, ժամանցային ու կրթական ծրագրեր: Միեր Մկրտչյանի թանգարանը ստեղծել է կինոսիրողների ակումբ, որտեղ մասնակիցները ծանոթանում են կինոարվեստի հետ: Հովհաննես Շիրազի թանգարանը ներկայացրել էր «Թանգարանը որպես այլընտրանքային ուսումնառության և հաղորդակցության տարածք» ծրագիրը: Վանաձորի կերպարվեստի թանգարանն իրականացնում է «Պատանի արվեստաբան» կրթական ծրագիրը, որի հիմնական նպատակն է կերպարվեստի պատմության վերաբերյալ գիտելիքներ փոխանցել պատանիներին: Դսեղի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը գովազդային վահանակների միջոցով հանրայնացրել էր Դսեղի շրջակայքը:

Թանգարանային նորարարության մեկ այլ տեսակ առաջարկում է ստեղծել օնլայն հարթակ համապատասխան օնլայն ծրագրով, որտեղ ապագա հաճախորդը լրացնում է հատուկ մշակված օնլայն հարցաթերթիկ, արդյունքում ծրագիրը ստեղծում է հաճախորդի համար հատուկ էջ և կազմում նրա համար անհատական էքսկուրսիա, սակայն որը վերջնական տարբերակը չէ, այցելուն կարող է այն որոշակի փոփոխությունների ենթարկել արդեն այցելության ժամանակ: Էքսկուրսիայի ավարտից հետո հաճախորդը ստանում է իր էքսկուրսիայի լուսանկարները և ցանկության դեպքում նաև տեսագրությունը:

Այսպիսով, վերը նշված նորարարությունները ընդամենը մի փոքր մասն են կազմում ընդհանուրի հանրագումարում, և նրանց ներկայացման հիմնական նպատակն այն է, որ ցույց տրվի, թե ինչպես մի փոքր ոլորտ ներկայացնող, սակայն երկրի դիմագիծը ցույց տվող թանգարաններում կիրառվող նորարարությունները հեռահար կերպով կարող են հանդիսա-

նալ և՛ ներքին այցելուների, և՛ միջազգային զբոսաշրջիկների լայն զանգվածների պահանջարկի մեծացման աղբյուր: Ավելին, երկարատև ժամանակահատվածում ամենօրյա պահանջարկ ունեցող ծառայություններն արդեն իրենց տեղը զիջում են առավել մրցունակ և նորարարություններով ներբեռնված ծառայություններին: Ուստի, ոչ միայն այս ոլորտը, այլև տնտեսության զարգացմանը օժանդակող բազմաթիվ ոլորտներ և ծառայություններ, արտադրություններ և բիզնեսի ճյուղեր անհրաժեշտ է համալրել ժամանակակից նորարարություններով, որը հնարավորություն կտա ոլորտների առաջանցիկ զարգացմանը, որոշ դեպքերում նաև ռեսուրսների խնայմանը, ծախսերի նվազեցմանը, պահանջարկի մեծացմանը և ի վերջո գոյություն ունեցող շահույթի գերազանցմանը: Նշենք նաև, որ հենց այսպիսի ենթաոլորտների զարգացման շնորհիվ և հանրագումարում է, որ արձանագրվում է տնտեսության աշխուժացում, զարգացում, ինչու չէ նաև տնտեսական աճ: Ուստի այս նորարարությունների կիրառումը այն փոքր ուղղորդումն է, որի օրինակով ավելանում են ոչ միայն տվյալ ծառայություններից օգտվողների թվաքանակը, այլև այդ ծառայությունների դիմաց ստացվող ֆինանսական հոսքերը՝ չմոռանալով որ այս ամենը իր դրական ազդեցությունն է ունենում տվյալ ոլորտների արդիականացմանը, որակի բարձրացմանը և ժամանակակից պայմաններին համապատասխանեցմանը: Ավելին, ծառայությունների ոլորտների զարգացումները դոմինոյի էֆեկտով իրենց ազդեցությունն են ունենում զբոսաշրջիկների ընթացիկ հոսքերում, որոնց իրական պատկերը տարեցտարի արտացոլվում է զբոսաշրջիկների թվաքանակի դրական փոփոխություններով և իրենց արտահայտումը գտնում վիճակագրական տվյալներում: Զբոսաշրջության ոլորտը ոչ միայն առանձին տնտեսությունների, այլև համաշխարհային տնտեսության գլխավոր շարժիչ ուժերից մեկն է, ուստի նրա զարգացմանը օժանդակող տնտեսական քաղաքականության միջոցառումների իրականացումը պետք է լինի անընդմեջ և անհետաձգելի:

## ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՈԳԻՅԻՈՆ ԴՐՍԵԿՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**ՌԱԶՄԻԿ ԿԱՍՈՅԻ ԻՍԱԿԱԿՅԱՆ**, *տ.գ.թ.*,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հոդվածում ներկայացվել է զբոսաշրջության ձևավորման և զարգացման պատմությունը: Անդրադարձ է կատարվել տվյալ ոլորտի կազմակերպման ձևերին և ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծմանը: Հղում է կատարվել նաև Հայաստանի Հանրապետության թանգարաններում կիրառվող նորարարություններին, որոնց ներդրումը ևս մեծ խթան է հանդիսացել տվյալ ծառայությունից օգտվող այցելուների թվաքանակի աճի, ինչպես նաև զբոսաշրջային հոսքերի ավելացմանը:

***Բանալի բառեր.** զբոսաշրջություն, զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն, զբոսաշրջային ծառայություններ, զբոսաշրջային օպերատոր, զբոսաշրջային գործակալ, տնտեսական աճ, նորարարություններ*

## ЭВОЛЮЦИЯ ТУРИЗМА И ВОЗМОЖНОСТИ ИННОВАЦИОННОГО РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**ՐԱԶՄԻԿ ԿԱՄՈԵՎԻՇ ԻՏԱԿՅԱՆ**, *կ.ճ.ն.*,

*Младший научный сотрудник  
Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье представлена история формирования и развития туризма. Были затронуты формы организационных структур и создания институциональных фондов данного сектора. Также была проанализирована связь инноваций, используемых в музеях Республики Армении, вклад которых увеличил количество посетителей и туристических потоков.

***Ключевые слова:** туризм, организация мирового туризма, туристические услуги, туроператор, турагент, экономический рост, инновации*

## THE EVOLUTION OF TOURISM AND INNOVATIVE DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REPUBLIC OF ARMENIA

**RAZMIK KAMO ISAHAKYAN**, *Ph.D. in Economics*  
*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics,*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article presents the history of tourism evolution and development. The author addresses the forms of organizing tourism and the creation of the institutional foundations. The article addresses the innovations and/or innovative solution introduced and utilized in the museums of the Republic of Armenia that could contribute to the growth of the number of visitors, the end users of these services, and international tourists as well.

**Keywords:** *Tourism, World Tourism Organization, travel services, tour operator, travel agent, economic growth, innovations*

### **ՀՀ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՄԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Յուրաքանչյուր երկրի տնտեսության գործունեության և տնտեսական համակարգի կարևորագույն հիմքերից մեկը էներգետիկ համակարգն է: Էներգետիկ համակարգի գործունեության արդյունավետությունն էական ազդեցություն ունի տնտեսության զարգացման և դրա ճյուղերի վրա: ՀՀ տնտեսությունում էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպությունների կառավարման կազմակերպչական արդյունավետ կառուցվածքի ընտրության, ձևավորման և կատարելագործման խնդիրները կարևոր են և ձեռք են բերում նոր նշանակություն, քանի որ շուկայական տնտեսության պահանջները բավարարող և կազմակերպության արդյունավետ գործունեություն ապահովող կառավարման իրատեսական կառուցվածքի ձևավորումը էլեկտրաէներգետիկական համակարգի կազմակերպության առջև ծառայած բազմաթիվ խնդիրների լուծման ուղին է:

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ներկա վիճակի ընդգրկուն վերլուծության համար անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ էլեկտրակայանների կողմից վերջին տասը տարիների ընթացքում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխության շարժընթացը:

Աղյուսակ 1-ի տվյալները փաստում են, որ դիտարկվող ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները, աճման կամ նվազման հստակ միտումներ չեն դրսևորել: 2005թ. գրանցելով 6316 կՎտժ արտադրված էլեկտրաէներգիայի ցուցանիշ<sup>1</sup>, հետագա տարիներին արտադրության ծավալները նվազել են: Արտադրվող էլեկտրաէներգիայի ցուցանիշը առաջին անգամ հաղթահարվել է հինգ տարի անց՝ 2010թ. հասնելով 6490 կՎտժ արդյունքի<sup>2</sup>:

<sup>1</sup> [http://psrc.am/docs/reports/electric/MainCharateristics4Q\\_2005.pdf](http://psrc.am/docs/reports/electric/MainCharateristics4Q_2005.pdf) ՀԾԿՀ, էլեկտրաէներգետիկական համակարգի 2005թ. հիմնական ցուցանիշները

<sup>2</sup> [http://psrc.am/docs/reports/electric/El\\_En\\_aragum\\_4\\_2010.pdf](http://psrc.am/docs/reports/electric/El_En_aragum_4_2010.pdf) ՀԾԿՀ, տեղեկանք էլեկտրաէներգետիկական համակարգի 2010թ. առաքված էլեկտրական էներգիայի (հզորության) վերաբերյալ

**ՀՀ էլեկտրակայանների կողմից 2005-2016թթ. ընթացքում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխության շարժընթացը<sup>3</sup>(Կվտժ)**

	2005	2006	2007	2008	2009	2010*	2011	2012	2013	2014	2015	2016
«ՀԱԷԿ» ՓԲԸ	2716.3	2640.3	2553.4	2461.7	2493.7	2490	2548.1	2311	2359.7	2464.8	2787.7	2380.5
«Հրազ ՋԷԿ» ՓԲԸ	1435.5	1138.3	1131.6	1495.5	887.8	348.4	628.1	797	660.1	957	546.8	441.4
«Հրազդան 5» կայան	-	-	-	-	-	-	57.9	935.1	1079	857.5	638.4	694.8
«Երևանի ՋԷԿ»	391.7	337	357.1	336.4	240.7	1064.7	1685.7	1641.9	1405.7	1447.9	1594.6	1427.3
«ՄԷԿ ՓԲԸ»	519.2	583.9	521.3	576.2	486.5	727.1	650.9	632.3	467.9	474.7	453.4	405.5
«Որոտան»	1027.6	1007.9	1030	907.6	1130.6	1311.4	1289.1	1118.8	965.2	833.1	915.9	988.3
Փոքր կայաններ	225.8	231	301.3	312.8	399.2	519.4	549.4	575	744.1	688.9	839.9	959.6
Ընդամենը	6316.1	5940.9	5897.5	6114.1	5671	6490.9	7432.7	8036.2	7710	7750	7798.1	7315.3

Տարիների ընթացքում արտադրվող էլեկտրաէներգիայի ցուցանիշի անկանոն փոփոխությունը մի շարք պատճառներ ունի, որոնց շարքում են տնտեսական ակտիվությունը բնութագրող ցուցանիշները, էլեկտրաէներգիայի արտահանման դինամիկան, եղանակը և այլ գործոններ: Արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալներում զգալի մաս է կազմում «Որոտանի», «Միջազգային էներգետիկ կորպորացիայի» և մնացած փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալը, իսկ դրանց արտադրանքի վրա ուղղակիորեն ազդում են եղանակային պայմանները, մասնավորապես տարվա ջրառատ կամ սակավաջուր լինելը: Սակայն, չնայած նշված փաստերին, ուսումնասիրելով դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները և համադրելով դրանք հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների հետ, այդ երկու ցուցանիշների միջև չենք տեսնում միտումների համաչափություն: Դա նշանակում է, որ հիդրոէլեկտրակայանները արտադրության ընդհանուր ծավալների վրա նշանակալի ազդեցություն չունեն:

Ճիշտ հակառակ պատկերն է Ատոմակայանի դեպքում. այս օբյեկտի և երկրում արտադրված էլեկտրաէներգիայի աճի և նվազման միտումները ընթանում են գրեթե զուգահեռ: Ատոմակայանը 2005թ. 2716.3 կվտժ արդյունքը<sup>4</sup> չի ապահովել տասը տարի շարունակ՝ մինչ 2015թ., իսկ 2012-

<sup>3</sup> 2005-2016թթ. ՀՀ Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի էլեկտրական էներգիայի հաշվետվությունների հրապարակումներ <http://psrc.am/am/sectors/electric/reports>

<sup>4</sup> [http://psrc.am/docs/reports/electric/MainCharateristics4Q\\_2005.pdf](http://psrc.am/docs/reports/electric/MainCharateristics4Q_2005.pdf) ՀԾԿՀ, էլեկտրաէներգետիկական համակարգի 2005թ. հիմնական ցուցանիշները



2015թթ. չորս տարիների ընթացքում Ատոմակայանի արտադրած էլեկտրաէներգիայի ծավալի տեսակարար կշիռը հետզհետե աճել է՝ 28.76%-ից հասնելով 35.75%-ի: Սա նշանակում է, որ մեծանում է էլեկտրաէներգետիկական համակարգի կախվածությունը մեկ արտադրողից: Հաշվի առնելով նաև Ատոմակայանի «մեծ տարիքը» և մաշվածության աստիճանը, հիմք ունենք եզրակացնելու, որ սա մեծ վտանգ է երկրի էներգետիկ անվտանգության տեսանկյունից:

Դիտարկվող ժամանակահատվածում էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպությունների արտադրած էլեկտրաէներգիայի ծավալների էական կառուցվածքային տեղաշարժեր են արձանագրվել: 2015թ.-ի դրությամբ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում մեծացել է ՀԱԷԿ-ի տեսակարար կշիռը. դիտարկվող ժամանակահատվածում տեսակարար կշիռը կազմել է միջինում 37.69%: Տեսակարար կշռի ամենամեծ տատանումներն արձանագրվել են ՋԷԿ-երի մոտ: Ամենացածր՝ 19.9% տեսակարար կշռի ցուցանիշը արձանագրվել է 2009թ., պայմանավորված ինչպես նախորդ տարվա նկատմամբ ՋԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի 38.4% կրճատմամբ, այնպես էլ ՀԷԿ-երի արտադրած էլեկտրաէներգիայի 12.23% աճով: ՋԷԿ-երի պատկերն ավելի ամբողջական ներկայացնելու նպատակով նշենք, որ դրանց կողմից առաքված էլեկտրաէներգիայի ինքնարժեքի թանկ լինելու պատճառով հնարավորինս քիչ ծավալով էլեկտրաէներգիա է առաքվում, բացառությամբ Երևան ՋԷԿ-ի նոր շոգեգազային էներգաբլոկով արտադրված էլեկտրաէներգիայի, որի գինը մրցունակ է համարվում<sup>5</sup>: Այդ փոփոխություններով պայմանավորված ՀԷԿ-երի տեսակարար կշիռը 3.85 տոկոսային կետով աճել է 2009թ. նկատմամբ:

2011թ. պատկերը կտրուկ փոխվել է: ՀԷԿ-երի արտադրած էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխությունը այդքան էլ էական չէ, չնայած շատ կարևոր է նշել, որ զգալի աճել են փոքր կայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները, նույնիսկ այն պարագայում, երբ 2015թ. ՄԷԿ-ի և Որոտանի գումարային արտադրանքը էականորեն չի փոխվել, փոքր կայանների արտադրանքը աճել է 21.9%-ով: Ի դեպ միայն ՓՀԷԿ-երի ցուցանիշներն են, որ դիտարկվող ողջ ժամանակաշրջանում մշտապես աճել են: Եթե 2005թ.-ին ՓՀԷԿ-երը արտադրել են 225800 Կվտ/ժ, ապա 2015թ. արտադրվել է 3.7 անգամ ավել էլեկտրաէներգիա: ՓՀԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի աճը պայմանավորված է նաև դրանց թվի աճով:

<sup>5</sup> Նոր էներգաբլոկը գործում է 2010թ.-ից:

Դիտարկվող ժամանակահատվածում ատոմակայանի միջին տեսակարար կշիռը կազմել է 37.6%, ՋԷԿ-երինը՝ 38.2%, ՀԷԿ-երինը՝ 24.2%: Սա խոսում է էլեկտրաէներգետիկ շուկայի տարբերակված լինելու մասին: Նման պնդումը, կարծես թե, այդքան էլ հիմնավոր չէ, քանի որ մեր կողմից կատարված հաշվարկները փաստում են, որ չնայած արձանագրված դրական տեղաշարժերին՝ 2015թ.-ին 2005թ. նկատմամբ Հերֆինդալ Հիրշմանի գործակցի ցուցանիշը բարելավվել է:

*Աղյուսակ 2*

**2005-2015թթ. Հերֆինդալ Հիրշմանի գործակիցը<sup>6</sup>**

2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
3015.48	2814.78	2643.9	2612.67	2792.69	2996	2472.3	1957.44	1955.35	2029.5	2575.7

According to the DOJ-FTC 2010 Horizontal Merger Guidelines, the agencies will regard a market in which the post-merger HHI is below 1500 as "unconcentrated," between 1500 and 2500 as "moderately concentrated," above 2500 as "highly concentrated."


Այն դիտարկվող ժամանակահատվածում գրեթե միշտ գերազանցել է 2500 սահմանաչափը, որը փաստում է, որ շուկայի կենտրոնացվածությունը բարձր է: 2011-2015թթ. Հերֆինդալ Հիրշմանի գործակիցը գտնվել է 2000-2500 միջակայքում՝ փաստելով շուկայի միջին կենտրոնացվածությունը, այնուամենայնիվ ցուցանիշը ավելի մոտ է բարձր համակենտրոնացման շեմին: Այս դիտարկման լույսով հիմք ունենք եզրակացնելու, որ կենտրոնացվածության բարձր աստիճանը կարևոր հիմնախնդիր է, հատկապես, էներգետիկ անվտանգության տեսանկյունից:

ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ներկա վիճակի ընդգրկուն վերլուծության համար անհրաժեշտ է դիտարկել նաև ՀՀ և հարևան երկրներ արտահանված և ներմուծված էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխությունները և սպառման կառուցվածքը վերջին տասնյոթ տարիների ընթացքում:


Ճիշտ է, մինչև 2010թ. բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի տեսակարար կշիռը աճել է, սակայն 2010թ. սկսած նկատվել է տեսակարար կշռի նվազում: Մինչդեռ մինչև 2013թ. բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծավալներն աճել են:

Հետաքրքրական է նաև դիտարկել էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը ըստ սպառողների խոշորացված խմբերի:

<sup>6</sup> <http://www.unclaw.com/chin/teaching/antitrust/herfindahl.htm> Herfindal Hirshman Index (HHI) calculator




**Գծապատկեր 1. 2005-2015թթ Բնակչության կողմից սպառված էլեկտրաէներգիայի ծավալների հարաբերությունը սպառման հետ**



**Գծապատկեր 2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից մատակարարված էլեկտրաէներգիան (ըստ սպառողների խաշորացված խմբերի) 2017թ.<sup>7</sup>**

<sup>7</sup> [http://psrc.am/images/docs/reports/electric/2017/4-er/Himnakan\\_bnutagrer\\_2017-4.pdf](http://psrc.am/images/docs/reports/electric/2017/4-er/Himnakan_bnutagrer_2017-4.pdf) 2017թ էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական բնութագրերի ՀԾԿՀ պաշտոնական հրապարակում:

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից՝ «ՀԷՑ» ՓԲԸ էլեկտրաէներգիայի սպառման հիմնական սեկտորը բաժին է ընկնում բնակչությանը, արդյունաբերությանը և այլ սպառողներին, իսկ բյուջետային կազմակերպությունների, ոռոգման, տրանսպորտի ու ջրահեռացման սպառումն ունի համեմատաբար փոքր տեսակարար կշիռ:



**Գծապատկեր 3. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից մատակարարված էլեկտրաէներգիան (ըստ սպառողների խտրացված խմբերի) 2003, 2008, 2011 և 2017թթ.<sup>8</sup>**

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տարեկան պաշտոնական հրապարակումների տվյալներից պարզ է դառնում, որ ՀՀ տնտեսական զարգացման տարբեր շրջափուլերում «ՀԷՑ» ՓԲԸ կողմից մատակարարված էլեկտրաէներգիայի սպառման ծավալային կառուցվածքներում էական փոփոխություններ չեն արձանագրվել անգամ 2009թ. տնտեսական ճգնաժամից տարիներ առաջ և հետո: Դիտարկվող ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտահանումը փոփոխությունների

<sup>8</sup> <http://psrc.am/am/sectors/electric/reports> էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական բնութագրերի ՀՕԿՀ պաշտոնական հրապարակումներ 2003, 2008, 2011 և 2017թթ.:

կայուն միտում չի դրսևորել, իսկ 2009-2010թթ. արտահանման կտրուկ աճը պայմանավորվել է 2009թ.-ին ստորագրված Իրան-Հայաստան գազ-էլեկտրաէներգիա փոխանակության պայմանագրով:

*Աղյուսակ 2*

**ՀՀ և հարևան երկրներ արտահանված և ներմուծված էլեկտրաէներգիայի ծավալների փոփոխությունը 2000-2015թթ. ընթացքում(Կվտժ)<sup>9</sup>**

Էլ. էներգիա	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Արտադրված	5958.6	5744.8	5518.8	5500.9	6030	6316.9	5941.3	5897.6	6114.4
Ներմուծված	352	330.2	306.2	306.7	259.7	337.6	354.9	418.7	343.4
Արտահանված	814.8	700.9	659.9	583.1	1012.3	1151.1	754.5	451.3	359.6
Էլ. էներգիա	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Արտադրված	5671.5	6491	7433	8036	7710	7750	7798	7315.3	7762.9
Ներմուծված	291.1	246	301	98	198	191	174	272.6	319.5
Արտահանված	336	1061	1383	1696	1226	1236	1424	1226.4	1439.6

Էլեկտրաէներգիայի ներմուծումը վերջին տարիներին հետզհետե նվազել է՝ 2006-2015թթ. կրճատվելով ավելի քան 50%-ով: 2015թ. ներմուծվել է ընդամենը 174000Կվտ/ժ էլեկտրաէներգիա: ՀՀ-ում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները վերջին 10 տարիներին կայուն կերպով աճել են, իսկ 2012թ. կուլմինացիոն 8036Կվտ/ժ ցուցանիշը նույն թվականին գործարկված, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող, «Հրազդան-5» կայանի 440 ՄՎտ հզորություն ունեցող շոգեգազային էներգաբլոկի արդյունքն է:

Ամփոփելով պետք է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտահանումը փոփոխությունների կայուն միտում չի դրսևորել: 2005-2015թթ. Հերֆինդալ Հիրշմանի գործակցի ցուցանիշը բարելավվել է, սակայն կենտրոնացվածության բարձր աստիճանը կարևոր հիմնախնդիր է, հատկապես, էներգետիկ անվտանգության տեսանկյունից:

<sup>9</sup> <http://psrc.am/am/sectors/electric/reports> 2000-2017թթ. էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական բնութագրերի ՀՕԿՀ պաշտոնական հրապարակումներ:

## ՀՀ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՄԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

**ՀՐԱՆՏ ՍՏԵՓԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթայանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հոդվածում ուսումնասիրվել են 2005-2016թթ. ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիա արտադրող կայանների արտադրության շարժընթացները, դրանց կառուցվածքային տեղաշարժերը, հաշվարկվել է էլեկտրաէներգիայի արտադրության ադրյուրների կենտրոնացվածությունը 2005-2015թթ. համար: Ուսումնասիրությունները հաստատել են, որ Հերֆինդալ Հիրշմանի գործակցի ցուցանիշը բարելավվել է: Ուսումնասիրվել է ՀՀ էլեկտրաէներգիայի արտահանման և ներմուծման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի սպառման կառուցվածքը և կատարվել է եզրակացություն:

**Բանալի բառեր.** *էլեկտրաէներգիա, էներգետիկ համակարգ, էլեկտրաէներգիայի արտադրություն, էլեկտրաէներգիայի սպառում, էլեկտրաէներգետիկ հաշվեկշիռ, էներգետիկ անվտանգություն:*

## АНАЛИЗ ПРОИЗВОДСТВА И ПОТРЕБЛЕНИЯ ЭЛЕКТРОЭНЕРГИИ В АРМЕНИИ

**ГРАНТ СТЕПАНОВИЧ МАРГАРЯН**, *к.э.н.*

*младший научный сотрудник Института экономики имени М. Котаяна,  
Национальная Академия Наук Республики Армения*

**Аннотация:** В статье излагаются тенденции развития производства электростанций на 2005-2016 годы, их структурные сдвиги и концентрация источников генерации электроэнергии на 2005-2015 годы. Исследования подтвердили, что индекс Херфиндала Хиршмана улучшился. Изучены и сделаны выводы по структуре экспорта и импорта электроэнергии в Армении, а также по их потреблению.

**Ключевые слова:** *электроэнергия, энергетическая система, производство электроэнергии, потребление электроэнергии, электроэнергетический баланс, энергетическая безопасность.*

# ANALYSIS OF THE GROWTH PATTERN OF ELECTRICITY GENERATION AND CONSUMPTION IN THE REPUBLIC OF ARMENIA

**HRANT STEPAN MARGARYAN**, *Ph.D. in Economics*  
*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics,*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article studies the growth pattern of power plants production over the period 2005-2016, the structural shifts of thereof, and the degree of concentration of electricity generation sources for the period 2005-2015 has been measured. The study has confirmed that the value of the Herfindahl-Hirschman Index has improved. The structure of electricity export and import to Armenia, and electricity consumption have been investigated as well, respective conclusions have been made.

**Keywords:** *Electricity, energy system, electricity generation, electricity consumption, electricity balance, energy security*

## **ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԱՊԱԳԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ**

Ժամանակակից քաղաքակրթությունների զարգացման և գոյության համար էներգիայի բավարար պաշարների առկայությունը անփոխարինելի և պարտադիր նախապայման է<sup>1</sup>: Ավելին, էլեկտրաէներգիայի սպառման և տնտեսական աճի միջև կապի բացահայտմանն ուղղված հետազոտությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ էլեկտրականությունը տնտեսական աճը սահմանափակող փոփոխական է, որի մատակարարման շղկերը բացասական ազդեցություն են թողնում տնտեսական աճի մեծության վրա<sup>2</sup>:

Էներգիայից հասարակական կյանքի տարբեր հատվածների կախվածության աճին զուգահեռ ամբողջ աշխարհում ավելի ու ավելի արդիական են դառնում էներգետիկ ապահովվածության և էներգետիկ անվտանգության հիմնահարցերը: Ընդհանուր առմամբ էներգետիկ անվտանգության և կայունության բնորոշման համար կիրառվում են շուրջ 30 տարբեր ցուցանիշներ, որոնցից առանձին երկիր ինքնուրույն ընտրում է իր համար առավել կարևոր ցուցանիշների համախումբը<sup>3</sup>: Եթե առաջնորդվենք «Էներգիայի միջազգային գործակալության» բնորոշմամբ, որի համաձայն էներգետիկ անվտանգությունը սահմանվում է որպես խելամիտ գներով էներգիայի աղբյուրների անընդհատ ապահովման հնարավորություն<sup>4</sup>, ապա ՀՀ տնտեսական իրողությունների համատեքստում այն կարող ենք դիտարկել 2 տեսանկյունից: Նախ՝ ՀՀ էներգետիկ պահանջարկի առնվազն 2/3-ը բավարարվում է ներկրվող միջուկային և ածխաջրածնային հենքով էներգակիրների հաշվին, հետևաբար ՀՀ էներգետիկ անվտանգության կարևորագույն հենքը էներգակիրների անխափան մատակարար-

<sup>1</sup> Jefferson M., There's nothing much new under the Sun: The challenges of exploiting and using energy and other resources through history. Energy Policy, Volume 86, November 2015, pp. 804–811.

<sup>2</sup> Sofien Tiba and Anis Omri, “Literature Survey on the Relationships between Energy, Environment and Economic Growth,” Renewable and Sustainable Energy Reviews, 2016, doi:10.1016/j.rser.2016.09.113

<sup>3</sup> Կարապետյան Կ.Վ., Էներգետիկ անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը և բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Էդիթ Պրինտ», 2009, էջ 13-17:

<sup>4</sup> The International Energy Agency, <https://www.iea.org/topics/energysecurity/>



րումն է: Մյուս կողմից՝ էներգետիկ անվտանգությունը պետք է հնարավորինս հենվի սեփական էներգետիկ ռեսուրսների վրա:


20-րդ դարավերջի ՀՀ տնտեսական շրջափակումը ցույց տվեց, որ բնական գազի մատակարարումների անխափանդությունը խիստ վիճելի է, որով պայմանավորված մեծ նշանակություն սկսեց տրվել միջուկային էներգետիկական որպես ՀՀ էներգետիկ համակարգի կայունության հիմք դիտարկելուն: Նման մոտեցումը լիովին արդարացված էր, քանի որ առկա տեխնոլոգիաների և արժեքային շղթաների պայմաններում միջուկային էներգետիկային այլընտրանք առաջադրելը գործնականում անհնար էր: Արդյունքում Հայաստանում վերագործարկվեց միակ միջուկային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկը, և Հայաստանը վերադարձավ միջուկային երկրների «ակումբ»: Ներկայումս Հայաստանը միջուկային ռեակտոր շահագործող 31 երկրներից մեկն է<sup>5</sup>: Չնայած Հայաստանի ատոմային էլեկտրակայանն իր գումարային հզորությամբ ամենափոքրն է աշխարհում, այնուամենայնիվ, իր ունեցած դերակատարմամբ այն Հայաստանի համար բազմակի անգամ ավելի կարևոր է, քան շատ զարգացած երկրների համար իրենց ազգային միջուկային հզորությունները: Բնականաբար գործող էներգաբլոկը ունի շահագործման սահմանափակ ժամկետներ, որի ավարտից հետո անհրաժեշտ է կառուցել համարժեք այլընտրանքային հզորություններ: Որպես այդպիսին, առնվազն վերջին 10-15 տարիների ընթացքում, առավել հաճախ քննարկվում է 3-րդ միջուկային ռեակտորի շինարարությունն ու շահագործումը՝ միջուկային էներգետիկական ներկայացնելով որպես այլընտրանք չունեցող տարբերակ:

Մակայն վերջին տարիների տեխնոլոգիական զարգացումները կարծես մերժում են միջուկային էներգետիկայի անփոխարինելիության արքսիումը, առնվազն մի շարք միջուկային կարգավիճակ ունեցող երկրներում: Հետևաբար տնտեսական ու աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում ՀՀ միջուկային էներգետիկայի զարգացման հեռանկարների և նպատակահարմարության քննարկումը անհրաժեշտ է իրականացնել էներգետիկայի զարգացման համաշխարհային միտումների համատեքստում:

Առաջին կարևորագույն հիմնահարցը, որ անհրաժեշտ ենք համարում շոշափել սույն վերլուծությունում, վերաբերում է այն հարցադրմանը, թե արդյո՞ք միջուկային էներգետիկայի զարգացումը նպաստում է էներգետիկ անկախությանը աշխարհում ընդհանրապես, և Հայաստանում մաս-

<sup>5</sup> Համաշխարհային միջուկային ասոցիացիայի տվյալներով (<http://www.world-nuclear.org/>):

նավորապես: Գծապատկեր 1-ում ներկայացված են միջուկային վառելիքի արդյունահանման և սպառման ծավալները ըստ տարբեր երկրների:



Գծապատկեր 1. Միջուկային վառելիք արդյունահանող և սպառող երկրները<sup>6</sup>

<sup>6</sup> Nikolaus A., Klaus G. The future of nuclear fuel supply. NURIS 2015, the 1st International Conference on Nuclear Risk, Vienna, 16-17 April 2015. [http://nuris.org/wp-content/uploads/2015/04/ArnoldGufler\\_The-Future-of-Nuclear-Fuel-Supply.pdf](http://nuris.org/wp-content/uploads/2015/04/ArnoldGufler_The-Future-of-Nuclear-Fuel-Supply.pdf)

Գծապատկերում ներկայացված տվյալները հետաքրքիր համամասնություններ են բացահայտում: Նախ ակնհայտ է դառնում, որ միջուկային վառելիքի արդյունաբերական պաշարներ ունեցող և արդյունահանող ոչ բոլոր երկրներն են տիրապետում միջուկային էներգետիկ հզորությունների: Մյուս կարևոր դիտարկումն այն է, որ միջուկային էներգետիկա շահագործող 31 երկրներից միայն Կանադան է, որ միջուկային վառելիք տեսանկյունից ինքնաբավարար է: Սա շատ կարևոր դիտարկում է, որը ցույց է տալիս, որ ամբողջ աշխարհում միջուկային էներգետիկայի զարգացման հիմքում գոյություն չունի էներգետիկ անվտանգության ինքնաբավարարության բաղադրիչը: Հայաստանի դեպքում պատկերն էլ ավելի մտահոգիչ է: Հայտնի է, որ ՀՀ միջուկային վառելիքը մատակարարվում է Ռուսաստանից, որն ինքն է հանդիսանում միջուկային վառելիք ներկրող: Հետևաբար, Հայաստանում միջուկային էներգետիկայի հետագա զարգացումը, եթե պետք է հիմնվի ռուսաստանյան միջուկային վառելիքի մատակարարումների վրա, ոչ միայն չի լուծում, այլև խորացնում է էներգետիկ անվտանգության հիմնահարցը:

Կարևոր հիմնախնդիր է նաև միջուկային անվտանգության ապահովման օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորության հիմնահարցը: Միջուկային էներգետիկան հիմնված է ատոմների միջուկների ճեղքման ժամանակ արձակված էներգիայի կլանման և օգտագործման վրա<sup>7</sup>, որը հանգեցնում է ռադիոակտիվ ճառագայթման և միջուկային թափոնների: Միջուկային էներգետիկ կայանների շահագործումը բարդ տեխնոլոգիական գործընթաց է, որի անվտանգության անտեսումը կարող է անդառնալի էկոլոգիական և տնտեսական հետևանքներ թողնել: Ավելին, չնայած անվտանգության վերաբերյալ միջուկային ոլորտի մասնագետների հավաստիացումներին՝ միջուկային էներգետիկայի կետարյա պատմության ընթացքում արձանագրվել են բազմաթիվ վթարներ և արտակարգ պատահարներ, որոնց գերակշիռ դեպքերում հնարավոր է եղել խուսափել միջուկային արտանետումներից և շրջակա միջավայրի աղտոտումից: Այնուամենայնիվ, միջուկային էներգետիկայի պատմության մեջ առանձնացվում են 3 լուրջ միջադեպեր (1979թ.-ի մարտի 28-ին ԱՄՆ-ի Տրինայլ-Այլենդի ատոմային էլեկտրակայանի երկրորդ էներգաբլոկում տեղի ունեցած վթարը<sup>8</sup>, 1986թ.-ի ապրիլի 26-ին ԽՍՀՄ-ի Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարը<sup>9</sup> և 2011թ.-ի մարտի 11-ին Ճապոնական «Ֆուկու-

<sup>7</sup> Большая советская энциклопедия. М., 1970. Т. II. С. 73

<sup>8</sup> [https://en.wikipedia.org/wiki/Three\\_Mile\\_Island\\_accident](https://en.wikipedia.org/wiki/Three_Mile_Island_accident)

<sup>9</sup> [https://en.wikipedia.org/wiki/Chernobyl\\_disaster](https://en.wikipedia.org/wiki/Chernobyl_disaster)

սիմա-1» ատոմային էլեկտրակայանի վթարը<sup>10</sup>): Հետևաբար անհրաժեշտ են անվտանգության ապահովման գործուն մեխանիզմներ, որոնք վերաբերում են ինչպես տեխնոլոգիական ցիկլի արդիականացմանը (միջուկային ռեակտորների արդիականացում, սպասարկող մեքենասարքավորումների տեխնոլոգիաների բարելավում, օգտագործված միջուկային վառելիքի և թափոնների պահպանում և ուտիլիզացիա), այնպես էլ անվտանգության վերահսկողություն ազգային և միջազգային կառույցների գործունեությանը, քանի որ միջուկային անվտանգության հարցերը, որպես կանոն, իրենց ազդեցությունն են թողնում հարևան և տարածաշրջանի երկրների վրա:

Ճապոնական «Ֆուկուսիմա» ատոմակայանի աղետից հետո հայկական ԱԷԿ-ում անցկացվեցին սթրես-թեստեր «հետֆուկուսիմյան» չափանիշներով՝ ԱԷՄԳ-ի փորձագետների մասնակցությամբ: Եզրակացությունը դրական էր, ՀԱԷԿ-ի ռիսկերը վերահսկելի են և գտնվում են ընդունելի մակարդակի վրա: Սակայն, հանուն ճշմարտության պետք է նշել, որ ՀԱԷԿ-ում նույնպես կան խնդիրներ, և եղել են վթարային իրավիճակներ: Հանրությանը հայտնի է ՀԱԷԿ-ում վթարային իրավիճակների երկու դեպքի մասին, որոնք չեն հանգեցրել ռադիոակտիվ արտանետումների և կառավարելի են եղել: 1-ին դեպքը. 1982թ. հոկտեմբեր 15-ին ՀԱԷԿ-ում տեղի ունեցավ վթար, որն առաջացրեց հրդեհ: 20 մետրից ավելի երկարությամբ մայրուղու վրա հրդեհի ազդեցության տակ մալուխները շարքից դուրս եկան, մասամբ վնասվել էին սարքավորումները: Առաջացան լուրջ խնդիրներ թիվ 1 բլոկի ռեակտորի հովացման ռեժիմի պահպանման և վերահսկման հետ, ինչպես նաև բարդություններ թիվ 2 բլոկի ռեակտորի նորմալ հովացման համար: Հրդեհի մարումից հետո հովացման ընթացքում շարժական սարքերի օգնությամբ իրականացվեց ճառագայթային իրավիճակի ստուգում: Արձանագրվեց, որ խիստ ռեժիմի գոտու և ԱԷԿ-ի տարածքում գամմա ճառագայթման ֆոնը գրեթե չի փոխվել՝ համեմատած մինչվթարային մակարդակի հետ<sup>11</sup>:

Մյուս դեպքը տեղի է ունեցել 2017 թ., և կապված էր ՀԱԷԿ-ի 110-կիլովոլտանոց ենթակայանի վթարային անջատման հետ: Դրա պատճառ էր հանդիսացել 110-կիլովոլտանոց գծի վրա սառցակալած հատվածների առկայությունը: Վերջինիս հալելու արդյունքում տեղի էր ունեցել կարճ

<sup>10</sup> [https://en.wikipedia.org/wiki/Fukushima\\_Daiichi\\_nuclear\\_disaster](https://en.wikipedia.org/wiki/Fukushima_Daiichi_nuclear_disaster)

<sup>11</sup> Межведомственная информационная система по вопросам обеспечения радиационной безопасности населения и проблемам преодоления последствий радиационных аварий [http://rb.mchs.gov.ru/mchs/radiation\\_accidents/m\\_other\\_accidents/1982\\_god/Avarija\\_na\\_bloke\\_1\\_Armjanskoj\\_AJES\\_SSSR](http://rb.mchs.gov.ru/mchs/radiation_accidents/m_other_accidents/1982_god/Avarija_na_bloke_1_Armjanskoj_AJES_SSSR)

միացում: Այս դեպքում ևս, ի ուրախություն հանրությանը, միջուկային և ճառագայթային նորմերից շեղումներ չարձանագրվեցին:

Ներկայումս Հայաստանը հայտ է ներկայացրել երկարաձգելու ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետը ևս 10 տարով, որի համար իրականացվում են համապատասխան արդիականացման ներդրումային ծրագրեր: Հաշվի առնելով միջուկային կայաններում վթարների համաշխարհային միտումները՝ պետք է արձանագրել, որ նման կայաններում վթարները բացառելը վեր է մարդու հնարավորություններից, իսկ իրականացվող միջոցառումները կարող են միայն նվազեցնել միջուկային ռիսկերի ընթացիկ մակարդակը: Այս առումով արդիական է ինչպես անվտանգության ապահովման օրենսդրական և ենթասօրենսդրական դաշտի շարունակական բարելավումը, այնպես էլ միջուկային ռիսկերի ապահովագրության, հնարավոր վթարների հետևանքների վերացման ֆինանսական և տեխնիկական միջոցների մշակումը, որոնց իրականացման հիմքում պետք է դրվեն գիտական լուրջ հիմնավորումներ:

Չլուծված խնդիր է միջուկային թափոնների և օգտագործված միջուկային վառելիքի օգտագործման հիմնահարցը: ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի հրապարակած տարեկան գործունեության հաշվետվություններից պարզ է դառնում, որ չնայած միջուկային էներգետիկայի ոլորտի պատասխանատուների հավաստիացումներին՝ ռադիոակտիվ թափոնների կառավարման ոլորտում նույնպես առկա են մտահոգիչ խնդիրներ: Այսպես, ՀԱԷԿ-ի հատուկ մասնաշենքի տանիքում կառուցված ժամանակավոր պահման հարթակում չեն ապահովվել միջին ակտիվությամբ պնդեցված ռադիոակտիվ թափոններով տակառների պահման համար նախագծով նախատեսված ստանդարտի պահանջները, որի հետևանքով տակառներից շատերը ենթարկվել են կոռոզիայի և 65-ն ունեն արտահոսք: Բացի այդ, ՀԱԷԿ-ի հատուկ մասնաշենքի տանիքում տեղադրված 1978 տակառներից 155-ը գտնվում են ժամանակավոր պահման հարթակի տարածքից դուրս, ինչը չիմնավորված բեռնվածություն է ստեղծում ՀԱԷԿ-ի հատուկ մասնաշենքի տանիքի վրա<sup>12</sup>: շեռնաբար միջուկային էներգետիկայի ոլորտի զարգացման հեռանկարային ծրագրերի ժամանակ հատուկ ուշադրություն պետք է հատկացվի միջուկային թափոնների պահպանման և վերամշակման երաշխիքներին: Ներկայումս աշխարհում չկա գեթ մեկ միջուկային թափոնների մշտական պահպանման պաշտոնապես գործող պահեստային

<sup>12</sup> ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2013թ. գործունեության հաշվետվություն, էջ 35:  
[http://www.anra.am/upload/Annual%20report\\_2013.pdf](http://www.anra.am/upload/Annual%20report_2013.pdf)

տարածք: Միջուկային ռադիոակտիվ թափոնների ինքնատրոհմամբ քայքայման համար անհրաժեշտ ժամանակահատվածը չափվում է միլիոնավոր տարիներով, այն դեպքում, երբ մարդկության ստեղծած ամենակայուն շինությունների տարիքը, ինչպիսիք եգիպտական բուրգերն են, ընդամենը 5 հազարամյակով:

Հայաստանի պարագայում հայկական ԱԷԿ-ի ցանկացած խոշոր վթար, որի արդյունքում կխաթարվի միջուկային ռեակտորի ամբողջականությունը, կլինեն միջուկային արտանետումներ՝ Արարատյան դաշտավայրի և մայրաքաղաք Երևանի միջուկային աղտոտմամբ, կարելի է համարել Հայաստանի՝ որպես պետականության վախճանի օր: Տարածաշրջանային զարգացումների արդյունքում ներկայումս բազմակի անգամ ավելացել է ահաբեկչության հետ կապված ռիսկերը: Անկանխատեսելի հարևանների և ծայրահեղականների հարևանությամբ միշտ առկա է նաև ԱԷԿ-ի նկատմամբ ահաբեկչության իրականացման վտանգը: Չի կարելի բացառել, օրինակ, քաղաքացիական օդանավի զավթումն ու այն միտումնավոր ԱԷԿ-ի հետ բախման հնարավորությունը, մանավանդ, Ջվարթնոց օդանավակայանի անմիջական մոտակայքում գործող ԱԷԿ-ի պարագայում:

Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման որոշումը պետք է հաշվի առնի նաև դրա շինարարության ժամանակային և ծախսային կողմերը: Միջուկային էներգետիկ օբյեկտների տեխնոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված նման էլեկտրակայանի կառուցումը դիտվում է որպես մեգանախագիծ, որի իրականացումը, կամ միջուկային էլեկտրակայանի կառուցումը, կարող է տևել բազմաթիվ տարիներ: Նման նախագծերի իրականացումը, որպես կանոն, արտապատվիրվում է, իսկ միջուկային օբյեկտների շինարարությունը իրականացվում է սահմանափակ թվով կապալառուների կողմից: Ավելին, միջուկային էլեկտրակայանների շինարարությունը առավել հաճախ ուղեկցվում է նախագծային ժամկետներից և արժեքներից մեծ շեղումներով, որի արդյունքում բազմաթիվ նախագծեր կասեցվում են՝ հետագա շինարարության տնտեսական աննպատակահարմարության կամ պատվիրատուի ֆինանսական դժվարություններով պայմանավորված: Աղյուսակ 1-ում ներկայացված են վերջին 10 տարում ավարտին հասցված նախագծերը և կառուցման ժամկետները:


**Միջուկային ռեակտորների կառուցման իրական ժամկետները  
2008-2018թթ. համար<sup>13</sup>**

Երկիրը	Ռեակտորների թիվը	Կառուցման ժամանակը (տարի)		
		միջին	նվազագույն	առավելագույն
Չինաստան	31	6.0	4.1	11.2
Ռուսաստան	7	24.0	8.1	35.1
Հնդկաստան	5	9.8	7.2	14.2
Հվ.Կորեա	5	5.3	4.1	7.2
Պակիստան	3	5.4	5.2	5.6
Արգենտինա	1	33.0		33.0
Իրան	1	36.3		36.3
Ճապոնիա	1	5.3		5.1
ԱՄՆ	1	43.5		43.5
Աշխարհում	53	10.3	4.1	43.5

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ միջուկային էլեկտրակայանների կառուցման ժամկետները կազմել են 4.1-43.5 տարի, իսկ կառուցման միջին ժամկետը՝ 10.3 տարի: Ընդ որում, Ռուսաստանը, որը դիտվում է որպես ՀՀ-ում միջուկային նոր էլեկտրակայանի ամենահավանական կապալառու, միջինում կայանի կառուցման համար ծախսել է 24 տարի, իսկ լավագույն դեպքում՝ 8.1 տարի: Ինչ վերաբերում է կասեցված նախագծերին, ապա ըստ վիճակագրական տվյալների՝ ընդհանուր սկսված 762 նախագծերից առնվազն 94-ը, կամ 12 տոկոսը կասեցվել են: Ավելին, կասեցված նախագծերից առնվազն 2-ի դեպքում՝ գերմանական Քալկարի և ավստրիական Զվենտենդորֆի նախագծերը ունեցել են 100% ավարտվածության աստիճան, սակայն այդպես էլ չեն գործարկվել: Հետևաբար լուրջ հարցադրում է Հայաստանում նոր միջուկային էներգաբոլի շինարարության նպատակահարմարությունը, քանի որ էլեկտրաէներգիայի թողարկման մյուս, այդ թվում վերականգնվող աղբյուրների վրա հիմնված տեխնոլոգիաների գների անկման ներկայիս պայմաններում ոչ ոք չի կարող կանխագուշակել 10 տարի հետո միջուկային տեխնոլոգիաների մրցունակությունը, իսկ վարկային միջոցներով կառուցված և անարդյունավետ միջուկային կայանը իրական բեռ կարող է դառնալ ապագա սերունդների համար:

<sup>13</sup> The world nuclear industry status report. Mycle Schneider Consulting Project Paris, London, September 2018, p. 37

Նման պայմաններում զարմանալի չէ, որ ամբողջ աշխարհում վերջին տարիներին դիտվում է նոր միջուկային էներգաբլոկների շինարարության տեմպերի կտրուկ նվազում (գծապատկեր 2):




**Գծապատկեր 2. Նոր միջուկային ռեակտորների շինարարության մեկնարկները, 1951-2018թթ.<sup>14</sup>**

Գծապատկերում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ 1975թ. առավելագույն 44 մեկնարկած միջուկային ռեակտորների շինարարության փոխարեն վերջին տարիներին գործարկվում են տարեկան 2-10 նախագծեր, որոնց մեջ զգալի մասնաբաժին ունեն Չինաստանի կողմից մեկնարկած նախագծերը: Հետևաբար պատահական չէ, որ ներկայումս շահագործվող միջուկային ռեակտորների միջին տարիքը կազմում է շուրջ 30 տարի (գծապատկեր 3):

<sup>14</sup> The world nuclear industry status report. Mycle Schneider Consulting Project Paris, London, September 2018, p. 38



**Age of World Nuclear Fleet**  
as of 1 July 2018




### Գծապատկեր 3. Գործող միջուկային ռեակտորների միջին տարիքը<sup>15</sup>

Լրացուցիչ քննարկման թեմա է միջուկային կայանների կառուցման և ապամոնիտաժման ծախսերի վերլուծությունը: Բացի կառուցման և ապամոնիտաժման ծախսերի նախահաշվայինից մինչև անգամ կրկնակի գերազանցելու համընդհանուր միտումը՝ հարկ է նշել, որ միջուկային կայանների կառուցման ծախսերը 1 ՄՎտ հզորության հաշվարկով գերազանցում են բոլոր մյուս տեխնոլոգիաներին և կազմում 4000-10000 ԱՄՆ դոլար/կՎտ: Գնային տարբերությունները առավել հստակ արտահայտվում են ըստ տարբեր երկրների, հետևաբար գնահատել, թե որքան կարժենա Հայաստանում նոր էներգաբլոկի շինարարությունը, կարելի է միայն կոնկրետ նախագծի դեպքում: Ինչ վերաբերում է կայանը շահագործումից հանելու համար պահանջվող ծախսերին, ապա այստեղ նույնպես առկա է արժեքային մեծ ընդգրկում՝ ընդհուպ մինչև 9000 Եվրո/կվտժ: Ընդ որում կայանի ապամոնիտաժումը չափազանց բարդ տեխնոլոգիական պրոցես է, որի իրականացումը ժամանակային, նյութական և ֆինանսական մեծ ռեսուրսներ է պահանջում: Նշենք միայն, որ 2018թ. դրությամբ 158 միջուկային ռեակտոր գտնվում էին ապամոնիտաժման տարբեր փուլերում, և ամբողջ աշխարհում երբևէ գործարկված ռեակտորների ապամոնիտաժման գործընթացն ավարտվել է միայն 19 ռեակտորի դեպքում<sup>16</sup>: Սա լուրջ մարտահրավեր է, քանի որ վաղ թե ուշ գալու է ՀԱԷԿ-ի ապամոնիտաժման հերթը, որը լուրջ մարտահրավեր է դառնալու Հայաստանի համար:

<sup>15</sup> The world nuclear industry status report. Mycle Schneider Consulting Project Paris, London, September 2018, p. 41

<sup>16</sup> The world nuclear industry status report. Mycle Schneider Consulting Project Paris, London, September 2018, p. 134-150.

Միջուկային էներգիայի զարգացման հեռանկարների ներկայացված խնդիրները բնորոշ են ողջ աշխարհին: Գլոբալ էներգետիկ անվտանգությունը ենթադրում է էներգիայի այնպիսի տեսակներով համաշխարհային տնտեսության ապահովումը, որոնք շրջակա միջավայրին ավելի քիչ վնաս են հասցնում<sup>17</sup>: Դրանցից են վերականգնվող էներգիայի աղբյուրները: Գծապատկեր 4-ում ներկայացված է էներգիայի տարբեր աղբյուրներում համաշխարհային ներդրումների վերջին 15 տարիների շարժընթացը:



**Գծապատկեր 4. Էներգիայի տարբեր աղբյուրներում համաշխարհային ներդրումների շարժընթացը, 2004-2017թթ.<sup>18</sup>**

Գծապատկերում ներկայացված տվյալները վկայում են, որ միջուկային էներգետիկային ուղղվող ներդրումների մասնաբաժինը ունի նվազման միտում, ինչը հստակ ազդանշան է էներգետիկ ոլորտի ռազմավարության առաջնահերթությունների ընտրության համար:

Հայաստանը վառելիքաէներգետիկ ռեսուրսների ներկայիս գների պայմաններում տիրապետում է տնտեսապես հիմնավորված ռեսուրսների բավականին լայն սպեկտր և ծավալներ: Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ տարբեր գնահատումներով Հայաստանում առկա են 3800-4300 ՄՎտ պոտենցիալ հզորությամբ և 7.4-8.7 մլրդ կվտժ տարեկան թողարկման հնարավորությամբ վերականգնվող ռեսուրսներ,

<sup>17</sup> Митрова Т.А. Проблемы глобальной энергетической безопасности. Информационно-аналитический материал. М., 2006.

<sup>18</sup> The world nuclear industry status report. Mycle Schneider Consulting Project Paris, London, September 2018, p. 188.

ինչը համարժեք է Հայաստանի ներկայիս շահագործվող էլեկտրակայանների դրվածքային հզորությանն ու տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալին:

*Աղյուսակ 5*

**Վերականգնվող էլեկտրաէներգիայի ռեսուրսների ներուժը Հայաստանում ըստ տեխնոլոգիայի<sup>19</sup>**

Տեխնոլոգիայի տեսակը	Հզորություն (ՄՎտ)	Արտադրություն (ԳՎտժ/տարի)
Հողմ	300	650
Արդյունաբերական արևային ՖՎ	830-1200	1700-2100
Կոնցենտրացիոն արևային կայան	1200	2400
Ապակենտրոնացված արևային ՖՎ	1300	1800
Երկրաջերմային կայան	25-150	200-1100
Աղբավայրի գազ	2	20
ՓՀԷԿ	100	340
Կենսագազ	5	30
Կենսազանգված	30	230
Ընդամենը	3800-4300	7400-8700

Մեծամորի ԱԷԿ-ի նոր էներգաբլոկի շինարարությունը նպատակահարմար չէ չսկսելը՝ քանի դեռ գտնված չեն ներկայացված հիմնախնդիրների լուծման գործուն մեխանիզմներ: Հայաստանում նոր միջուկային ռեակտորի շինարարությունը ներկայիս աշխարհաքաղաքական և տնտեսական իրողությունների պարագայում խիստ վիճելի է: Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցների ընդլայնման դեպքում, կարող է հասունանալ այնպիսի մի պահ, երբ ռուսաստանյան միջուկային ոլորտի կազմակերպությունները նույնպես հայտնվեն «արգելված գործընկերների» ցանկում, ինչը ոչ միայն կիսատ կթողնի նոր միջուկային կայանի շինարարությունը, այլև հնարավորություն չի ընձեռի միջուկային վառելիք ներկրել գործող էներգաբլոկի համար: Հաշվի առնելով Հայաստանի խիստ սահմանափակ ֆինանսական ռեսուրսները՝ ակնհայտ է, որ Հայաստանը պետք է ընտրություն կատարի մի քանի մեզանախագծերի միջև՝ նոր ատոմային էներգաբլոկի շինարարություն, Հայաստան-Իրան երկաթուղի, հյուսիս-հարավ ավտոմայրուղի, ռազմաարդյունաբերական համալիր և այլն: Նշված նախագծերում միջուկային էներգաբլոկի շինա-

<sup>19</sup> «Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագիր» Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, Երևան, 2014: [http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan\\_final-June-27-2014-arm-final.pdf](http://r2e2.am/wp-content/uploads/2014/09/Armenia-SREP-Investment-Plan_final-June-27-2014-arm-final.pdf)

րարությունը իր ռիսկայնությամբ պայմանավորված առաջնայնությամբ ակնհայտորեն առաջինը չէ:

Այնուամենայնիվ, Հայաստանի համար ԱԷԿ ունենալու և չունենալու հարցը չի կարող սահմանափակվել տնտեսական հիմնավորումներով: ԱԷԿ-ի գոյությունը վկայում է Հայաստանի միջուկային պետության կարգավիճակը, որը մուտք ունի դեպի միջուկային պետությունների ակումբ: Ավելին, Հայաստանում միջուկային հզորությունների առկայությունը թույլ է տալիս վարել «միջուկային սպառազինության առկայության անորոշության» քաղաքականություն, քանի որ առկա ռեսուրսները հնարավորություն են տալիս, գոնե տեսականորեն, ունենալ «կեղտոտ» միջուկային զինատեսակներ: Հետևաբար ՀԱԷԿ-ի ապամոնտաժումը, անգամ կայանի աշխատանքների դադարից հետո, անհրաժեշտ է հնարավորինս ձգձգել՝ միջոցներ ձեռնարկելով միջուկային անվտանգության բարձրացման և թափոնների մնացորդների կառավարման ուղղությամբ:

## **ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԱՊԱԳԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ**, *տ.գ.թ.*,

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**Համառոտագիր:** Վերջին տասնամյակում Հայաստանում միջուկային էներգետիկայի հետագա զարգացումն ու նոր միջուկային էներգաբլոկի շինարարությունը դիտվում էր որպես էներգետիկ անվտանգության այլընտրանք չունեցող սցենար: Այնուամենայնիվ, միջուկային էներգետիկայի զարգացման համաշխարհային միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր երկրներում նկատվում է միջուկային էներգետիկայի նկատմամբ հետաքրքրության անկում, և, ընդհակառակը, վերականգնվող էներգետիկայի վերաթևոտում: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրա հիմքում ընկած են օբյեկտիվ գործոններ, որոնք բնորոշ են նաև Հայաստանին: Դրանցով պայմանավորված Հայաստանում նոր էներգաբլոկի շինարարությունը տնտեսական տեսանկյունից աննպատակահարմար է, մանավանդ առկա վերականգնվող էներգետիկ ռեսուրսների պաշարների պայմաններում: Ռազմավարական տեսանկյունից միջուկային հզորությունները վկայում են պետության կարգավիճակի մասին, որով պայմանավորված առկա միջուկային հզորությունների ապամոնտաժումը պետք է հնարավորինս հետաձգել:

*Բանալի բառեր. միջուկային, էներգետիկա, վերականգնվող, անվտանգություն, ինքնաբավարարություն, վթար, հուսալիություն, ատոմակայան, ռադիոակտիվ թափոններ, էներգամատակարարում:*

## **БУДУЩЕЕ ЯДЕРНОЙ ЭНЕРГЕТИКИ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ТЕХНОЛОГИЧЕСКИХ РАЗВИТИЙ**

**ԱՅԿ ԱՏՈՎՈՎԻՇ ՄԱՐԿՕՅԱՆ**, *կ. է. ն.*

*Институт экономики им. М.Котаяна НАН РА  
старший научный сотрудник*

**Аннотация:** За последнее десятилетие дальнейшее развитие ядерной энергетики и строительство новой атомной станции в Армении рассматривались как безальтернативный сценарий обеспечения энергетической безопасности. Тем не менее, исследование глобальных тенденций в развитии ядерной энергетики показывает, что во всех странах наблюдается снижение интереса к ядерной энергетике и, наоборот, переоцениваются возобновляемые источники энергии. Исследование показало, что эта тенденция основана на объективных факторах, характерных и для Армении. В связи с этим строительство нового энергоблока в Армении экономически нецелесообразно, особенно в условиях имеющихся возобновляемых источников энергии. Со стратегической точки зрения ядерные мощности свидетельствуют о статусе государства, согласно которому демонтаж существующих ядерных мощностей следует по возможности отложить.

**Ключевые слова:** *ядерная, энергетика, возобновляемая, безопасность, самообеспеченность, авария, надежность, АЭС, радиоактивные отходы, энергоснабжение.*

## **THE FUTURE OF NUCLEAR ENERGY IN THE CONTEXT OF MODERN TECHNOLOGICAL DEVELOPMENTS AND ADVANCEMENTS**

**HAYK ASHOT MARKOSYAN**, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics,  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** Over the past decade, the further development of nuclear energy and the construction of a new nuclear power plant in Armenia were considered as a scenario with no alternatives to opt for in order to ensure the energy security. Nevertheless, the study of the global trends on the development of nuclear energy shows that the interest in nuclear energy has been declining in all countries, and on the contrary, the role of renewable energy sources has been overstressed. The study

showed that this trend is based on objective factors specific to Armenia as well. Hence, the construction of a new nuclear power plant and/or energy block in Armenia is not economically feasible, namely due to the availability of renewable energy sources. From a strategic point of view, nuclear facilities indicate the status of the state, according to which the decommissioning of existing nuclear facilities should be postponed whenever possible.

**Keywords:** *Nuclear, energy, renewable, safety, self-sufficiency, accident, reliability, nuclear power plant, radioactive waste, energy supply*

## ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ

### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԱՍԱՏԵՔՍՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում ստվերային տնտեսության նվազեցման գործում հրատապ խնդիրներից մեկը տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն է, հատկապես սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համատեքստում:

Պետք է նշել, որ ստվերային տնտեսության հետևանքների կառավարման սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն անխուսափելի գործընթաց է, ինչը ենթադրում է վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները:

Այսպես, օրինակ, ստվերային տնտեսությունը նպաստում է երկրում սոցիալական լարվածության առաջացմանը և խորացմանը: Ըստ այդմ, մեծանում են երկրում առկա կոռուպցիոն ռիսկերը: Ստվերային տնտեսությունը ազդում է բնակչության կենսամակարդակի վրա, պետության մակրոտնտեսական քաղաքականության համար հիմք հանդիսացող այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են՝ ՀՆԱ-ն, հարկային բեռը, գործազրկության մակարդակը, աղքատության մակարդակը:

Ստվերային տնտեսության ակտիվ միջամտությամբ երկրի տնտեսության մեջ ձևավորվում են շղթայական ռեակցիայի պես գործող տարբեր երևույթներ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում հիմնականում բնակչության միջին և ցածր կենսամակարդակ ունեցող խավի վրա: Հետևաբար, որոշակի ստվերային տնտեսություն ունեցող պետության կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկն է դառնում ստվերային հատվածի դեմ պայքարի ռազմավարության ստեղծումը և իրականացումը: Սակայն ինչպես պայքարել մի երևույթի դեմ, որը տեսանելի չէ, որի իրական չափերը հայտնի չեն, բայց որի բացասական ազդեցությունը զգացվում է բնակչության կենսամակարդակի վրա: Ըստ այդմ, անհրաժեշտ է մոտավոր պատկերացում ունենալ ակնհայտ բացասական երևույթի հետևանքների վերաբերյալ: Հետևաբար, ստվերային տնտեսության դեմ պայքարը լավագույնս կազմակերպելու համար անհրաժեշտ է տեղեկատվություն ունենալ վերջինիս առաջացման նախադրյալների և մասշտաբների մասին:

Հարկ է նշել, որ «սովերային տնտեսություն» եզրույթն ի հայտ է եկել այն պահից սկսած, երբ հասարակական կյանքի տարբեր ոլորտները կանոնակարգելու նպատակով սկսեցին ձևավորվել պետական կառավարման մարմինները՝ տարբերելու տնտեսական գործունեության ֆորմալ ձևերը վերջիններիս ոչ ֆորմալ ձևերից: Ընդհանուր առմամբ, տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն սովերային տնտեսության սահմանման երկու մոտեցումներ.

1. Առաջին մոտեցման կողմնակիցները սովերային տնտեսական գործունեությունը սահմանում են որպես պարզապես չգրանցվող, չհաշվառվող տնտեսական գործունեություն (բնութագրող մոտեցում), այս մոտեցման կողմնակիցները (Ջիմ Թովմասը, Ֆ. Շնայդերը, Դ. Էնեստը, Ֆիլիպ Սմիթը և այլք) սովերային տնտեսության հիմքում ընդունել են այն դրույթը, որ վերջինս հանդիսանում է որպես չհաշվառվող տնտեսական գործունեության տեսակ: Օրինակ՝ ըստ Ջ. Թովմասի. «Դժվար է տալ սովերային տնտեսության ֆորմալ սահմանում» և ըստ նրա սովերային տնտեսական գործունեությունն իր մեջ «ներառում է գործունեության այն տեսակները, որոնք չեն գրանցվում ազգային եկամտի հաշվմանում», իսկ Ֆ. Սմիթը սովերային ոլորտը սահմանում է որպես «շուկայական հիմունքներով ապրանքների և ծառայությունների օրինական կամ անօրինական արտադրություն, որը խուսափում է ՀՆԱ-ի պաշտոնական գնահատման մեջ արտացոլումից»:

2. Երկրորդ մոտեցումը սովերային տնտեսական գործունեությունը սահմանում է՝ հիմնվելով վարքաբանական բնութագրերի վրա՝ որպես տնտեսական գործունեության ծավալման հիմք, ըստ երկրորդ մոտեցման (այլընտրանքային մոտեցում) սովերային տնտեսությունը սահմանվում է՝ ելնելով վարքաբանական բնութագրիներից, որոնք ընկած են տվյալ գործունեության հիմքում: Վերջիններիս ներկայացուցիչներն են՝ Էդգար Ֆեյջը, Դե Սոտոն, Լոայգան, Մ. Ֆլեմինգը, Ջ. Ռոմանը, Գ. Ֆարրելը և այլք: Օրինակ, Է. Ֆեյջը գտնում է, որ պաշտոնական տնտեսական գործունեությունը և սովերային գործունեությունը էապես տարբերվում են նրանով, որ պաշտոնական տնտեսությունը կարգավորվում է ըստ ինստիտուցիոնալ կանոնների: Այսպես, եթե տնտեսական գործունեությունը ծավալվում է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ կանոնների համապատասխան, ապա այդպիսի գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտը հանդիսանում է պաշտոնական տնտեսության մասնակից: Իսկ այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտն ամեն կերպ հակադրվում և խուսափում է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ կանոններից և նորմերից, ապա վերջիններս հանդիսանում են որպես սովերային տնտե-



սուրջանը մասնակցող սուբյեկտ: Համաձայն Մ. Ֆլեմինգի, Ջ. Ռոմանի և Գ. Ֆարրելի ստվերային տնտեսությունը սահմանվում է որպես «տնտեսական գործակալների վարքագծի որոշակի փոփոխություն՝ ի պատասխան ինստիտուցիոնալ սահմանափակումներին»:

Այսպիսով, ամփոփելով «ստվերային տնտեսության» եզրույթի տարբեր սահմանումներն ու ձևակերպումները կարելի է եզրակացնել, որ առաջին և երկրորդ մոտեցումները հնարավորություն են տալիս առավել ամբողջական դիտարկել ստվերային տնտեսության էությունը: Մասնավորապես, առաջին մոտեցման դեպքում տրվում է ստվերային տնտեսության եզրույթի բովանդակությունը, իսկ երկրորդ մոտեցման դեպքում՝ վերջինիս վարքաբանական հիմնավորումը, և այն շարժառիթները, որոնք պատճառ են հանդիսանում ստվերային տնտեսության առաջացման համար: Ուստի, ստվերային տնտեսությունը, լինելով սոցիալ-տնտեսական երևույթների ամբողջություն, հանդիսանում է խիստ բարդ հետազոտվող օբյեկտ, որն էլ վկայում է, որ վերջինիս սահմանման, գնահատման և հետազոտման խնդիրն այսօր արդիական է: Այժմ տեսնենք, թե ինչպիսի երևույթներ են պատճառ հանդիսանում ստվերային տնտեսության ձևավորման և զարգացման վրա: Ազդում են տարբեր նախադրյալներ, մասնավորապես՝

1. Հարկային բեռի մակարդակը: Այսպես, եթե հարկային դրույքաչափերի ավելացումը կամ նոր հարկատեսակների սահմանումը բերում է նրան, որ տնտեսվարող սուբյեկտներն ամեն կերպ ձգտում են խուսափել լրացուցիչ հարկային պարտավորություններից և մասնակի կամ ամբողջությամբ անցում են կատարում ստվերային ոլորտ:

2. Պետական վերահսկողության աճը, որն ուղեկցվում է հասարակական կյանքի այս ոլորտի կարգավորման օրենքների և սահմանափակումների ավելացմամբ: Պետական վերահսկողության աճը բերում է տնտեսվարող սուբյեկտների գործարքային ծախքերի ավելացմանը, ինչն էլ պատճառ է հանդիսանում վերջինիս դեպի ստվերային գործիքների ոլորտ տեղափոխելու համար:


3. Աշխատանքի շուկայում պետական կարգավորման անհամապատասխան աճը, որը դրսևորվում է պաշտոնական աշխատանքային օրվա տևողության կրճատմամբ և լրացուցիչ խթան է ստեղծում թաքնված զբաղվածության ծավալների համար:

Հարկ է նշել, որ ստվերային տնտեսությունն ունի ավելի շատ բացասական, քան դրական ազդեցություն, որն էլ պահանջում է դրա դեմ համակարգված և հետևողական պայքար: Մասնավորապես, ստվերային


տնտեսությունը ցանկացած երկրում բացասական ազդեցություն է ունենում բնակչության միջին և ցածր կենսամակարդակ ունեցող խավի վրա:

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշը տվյալ երկրում աղքատության մակարդակն է, որը արտացոլում է «կյանքի տարբեր կողմերը»՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ, ներառյալ ձայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը: Պաշտոնական տվյալներով ՀՀ-ում աղքատության մակարդակը կազմում է բնակչության 29%-ը (900 հազ. մարդ), իսկ իրականում՝ մոտ 40%: Սակայն, պետք է նշել, որ աղքատության հետ մեկտեղ աճել է գործազրկությունը (մոտ 18%) և արտագաղթը: Բավականին ցածր մակարդակի վրա է գտնվում բնակչության կենսամակարդակը: Ներկայումս բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) տարեկան կտրվածքով կազմում է 3700 դոլար: Համեմատության համար նշենք, որ այն Խորհրդային Հայաստանում կազմում էր 4,9-5 հազար դոլար: Այս բոլորի հիմնական պատճառը եղել է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգի բացակայությունը: Դիցուք, ըստ նոր դասական հայեցակարգի՝ երկրի տնտեսական ու սոցիալական զարգացումը պայմանավորվում է մակրոտնտեսական հավասարակշռության ստեղծմամբ: Դրան հասնելու համար անհրաժեշտ է առաջին՝ առաջարկի և պահանջարկի հավասարակշռության հիման վրա ապահովել կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճ, երկրորդ՝ ապահովել բարձր մակարդակի զբաղվածություն: **Գծապատկեր 1-ի** տվյալների համաձայն 2016 թվականին 2015 թվականի համեմատ աղքատության մակարդակը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 29.4%, արդյունքում, աղքատության մակարդակը վիճակագրորեն չի փոփոխվել: 2016 թվականին, ինչպես և նախորդ 7 տարիներին, Հայաստանում աղքատության մակարդակը դեռ գերազանցել է 2008 թվականի աղքատության մակարդակը 1.8 տոկոսային կետով կամ 6.5%-ով (27.6%), մինչդեռ ծայրահեղ աղքատության մակարդակը 2016 թվականին 2008 թվականի համեմատ բարձրացել է ընդամենը 0.2 տոկոսային կետով: Միննույն ժամանակ, ճգնաժամից հետո աղքատների թիվը 2016 թվականին 2008 թվականի համեմատ նվազել է 2.9 տոկոսային կետով: Պետք է նշել, որ ներկայումս Հայաստանի կառավարությունը աղքատության հաղթահարման համար առաջնորդվում է «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով»: Եվ ըստ այդ ծրագրի, նախատեսված է եղել աղքատության մակարդակը 2017թ. հասցնել 24%-ի: Բայց քանի որ 2016թ. տվյալներով՝ աղքատության մակարդակը կազմել է 29.4% է, դժվար է ակնկալել, որ 2017թ.

աղքատության ցուցանիշը կարող է կազմել 24%: Չնայած նրան, որ 2017թ. տնտեսական աճը կազմել է 7.5%, սակայն որակական առումով, այն չի կարող զգալիորեն ազդել աղքատության մակարդակի նվազման վրա:



Գծապատկեր 1. 2008-2016 թթ. աղքատության մակարդակը ՀՀ-ում (%)<sup>1</sup>




Գծապատկեր 2. 2004-2016 թթ. ծայրահեղ (պարենային) աղքատության և աղքատության ընդհանուր զիծ ցուցանիշները ՀՀ-ում (դրամ)<sup>2</sup>

<sup>1</sup> ՀՀ ԱՎԾ Տարեգրքեր՝ 2017թ., 2013թ., «Կենսամակարդակ»՝ էջեր 106, 109, <http://www.armstat.am/file/doc/99506313.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99478608.pdf> :

<sup>2</sup> ՀՀ ԱՎԾ Տարեգրքեր՝ 2017թ., 2013թ., 2011թ., 2008թ., «Կենսամակարդակ»՝ էջեր 106, 109, 110, 95, <http://www.armstat.am/file/doc/99506313.pdf> ,

Չնայած, որ աղքատությունը գնահատելու համար ավելի հաճախ օգտագործվող ցուցանիշներից հանդիսանում է աղքատության մակարդակը, այդուհանդերձ այն հաշվի չի առնում աղքատության ինտենսիվությունը, ինչը նշանակում է, թե որքանով են աղքատ տնային տնտեսությունները ցածր աղքատության գծից, ինչը հաճախ անվանում են աղքատության ճեղքվածք: Ինչպես ցույց են տալիս **գծապատկեր 2-ի** տվյալները, 2004-2016 թվականներին ծայրահեղ (պարենային) աղքատության և աղքատության ընդհանուր գծի ցուցանիշները աճել են, մասնավորապես 2016 թվականին 2004 թվականի համեմատ ավելացել են՝ կազմելով համապատասխանաբար 10846 դրամ և 21494 դրամ:

Պետք է նշել, որ 2004 թվականից 2016 թվականն ընկած ժամանակահատվածում ստվերային տնտեսության ծավալների կրճատմանը զուգընթաց կրճատվել են նաև աղքատության մակարդակի ծավալները, մասնավորապես՝ 2008 թվականին 2004 թվականի համեմատ ստվերային տնտեսության ծավալները կրճատվել են կազմելով 1.2%, որի արդյունքում աղքատության մակարդակը ևս կրճատվել է կազմելով 48.4%, իսկ 2016 թվականին 2008 թվականի համեմատ ստվերային տնտեսության ծավալները կրճատվել են կազմելով 40.2%, սակայն տվյալ ժամանակահատվածում աղքատության մակարդակը ավելացել է կազմելով 6.5%, ինչն էլ բնութագրվում է հետձգնաժամային պայմանների առկայությամբ (**գծապատկեր 3**):



**Գծապատկեր 3. 2004-2016 թթ. ստվերային տնտեսության և աղքատության մակարդակի դինամիկան ՀՀ-ում (%)<sup>3</sup>**

<http://www.armstat.am/file/doc/99478608.pdf> , <http://www.armstat.am/file/doc/99466823.pdf> , <http://www.armstat.am/file/doc/99466823.pdf> :

<sup>3</sup> ՀՀ ԱՎԾ Տարեգրքեր՝ 2017թ., 2013թ., 2008թ., «Կենսամակարդակ» էջեր 106,109,94, <http://www.armstat.am/file/doc/99506313.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99478608.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99456293.pdf> :

Համեմատության համար նշենք, որ հարևան Վրաստանում աղքատության շեմին գտնվողները 2016 թվականին՝ 2015 թվականի համեմատ (18.4%) կազմել են բնակչության 16%-ը, իսկ 2004 թվականին 24.6%-ը: Ավելին՝ 2017 թվականին 2016 թվականի համեմատ այդ ցուցանիշը նվազել է, կազմելով 14.9%: Պետք է նշել, որ 2015 թվականին Հայաստանում ստվերային տնտեսության չափն ամենավոքորն է եղել Հարավային Կովկասի երկրների շարքում: Արժույթի միջազգային հիմնադրամի 2018 թվականի հունվարի 24-ի զեկույցի համաձայն՝ ստվերային տնտեսությունը մեր երկրի ՀՆԱ-ում կազմել է մոտ 36%: Իսկ 2015 թվականին տարածաշրջանում ստվերային տնտեսության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Վրաստանում, կազմելով 53%: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում, 1991-2015 թվականների միջինացված ցուցանիշով Հայաստանում տնտեսության ստվերը կազմել է ՀՆԱ-ի 42,5%-ը, իսկ Վրաստանում՝ 65%-ը:

Կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում ստվերային տնտեսության և աղքատության մակարդակի միջև գոյություն ունի էական կապ, ինչը հիմնավորվել է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$SH = c_0 + c_1 PL + \varepsilon_t \quad (1)$$

որտեղ՝

SH-ը՝ ստվերային տնտեսության ծավալն է (դրամ),

PL-ն՝ աղքատության ընդհանուր գիծը (դրամ),

$c_0$ ,  $c_1$ -ը՝ անկախ փոփոխականների ճկունության գործակիցներն են,

$\varepsilon_t$ -ն՝ պատահական սխալի մեծությունն է:

Վերլուծության համար դիտարկվել են 2004-2016 թթ. ստվերային տնտեսության և աղքատության ընդհանուր գծի տարեկան վիճակագրական տվյալները, որոնց արդյունքում իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն փոքրագույն քառակուսիների եղանակով՝ Eviews 4 համակարգչային ծրագրի միջոցով: Բացի այդ, մինչ մոդելի գնահատելը, անհրաժեշտ է տվյալները հարթեցնել, ուստի, բոլոր տվյալները լոգարիթմվել են, կեղծ բազմագործոն գծային ռեգրեսիա ստանալուց խուսափելու համար:

Ներկայացված տնտեսաչափական մոդելում վիճակագրական շարքերը 12 են, իսկ դա նշանակում է, որ ստացված արժեքները գրեթե մոտ են իրականությանը:

Աշխատանքում կոռելյացիոն վերլուծության արդյունքների միջոցով հիմնավորվել է ընտրված գործոնի և աղքատության ընդհանուր գծի ցուցանիշի դիպուկության աստիճանը: Ավելին, նշանակալից դրական կապ

է ստացվել ստվերային տնտեսության և աղքատության ընդհանուր գծի միջև՝ 0.82 (աղյուսակ 1):

*Աղյուսակ 1*

**Ընտրված գործոնների միջև կոռելյացիոն արժեքները<sup>4</sup>**

	Ստվերային տնտեսություն	Աղքատության ընդհանուր գիծ
Ստվերային տնտեսություն	1	
Աղքատության ընդհանուր գիծ	0.824331	1

Վերլուծությունները հիմնավորում են, որ դրանց միջև իրոք գոյություն ունի նշանակալից դրական կոռելյացիա: Հետևաբար, ստվերային տնտեսության գործոնի և աղքատության ընդհանուր գծի միջև գոյություն ունի նշանակալից փոխկապվածություն: Այսինքն, դա նշանակում է, որ ստվերային տնտեսությունը դրական ազդեցություն է ունեցել աղքատության մակարդակի վրա՝ 0.82 տոկոսային կետի չափով, ուստի, աղքատության մակարդակի կրճատման համար անհրաժեշտ է ՀՀ տնտեսությունում նվազեցնել ստվերի ծավալները:

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՐԴԻՆԵՐԸ  
ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԵՑՄԱՆ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ**

**ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան*

*տնտեսագիտության ինստիտուտի տնտեսագետ*

**Համառոտագիր:** Այսպիսով՝ ստվերային տնտեսությունը դասվում է բարդ հետազոտվող սոցիալ-տնտեսական երևույթների շարքին: Չնայած նրան, որ այն գոյություն է ունեցել մարդկային պատմության գրեթե ողջ ընթացքում, սկսել է ուսումնասիրվել գիտական մակարդակով շուրջ երեք տասնամյակ առաջ և ներկայումս կարիք ունի բազմակողմանի ուսումնասիրման: Բացի այդ, մինչ օրս այս երևույթի վերաբերյալ դեռևս չկա մեկ ընդհանրական սահմանում, որը մեկ անգամ ևս փաստում է այն, որ տնտեսագիտության այս ոլորտը դեռևս շատ քիչ է ուսումնասիրված: Իսկ ինչ վերաբերում է ստվերային տնտեսության կառուցվածքին, այստեղ նույնպես պետք է նշել, որ դրանցից յուրաքանչյուրը, ինչպես և ստվերա-

<sup>4</sup> Հաշվարկվել է հեղինակի կողմից:

յին տնտեսությունն ամբողջությամբ վերցրած բազմաբնույթ են և պահանջում են խորը և համակողմանի ուսումնասիրություն:

***Բանալի բառեր.** ստվերային տնտեսություն, բնակչության կենսամակարդակ, սոցիալ-տնտեսական երևույթներ, ինստիտուցիոնալ բարեփոխումներ, աղքատության մակարդակ, ծայրահեղ աղքատության գիծ, աղքատության ընդհանուր գիծ, կոռեկցիոն վերլուծություն, վիճակագրական շարքեր, տնտեսաչափական մոդել:*

## СПОСОБЫ УЛУЧШЕНИЯ УСЛОВИЙ ЖИЗНИ В КОНТЕКСТЕ СНИЖЕНИЯ ТЕНЕВОЙ ЭКОНОМИКИ

**ЛИЛИТ МАНВЕЛОВНА ПЕТРОСЯН**

*Экономист Института экономики им. М. Котаяна НАН РА*

**Аннотация:** Теневая экономика является одним из наиболее сложных социально-экономических явлений. Несмотря на то, что оно существует почти во всей истории человечества, это явление изучается на научном уровне около трех десятилетий назад, и теперь нуждается во всестороннем исследовании. Кроме того, до сих пор нет общего определения этого явления, что еще раз доказывает, что данная область экономики мало изучена. Что касается структуры теневой экономики, следует также отметить, что каждый из них, подобно теневой экономике, разнообразны и требуют тщательного и всестороннего изучения.

**Ключевые слова:** теневая экономика, уровень жизни населения, социально-экономические явления, институциональные реформы, уровень бедности, крайняя черта бедности, общая черта бедности, корреляционный анализ, статистические ряды, эконометрическая модель

## APPROACHES TO IMPROVING THE LIVING STANDARDS IN THE CONTEXT OF REDUCING THE SIZE OF THE SHADOW ECONOMY

**LILIT MANVEL PETROSYAN**

*Economist, M. Kotanyan Institute of Economics,  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The shadow economy is considered one of the socio-economic phenomena difficult to study. Although it has existed almost throughout the history of humankind, it started being studied as a research topic about three decades ago

and nowadays, it needs a comprehensive investigation as well. Moreover, there is no single definition of this phenomenon, once again pinpointing the fact that this topic is not well studied and addressed. As for the composition of the shadow economy, it should also be noted, that it is diverse and requires a thorough and comprehensive investigation of thereof.

**Keywords:** *Shadow economy, standards of living of the population, socio-economic phenomena, institutional reforms, the poverty level, extreme poverty line, general poverty line, correctional analysis, time series, econometric model*



## ԱՆՈՒՇ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ

### ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ

Ակտիվների և պասիվների կառավարման գործընթացում կարևորագույն դեր է հատկացվում իրացվելիության ռիսկի կառավարմանը: Իրացվելիության ռիսկը ընթացիկ կամ հնարավոր ռիսկն է, որն առաջանում է, երբ կազմակերպությունը ի վիճակի չէ առանց անթույլատրելի կորուստներից խուսափելու կատարել իր պարտավորությունները դրանց վճարման ժամկետը լրանալիս<sup>1</sup>: Իրացվելիության ռիսկի վրա ազդող գործոններից առավել կարևորվում է բանկային ակտիվների որակը, քանի որ չաշխատող վարկերի մեծ ծավալը, ինչպես նաև վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունների ժամանակին չկատարումը նվազեցնում են իրացվելիության մակարդակը: Բանկային ակտիվների որակի ցանկալի մակարդակի ապահովումը սերտորեն կապված է ակտիվների տեղաբաշխման ուղղությունների ընտրության հետ: Ուստի բանկային ակտիվների օպտիմալ կառուցվածքի ապահովումը հանդիսանում է ակտիվների և պարտավորությունների կառավարման գլխավոր խնդիրներից:

ՀՀ բանկային ակտիվների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն վարկային ակտիվները, հետևաբար բանկային համակարգի վճարունակության ապահովման համատեքստում վարկային ռիսկը դիտարկվում է որպես կարևորագույն ռիսկ: Վարկը տնտեսության համար զարգացման գործիք է հանդիսանում, վարկային ակտիվների կառուցվածքի օպտիմալացումը կենսական նշանակություն ունի երկրի տնտեսության առջև դրված խնդիրների իրագործման համար:

Վարկերի օգտագործումը տնտեսական զարգացման որոշիչ գործոն է, չնայած տեսության մեջ և գործնականում չկա միակամ մոտեցում, թե արդյոք վարկը հանդիսանում է ճգնաժամերի աղբյուր և դրանց գլխավոր պատճառ, թե դրա դերը դրական է, և առանց վարկավորման տնտեսական գործընթացը սահմանափակ է դառնում, իսկ տնտեսությանը խոր

<sup>1</sup> Committee Of European Banking Supervisor (CEBS), Second Part Of CEBS's Technical Advice To The European Commission On Liquidity Risk Management 2008 p.15.

ճգնաժամային վիճակից դուրս գալու համար առանց վարկերի երկար տարիներ անհրաժեշտ կլինեն<sup>2</sup>:

Վարկերը կարող են ինչպես նպաստել տնտեսության զարգացմանն ու առանձին ճյուղերի, ոլորտների ընդլայնմանն ու զարգացման խթան հանդիսանալ, այնպես էլ՝ տնտեսական ճգնաժամեր և ցնցումներ առաջացնել, ինչի վառ օրինակն է 2008թ. ճգնաժամը, որի սկզբնապատճառը ԱՄՆ բանկերի կողմից չափազանց մեծ ծավալների անհիմն հիփոթեքային վարկերի տրամադրումն էր: Ֆինանսական համակարգի զարգացման հետևանքները տարբեր են. որոշ երկրներում այն նպաստում են տնտեսական աճի և արտադրողականության բարձրացմանը, իսկ որոշ զարգացած և զարգացող երկրներում՝ տնտեսական աճի նվազման և ճգնաժամերի պատճառ են դառնում<sup>3</sup>:

Ֆինանսական համակարգի զարգացման և տնտեսական աճի միջև կապն արտահայտում է «ֆինանսական խորություն» հասկացությունը, որը կիրառության մեջ է դրվել Համաշխարհային բանկի փորձագետների կողմից: Ֆինանսական խորությունը նշանակում է, որ ֆինանսական ակտիվների կուտակման աճը գերազանցում է տնտեսության աճին: Երբ տնտեսության մեջ ֆինանսական ակտիվների առաջարկն աճում է, դրանց որակն ավելի տարատեսակ է դառնում, ի հայտ են գալիս նոր վարկառուներ, և ֆինանսական համակարգը շարունակում է զարգանալ<sup>4</sup>: Ներքին ֆինանսական խորությունը սերտորեն կապված է թե՛ ներդրումների ավելացման, թե՛ արտադրողականության բարձր տեմպի հետ<sup>5</sup>:

Համաշխարհային բանկի փորձագետների կողմից սահմանվել է ֆինանսական շուկայի ու դրա առանձին հատվածների զարգացման մակարդակի բացահայտման ցուցանիշների 4 խումբ, որոնք բնութագրում են ֆինանսական հաստատությունների խորությունը, հասանելիությունը, արդյունավետությունն ու կայունությունը<sup>6</sup>: Ֆինանսական խորությունը

---

<sup>2</sup> Лаврушин О.И., Роль кредита в экономическом развитии, Банковское Дело N2, 2011 стр. 32,33.

<sup>3</sup> Gezer M.A., The relationship between financial deepening and economic growth: Bootstrap causality approach for the selected upper middle income countries, Theoretical and Applied Economics Volume XXV (2018), No. 1(614), pp. 96-98.

<sup>4</sup> Shaw E.S. Financial Deepening in Economic Development. New York and London: Oxford University Press, Inc. 1973, p. 260.

<sup>5</sup> World Bank, 1997. Private Capital Flows to Developing Countries: The Road to Financial Integration. A World Bank policy research report. Washington, D.C., World Bank Group; Oxford University Press. Retrieved September 15, 2017.

<sup>6</sup> World Bank, Global Financial Development Report 2013, Rethinking the Role of the State in Finance, World Bank, 2014, p. 23.

բնութագրող ցուցանիշների շարքում ամենակարևորն ենք համարում մասնավոր հատվածին տրամադրված վարկերի հարաբերությունը ՀՆԱ-ին:

*Աղյուսակ 1*

**Ֆինանսական համակարգի բնութագրիչները<sup>7</sup>**


<b>Խորություն</b>	<b>Հասանելիություն</b>	<b>Արդյունավետություն</b>	<b>Կայունություն</b>
Մասնավոր հատվածին տրամադրված վարկեր/ՀՆԱ Ֆինանսական հաստատությունների ակտիվներ/ՀՆԱ Փողի ագրեգատ M2/ՀՆԱ Ավանդներ/ՀՆԱ Ֆինանսական հատվածի ավելացված արժեք/ՀՆԱ	Բանկային հաշիվներ 1000 մարդու հաշվով Մասնաճյուղեր 100հզ. մեծահասակի հաշվով Բանկային հաշիվ ունեցող մարդկանց տես. կշիռը Վարկային գիծ ունեցող ընկերությունների (բոլոր) տես. կշիռը Վարկային գիծ ունեցող ընկերությունների (փոքր) տես. կշիռը	Չուտ տոկոսային մարժա Վարկավորում-ավանդներ սպրեդ Ոչ տոկոսային եկամտի տես. կշիռը ընդհանուր եկամուտներում Վերադիր ծախսեր (ընդհանուր ակտիվներում տես. կշիռը) Շահութաբերություն (ըստ ակտիվների, ըստ կապիտալի) Բունի գործակից (Հերֆինդալի ինդեքս)	z-սանդղակ (կամ անվճարունակությունից հեռավորությունը) Կապիտալի համարժեքության գործակիցներ Ակտիվների որակը Բնորոշող ցուցանիշներ Իրացվելիության ցուցանիշներ Այլ ցուցանիշներ (զուտ արտարժույթային դիրք/կապիտալ և այլն)

Վարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը զգալիորեն տարբեր է ըստ երկրների և այն սերտորեն կապված է եկամտի մակարդակի հետ: Վարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը բարձր եկամուտ ունեցող երկրներում 103% է, ավելի քան 4 անգամ գերազանցելով ցածր եկամուտ ունեցող երկրների միջին ցուցանիշը: Վարկեր-ՀՆԱ հարաբերակցության բարձր մակարդակ ունեցող երկրներն են եվրոպական երկրները, Կանադան, Ավստրալիան, ինչպես նաև՝ Չինաստանը: Այս հարաբերակցության բարձր մակարդակը խոսում է նաև աղքատության ցածր մակարդակի մասին: Սակայն վարկեր-ՀՆԱ շատ բարձր հարաբերակցությունը ևս դրական ցուցանիշ չէ: Վարկեր-ՀՆԱ ամենաբարձր մակարդակ ունեցող 8 երկրները (Կիպրոս, Իռլանդիա, Իսպանիա, Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Միացյալ Թագավորություն, Լյուքսեմբուրգ և Շվեյցարիա) հայտնվել են ճգնաժամային իրավիճակներում 2008թ.-ից հետո<sup>8</sup>:

<sup>7</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Համաշխարհային բանկի Global Financial Development Report 2013 զեկույցում առկա տեղեկատվության հիման վրա:

<sup>8</sup> <http://www.worldbank.org/en/publication/gfdr/gfdr-2016/background/financial-depth>

Մեր կողմից իրականացվել է ՀՀ առևտրային բանկերի կողմից մասնավոր հատվածին տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ուսումնասիրություն (որպես ֆինանսական խորությունը բնութագրող կարևոր ցուցանիշի)՝ պարզելու համար, թե ինչպիսի հնարավոր հետևանքներ կարող է ունենալ մասնավոր վարկավորման ծավալների աճը ՀՀ տնտեսության վրա: Ստորև ներկայացված է վարկեր – ՀՆԱ հարաբերակցության (տոկոսային արտահայտությամբ) դինամիկան 2008-2017թթ.:



**Գծապատկեր 1. ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցության դինամիկան 2008-2017թթ. (%)<sup>9</sup>**


Ինչպես երևում է վարկեր – ՀՆԱ հարաբերակցությունը 2008թ.-ից 2017թ. ընկած ժամանակահատվածում զգալիորեն աճել է՝ 17.8%-ից կազմելով 45.1%: Իհարկե, զարգացած և զարգացող մի շարք երկրներում այս ցուցանիշը շատ ավելի բարձր է (Դանիա - 165.6%, Չինաստան -155.8%, Նորվեգիա - 146.3%, Մեծ Բրիտանիա – 136.2% և այլն<sup>10</sup>) և հանդիսանում է ազգային տնտեսության և բնակչության կենսամակարդակի բարձրացման խթանիչ ուժը: Մակայն այս երկրներին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, որոնք չկան Հայաստանի Հանրապետությունում: Նշված երկրներին բնորոշ են վարկերի ցածր տոկոսադրույքները, գործազրկության ցածր մակարդակը, տնային տնտեսությունների եկամուտների կայունությունը, իսկ վարկի մարմանն ուղղված միջոցները նրանց ծախսերի կառուցվածքում մեծ բաժին չեն կազմում:

<sup>9</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ՀՀ ԿԲ կայքում առկա տեղեկատվության հիման վրա:

<sup>10</sup> [https://data.worldbank.org/indicator/fs.ast.prvt.gd.zs?year\\_high\\_desc=false](https://data.worldbank.org/indicator/fs.ast.prvt.gd.zs?year_high_desc=false)

Հաշվի առնելով վերը նշված գործոնների բացակայությունը ՀՀ-ում, ակնհայտ է դառնում, որ մասնավոր հատվածին տրամադրվող վարկերի ծավալների անախադեպ աճի տեմպերը չեն կարող միևնույն ազդեցությունն ունենալ ՀՀ տնտեսության վրա, ինչպիսին դրանք ունեցել են և ակնկալվում է, որ կունենան զարգացած և զարգացող մի շարք երկրների տնտեսությունների վրա:

Մեր կողմից իրականացրած դիտարկումների համաձայն՝ վարկային ներդրումների աճի տեմպերը չեն ունեցել համարժեք դրական ազդեցություն ՀՀ տնտեսական աճի վրա: Ներկայացնենք վարկային ներդրումների դինամիկան ըստ տնտեսության առանձին ոլորտների:



**Գծապատկեր 2. ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերն ըստ ոլորտների (մլն ՀՀ դրամ)<sup>11</sup>**

Գծապատկերից երևում է, որ առավել արագ տեմպերով է աճել արդյունաբերության, առևտրի և սպառողական վարկավորումը: Վարկային ներդրումների աճը առևտրի ոլորտում, ինչպես նաև սպառողական վարկավորման աճի բարձր տեմպերը չեն կարող ապահովել ֆինանսական խորության ցանկալի ազդեցությունը երկրի տնտեսական աճի վրա:

ՀՀ-ն, հանդիսանալով բացասական առևտրային հաշվեկշիռ ունեցող երկիր, չի շահում առևտրի վարկավորման ծավալների աճի բարձր տեմ-

<sup>11</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ԿԲ կայքում առկա տեղեկատվության հիման վրա:

պերից, քանի որ դրանք գլխավորապես ուղղված են ներմուծման ծավալների ավելացմանը, ինչը բարենպաստ ազդեցություն չի կարող ունենալ տնտեսական աճի վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարկային ներդրումների մի մեծ հատված չի նպաստում տնտեսության իրական հատվածի զարգացմանն ու ընդլայնմանը, այլ ուղղվում է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը (սպառողական վարկերի դեպքում) և նախկինում ձևավորված վարկային պարտավորությունների մարմանը (թե սպառողական, թե գյուղատնտեսական վարկերի դեպքում), լուրջ մտահոգություն է առաջանում վարկային ներդրումների որակական ցուցանիշների միտումների հետ կապված:

Բանկային համակարգի ակտիվների որակի վրա վարկային ներդրումների աճի բացասական ազդեցությունն արձանագրվում է նաև ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություններում: 2013 և 2014 թթ. չաշխատող վարկերի տեսակարար կշռի աճը վարկային պորտֆելում հիմնավորվում է նախորդ 3 տարիներին վարկային պորտֆելի արագատեմպ աճով (տարեկան միջինը 30%), իսկ վարկավորման աճի տեմպերի դանդաղումը դիտվում է որպես դրական երևույթ՝ վարկային ռիսկի զսպման տեսանկյունից<sup>12</sup>: 2015թ. զգալիորեն աճել են գյուղատնտեսության, հանրային սննդի և սպասարկման ոլորտի և արդյունաբերության ճյուղերի վարկավորման մեջ չաշխատող վարկերի մասնաբաժինները: Վարկային պորտֆելի որակի վատթարացման պատճառը նախորդ տարիների վարկավորման աճի բարձր տեմպերն են և դրամի արժեզրկման հետևանքով արտարժույթային վարկերի գծով պարտքային բեռի ավելացումը<sup>13</sup>:

Գծապատկեր 1-ից ակնհայտ է, որ վարկերն առավել արագ տեմպերով աճել են 2010-2013թթ., ինչին հաջորդել է վարկային ակտիվների որակի անկում: Այս փոխկապվածությունն ապացուցում է, որ ՀՀ-ում վարկերի աճի բարձր տեմպերը չեն հանգեցնում ՀՆԱ-ի համապատասխան աճի տեմպերին, այլ ընդհակառակը, բացասաբար են անդրադառնում բանկային ակտիվների որակի վրա:

ՀՀ-ում ֆինանսական խորության և տնտեսական աճի միջև կապն ուսումնասիրվել է Ս.Իսրայելյանի կողմից «ՀՀ տնտեսության ֆինանսական խորության վրա միկրոֆինանսավորման ազդեցության գնահատումը» ատենախոսության մեջ: Ըստ հեղինակի այս երկու ցուցանիշների կապի բնույթը կախված է երկրների տնտեսական զարգացածության և ֆինան-

<sup>12</sup> ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն 2013, էջ 33, ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն 2014, էջ 36:

<sup>13</sup> ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն 2015, էջ 34:

սական շուկայի յուրահատկություններից: Նրա կողմից իրականացրած ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ևս փաստում են, որ մասնավոր հատվածին տրամադրվող վարկերը չեն նպաստում տնտեսական աճին<sup>14</sup>:

2013թ.-ից սկսած բանկային ակտիվների որակի վատթարացումը մասամբ պայմանավորված է նաև ՌԴ տնտեսական անկմամբ, քանի որ ՀՀ տնտեսությունը պահպանում է սերտ կախվածությունը ՌԴ-ում տեղի ունեցող իրադարձություններից: Վարկային ներդրումների աճը ակնկալվող տնտեսական աճի փոխարեն կարող է հանգեցնել ճգնաժամային իրավիճակի ստեղծմանը, քանի որ տնտեսության մեջ ցանկացած տատանում, ինչպես նաև ՌԴ տնտեսության անկումը անմիջապես իրենց բացասական անդրադարձն են ունենում վարկային ներդրումների որակի վրա՝ տանելով չաշխատող վարկերի ծավալների մեծացմանը: Այդպիսի միտումը կարող է իրացվելիության և վճարունակության լուրջ խնդրի առաջ կանգնեցնել բանկերին:

Սպառողական վարկավորման և ՌԴ-ից ստացվող դրամական փոխանցումների միջև հնարավոր կապի բացահայտման նպատակով իրականացրել ենք կոռելյացիոն վերլուծություն: Կոռելյացիոն գործակցի հաշվարկն իրականացվել է 2014թ. հուլիսից մինչև 2016թ. հունիս ընկած ժամանակահատվածում ՌԴ-ից դրամական փոխանցումների և սպառողական վարկերի ցուցանիշների համար, և արդյունքում ստացվել է բացասական կոռելյացիայի գործակցի՝ -0.64: Ավելի ուժեղ (-0.7) բացասական կոռելյացիա է բացահայտվել ՌԴ-ից դրամական փոխանցումների և քարտային վարկերի համապատասխան ցուցանիշների համար<sup>15</sup>: Մա նշանակում է, որ ՌԴ-ից դրամական փոխանցումների նվազումն ուղեկցվում է սպառողական վարկերի և հատկապես քարտային վարկերի աճով: Այսինքն, տնային տնտեսությունները, զրկվելով իրենց եկամտի գլխավոր աղբյուրից կամ ստանալով նախկինի համեմատությամբ ավելի փոքր ծավալի փոխանցումներ, որպես իրենց ամենօրյա սպառողական ծախսերը հոգալու աղբյուր են դիտարկում վարկավորումը: Դրամական փոխանցումների նվազումն ուղեկցվում է նաև նախկինում ձևավորված վարկային ակտիվների վերդարձելիության նվազմամբ: Այս միտումն իր մեջ ահռելի ռիսկ է պարունակում, քանի որ ըստ էության, այս վարկառուները չունեն եկամտի կայուն աղբյուր:

<sup>14</sup> Իսրայելյան Ս., ՀՀ տնտեսության ֆինանսական խորության վրա միկրոֆինանսավորման ազդեցության գնահատումը, ատենախոսություն, Երևան, 2017, էջ 80-88:

<sup>15</sup> Կոռելյացիոն գործակցի հաշվարկի համար ընտրվել է նշված ժամանակահատվածը, քանի որ հենց այդ ժամանակահատվածում է դրսևորվել ՌԴ-ից դրամական փոխանցումների նվազումը:

Հաշվի առնելով մեր կողմից իրականացրած հետազոտությունների արդյունքները՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է խստացնել վարկերի տրամադրման պայմանները և ուժեղացնել հսկողությունը վարկերի նպատակային օգտագործման ապահովման նկատմամբ: Ինչպես նշում էր Ջ. Շումպետերը, բանկիրը ոչ միայն պետք է իմանա, թե ինչ գործարք է ֆինանսավորվում իր կողմից և ինչ կարող է ստացվել դրա արդյունքում, այլև նա պետք է ճանաչի հաճախորդին, նրա բիզնեսը և նույնիսկ անձնական սովորությունները, հաճախակի նրա հետ քննարկումներ ունենալով՝ ստանա իրավիճակի հստակ պատկերը<sup>16</sup>: Այս միջոցառումների իրականացման ակտիվ մասնակիցներ պետք է լինեն ինչպես վերահսկող մարմինը, այնպես էլ հենց առևտրային բանկերը, քանի որ մեծածավալ վարկերի տրամադրումն առանց դրանց օգտագործման նկատմամբ պատշաճ հսկողություն սահմանելու մեծացնում է վարկային ակտիվների որակի վատթարացման ռիսկը:

Վարկերի ռիսկայնությունը գուպելու նպատակով ԿԲ կողմից անհրաժեշտ է սահմանել բարձր ռիսկայնությամբ (հետևաբար նաև՝ բարձր տոկոսադրույքով տրամադրվող) սպառողական վարկերի գծով պահուստավորման հատուկ կարգ, ինչի արդյունքում հնարավոր վարկառուների շրջանակից դուրս կնվլեն բարձր ռիսկային վարկառուները, և ռիսկայնության բարձր մակարդակ ունեցող հաճախորդների վարկավորմանը փոխարինելու կգա միջին եկամուտ ունեցող տնային տնտեսությունների վարկավորումը: Ռիսկի բարձր մակարդակը փոխհատուցելու նպատակով բանկերի կողմից սահմանվում են բարձր տոկոսադրույքներ, որոնք կայուն միջին եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար գրավիչ չեն, իսկ տոկոսադրույքների նվազեցումը վարկավորումն ավելի գրավիչ կդարձնի վերջիններիս համար: Պահուստավորման բարձր պահանջները մի կողմից կմեծացնեն ռիսկային վարկերի գծով ապահովվածությունը, իսկ մյուս կողմից (ինչն էլ պետք է հանդիսանա նման բարեփոխման վերջնական նպատակը) բանկերի կողմից վարկավորման ուղղվածությունը ցածր և անկայուն եկամուտներով հաճախորդներից փոխել դեպի միջին և կայուն եկամուտ ունեցող հաճախորդների վարկավորում:

Վերջիններիս ներգրավման հետ կապված ծախսերը կփոխհատուցվեն բարձր ռիսկային ակտիվների նվազման արդյունքում խնդրահարույց վարկերի ետբերման հետ կապված բանկի ծախսերի իջեցման հաշվին: Նման միջոցների ձեռնարկումը կտանի վարկային պորտֆելի որակի բարելավմանը:

---

<sup>16</sup> Schumpeter J., *Business Cycles*, McGraw-Hill, New York 1939, p. 116.



Այսպիսով, ՀՀ առևտրային բանկերի կողմից վարկավորման ընդլայնումը պետք է իրականացվի միայն վարկային ակտիվների որակի ապահովման շեշտադրումով, այլապես այն ոչ միայն չի նպաստի տնտեսական աճին, այլ կարող է բանկերին կանգնեցնել իրացվելիության խնդրի առաջ, ինչպես նաև խորացնել սոցիալական լարվածությունը:

## **ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ**

### **ԱՆՈՒՇ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ*

**Համառոտագիր:** Հոդվածը նվիրված է ՀՀ առևտրային բանկերի վարկային ակտիվների որակի ուսումնասիրությանը, տնտեսական աճի վրա դրանց դինամիկայի ազդեցության բացահայտմանը: Իրականացրած ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարկերի արագընթաց աճը չի ուղեկցվում համապատասխան տնտեսական աճով: Հոդվածում բացահայտվել է արտերկրից դրամական փոխանցումների և սպառողական վարկերի միջև կախվածություն, հիմնավորվել է բարձր ռիսկայնությամբ հաճախորդներին տրամադրվող վարկերի նվազեցման անհրաժեշտությունը՝ վարկային պորտֆելի բարելավման նպատակով:

*Բանալի բառեր. բանկային ակտիվներ, վարկ, վարկային պորտֆելի որակ, վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցություն, ֆինանսական խորություն, տնտեսական աճ, սպառողական վարկավորում, դրամական փոխանցումներ, բարձր ռիսկայնությամբ վարկառու:*

## **ДИНАМИКА КРЕДИТНЫХ АКТИВОВ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ РА И ИХ ВЛИЯНИЕ НА ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ СТРАНЫ**

### **АНУШ ТИГРАНОВНА САРГСЯН**

*младший научный сотрудник, аспирант  
Института экономики им. М. Котаняна НАН РА*

**Аннотация:** Статья посвящена изучению качества кредитных активов коммерческих банков РА и влиянию их динамики на экономический рост страны. Исследование показывает, что стремительный рост кредитов не сопровождается соответствующим экономическим ростом. В статье показана

связь между денежными переводами из-за границы и потребительскими кредитами, обоснована необходимость сократить предоставление кредитов высокорисковым заемщикам с целью улучшения кредитного портфеля.

**Ключевые слова:** *банковские активы, кредит, кредитный портфель, соотношение кредитов к ВВП, финансовая глубина, экономический рост, потребительское кредитование, денежные переводы, высокорисковый заемщик*

## **DYNAMICS OF LOAN ASSETS OF ARMENIAN COMMERCIAL BANKS AND THEIR IMPACT ON THE ECONOMIC GROWTH**

**ANUSH TIGRAN SARGSYAN**, *Ph.D. student*  
*Research Associate, Ph.D. student M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article is devoted to exploring the quality of credit assets of Armenian commercial banks and their impact on the economic growth. The study shows that rapid growth in loans isn't accompanied by a corresponding economic growth. The nexus between remittances from overseas and consumer loans is shown in the article and the need to reduce lending of high risk borrowers is substantiated with the goal of improving loan portfolio.

**Keywords:** *bank assets, loan, loan portfolio, ratio of credit to GDP, financial depth, economic growth, consumer loans, remittances, high risk borrower.*

# ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

**ՈՐՔԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության*

*ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

## **«ԻՆՉՈՒ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐ ՀԱՐՈՒՄՏ ԵՆ, ԻՍԿ ՄՅՈՒՄՆԵՐԸ՝ ԱՂՔԱՏ»**

Ամերիկյան հայտնի տնտեսագետ, հայազգի Տարոն Աճեմողլու գիտական հետաքրքրությունների հիմնական ոլորտը համարվում է աշխատանքի շուկայի դինամիկ մոդելների հիմնախնդիրները: Մակայն նրան ավելի շատ համընդհանուր ճանաչում բերեցին Ջեյմս Ռոբինսոնի հետ համատեղ հետազոտությունները: Խոսքը հատկապես վերաբերում է «Դիկտատուրայի և ժողովրդավարության տնտեսական ակունքները» և «Ինչու որոշ երկրներ հարուստ են, իսկ մյուսները, աղքատ» աշխատություններին: Հեղինակները «Դիկտատուրայի և ժողովրդավարության տնտեսական ակունքները» աշխատության գլխավոր ներդրումը համարում են «միասնական կոնցեպտուալ առաջարկը հասկանալու, թե ինչպես է ծագում և ամրապնդվում ժողովրդավարությունը»: Այն կառուցված է երեք հաստատուն հիմունքների վրա.

- մոտեցումը «տնտեսական» է, այն իմաստով, որ ընդգծվում է անհատական տնտեսական խթանների նշանակությունը որպես քաղաքական կողմնորոշումների դետերմինանտ, և այն ենթադրությունից, որ մարդկանց պահվածքը համաձայն խաղերի տեսության մի հայտնի չափով ստրատեգիական է,

- շեշտը դրվում է տարաձայնության հիմնարար կարևորության վրա: Տարբեր խմբեր, իսկ երբեմն նաև դասակարգեր, քաղաքականության արդյունքների նկատմամբ հակադիր շահեր ունեն, որոնք ենթարկվում են քաղաքականության արդյունքները որոշող քաղաքական ինստիտուտների ձևերի նկատմամբ հակադիր շահերի,

- քաղաքական ինստիտուտները խաղում են գլխավոր դերը պարտավորությունների հիմնահարցերի լուծման մեջ, ազդելով ապագա քաղաքական իշխանության դե յուրե բաշխման վրա:

Նշված դիտակետերից էլ աշխատության մեջ տարբեր երկրների օրինակով քննության են ենթարկվում ժողովրդավարության էության, քաղաքականության մոդելավորման, ժողովրդավարության ստեղծման ու հա-

մախմբման, միջին դասակարգի դերի, իշխանության բաշխման և այլ հարցեր:

Մեծ ընդունելության է արժանացել նաև նույն հեղինակների «Ինչու ուրիշ երկրները հարուստ են, իսկ մյուսները աղքատ» տնտեսագիտական բեսսուելերը: Իր նշանակությամբ այն հաճախ համարվում է Մեմյուել Հանտինգտոնի կամ Ֆրենսիս Ֆուկույամայի աշխատությունների հետ: Նրանք փորձում են պատասխանել մի հարցի, որը հարյուրամյակներ շարունակ հուզել է պատմաբաններին, տնտեսագետներին և փիլիսոփաներին՝ ինչու է կայանում համաշխարհային անհավասարության ակունքները, ինչու է համաշխարհային հարստությունն այդքան անհավասար բաշխված աշխարհի տարբեր երկրների և տարածաշրջանների միջև:

\* \* \*

Վերջին շրջանում հաճախ է շրջանառվում Տարոն Աճեմօղլու անունը Հայաստանի տնտեսության արդի գործընթացներին օգտակար խորհրդատվության առումով, թե հանրապետության այսօրվա կացությունն ինչպես է տեղադրվում նրա տեսության առաջադրույթներում:

Աշխատության առաջաբանում Աճեմօղլին և Ռոբինսոնը գրում են. «Այս գիրքն իրազեկում է եկամուտների և կենսամակարդակների այն ճեղքվածքի մասին, որը բաժանում է ամենահարուստ երկրները՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Գերմանիան, Արևադարձային Աֆրիկայի, Կենտրոնական Ամերիկայի և Հարավային Ասիայի ամենաաղքատ երկրներից»: Սույն առաջաբանը գրելիս անակնկալ էր «արաբական գարունը», որը

---

\* Հանրապետության տնտեսագետների վերաբերմունքը Աճեմօղլու առաքելության նկատմամբ չէի ասի թե դրական է: Հեռուստատեսային հաղորդումներից մեկի ժամանակ, երբ Արամ Աբրահամյանը կարծիք էր հարցնում այդ մասին, խոսակցի թերահավատ պահվածքը նշանակում էր, թե նա ինչ կարող է անել «մենք էլ ունենք տնտեսական ծրագիր»: Տարիներ առաջ «անվանի» տնտեսագետներից մեկը նույն կերպ էր արտահայտվում Աբել Ադանբեկյանի մասին: Իսկ ահա մտահոգված մեկը վարչապետին ուղղված բաց նամակում վիրավորված գրում է. «Ինչ եք կարծում, էթե գեներացնենք Հայաստանում աշխատող տասնյակներով տնտեսագիտության դոկտորների և հարյուրավոր տնտեսագիտության թեկնածուների մտքերն ու առաջարկները, դրանք մի քանի անգամ չեն գերազանցի դրսում բնակվող Աճեմօղլու մտահորիզոնը («Առավոտ, 21.08.2018»): Առանց բերված կարծիքների մեկնությունների Աճեմօղլին հենց ինքն է գրում, որ միայն հավաքական գործունեությամբ կարելի է հասնել ազգային տնտեսության վերելքի. «կարծում եմ, թարմ հայացքը Հայաստանի գործընթացների վրա կարող է օգտակար լինել, սակայն հենց Հայաստանի քաղաքացիները պետք է լինեն գործընթացի և գործողությունների կենտրոնում: Այնպես, որ ես իրոք հույս ունեմ, որ իմ օգնությունը օգտակար կլինի, սակայն ես նաև չեմ ակնկալում ավելի մեծ դեր ունենալ» («Ամերիկայի ձայնին», 12.06.2018թ. տված հարցազրույցից):

սկսվեց Թունիսում, այսպես կոչված, «հասմիկյան հեղափոխությամբ»՝ շոշափելով Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի բազմաթիվ երկրների: «Հասմիկյան հեղափոխությունը» սադրեց փողոցային առևտրական Սոխամմեդ Բուազիի 2010թ. դեկտեմբերի 17-ի ինքնահրկիզումը՝ ամբողջ երկրում առաջ բերելով ընդվզումներ և ժողովրդական ալեկոծություն»:

Ժողովրդական դժգոհությունների հիմնական պատճառը բնակչության մեծամասնության աղքատությունն էր: «Ինչու է Եգիպտոսը այդքան աղքատ ԱՄՆ-ից: Ինչն է խանգարում երկիրը հարստանալու համար: Կարելի՞ է աղքատությունը վերացնել Եգիպտոսում, թե այն անխուսափելի է»: Եվ այսպես, ինչու է կայանում համաշխարհային անհավասարության ակունքները, ինչու է համաշխարհային հարստությունն այդքան անհավասար բաշխված աշխարհի տարբեր երկրների և տարածաշրջանների միջև: Հասարակագիտական միտքը հարուստ է հարցի պատասխանները որոնող տեսություններով, տեսություններ, որոնք, ինչպես նկատում են բեստսելերի հեղինակները, «չեն աշխատում»: Առաջինը, որին նրանք անդրադառնում են, աշխարհագրական դետերմինիզմի տեսությունն է, որն ուրվագծվել է Շառլ Սոնտեսքոյի աշխատություններում: Նրա կարծիքով արևադարձային երկրների բնակիչները թուլակամ են, որոնց պակասում է ջանասիրությունն աշխատանքի նկատմամբ, որը և հանգեցնում է աղքատության: Ու, չնայած Սինգապուրի, Մալազիայի, Բոսավանիայի տնտեսական նվաճումները, կարծես, մերժում են նշված թեզը, այնուամենայնիվ հարցի դրվածքը շարունակում է պահպանել իր կենսունակությունը՝ հարստացված լրացուցիչ նոր փաստարկներով: Ինչպես, օրինակ, Ջեֆրի Սաքսը, որը եղանակային և մտավոր կարողությունների փաստարկներից գատ, նշում է նաև արևադարձային հիվանդությունների՝ հատկապես մալարիայի առկայությունը, որը բացասաբար է անդրադառնում առողջության, հետևապես նաև աշխատանքի արտադրողականության վրա, իսկ մյուս կողմից էլ այն, որ արևադարձային երկրներում հողը պիտանի չէ արդյունավետ գյուղատնտեսության համար:

Որպես աշխարհագրական դետերմինիզմի տարբերակ է ներկա-

---

\* Նա հասարակության պատմության մեջ հսկայական տեղ է հատկացնում աշխարհագրական գործոնին. «Կլիմայի իշխանությունը, բոլոր իշխանություններից ուժեղագույնն է», կամ «Կլիմայի տարբերությունները ծնող պահանջումներին տարբերություններից առաջանում է կենսակերպի տարբերությունները, իսկ վերջիններից էլ տարբերություններն օրենքներում» (Монтескье, О духе законов, СПб, с. 306), կամ «Օրենքները սերտ հարաբերակցության մեջ են այն եղանակների հետ, որոնց միջոցով ժողովուրդը արդյունահանում է իր կյանքի միջոցները» (Монтескье, Избранные произведения, М., 1950, с. 396): Նկատի ունենալ հողագործությունը, անասնապահությունը, առևտուրը և այլն:

յանում էկոլոգիայի և էվոլյուցիոն կենսաբանության մասնագետ Ջարեդ Դայմոնդի մշակումը: Որպես թե նոր ժամանակների սկզբում, կապված բույսերի և կենդանիների ընտելացնելու հասանելիության, տարբերությունները իր հետ բերել է գյուղատնտեսության տարբեր ինտենսիվություն, որի հետևանքով տարբեր են եղել տեխնոլոգիական փոփոխությունները, ուղղությունները և հարստության մակարդակները: Հարցի դրվածքն արդեն իսկ խոսում է նրա միակողմանիության մասին, որ այն «այնքան էլ պիտանի չէ միևնույն մայրցամաքի շրջանակներում անհավասարության բացատրության համար, մինչդեռ հենց այս տեսակետն է առավել աչքի զարնում ժամանակակից գլոբալ անհավասարության պայմաններում: Ենթադրենք Եվրասիական մայրցամաքի տարածական կողմնորոշումը կարող է բացատրել այն փաստը, որ անգլիացիների համար հեշտ էր օգտվել Մերձավոր Արևելքում կատարված հայտնագործություններից, բայց դա բոլորովին չի բացատրում, թե ինչու է արդյունաբերական հեղաշրջումը կատարվել Անգլիայում, բայց ոչ թե Մոլդովայում: Աշխարհագրական դետերմինիզմի մոդելը հարստության և աղքատության պատճառականության բացատրության հարցում անգոր է մեթոդաբանական դրվածքի առումով, այն չի հիմնավորում ժողովուրդների «ծաղկման ակունքների պատճառները» և կառուցված է «ոչ ճիշտ պոստուլատների» վրա:

Խնդիրը տեսականացվել է նաև մի այլ ուղղության կողմից՝ կապված մշակութային գործոնների ազդեցության հետ: Գերմանացի սոցիոլոգ Մաքս Վեբերի հայեցողությունը տոգորված է հենց այն իմաստով, որ ռեֆորմացիան և բողոքական էթիկան այն հիմնական գործոններն են, որոնք պայմանավորել են Արևմտյան Եվրոպայի արագ ինդուստրիալ զարգացումը: Ժամանակի ընթացքում մշակույթի դերի գործոնը, բացի կրոնականից, լրացվել է նաև ազգային առանձնահատկությունների, էթիկական նորմաների, աշխարհայացքային, հրեական գործարարական ոգու և ինչ-ինչ այլ փաստարկներով: Բեստսելերի հեղինակների կարծիքով մշակույթի գործոնների վերաբերյալ առաջադրված գաղափարն ընդունելի է մի որոշ տեսակետից, բայց միանգամայն թերի՝ այն որոշիչ դիտելու առաջադրույթը. «Օգտակար է համաշխարհային անհավասարության բնույթը հասկանալու համար կուլտուրայի ազդեցության մասին տեսությունը: Ե՛վ այո, և՛ ոչ: Օգտակար է այն իմաստով, որ մշակույթի հետ կապված սոցիալական նորմերը մեծ նշանակություն ունեն, դժվար են փոփոխվում և հաճախ պահպանում են ինստիտուցիոնալ տարբերությունները... և կարող են բացատրել համաշխարհային անհավասարությունը: Բայց մեծ մասով այդ տեսությունն անօգտակար է, որքանով

մշակույթի այն տեսանկյունները, որոնք հատկապես հաճախ են իրենց վրա ուշադրություն հրավիրում՝ կրոնը, էթիկական սկզբունքները, «աֆ-րիկյան» կամ «լատինամերիկյան» արժեքներն այնքան էլ կարևոր չեն հասկանալու համար, թե ինչպես է ծագել ժամանակակից անհավասարությունը և ինչու է այն այդքան կայուն: Մշակույթի մյուս տեսանկյունները, ինչպիսիք են հասարակության մեջ վստահության մակարդակը և հասարակության անդամների միմյանց հետ կոուպերացիայի հակվածությունը, կարևոր են, բայց դրանք հիմնականում որոշակի ինստիտուտների աշխատանքի էության հետևանք են, այլ ոչ թե անհավասարության ինքնուրույն պատճառը»:

Թե ինչու որոշ երկրները հարուստ են, իսկ մյուսները՝ աղքատ հարցին, այսպես կոչված, «անգիտության» տեսությունը տալիս է մի շատ պարզունակ բացատրություն, համաձայն որի աղքատ երկրների բնակչու-թյունը և նրանց կառավարողները չգիտեն, թե երկիրն ինչպես դարձնել հարուստ: Մինչդեռ, ինչպես նկատում են Աճեմօղլին ու Ռոբինսոնը, «անգիտության» տեսությունն ի տարբերություն աշխարհագրական և մշա-

---

\* Առիթի բերումով նկատենք, որ խորհրդային տարիներին, ըստ էության, մշակույթի՝ տնտեսության վրա ազդեցության վերաբերյալ ուսումնասիրություններ չեն կատարվել: Վերլուծական մտքի շարժումը ուներ միակողմանի բնույթ՝ տնտեսականից դեպի մյուսները: Մինչդեռ շատ կարևոր է պարզաբանել, թե որքանով է համապատասխանում նախորդ տարիներին «ձևավորված մշակույթի տիպը՝ դրված նպատակին, տնտեսության բարձրացմանը»: Ուստի պատահական չէր 1980-ական թվականների վերջերին շուկայական տնտեսության մոտալուտ մոտքի պայմաններում հայտնի սոցիոլոգ Ռ.Ռիվկինայի այն պահանջը, թե «Անհրաժեշտ է դիտարկել տնտեսության վրա մշակույթի ազդեցության մեխանիզմը: Ազդեցությունը կատարվում է տնտեսական հաստատությունների գործունեությունը կարգավորող արժեքների ու սոցիալական նորմերի՝ պլանավորման, մատակարարման, շուկայի, ֆինանսների, հասարակության տարբեր խմբերի պահվածքի ու նրանց վիճակի միջոցով»: Տնտեսության զարգացումը կարգավորող «մշակույթի միավորները» ձևավորվում են նաև տնտեսությունից դուրս՝ բարոյականության, կրոնի, քաղաքականության, գաղափարախոսության, իրավունքի ոլորտներում: Այստեղ մշակվող գիտակցությունն ու պահվածքը հետագայում ձուլվում են տնտեսությանը, մարմնավորվում դրանում ու դառնում տնտեսական մշակույթի մի մասը, որը կարելի է նմանեցնել հասարակության մշակույթի լայն գետից դուրս եկող առվակին» ) տե՛ս «ԶԿՕ», 1989, №1, էջ 22): Իսկ Ա.Մյիթթարյանը կարևորելով շուկայական հարաբերություններին անցնելու մեխանիզմներում «տվյալ երկրի բնակչության գերակշռող մասի էթնիկական ու գենետիկական առանձնահատկությունները», նկատում է, թե «Մենք գտնում ենք, որ փիլիսոփաները, տնտեսագետները, իրավաբանները, մշակույթի գործիչները, հոգեբանները, սփյուռքի մասնագետների հետ սերտ համագործակցելով, պետք է անհապաղ ձեռնարկեն «բարոյականության» համազգային ծրագրի մշակումը, որում կուրվագծվեն հայ ժողովրդին յուրահատուկ բարոյականգնման ռազմավարական և մարտավարական ճանապարհները՝ պարտադիր կերպով հաշվի առնելով դրանց շփման կետերը տնտեսական նորմերի և պատժամիջոցների հետ» (տե՛ս «Էկոնոմիկա», 1992, №1): Այդ մասին տե՛ս մեր «Ուրվագիծ հայ տնտեսագիտական մտքի պատմություն» մենագրությունը (Եր. 2014, գիրք 1, էջ 105-123):

կուրթային տեսությունների, իր մեջ պարունակում է այն հարցի պատասխանը, թե ինչպես լուծել աղքատության խնդիրը: Եթե «անգիտությունն» է նրա պատճառը, ապա տեղեկատվությունն ու լուսավորությունը կօգնեն լուծելու այն: Ստացվում է, որ ճիշտ խորհուրդներով և քաղաքագետներին համոզելով դրանք իրագործելու միջոցով, կարող ենք «նախագծել» աշխարհի ծաղկումը: Իսկ, ինչպես վկայում է տնտեսական զարգացման փորձը, պատճառը հարկ է փնտրել ոչ թե քաղաքագետների «անգիտության», այլ խթանների ու ինստիտուցիոնալ սահմանափակումների մեջ:

\* \*  
\*

Եթե ընդհանրացնելու լինենք Աճեմօղլու և Ռոբինսոնի վերաբերմունքը նշված տեսությունների նկատմամբ, ապա հայացքների ընդհանուր հայտարարում այն ժխտողական է: Նշված տեսությունները, եթե նույնիսկ պարունակում են ճշմարտության ինչ-ինչ տարրեր, այնուհանդերձ բանալի չեն տալիս Եգիպտոսի առջև ծառայած խնդիրները լուծելու համար, «չեն բացահայտում տնտեսական ստագնացիայի խորքային պատճառները»: Այն շարքային եգիպտացիները, որոնք դուրս էին եկել Տախրիբի հրապարակ ոչ տնտեսագետներ էին, ոչ փորձագետներ, բայց նրանք ճիշտ էին. «Իրականում Եգիպտոսը աղքատ է հենց այն պատճառով, որ նրանց կառավարել է էլիտայի մի նեղ շերտ, որը տնտեսությունը կազմակերպել է այնպես, որպեսզի հարստանա՝ ի վնաս ամբողջ մնացած բնակչության»: Բնակչության աղքատության պատճառի նման բացատրությունը ունիվերսալ է ցանկացած աղքատ երկրի համար: Այդ թվում նաև Հայաստանի:

Իսկ, օրինակ, թե ինչու Նոգալես քաղաքը, որի երկու մասերը անջատված չեն կլիմայական տարբեր գոտիներով, աշխարհագրական հեռավորությամբ կամ էպիդեմիոլոգիական կացությամբ, այլ պարզապես բաժանված են սահմանով ԱՄՆ-ի և Մեքսիկայի միջև, առանձնանում են կենսամակարդակի մեծ տարբերություններով: Կամ Հյուսիսային և Հարավային Կորեաների, Արևելյան և Արևմտյան Գերմանիայի՝ մինչև Բեռլինի պատի փլուզումը, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, Եվրոպայի և Աֆրիկայի միջև կենսամակարդակների ճեղքվածքների հարցերը նշված տեսությունները թողնում են անպատասխան: Այս իմաստով Աճեմօղլու և Ռոբինսոնի աշխատությունը փորձ է հարուստ և աղքատ երկրների միջև ճեղքվածքի պատճառականությունը փնտրել նրանց պատմական հետազոծում, գտնել այդ անհավասարության ընդհանուր հիմքերը և մշակել իրենց առաջադրված հարցի վերաբերյալ սեփական



մտակառույցը: Մտորև բերվող անոտատիվ շարադրանքը պատկերացում է տալիս աշխատության լուծումների վերաբերյալ: Նրանք առաջադրում են ազգային անհավասարության մի համապարփակ տեսություն հասկացությունների իր համակարգով:

Դրա հիմքում ընկած է «ինկլյուզիվություն-էքստրակտիվություն» հայեցակարգը, որն օգտագործվում է ազգային բարեկեցության մակարդակը որոշող ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական գործոնների դասակարգման համար: Այն գործում է հետևյալ ձևով. ինկլյուզիվ տնտեսական ինստիտուտները նպաստում են բարգավաճմանը, բայց իրենց կայունության համար կարիք ունեն քաղաքական կառուցվածքի ինկլյուզիվ ձևերի, որոնք իրենց հերթին, հենվում են ինկլյուզիվ տնտեսության վրա: Էքստրակտիվ տնտեսական կառուցվածքները կարող են որոշ ժամանակով ապահովել ազգային արտադրության արագ աճ (այն էլ տնտեսության որոշակի ոլորտներում), սակայն երկարատև հեռանկարի համար դրանք անաշխատունակ են, կամ լավագույն դեպքում քիչ արդյունավետ: Դրանց սատարում են էքստրակտիվ քաղաքական ինստիտուտները, որոնք կարիք ունեն էքստրակտիվ տնտեսության և գորավիզ են դառնում իրենց իշխանությամբ և հեղինակությամբ:

Աշխատության մեջ տնտեսության և քաղաքականության միատիպ ինստիտուտների միջև այդ սիներգիզմը հաստատվում է տնտեսական պատմությունից վերցրած բազմաթիվ օրինակներով: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ինկլյուզիվ և էքստրակտիվ տնտեսական և քաղաքական ինստիտուտների հասկացությունների բովանդակային մեկնությունները: Ինկլյուզիվ են անվանվում տնտեսական կառուցվածքի այն ձևերը, որոնք ժամանակի ընթացքում բնակչության մեծ մասին ապահովում են մուտք (հնարավորություն) ազգային հարստության արտադրության համար: Դրանք պաշտպանում են սեփականության իրավունքը, տնտեսական գործունեության բոլոր մասնակիցների համար ստեղծում են հավասար պայմաններ, խթանում են տնտեսական փոխանակության ազատ խաղերը և խրախուսում տեխնոլոգիական նորամուծությունները: Ընդհակառակը, էքստրակտիվ ինստիտուտները կողմնորոշված են տնտեսական ռեսուրսները հասարակության էլիտար խմբերի ձեռքում կենտրոնացնելու և բնակչության մնացած մասի աշխատանքը օտարելու նրանց օգտին: Հետևապես նրանք չեն պաշտպանում լայն զանգվածների սեփականության իրավունքը և չեն ստեղծում տնտեսական ակտիվության ազդակներ, ճնշում են արդյունավետ մրցակցությունը և արգելակում տնտեսությունը վարելու արդյունավետ ձևերի ներդրմանը:

Հեղինակների հայեցողության մեջ նույն սկզբունքը գործում է նաև

քաղաքական ոլորտի համար: Ինկլյուզիվ քաղաքական ինստիտուտները խոչընդոտում են քաղաքական իշխանության մոնոպոլացմանը և իդեալում նրա լծակները բաշխում լայնորեն (սփռում) և պլյուրալիզմի ոգով: Արդյունքում ունենում ենք արդյունավետ, բայց ոչ չափազանց կենտրոնացված իշխանություն, որը թույլ է տալիս պաշտպանել հասարակական կարգ ու կանոնը, օրինականությունը և սեփականության իրավունքը, միաժամանակ պետական վերահսկողության նեղ կապանքների փոխարեն ապահովելով տնտեսական ազատություն: Ընդհակառակը, էքստրակտիվ տիպի քաղաքական ինստիտուտները իշխանությունը կենտրոնացնում են քչերի ձեռքում և մեխանիզմներ չեն ստեղծում իշխող էլիտայի ոչ բռնի միջոցներով փոխելու համար: Աշխատության մեջ առանձնակի շեշտվում է այն միտքը, որ էքստրակտիվ ինստիտուտները կենտրոնացվածության պայմաններում միանգամայն ընդունակ են որոշակի ժամանակ ապահովել տնտեսական աճ (ինչպես, օրինակ, Ռուսաստանը պետրոլյան ռեֆորմների ժամանակ և ԽՍՀՄ-ը 1930-60-ականներին, երբ տնտեսական ինստիտուտները էքստրակտիվ էին, իսկ շուկայական հարաբերությունները բացակայում էին), սակայն այդ աճը չէին կարող դարձնել ինքնապահպան, հետևապես նաև կայուն՝ պայմանավորված որոշակի պատճառներով: Նախ, դա հնարավոր չէ առանց մշտական տեխնոլոգիական նորամուծությունների, որոնք պահանջում են հնացած արտադրության եղանակի ստեղծագործ ավերումներ: Այդպիսի քայքայումն անխուսափելիորեն վնասում է ունևորների իշխանությունների շահերը և պայթեցնում նրանց արտոնությունները: Ուստի երկրները, որոնցում տիրապետում են էքստրակտիվ ինստիտուտները, երկյուղում են ստեղծագործ ավերման գործընթացներից, իսկ, եթե նույնիսկ թույլատրում են, ապա միայն մասնակիորեն և որոշակի ժամանակով: Մյուս կողմից այդպիսի հասարակությունները հղի են քաղաքական անկայունությանը, որը վտանգ է հանդիսանում տնտեսական առաջընթացի համար: Այդ վտանգից խուսափումը անհնար է հենց էքստրակտիվ իշխանության բնույթով պայմանավորված: Այն իր կրողներին ապահովում է եզակի արտոնություններ, հնարավորություններ՝ նրանց մղելով բռնի ուժով իշխանության լիազորությունները վերաբաշխելու սեփական օգտին:

Աճեւօղլու և Ռոբինսոնի գլխավոր եզրակացությունն է. այս կամ այն երկրի հարստության և աղքատության պատճառները առաջին հերթին որոշվում է կոնկրետ դրանց քաղաքական և տնտեսական ինստիտուտներով, ընդ որում առաջինները խաղում են գերիշխող դեր. «բարգավաճման բանալին ինստիտուցիոնալ կազմավորումների մեջ է, այլ ոչ թե մշակույթի կամ աշխարհագրության»: Ըստ էության աշխատության ամբողջ

շարադրանքը, աշխարհի ամենատարբեր տարածաշրջանների (Արևելյան և Արևմտյան Եվրոպա, Աֆրիկա, Լատինական Ամերիկա, Հնդկաստան, Չինաստան, Մերձավոր Արևելք, Ռուսաստան և այլն) երկրների տնտեսական պատմության հետազոծից բերված վերլուծություններ են՝ կատարված իրենց առաջադրույթի՝ ինկլյուզիվ և էքսկլյուզիվ տնտեսական և քաղաքական ինստիտուտների փորձի դիտակետից: Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրների հետազոծը ներկայացնում է որպես ստեղծագործ ավերումների «գործընթաց», որը ցույց է տալիս, թե դրանցում ինչպես են ձևավորվել այն իրավիճակները, որոնք Աճեմօղլին և Ռոբինսոնն անվանում են կրիտիկական ծայրակցումներ: Դրանք ստեղծում են այն բարենպաստ հավանականությունները, որոնք թույլ կտան էքստրակտիվ ինստիտուտների աստիճանաբար դերի էքսկլյուզիվություն էվոյուցիայի համար: Այդպիսի էվոյուցիան նրանք կոչում են ինստիտուցիոնալ դրեյֆ (հասկացությունը փոխ է առնված պոպուլյացիոն գենետիկայից): Կրիտիկական ծայրակցումները լինելով պատմության շրջադարձային պահերը, սակայն ոչ միշտ են երաշխավորում դեպի ինկլյուզիվության ինստիտուցիոնալ դրեյֆը: Աշխատության «Պատմության բեռը. ոչ մեծ տարբերություններ և բեկումնային կետեր» բաժինը այդպիսի պահերի մասին է: Հայտնի է, որ ժանտախտը միջին դարերում Եվրոպայում պատճառ դարձավ մեծաքանակ մարդկային ռեսուրսների կորստի: Բայց այն, միաժամանակ հանգեցրեց նաև նշանակալից սոցիալական, տնտեսական և քաղաքական փոփոխությունների: Աշխատուժի հսկայական դեֆիցիտը Անգլիայում հանգեցրեց գյուղացիների ֆեոդալական կախվածության թուլացմանը և նրանց տնտեսական ազատությունների ընդլայնմանը: Եվ արդեն XVIII դարի սկզբների երկրում առկա էին ֆեոդալական կապանքներից ազատ աշխատողներ, ձևավորվում էր աշխատանքի ինկլյուզիվ շուկան: Իսկ, օրինակ, Գերմանիայում նույն աշխատուժի դեֆիցիտը նպաստեց ճորտատիրության ուժեղացմանը և էքստրակտիվ ինստիտուտների ամրապնդմանը:

Վերևում նշված նմանատիպ այլ օրինակներով հարուստ է Աճեմօղլու և Ռոբինսոնի աշխատությունը, որոնք, նրանց կարծիքով, թույլ են տալիս հասկանալու, որ պատմությունը և նրա բեկումնային կետերը հաճախ որոշում են տնտեսական և քաղաքական ինստիտուտների զարգացման հետազոծը և օգնում կառուցելու ժամանակակից հարստությունների և աղքատությունների ակունքները բացատրող առավել լրիվ և կատարյալ տեսություն, և պարզաբանելու, թե ինչու երկրների մի մասը անցում է կատարում ինկլյուզիվ քաղաքական և տնտեսական ինստիտուտներին, մյուսները՝ ոչ:



Նշված տեսությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն առումով, թե հանրապետության փոխակերպությունը շուկայական տնտեսությանը, որքան է համապատասխանում նշված չափանիշներին: Հենց այդ միտումներով էլ Է.Մանդոյանը, անդրադառնալով հանրապետության տնտեսական ու սոցիալական կացությանը, և փորձելով երևութները գնահատել առկա ընթացքի մեջ, փորձում է պատասխանել այն հարցին, թե «որտեղ է հայտնվել մեր երկիրն այս տարիների ընթացքում և դեպի ուր ենք գնում»: Հարցի պատասխանը նա փնտրում է նշված տեսության պարագծերում. «Մեր ժողովուրդը այդպես էլ չարդիականացավ: Մենք ունենք շատ դաժան հազարամյա պատմություն և միշտ գործել ենք էքստրակտիվ ինստիտուտների դաշտում, պարծենում ենք այն հատվածներով, որտեղ ունենում ենք ժամանակավոր հաջողություններ, էքստրակտիվ ինստիտուտների՝ «ուժեղ» կենտրոնացված իշխանության շնորհիվ<sup>1</sup>: Ինձ թվում է, պատմության կտրվածքի առումով գործում է հարցի սուբյեկտիվ մեկնաբանությունը: Էքստրակտիվ ինստիտուտների վրա էին կառուցված Հայաստանը նվաճող երկրների հասարակական կարգը, իսկ աշխարհաքաղաքական այդ պայմաններում «ուժեղ» կենտրոնացված իշխանությունը անհրաժեշտաբար պիտի դառնար հայ ազգային ինքնության պահպանման նախապատճառ: Իսկ, որ 1990-ական թվականներին սկիզբ առած շուկայական տնտեսաձևի մուտքի ռեֆորմները կառուցված էին էքստրակտիվ ինստիտուտների վրա, այդպես էին: Չանդրադառնալով այն աղճատումներին ու խեղումներին, որով բնորոշվել է շուկայական տնտեսության լինելիության ընթացքը, որի մասին շատ է գրվել, և որոնց անդրադառնում է Է.Մանդոյանը, կապված ինստիտուտների կիսատպոստության, իսկ հաճախ նաև դրանց գործելու վերաբերյալ պատրանքներին, նա հանրապետության տնտեսական աճի ու աղքատության պատկերներն ածանցում է որպես էքստրակտիվ ինստիտուտների զարգացումների հետևանք:

Հանրապետության հրապարակումներում նշված հարցերն ամենաշատ շոշափվող թեմաներից են: Վիճակագրական տվյալները հակասական են: Աղքատության ստորին և վերին սահմանների, հաշվարկման մեթոդների, պաշտոնական ու իրական պատկերների դժվարությունների, տնտեսական շրջանների շեղումները ընդհանուր մակարդակից և

---

<sup>1</sup> «168 ժամ», սեպտեմբեր 15-16, թիվ 76, 2016:

շատ այլ պայմանականություններ են գործում հաշվարկների ժամանակ:

Այնուամենայնիվ տնտեսագետի կարծիքով իրողությունն այն է, որ 3-3,5 տնտեսական աճ ունենալու դեպքում մենք եվրոպական այսօրվա կենսամակարդակին կհասնենք 240 տարի հետո:

Եվս մի այլ դիտարկում. հանրապետությունն ունի 30 տոկոս աղքատություն (իրական տվյալներով 60-70 տոկոս՝ Է.Ս.), մինչդեռ Ադրբեյջանը՝ 6 տոկոս, Վրաստանը՝ 14,8 տոկոս, Ռուսաստանը՝ 11,2 տոկոս, Ղազախստանը՝ 2,8 տոկոս, գործազրկությունը համապատասխանաբար կազմել է 17,1, Ադրբեյջանում՝ 5,2, Վրաստանում՝ 13,4, Ռուսաստանում՝ 5,1, Ղազախստանում՝ 4,1 տոկոս<sup>2</sup>: Բնակչության ընդհանուր կենսամակարդակի նույն պատկերն է նկարագրում Թ.Մանասերյանը<sup>3</sup>: Բերված վիճակագրությունը լոկ փաստերի ուրվագծումներ չեն, այլ դրանք ճանաչելի են դարձնում տնտեսական երևույթների էությունը, դրանց մեջ հայտնաբերում աննկատելի և «Ստացվում է,- գրում է Է.Մանդոյանը,- բնակչության մեծ մասը չի մասնակցում տնտեսական աճին, ներդրումներ չի անում, բիզնեսով չի զբաղվում, նոր արժեք չի ստեղծում, չի նպաստում տեխնոլոգիական զարգացմանը, որովհետև փող չունի, ընդամենը գոյատևում է»<sup>4</sup>:

Աղքատության կնճիղը լուծելու խնդիրը բնականաբար առաջ է բերում պետության սոցիալական միջամտության և լուծումների հարցը: Արևմուտքը սկսած XIX դարից ստեղծել է սոցիալական ապահովության բազմաշերտ միջոցառումների համակարգ՝ կապված թոշակների, հասարակական վճարների, նպաստների, ինչպես նաև կրթության, առողջապահության և կենցաղային ծառայությունների հետ: Ինչ խոսք, հասարակության սոցիալական կացության բարեկարգման ծրագրեր առաջադրվել են նաև մինչ այդ: Հարկ չկա, դրանց անդրադարձին: Սակայն, հարցի դրվածքի առումով պետության, այսպես կոչված, «բարեգործական» գործառույթի մասին: 1793-ին լույս է տեսնում սոցիալիստական մտքի ներկայացուցիչներից մեկի, Վ.Գոդվինի «Հետագոտություն քաղաքական արդարության մասին» աշխատությունը, ուր հեղինակը տիրող աղքատության պատճառը փնտրում է հասարակության սոցիալական կարգում, գտնելով, թե անհրաժեշտ է հասարակական աշխատանքը, ինչպես նաև այդ աշխատանքի արդյունքները հավասարապես բաշխել նրա մասնակիցների միջև: Տ.Վոյեվոդինան խոսում է հետևյալ մի դեպքի մասին, թե ինչպես մի հավաքություն ներկաներից մեկն ասել է, թե «Դե այդպես

<sup>2</sup> «168 ժամ», սեպտեմբեր 15-16, թիվ 76, 2016:

<sup>3</sup> Տե՛ս «Առավոտ», 27 օգոստոսի, 2016թ.:

<sup>4</sup> «168 ժամ», սեպտեմբեր 15-16, թիվ 76, 2016:

պարոններ, Տոլստոյը սովորեցնում է հարստությունը բաժանել աղքատներին»: «Ես նրան հասկանում եմ,– իսկույն արձագանքում է կալվածատերերից մեկը,– դա շատ ավելի հեշտ է, քան այն խելացի կառավարումը»<sup>5</sup>: Հայտնի է, որ XVIII դարի վերջերին արդյունաբերական հեղաշրջումն իր հետ բերեց գործազրկության, պաուպերիզմի ու աղքատության աճ: Պետությունը փորձում է հատուկ հարկի (poor tax) միջոցով իրականացնել օգնության բարեգործական ծրագիր, բաշխումը կատարելով եկեղեցիների միջնորդությամբ:

Ժամանակի նշանավոր տնտեսագետ Ռ.Մալթուսը գտնում էր, որ հասարակական արդյունքի վերաբաշխումը, միայն ավելացնում է «օգնության» հավակնորդների թիվը և մարդկանց ետ վարժեցնում կանգնելու սեփական ոտքերի վրա. «Եթե գթասրտության զգացումները առանց հաշիվ տալու է, եթե թվացող գթասրտության աստիճանը լինի մեր բարեգործության չափանիշը, ապա այն, հավանաբար, կկիրառվի բացառապես պրոֆեսիոնալ աղքատների համար»: Իսկ Դ.Ռիկարդոյի կարծիքով աղքատների մասին օրենքը, որը փորձում էր ընդունել անգլիական պառլամենտը, հակասում է տնտեսական ազատությանը, «փոխանակ աղքատներին հարուստներ դարձնելու, կարծես թե նպատակ ունեն հարուստներին աղքատներ դարձնելու»<sup>6</sup>: Եվ այսպես, վերը նշված մտորումների գլխավոր դրույթը հանգում է հետևյալին. անընդհատ բարեգործությունը հաճախ վնասակար է ոչ միայն նրա համար, ում այն ուղղված է, այլև «դառնում է կործանարար ամբողջ հասարակության համար»: Բարեգործության նպատակով տրված փողերն արագորեն ծախսվում են՝ պայմանավորելով նոր բարեգործության անհրաժեշտությունը: Այդ սկզբունքը գործում է նաև պետությունների մակարդակով, թույլ զարգացած երկրներին ուժեղների և միջազգային կազմակերպությունների կողմից «բարեգործական» հարաբերություններում: Տ.Վոյեվոդինան նորվեգացի տնտեսագետ Էրիկ Ռայներտի խոսքերով այն անվանում է «բարեգործական գաղութատիրություն», որը ցուցադրում է, թե հարուստ երկրները, ինչպես են դարձել հարուստ, իսկ աղքատները մնում աղքատ: Այդտեղ հատվում են իրականն ու երևակայականը՝ էլ ավելի խորացնելով աղքատության և անկման խզումը, գծելով մի անորոշ ու անհեռանկար գոյություն: Բնավ չժխտելով նպաստների ու թոշակների կարևորությունը, պետությունը պետք է «օգնի» նրանց, ովքեր կարող են ինչ-որ բան ստեղծել, զարգացնել տնտեսությունը. «Արդյունաբերությունն է ստեղծում բարձր աշխատավարձով աշխատատեղեր, հենց դրանք են մեզ անհրաժեշտ, այլ ոչ թե թո-

<sup>5</sup> St' u Литературная газета, №40, 12-18 октября, 2016г.

<sup>6</sup> Рикардо Д. Соч., 1, М., 1955, с. 332.

շակներն ու նպաստները: Ոչ թե մայրական կապիտալ, այլ լավ աշխատավարձ հայրերի համար: Այդ դեպքում և՛ մայրերին կբավականացնի, և՛ մանուկներին, և՛ ծերացած ծնողներին: ... միայն աշխատանքի և ստեղծագործության ուղիներով կարելի է հաղթահարել աղքատությունը»<sup>7</sup>:

Տնտեսական պատմության փորձով հաստատված է և դարձել է տնտեսագիտության աքսիոմներից մեկը՝ վնասով աշխատող ձեռնարկություններին «փող տուր անցքերը փակելու համար», ապա արագորեն այդ փողերը կծախսվեն և կունենանք նույն պատկերը: Հարկ է փոխել մենեջմենթը: Կառավարություն-բիզնես-կառուցվածքներ գործակցության մեջ պիտի փնտրել հասարակության նոր սոցիալ-տնտեսական ձևավորման ուղին, ազգային տնտեսության հաջողության հանգուցային խնդիրը: Արել Աղանբեկյանը տարիներ առաջ այսպիսի մի նկատում ունի Հայաստանի համար. «Մի շատ հասարակ խնդիր է հարկավոր լուծել: Դուք պետք է աշխարհով մեկ, Ռուսաստանում, մյուս երկրներում գտնեք հայերից մոտ 11 հոգու՝ լավագույններին, և նրանց հանձնարարեք առանցքային կարևոր գործեր: Էլ ոչինչ պետք չէ անել: Դուք պետք է գտնեք լավագույն մարդկանց, ստեղծեք նրանց համար պայմաններ, և նրանք կանեն ամեն ինչ ձեր փոխարեն»<sup>8</sup>: Գուցե և ազգային տնտեսությունն այլ ընթացք ունենար:

## «ԻՆՉՈՒ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐ ԶԱՐՈՒՄՏ ԵՆ, ԻՍԿ ՄՅՈՒՄՆԵՐԸ՝ ԱՂՔԱՏ»

**ՌՈՒԲԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ**, *տ.գ.դ., պրոֆեսոր,*  
*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության*  
*ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

**Համառոտագիր:** Հողվածում դիտարկվում են ամերիկյան հայտնի հայազգի տնտեսագետ Աձեմօղլու և Ջեյմս Ռոբինսոնի հայացքները «Ինչու որոշ երկրներ հարուստ են, իսկ մյուսները՝ աղքատ» հարցերը համանուն բեստսելերում՝ մերժելով աշխարհագրական դետերմինիզմի, մշակութային առանձնահատկությունների, այսպես կոչված, «անգիտության» տեսությունները, հեղինակներն առաջադրում են, այսպես կոչված, ինկլյուզիվ և էքստրակտիվ տնտեսական ու քաղաքական գործոնների կոնցեպցիան: Այն երկրները, որոնցում տիրապետում է էքստրակտիվ ինստիտուտները հղի են քաղաքական անկայունությամբ և վտանգ են հանդիսանում տնտեսական առաջընթացի համար:

<sup>7</sup> «Литературная газета», №40, 12-18 октября, 2016г.

<sup>8</sup> Տե՛ս «Հրապարակ», 1 հոկտեմբերի, 2016:

*Բանալի բաներ. աշխարհագրական դետերմինիզմ, վշակութային առանձնահատկություններ, անգիտության տեսություն, ինկլյուզիվ և էքստրակտիվ տնտեսական և քաղաքական ինստիտուտներ, տնտեսական պատմություն, սոցիալական խնդիր:*

## «ПОЧЕМУ ОДНИ СТРАНЫ БОГАТЫЕ, А ДРУГИЕ БЕДНЫЕ»

**РОБЕРТ НЕРСЕСОВИЧ САРИНЯН**, *д.э.н., профессор,*  
*главный научный сотрудник Института экономики им. Котаняна НАН РА*

**Аннотация:** В статье рассматриваются взгляды известного американского экономиста армянского происхождения Дарона Аджемоглу и Джеймса А.Робинсона о вопросах «Почему одни страны богатые, а другие бедные» в одноименном бестселере. Отвергая теории географического детерминизма, особенности культуры и невежества, авторы выдвигают так называемую концепцию инклюзивного и экстрактивного экономических и политических факторов. Те страны в которых господствуют экстрактивные институты характеризуются политической нестабильностью, что препятствует экономическому развитию.

**Ключевые слова:** *географический детерминизм, культурные особенности, теория невежества, инклюзивные и экстрактивные экономические и политические институты, экономическая история, социальный вопрос.*

## “WHY ARE SOME COUNTRIES RICH AND OTHERS POOR?”

**ROBERT NERSES SARINYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor,*  
*Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**Abstract:** The article discusses the views of the famous American economist of Armenian origin, Daron Acemoglu and James A. Robinson on the question "Why are some countries rich and others poor?" in the bestseller of the same name. By rejecting the theory of geographic determinism, cultural characteristics, and so-called “ignorance” theories, the authors propose so-called concepts of inclusive and extractive economic and political factors. The countries where extractive institutions prevail are characterized by political instability, thus putting the economic growth into a trap.

**Keywords:** *Geographic determinism, cultural characteristics, theory of ignorance, inclusive and extractive economic and political institutions, economic history, social issue*



## ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

### НАШИ АВТОРЫ

### OUR AUTHORS

**ՌՈՐԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ**, *տ.գ.ղ., պրոֆեսոր*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր  
գիտաշխատող*

**РОБЕРТ НЕРСЕОВИЧ САРИНЯН**, *д.э.н., профессор*

*главный научный сотрудник*

*Института экономики им. Котаняна НАН РА*

**ROBERT NERSES SARINYAN**, *Doctor of Sciences (Economics), Professor*

*Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ  
գիտաշխատող*

**КРИСТИНЕ ЮРЬЕВНА БАГДАСАРЯН**, *к.э.н., доцент*

*старший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА*

**KRISTINE YURI BAGHDASARYAN**, *Ph.D. in Economics, Associate Professor*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԲԵԼԼԱ ՎԱԼԵՐԻԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**, *տ.գ.թ., դոցենտ*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**БЕЛЛА ВАЛЕРЬЕВНА ГАБРИЕЛЯН**, *к.э.н., доцент*

*старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА,*

**BELLA VALERI GABRIELIAN**, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*

*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՄԱԼՅԱ ՄԿՐՏՉԻ ԳԱԼՍՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**АМАЛИЯ МКРТЫЧЕВНА ГАЛСТЯН**, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики им. Котаняна НАН РА*

**AMALYA MKRTICH GALSTYAN**, *Candidate of Sciences (Economics)*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԿԱԴԻԻ ԴԱԼԼԱԶՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**СВЕТЛАНА АРКАДЬЕВНА ДАЛЛАКЯН**, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**SVETLANA ARKADI DALLAQYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՈԱԶՄԻԿ ԿԱՍՈՅԻ ԻՍԱԿՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**РАЗМИК КАМОЕВИЧ ИСААКЯН**

*Младший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**RAZMIK KAMO ISAHAKYAN**, *Ph.D. in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՐԱՄ ՎԱԳՆՎԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**АРАМ ВААГНОВИЧ ХАЧАТУРЯН**, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**ARAM VANAGN KHACHATURYAN**, *Ph.D in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՆՆԱ ՌՈՒՉՎԵԼՏԻ ՍԱՎԱՐՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**АННА РУЗВЕЛЬТОВНА МАКАРЯН**, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**ANNA ROOSEVELT MAKARYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՍԱՆՈՒՉԱՐՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

**МЕРИ ГАГИКОВНА МАНУЧАРЯН**, *к.э.н.*

*старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА*

**MERI GAGIK MANUCHARYAN**, *Ph.D. in Economics*

*Senior Researcher, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Science, Republic of Armenia*

**ՀՐԱՆՏ ՍՏԵՓԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**ГРАНТ СТЕПАНОВИЧ МАРГАРЯН**, *к.э.н.*

*младший научный сотрудник Института экономики имени М. Котаняна,  
Национальная Академия Наук Республики Армения*

**HRANT STEPAN MARGARYAN**, *PhD in Economics*

*Junior scientific Researcher  
Institute Of Economics Named After M. Kotanyan  
National Academy Of Science Republic Of Armenia*

**ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՍԱՐԿՈՍՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ  
գիտաշխատող*

**АЙК АШОТОВИЧ МАРКОСЯН**, *к.э.н.*

*старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА*

**HAYK ASHOT MARKOSYAN**, *Candidate of Sciences (Economics)*

*Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՀԱՅԿ ՍԱՄՎԵԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**ГАЙК САМВЕЛОВИЧ МХИТАРЯН**, *к.э.н.*

*Младший научный сотрудник  
Института экономики им. М. Котаняна НАН РА*

**HAYK SAMVEL MKHITARYAN**, *Ph.D in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՆԱՐԵԿ ՍԱՐԱԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**НАРЕК СААКОВИЧ МКРТЧЯН**, *к.э.н.*

*младший научный сотрудник  
Института экономики им. М. Котаняна НАН РА*

**NAREK SAHAK MKRTCHYAN**, *Ph.D.in Economics*

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԳՈՐԱՐ ՎԱԶԳԵՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**ГОАР ВАЗГЕНОВНА ВОСКАНЯН**, *к. э.н.*

*младший научный сотрудник  
Института экономики им. М. Котаняна НАН РА*

**GOHAR VAZGEN VOSKANYAN**, *Ph.D. in Economics*,

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՇՈՂԵՐ ՊՅՈՏՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**ШОГЕР ПЕТРОВНА ПОГОСЯН**, *к.э.н.*

*научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА*

**SHOGER PYOTR POGHOSYAN**, *Ph.D. in Economics*

*Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia Abstract*

**ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

**ЛИЛИТ НОРАЙРОВНА САРГСЯН**, *к.э.н.*

*Научный сотрудник Института экономики имени М. Котаняна, НАН РА*

**LILIT NORAYR SARGSYAN**, *Ph.D. in Economics,*  
*Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ**, *տ.գ.թ.*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր  
գիտաշխատող*

**ТАТЕВИК СМБАТОВНА ПАРСАДАНЯН**, *к.э.н.*

*младший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА*

**TATEVIK SMBAT PARSADANYAN**, *Ph.D. in Economics*  
*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՐՓԻՆԵ ՄԵԽԱԿԻ ԿՅՈՒՐԵԴՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կայքորդ*

**АРПИНЕ МЕХАКОВНА КЮРЕГЯН**

*соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА*

**ARPINE MEKHAK KYUREGHYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ՏԱԹԵՎԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՇԱԳԻՆՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր  
գիտաշխատող*

**ТАТЕВИК ВАЗГЕНОВНА ШАГИНЯН**

*младший научный сотрудник Института экономики имени М. Котаняна НАН РА*

**TATEVIK VAZGEN SHAHINYAN**

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics*  
*National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԼԻԼԻԹ ՄԱՆՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

**ЛИЛИТ МАНВЕЛОВНА ПЕТРОСЯН**

*соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА*

**LILIT MANVEL PETROSYAN**

*Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Sciences, Republic of Armenia*

**ԱՆՈՒԸ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր  
գիտաշխատող, ասպիրանտ*

**АНУШ ТИГРАНОВНА САРГСЯН**

*младший научный сотрудник, аспирант  
Института экономики им. М. Котаняна НАН РА*

**ANUSH TIGRAN SARGSYAN**

*Ph.D. Student, Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics  
National Academy of Science, Republic of Armenia*

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**  
**Գիտաժողովի նյութեր**

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-  
ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**Материалы научной конференции**

**THE CONTEMPORARY ISSUES OF SOCIOECONOMIC  
DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA**

**Conference Proceedings**

Հրատարակչության խմբագիրներ՝  
Նյութերի հավաքագրող՝  
Համակարգչային ձևավորումը՝

Ա. Հովակիմյան  
Ա. Մարկոսյան  
Մ. Համբարձումյանի

Редакторы издательства  
Сбор материалов  
Компьютерная верстка

А. Овакимян  
А. Маркосян  
М. Амбарцумян

Publishing House Editors:  
Collection of Articles:  
Text Design and Electronic Composition:

А. Hovakimyan  
А. Markosyan  
М. Hambardzumyan

Հրատ. պատվեր № 898  
Տպագրությունը՝ օֆսետ: Չափսը՝ 60 x 84 <sup>1/16</sup>:  
Ծավալը՝ 17.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:  
**Տպագրվել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարանում:**

Заказ № 898  
Печать офсетная. Формат 60 x 84 <sup>1/16</sup>.  
Печ. л. 17.5 Тираж 100 экз.  
**Отпечатано в типографии издательства “Гитутюн”  
Национальной академии наук Республики Армения**

Printing Order № 898  
Printing: Offset. Size: 60 x 84 <sup>1/16</sup>.  
Conventional Offset Press: 17.5 printing units. Number of copies printed: 100.  
**Printed by the print house of “Gitutyun”**  
**Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia**